

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա. Մ Ա Ա. Գ Ի Բ

№ 2 1889

ՓԵՏՐԻԿՐ

1889 № 2

Ա. Բ Ա Զ Կ Ն Յ Ա Ր Ե

երես

1 Պատճենական գիրք	199 Ցեղեր (չարտահանկութիւն):
2 ՄՈՒՆԻՍԻՎԱԿԱՆ ԼԵՖՈՒ	231 Միքամ (բանասանեզծութիւն):
3 ԼՀՕ	232 Հինգ օր (չարտահանկ. և վերջ):
4 Եօդիցէ	271 Ենրշնչանք (բանասանեզծութիւն):
5 " "	272 Երազ (բանասանեզծութիւն):
6 ԿԱՐՄԱԿԱՆ ԱՎԵԲՈՒՄՆԴԻՐ	273 Պասարիկեանի նամակները:
7 ՔԱՐՄԱԿԱՆ ԵՎԻՐԱՎՈՅԱՆ	284 Պ. Պաօշեանց և նորա մեղիբը:
8 ԱՐԴԻՇԻԱՆ	301 Անջոտաման ժամ (բանասանեզծ.):
9 ՎԱՐԴԻՎԱՆԻ ԳՐԻՖՈՐ	302 Գիւղուկան վորմիլ:
10 Լ. Ա. Յ. Հ., Յ., Բ., Ա.	318 Գրտիսոսութիւն:
11 " " " " "	333 Ենրիքին անու. Հ. Բար. Բնիկ. Ժաղ:
12 " " " " "	339 Կամիսա. պիւզառ. արզիւնահունիւնիւր:
13 " " " " "	342 Գար. Առնոգույիեաննցի յօրելեանի:
14 " " " " "	351 Կոմի Լուս. Վելիքիան:
15 ԱԽԵՎԱՆԻ ՄԻՋԱՎ.	357 Տիկին թամար Կարսիսիան:
16 Հ.	363 Քաղաքական անուաթիւն:
17 ԲՄԲ.	368 «Առարձութիւն նամակագրաւթիւնը»:

ԱԼԵՍԱՐԱՐՈՒԹԹԻՒՆԵՐ:

Թ Ի Ֆ Լ Ի Ո

Ա. Գ. ԱՌԱՋԵՎԱՅՐԻ ՏՊԱՐԱՆ

1889

卷之三

卷之三

卷之三

卷之三

卷之三

卷之三

ՄՈՒԲՃ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

ԱՄՍՈՋ ԳԻՐ

№ 2 1889

ՓԵՏՐԻԱՐ

1889 № 2

ԱԹԱԶԻՆ ՏԱՐԻ

ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ Մ. Դ. Ա-ՕՏԻԽԵՎԵՑԻ
1889

К'юзин

СИРИЯ ДЛЯ МАЛАГОВЪ СИРИЯ

СИРИЯ ДЛЯ МАЛАГОВЪ

Дозволено цензурою Тифлисъ. 16-го февраля 1889 года.

Типографія М. Д. Ротнянца на Гол. просп. домъ № 41.

ՅԵՅԵՐ

Ա. Ե. Պ.

ՊԵՐԱ ՊՐՕԴԵԿԱՆՅԻ

(Շարունակութիւն 1)

Զ.

ԱԿԱՄԱՑ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ.

Մարգարիտը ոչինչ նկատողութիւն չ'արեց իւր աղջկանն, երբ
նա սպառուական խոշոր սպիտակ ալանու դեղձերը չը կճպեց, ալանի
չը շնեց, այլ գլխահան արեց, ճղճղուեց և առաւ դնաց դէպի
չնղիլը. ոչինչ բան չ'ասաց նա Խօնալին, բաց ինքն իւր մէջ շատ
զարմացաւ և կասկածի մէջ լնկաւ:

— Հէնց կարծես, իմ Խօնէն չըլնի, բշուածի պէս ա երեսում,
նա ու ետքես բան բռնի՞, ալանու դեղձը ճղուի, կամ էսոլէս հաստ
կլսուի՞. կառու՝ եզան միջքից կաշու գոլեր ա հանած, ափսոս չե՞ն,
ել դեղձերումն ի՞նչ ա մնացել, մսի մենծ բաժինը կլպի վրայ ա
թողել: Ձէ՛, երեխիս պինչը, հէնց իմաննաս, մի մուխ ա մոնել, էս ա-
ռաջինը չի, քանի օր ա, մին տեսնում ես, կարմրեց՝ ալվան վարդ
դառաւ, մին սփրթնեց՝ ոնց որ ջուհակի հորից նոր կտրած կուաւ.
կուրանա՞ն իմ աչքերը, ես էլ գլխահան եմ անում, բանի տեղ չեմ
քցում, լսկի չեմ հարցնում:

1) Տես «Մուլճ»-ի № 4.

Նա տեղիցը կանդնեց ու գետի ճնշիլը նայեց։ Սօնան դեռ չնպի
վերաց էր։

— Փա՛ռք իմ Ասոծուն, երեխիս թե երն եկել են, թա՛ռլանա,
թա՛ռլան։ Էս ատրի գեղի ազափներն իրար զլուխ կը ջարդեն, մե՛ռ-
նիմ էն աղի ջանին, որ ինձ նանի պատ ասի ու Խօնիս ինձանից
լոլի, բերանիս աղիզ թիքէն կը տամ նրան, ջանա իրան է՛լ զուրբան՝
իր ետրին է՛լ, մի էն օրը տեսնեմ ու մոռնիմ՝ զերեղմանիս վրայ
օխոր թիզ մանիշակ դուս կը դայ…

Մարզարիսն աշքը անվել էր ինքնամուացութեան մէջ լնկըզմ-
ուած։ Նա մոմիկ էր տալիս հեռուից խոր միտումարին ու փառա-
ւորուում։ այս րոպէիս նա ամենասերջանիկ մայրն էր։

— Մե՛ռնիմ մարտին ու ջէլյանին, ո՞վ տեսնի էն սուրահի
(չողուշտ) բօյն ու չը գծուի։

Մայրն իրաւունք ունէր։ Սօնան գործը ողծաւ և կանդնեց
չնպի վերաց։ Նա աշքերը դարձրեց իւր շուրջը։ նրա զլուխը պա-
րանցի վերաց մի երկու պատցա արեց եթերի անհուն տարածու-
թեան մէջ։ Նա ինքն էլ չէր կարող հաշիւ տալ իրեն, թէ ո՞ւր է
նայում, ընչի՞ և նացում։

Նաո չը տեսեց այդ զրութիւնը։ Նա ցած իջաւ պատից և մը-
տաւ խաղողի թմբերը։ Նա էլ չէր երկուում։

Մարգարտի երեսիայական ցնորդներին, նրա ուրախութեանը
հետզհետէ աեղի տուին կասկածանքներն ու սրտամաշ տարակու-
սանքները։ մի ժամից աւել է Մարզարիսն աշքը դարձրել է բոլոր
գեղձիներին և իզուր է աղասում։ թէ ահա այս ու այն ծառը կը
շարժուի և գեղձերը թիթփալով դեախն կը թափուին։ շատ մի քաշիւ
Սօնան գեղձը քաղլակի մէջ ածած՝ ուսած՝ թմբերիցը դուրս կը դայ։

Մարգարտի սոտքերն անդիտակցսրար շարժուեցին, բայց շատ
չը կարողացան ցառաջ դնուլ։ Շուտ-շուտ ծնկները ծալուում և կանդ
են առնում։

Կասկածը կոծում է, մօր սիրտը, նրա մոքովը մի բան անցկա-
ցու և նա շատակեց գէսպի ճնշիլը։

— Հո՛դն իմ զլիսին, ցե՛խն իմ արեին, ես ի՞նչ կանեմ, որ մոքի-
նրս (կառէած) ուղիղ զուս դայ, մինք աշխարհքումը թուք կը լինենք,
բարսեղն ինձ թաւին կը դնի, կը տապակի։

Մարդարիոլ վեր ելաւ չնզմի վերաց: Նրա ձեռքերն ինքնին բարձրացան գէսի երեսը, եղունգների ծալքերն այտերին քսուելով՝ քնթկալի վերացով ծնօտից ցած իջան:

Այդ ամօթի ու նախառոինքի նշանն է:

—Քօ՛ ռանամ ես, զլուխը շարժելով՝ շարունակ դեղձերին էր նացում նա, էս ո՞նց ա շարել, ես ի՞նչ օրն ա քցել, ցիսի պէս իրար վրայ թափել ա ու թողել:

—ԶԵ՛, հաստատ վճռեց նա, երեխս շիտակ փոխուել ա, նրա զլուզը մի բան ա անցկացել, հէնց է՞ս ա, որ կաց:

Մարգարիտն աչքերը գարձրեց իւրեանց հարեւան Գալ-ափունենց այգու կողմը և հետաքրքրութեամբ դիտում էր:

Այգու ափումը Գալօցի կին Զարմանն էր սլոտուում, ինքը՝ Գալ-ափուն էլ նատած՝ քթոց էր գործում:

Մարգարի կասկածը քանի զնաց, սաստիացաւ, Մամփանը ոչ մի տեղ աչքի չընկաւ:

Մարգարիոլ ցած իջաւ պատից, նա գնում էր թմրերի միջով, բացց ինքն էլ չը գիտէր, թէ ո՞ւր. շատ անգամ ո գեցաւ ձան տալ, բացց, կարծես, թէ մինը նրա շրթունքները հուվ էր տուել, լեզուն չէր շարժուում. և ի՞նչ կը համարձակէր ձան տալ. հարեւաններն ե՞րբ են նրա ձայնը. լոել, որ հիմա լսեն, մի՞թէ կարելի է, մի կին այնքան կորցնի իւր զլուխը, որ բաց երկնքի տակին՝ բարձրազիր այգու մէջ այնպէս խոսի, որ կողքի հարեւան տղամարդը լսի. գետինը վէր խորտակուի լաւ չի՝ այլպէս ալաշուդի զանջը (ժրէն Հրանք հայոց չը հեռացրած էք շռանը):

Երկու անգամ Մարգարիտն այգու թմրերը սուլէ սուլ (Ահեւե անցքելը) ման եկաւ, բոլոր գեղձեննց տակը տեաւ, անցկացաւ միւս հարեւաննց կողմը, հեռուից նրանց աղջկանցն ու հարսներին էլ անտղեց. Սօնան նրանց մէջն էլ չէր:

Մարգարիոլ գողում էր, լալ էր ուղում, արտասունք չէր գալիս:

—Զե՛մ կարծում... ո՞չ... ո՞նց կընի, էղակէս բան ե՞րբ ա լլատուած, է՛հ... արակուսանքների մէջ խորառու զուած՝ անկապ հարցերով ուսերը յաճախ թափահարելով՝ ձեռքերավ, զլիսկ թերահաւատութեան շարժումներ անելով՝ յառաջ էր մղուում նա մի ներքին նախազդացութիւնից դէսի մեզ ծանօթ հնձանաբազը:

Մարգարտի աչքերը մթնեցան, նրա մազերը ոգնու փշերի պիս ցցուեցան, մի ելեքորական ցնցում ամբողջ ոսկրաշարքը զրդռեց. նա վայր կընկնէր անշուշո, եթէ, մերձակայ նշենին յենարան ըլ հանդիսանար. նա զրկեց ծառի բռնը և զլուխը դէմ տուեց փլտած փոշակին (Ժառակ Քառծ Խոչ):

Անտեղի չէր երկիւղը. խեղմի կարծիքն իրականութիւն է, ըլ հաւատացողը թո՞ղ Մարդարտի աչքերով նայի ննանաբագի թեղի ծառին և որդեսէր մօրը չը մեղադրի: Տեսէ՞ք՝ ահա թեղու թփոս ճղնիկները բարձրացան և տակից կռացած դուրս եկաւ, ի՞նչ էք կարծում, ո՞վ. — մօր սրտի սիւնը՝ նրա սիրելի աղջիկը:

Սօնան ականատես եղաւ այս տեսարանին. մի վայրկեան նա կանգ առաւ, միւս ակնթարթում երկու մեծ քայլեր արեց, երկում էր, որ նա վազել էր ուզում, մօրը բռնել էր ցանկանում, բայց ոսքերն իրեն չեին հնազանդում, աջ ու ձախ կատում էին. Սօնան քարշ էր գալիս, քան թէ քայլում էր:

Վերջապէս նա մօր մօտ է, տեսնում է մօր դողոցը, տեսնում է հեծկլտանքն ու արտասունքի ցած գլորուիլը և չի վատահանում մօտ գալ, բռնել. նա ամօթապարտ ցանցաւորի նման երկու քայլաչափ հեռու կանդնել է և իւր ոսքերի ծայրերին շարունակ նայում:

— Այս, յանկարծական տուր ճիչ դուրս թուաւ մօր կրծքից ու ոտքերը տեղն ու տեղը ծալուեցին:

Սօնան շատ լաւ համկացաւ մօր ճշալու պատճառը. թեղու ճղներները նորից բարձրացան, ստուերի պէս մինը լոք լոք տալով աներեւութացաւ. թմբերի մէջ. սրաթե արծիւլ միայն այսպէս արագ կարող էր ճղել մթնոլորտը:

— Սէ սրտի աղջի՛կ, հազիւ հազ հեկեկաց Մարգարիտը:

Սօնան չոքեց մօր առաջին, նրա զլուխն ակամացից ցած գլորուեցաւ և մօր ճնկների վերայ յենուեցաւ:

— Հօրն ու մօր թքանք, էս ի՞նչ սև բերիր մեր գլխին:

Սօնան միայն հեծհեթում էր: նրա արտասունքը թրջեց մօր շքագղեսոք և ներս անցաւ:

— Էս ի՞նչ օրի հասցրիր մեզ, ա՞յ գետինը վեր խորտակուես գուշ էլ քո մէ ն էլ:

— Նա՞նի ջան, հազիւ լսելի եղաւ աղջկաց բերանից:

— Զօ՞ռ ու ցա՛ւ քեզ, որ քո ծնողի զլուխը դուս կորեցիր. ահ՝ ըլնէր քո ծնելու օրը, փորումն լակ ձու կտրուելի՛ր, ջուր գառնայիր՝ աշխարհնք չընկնէիր, որ էս օր քո հօր անունը հողի հետ չը հաւասարացնէիր, աշխարհքի մեջ խօսելու բանառեղ չը շինէիր:

— Նա՞նի ջան ...

— Աև սրաի աղջի՛կ, թեկդու տակին ի՞նչ բան ունէիր, առ' մահի տարած, րնչի մեր անունն աշխարհքովը մին արիք:

— Նանի՛, աչքերը շորի փեշովը սրբեց, զլուխը բարձրացրեց Սօնան, շա՛տ ուրախ եմ, որ դու ինքով քո աչքովը տեսար ու խմացար, թէ բանն ընչումն ա. երկու տարի ա ամօթը բուկս հուփէր տալիս՝ չէի կարողանում ոտքերդ փաթաթուել, սիրոս բաց անել: Ես խօսք տուի Սամփաննին, որ օ՛րն էս օր՝ հէնց է՛ս իրիկուն՝ մսերքը ուտիմ, սիրոս պեղացնեմ ու ամեն բան քեզ ասեմ: Հալբա՛թ, Սասուած լսէնց էր կամեցել, հալբա՛թ, ինքը գիտէր, որ ես է՛լի սիրո չեմ անի, է՛լի կը սպազանձուեմ ու Սամփաննին կը խաբեմ, քո սիրով կասկած քցեց, դէսը քաշեց, որ քո բարի աչքովն ամեն բան տեսնիս... Նանի ջա՞ն, ես Սամփաննին սիրում եմ, երկու տարի ա, խօսք եմ տուել:

Թէ ի՞նչ խօսքեր ասաց, ի՞նչ փատեր յառաջ բերեց՝ այդ իւրեանց զործն է, բայց մենք աենանում ենք, որ Մարգարիտը հանդրատացաւ, նա մինչև անգամ համբուրեց իւր սիրելի գատերը: Նա անկեղծօրէն հաւաս ընծայեց իւր աղջկանն և ուրախ եղաւ, երբ իմացաւ, որ առաջին անգամն այսօր իւր սիրելին անմեղ գրկախառնութեամբ ամրացրել է սիրոյ անքակտելի շաղկապը:

— Իերանս լիկուե՛ր, բալա ջա՞ն, ասաց նա, լեզուիս ծէրիցը թռածները ծոցս թափուին ու ո՛չ քո և ոչ քո պատաշ (արքանից) եարի քիթը չը խոռուի, որ ես քեզ զուր տեղն անիծեցի:

— Քո անէծքն ինձ ու Սամփաննին օրհնութիւն ա, նանի ջա՞ն:

— Սրտիդ շառնես, աչքե՛րիդ մեռնիմ, բե՛ր էդ փիալայ (ճրտ) աչքերդ պաշեմ. ը՛հ, մե՛ռնիմ էս կրակ կարուած թշերին է՛լ ու սրանց զիազող պոօշներին է՛լ, մե՛ռնիմ թագաւորի պէս փեսացուի ջանին. նանի զլուխը մա՛տաղ գնայ Սօնին ու Սամփաննին. տես անումներն էլ ի՞նչ լաւ սազում են, փա՛ռքիդ մեռնեմ, Աատուա՛ծ:

— Բա՛ս, ափունին (հայրելին) ե՞րբ կասես, նանի ջա՞ն, մօլ ձեռքն անդադար համբուրելով հարցնումէ Սօնան:

— Հէ՞նց էս զիշեր, հէ՞նց էս զիշեր տեղը մուռ թէ չէ, չեմ թողալ քնի, տամարը կը մոնեմ:

— Բա՛ Սամփանի մօրբ բան չես ասի՞լ:

— Թո՞ղ Զարմանին էլ իր տղէն ասի, աշխարհքը մեր վրայ կը ծիծաղի, թէ աղջկեքը զինները կոխել էլի՞ն, որ ինքը գնաց տղատիրոջ գուռը կոխեց, թէ եկեք աղջիկս ուզեցէք:

Միւս օրն երկու հարեանները — Գալ-ափունի կին Սարգարխոն ու Ալէքենց Բարսեղի կին Զարմանը կոռոց կոռուցի տուած՝ երկար զրոց էին անում և երկումն էլ շատ ուրախ էին:

Համաձայնութիւնն երկուսի մէջը կայացել էր: Հետեանքը մեզ յայտնի է. ծառի տակին նատած՝ մեզ իւրեանց բերանով պատմեցին Գալ-ափուն ու Բարսեղը՝ երկար ու բարակ խոստվանուելով իրարու կին արմատի մէջ ազդեցութիւնը:

Է.

Յ Ե Յ Ա Պ Ե Տ Բ.

— Բալասան աղէ՛ն, Բալասան աղէ՛ն, ք: Փառցն ընկառ 0. զիւզը: Արդարեւ, հեռուից երեւեցան երեքչորս ձիաւորներ, որոնց առաջնորդի առաջին գալիս էր պատուական կապոյան ժոյզի վերաց վեհօրէն մի կողմի թե բռւած մի հասափոր պարոն:

Զիաւորն իւր ուղեկիցներից երկու ձողաչափ հեռու էր գալիս, ացդ նշան էր, որ հետեւղները նրա ովասաւորներն էին:

Նա միջին տարիների մարդ էր, 45-ից մինչև 50 տարի հարելի էր տալ նրա հասակին՝ նայելով լան և կոկ ածիլած երեսի թարմութեանը և գէր եղան հասա կղակի (Ատքանի հասա հանեքը) նման երեք ծալք իրար վերաց կլուուած կղակին. միայն ջինչ սպիտակ զլուխը՝ պաշտօնական նշանակը ճակատին փառցող զիխարկի տակից՝ 70 տարեկան ալեորի պատկառելի դէմք էր ընծայում նրան:

Ահա ամեն կողմից զիխարկներ բարձրացան. փողոցում քարելի վերաց շարուածները բոլորը սոքի կանգնեցան, մինչեւ մեր ձիաւորը —

Բալասան աղէն հասարակութեան ողջունին կիսասպաշտօնական ժպիտով՝ առանց մի բառ արտասանելու ծուեց զլուխն և յառաջ անցաւ։

Երկար ժամանակ բազմութիւնը ոտքի վերաց էր. բաւական միջոց մի շունչ չէր լսուում քանի մի բոլի՛ սրանից առաջ հարաւ հրոցը երկինք հասցրած ամբոխի միջից։

Վաղուց Բալասան աղէն թեքուել էր դէպի նեղ խոտորափողոցը, կամ կարելի է արդէն իջել, հանգատանում էր իւր օժեանում, բայց ժողովուրդը ոտքի վերաց ուստած մնացել էր՝ բերանները կիսաբաց և երեսները թեքուած դէպի ձիաւորի անցկացած կողմը։

Օսարը կը կարծէր, թէ զիւզը առասպելական կախարդի առէծքին է ենթարկուել, կամ մի շար հրեշտակէ երևեցել ու մարդկանցը գարձրել անխօս արձաններ։ Խոչպէս ասած է՝ աղօթտած էշ էին դառել։

Հակառակ կողմից երևեցաւ եւրոպական հին վերարկուն ծածկած մի միջահասակ մարդ։

Նա զարմացաւ ամբոխի շփոթ զրութեան վերաց։ Նա կամենում էր հարցնել մի րան, բայց կանգնողներից մինը հազիւ լսելի ձայնով ասաց։

— Կնա՛, Խուզօ՛, գնա՛, Բալասան աղէն եկաւ։

— Մեր աղէն, բացականչեց Խուզօն, վազո՞ւց։

Խուզօն էլ պատասխանի չը սպասեց, նա լիրզապատառ վազեց ետեից՝ ինչպէս տիրոջը կորցրած շուն, որ հոտը կ'առնի ու առանց աջ ու ձախ նայելու մին կը վազի։

— Թո՛ւ... զլու իւր թափ սուեց մինը Խուզօի քամակից և նստեց։

— Աշխարհքս էդ շարխի վրաց ա պատուում, պատասխանեց մի որիշը թքանք արձակողին և էլի նստեց։

Ամբոխը կամաց իւր նստիկն զիրքն առացաւ, բայց ել առաջուան աղաղակը չը կար։

— Տեմնես լնչի՞ ա եկել, խօսեց մինը։

— Ո՞նց թէ տեսնես, տեսնելու ի՞նչ կայ, հայլու պէս որարդ ա։

— Ավար երէկ մէկել օրը չէ՛ր էսաեղ, զատկից յետոց չէ՛ր, որ եկաւ զատիկը վեղի պնչերիցը հանեց, շատերի ձեռք ծոցումը թողեց. տարէնը հինգ հետ հօ չե՞ն գալ։

— Մենակ մենք հօ չե՞նք, եկած կը լինի մօտիկ զեղը, մի քա-

Նիսի տունը քանդած, բանը պլրծած, հիմի եկելա իր նոր մլքերին
մի գլուխ քաշի:

—Տօ չէ՝ աղպէ՛ր, չէ՝, մարդը դործունի՝ եկել ա. Խելքներդ
ջիս կարծ ա, ո՞նց չէք հասկանում. զրա դալուց առաջ ի՞նչ գոր-
գուոց էր:

—Դէ՛ գլամսի փոխելու վրայ էինք խօսում, բայց զրան ի՞նչ:

—Բաս քամակիցը վաղող թաղին:

—Վա՛յ գլխիս, չընի՞ ուզում ա գլամսի էլ շինիլ. տուդիա շինեց՝
շաս խէր տեսա՞նք. խտակ երեխանց տակի փալան էլ դուս կը քաշի:

—Ցե՛ց ա, որ մտել ա մեր ջանը:

—Ցեցը նա չի, ցեցը նրա տոքերը լիզողներն են. ա՛յ մինը դա,
որ քամակիցը վազեց, ինքը որ կատ՝ ցեցերի ցեցն ա:

—Ելիկ չէ՛ք (համայնք), հասարակութիւն չէ՛ք, զրան մի՛ լսէ՛ք.
գեղ կանգնի, գերան կը կոտրի, գեղովի խօսքը մին արէ՛ք, աև քցե-
ցէ՛ք, ձեր կուռն ո՞վ ա բոնում:

—Ի՞նչ հեշտացնում ես, թէ մարդ կրինես՝ ձեռդ սև ծակին
մօտացրու, հացդ կերար, թողդ երկինք կը բարձրանայ:

—Ա՛յ մարդիկ, խօսելու բան չունի՞ք, դուք տանտէր չէ՞ք, ցաւ
ու հոգսներդ պրծել ա՞, ի՞նչ էք էգուցուան դալու բաների վրայ
գլուխ ցաւացնում. ի՞նչ Աստուած կամեցել ա, կը գայ, ուրիշ բաներ
խօսեցէք, ընդհատեց մի ծերունի ընդհանուր խօսակցութիւնը, նշա-
նացի ցոյց տալով անկիւնում կուչ եկած մի նորահաս երիտասարդի
վերայ:

Նորից խուլ լուռվթիւնը տիրեց, խօսողների լեզուն բունը մտաւ:

—Սա էստեղ չէր, ո՞րտեղից բումնուեց, փսփսացին իրարու և
մէկ մէկ քաշուեցան: Հեռացողը մի արհամարհական հացեացքով ար-
տապայտում էր իւր տհաճութիւնը դէպի երիտասարդն և գնում:

—Ո՞նց հալածակուեցին, ձեր հէ՛րն անիծած, փսփսաց մարդն
և ամենքից յետոյ ինքն էլ քաշուեց:

Ք.

ՄԻ ԿԱՐԵՒՈՐ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ.

Օ. զիւղի արելեան ափումը, զիւղական տներից 200 քաղացափ հետու՝ ճանապարհից փոքր ինչ ծուանց՝ այսօր էլ անցորդի ուշագրաւթիւնը զրաւում է հողէ բարձր ցանկապատի ներսի կողմբ եղած գեղեցիկ պարտէզն իւր կեղրոնումը զլուխը հալարա բարձրացրած փառաւոր երկարկանի շենքովը:

Ճոխ պալատը, համարձակ կարելի է այսպէս կոչել, ներքուստ և արտաքուստ ոչինչ բանով նմանութիւն չունի զիւղական շինութիւններին. նրա առաջի պարտէզը միանդամայն զանազանուում է զրացի բնակիչների պարտէզներից և այզիներից:

Մի մեծ շաղրուան՝ վճիռ ջրավ լիքը՝ ծիծազում է այցելուի երեսին և ծակում է իւր աղաջափ բարձրութեամբ շաղ տուած ջըրերի հիւլիների փայլմունքով նացողի աշքերը, երբ արեւ ճառագայթները հազար կտոր եղած՝ ամեն մի հիւլին մի մի շողակնի են փոխում:

Յանկապատի երկիֆեղիկեաց զարժագէն միշտ կողու է. չի բացուում շաբաթներով նոյնպէս և դարձազի միջի գունակը:

Նժեւ երբեմն երբեմն մի կռացած թիկունքով ծերունի՝ արխալզի գուրքը հարիւր տեղից կարկատած՝ ամառները միշտ ոսաբորիկ, իսկ ձմեռները մի ծակծիւած տրեխ ոտքերին ներս ու գուրս շանի բաշն ուսին դրած՝ կարելի է ասել, որ տունը միանդամայն անմարդաբնակ է; Ծերունին միակ բնակիչն է իշխանական պալատի:

—Հը՛, Թաթոս սպալի՛, էս օր քէվոդ տեղն ա, աղէն եկել ա, լաւ լաւ կերակրներ կուտես:

—Զա՛սը դնաց ջա՞նդամը, ոտք կոտրի, ըսկի չը դայ:

—Ծնչի՛ ևս լուէնց ասում, պապի՛, քո աղպէրն ա, ուրախ չե՞ս, օր նրա նման աղայաղպէր ունիս:

—Աւրախ կըլնէի, օր էս օր շնատակ ըլնէր, իմ՝ ձեռովս նաշը (բագառ) բոնէի, տանէի թաղիի ու յետոց մի հողի ենք տալացուկ Աստծոն, տայի ու պրծն էի:

Տարին մի քանի անդամ ծերունին երկու-երեք օրով կը հեռար իւր կացարանից:

Այդ այն օրերն էին, որ մի մեծաւոր երեք չորս տպասաւորներով կը դար, կ'իջներ գարվազի առաջին և ծառաներին կը հրամացէր բաղինել դռնակը և գարվազէն բաց անել տալ:

Երեխ, ձիանց տոնաձայնից արդէն ծերը ճանաշում էր եկող հիւրերին:

Նա էլ չեր սպասել տալիս դրան բաղիսելուն, խակոն դռնակը բաց էր անում, գարվազի կողահերթ բանալին շպրտում գետին ու ինքն առանց աջ ու ձախ նայելու՝ թողում, թոնմորալով հեռանում գէպի գիւղը:

Ահա՛ այդ օրերումն էին, որ տունը կեանք էր առնում:

Վաղուց այդ տան տեղն ազարակ էր. ծերունի Թաթոսն այն տեղ ամեն տարի համեղ դութմաներ և մեծ մեծ ձմերունին էր հասցնում. ազարակի զլխումը շինած մի հասիկ խրճիթումն էլ ինքն էր կենում:

Աժմը էլ այն խրճիթը կայ սպալատի քամակին: Նառ աշխատեց բալասան աղէն խրճիթն էլ քանդելու, բաց Թաթոսը ոչինչ բանով չը համաձայնեցաւ:

— Ի՞նչ ես ուզում, ա'յ գետինը մոնելու, ասաց նա գէմ ու գէմ իւր եղբօրը՝ բալասան աղին, մեր հայրենական կացքից էս մի քետլավին (ա-երակ) է՛լ շես տալ ինձ. վե՛ր կալ, բոլորն ա'չքդ կոխի. թո՛ղ իմ մէջիդն (դիակը) էս ծածքի տակիցըլ զուրս գայ, վերջը էս է՛լ քեդանով Աև ծովը, ես հօ հետո չե՞մ տանելու էն աշխարհը. մեր չորս ազգօրից էլ ո՞վ մնաց, ես էս ա մի տոս գերեզմանումն ա. դու ես մը նացել, մին էլ հետո ջհանգամներումը կորած պատիկ լակոոր՝ մօրգ սիրեկան աղէն, որ էզուց-էլօր, ես զիտեմ, նա էլ քեզանից տեղի օձի կծածը պտի գուս գայ, կամ քո խաչովը պտի խաչուի խեղճ մըթօյի պէս, որ զինովացրիր, բերանիցը թուզթ առար, թէ իր բաժինը քեզ ա ծախել ու տուն ու տեղից զրկիցիր՝ զարդամահ էլաւ, ժուռ ու մուռ նշանուած մեռաւ, նշանածն ուրիշին բաժին էլաւ: Այ մահի տարած, ասենք ես էի խորթ, հօրից մի՛ն էինք, մօրից ջո՛կ, ջրատար Վրթօն հօ քո մօ՞րիցն էր, ի՞նչ կրկնէր՝ երկու բաղից մնի կէսն էլ նա ուտէր:

Բալասան աղէն անսաւ, որ իր մեծ եղբայրը շատ սպէտք է փնթվնթաց, ամենքի մօտ իրան միշտ պէտք է դաստաղարակ, վլճ-

ու եց չը քանդել Թաթուի տնակը՝ միայն մի պայմանով, որ նա իւր պարտիզին ու աներին հսկողութիւն անի և պահպանի:

Թաթուն էլ ուրախութեամբ յանձն առաւ, մանաւանդ երբ Բալասան աղէն թողլ տուեց իրան պարտիզի մւս ծալին մի փոքր տեղ իւր համար ազարակ աներ:

Բալասան աղէն, յաշնի չէ, թէ ի՞նչ նպատակու շինեց այս տունը. նա այդ արեց, երբ պատերազմը պրծաւ:

Բալասան աղի կենսազրութիւնը քաջ զիաեցրդներն այսպէս են պատմում նրա անցեալը:

Նրա հայր քաշալ Մեսրովը շատ չքաւոր է լինում: Նա մանում է Երեանում մի մեծաւորի ազգեապան և միաժամանակ այսու մէջ շինած ջրաղացին՝ ջրաղացպան: Կ'երեկի, խելացի մարդ է լինում, որ չորս-հինգ տարուց յետոյ 0. զիւղումը գնեց երկու այզի և մի պարտակառեղ, որոնց մասին վերն լիշեցինք:

Մեծաւորը մի օր աեսել է ջրաղացումը փոքրիկ Բալօցին, հստանել է նրա զեղեցկութիւնը և վերցրել է իւր առաջին փոքրաւոր:

Խ'նչպէս է լինում, աղէն զբան զբկում է Մօսկով՝ կարգալու: Նա մի քանի տարի մնում է այնտեղ, անշնորհք է լինում, բան չի սովորում, կիսատ վերադառնում է և մտնում մի դիւնասառուն՝ որպէս զբաղիր: Երկու առարուց յետոյ՝ նրա զիւումն ո՞վ է փշում, Վարշաւ է գնում, Էստեղ ձիաւոր է զրում, Էստեղ չին է առնում և յետ գալիս: Բազդը նրան յաջողում է, լաւ լաւ պաշտօններ է ճարում, իր մեծաւորների աչքն է մնում, վերջը պատերազմի տարին, ի՞նչպէս է լինում, զրա ձեռքը մի աեղից մի զումար է ընկնում և զրանով զնում է իր հարստութեան սկիզբը: Սում էն, որ զբան է յանձնուած եղել պատերազմից վնասուածներին մատակարարելիք նպաստը. ամենքին լիուլի բաշխելուց յետոյ՝ իր զլուխն էլ չի մոռացել: Մեզը ծախողը մատը կը լպատի:

Ոմանք էլ պատմում են, թէ մինչև վերցիշեալ զումարը՝ Բալասան աղէն փող էր շինել: Նա միշտ կատարել է իւր ծառայութեան մէջ նշանաւոր պաշտօններ: Նոյն իսկ իւր պաշտօնակիցները յաճախ ճրարներում զրած զրամական նուերներ են ողարկել նրան, մի տեսակ բարեկամական կազ պահելու իւրեանց ազդեցիկ ընկերի հետ: Մի յիմարը միայն չի ուզեցել ճանաչել Բալասան աղայի

առաւելութիւնը. վերջը շատ էլ զղջացել է, զլսին վա՛յ է տուել, բացց շատ ուշ, այսօր քաղցած փորով, պալոսի բամբակները կախիախոտուած՝ քարշ է գալիս զինետների առաջին, երեխայքն էլ թափառ.աշրջիկ մուրացկաններ են դարձել:

Ամենից խելօք վարուել է մի զործավարի օգնական: Դիւանատան ատենադպիրը հիւանդ է լինում, նրա տկարութիւնը երկարանու բնաւորութիւն է ունենում, բժշկները նրա վերջը մահ են դուշակում: մինչ ամենքն առաջները սրած սպասում էին և կողմնակի կրպով էլ աշխատում էին, թէ ե՞րբ պէտք է մեռնի առենադպիրը, որ ձեռք բերեն բարձր պաշտօնը՝ մեր զործավարի օգնականը լուս ու մունջ գնում է նօտարիուսի մօտ և այսպիսի մի մուրհակ վառերացնել տալիս, իբր թէ ինքը պարտ է Ակադիմիր Նեսոորիչ Մելնիկովին հինգ հարիւր մանէթ՝ երեք ամիս ժամանակով, մէջն էլ զրաւական է նշանակում իւր այդին:

Նրա բաղդից ստենադպիրը մեռնում է նոյն օրը, երբ լրանում է ժամանակամիջոցը:

Քնում է նա մուրհակը ծրարի մէջ մի ուրիշ թղթի հետ, թէ ըստ որում չ'ունիսմ միջոց վճարելու, ինքնայօժար փոխարէնը պատրաստ եմ ձեռք քաշել այգուց: ՚Ի հարկէ, մի փոքրիկ տամակով Բալասան աղացի հովանաւորութիւնն է խնդրում:

Հինգ օր չի անցնում, զործավարի օգնականը, որ միեւնոյն է թէ մի գրագիր, ստանում է ստենադպրութիւնն:

Այսօր ինելացի պարոնը և' լաւ հաց ունի և բարձր պաշտօն. շա՛ա մօտ բարեկամ է մեր Բալասան աղին և օրհնում է Մելնիկովի կեանքը:

Մենք մոռացանք ասել, որ Բալասան աղացի անունը քաղաքավարի լեզուով Ակադիմիր Նեսոորիչ Մելնիկով է: Բաւական մեծ վիճաբանութեան առիթ է տուել նրա անուանափոխութիւնը. մի մասնաժողով է կազմուել զրա մասին. Բալասան՝ կամ գիւղական կոչումով Բալօ՝ Վալօդի խօսքին մօտ է եղել. ինչպէս յացոնի է Ա.ալոդին ՚Լադիմիր բառի փաղաքշական կրծառումն է. այդ հեշտ են գտել. դժուարութիւն չեն կրել և աղջանուն որոշելու ժամանակ. նրա հացը ջրաղացպան էր և ացքեւպան. մասնաժողովի անդամներից մինը ցանկացել է բարդ ազգանուն կազմել՝ Սադովնիկով—Մել-

Նի կովկոչումով, բայց մեծամասնութիւնը հակուել է առաւելութիւն տալ հօր ջրազացպանութեանը, մանաւանդ որ կարճ և քաղցր է «Մելնիկով» խոռքը։ Խնքը Բալասան աղէն էլ շատ սիրել է այդ բառը։ Մեծ տարակուսութիւն է յատաջ եկել Մեսրովք բառը վորիկիս՝ Սօյսէց, Մինաց, Մեղմեդ, Միտրօֆան, Միփօդի և ուրիշ շատ Մ. տառով անուններ շարել են, երբ տեսել են որ ո՞չ մինը չի սագում, ընսրում են նով նեստոր անունը։ Մէկը միայն հակառակել է, առանց թէ նեստորը վիրաւորական է, նա եկեղեցու հակառակ հերձուածող է եղել, բայց ինքը Բալասան աղէն տաել է, որ եկեղեցուն նշանակութիւն չը պէտք է տալ, նեստորը խելօք մարդ է եղել և այդ իր համար սիրելի է, ուստի և վճիռ են կացացրել՝ Բալասան աղին մեծաբանել Վ. լագիմիր նեստորի չ Մելնիկով պատուանունով։ Իւր ցանկութեան համաձայն, այսպէս էլ կոչուած է նա իւր ծառայութեան ցուցակի մէջ։

Թ.

ԳԻՒՂԵՐՆ ԷԼ ԵՆ ԼՈՒՍԱԽՈԲՈՒԵԼ.

Երեկոյ է. վերոցիշեալ պալատի վերնայարկի պատուհանները լուսաւորուած են. վերնայարկումը ոչ ոք չը կայ, մի փոքրիկ սենեկում միայն, մահմակալի վերայ, խալաթը հազին, նառած է ճաղատ ճակատը բաց մէկը. նա քրքրում է սեղանի վերայ զրուած պայտասիկը։ Նա հանեց մի կասոց մուրհակներ և սկսեց մի առ մի թերթել։

—Այս մէկ. սա մեզ շատ հարկաւոր է, առամնաւոր կծան շուն է, պէտք է ժանիքը վշրտել, ժամանակն էլ լրացել է։

Նա յետ գարսեց մուրհակը։

—Այս երկո՛ւ, ձեռք առաւ նա մի ուրիշ թուղթ. սա ծակերում հաշացող է, կծել չի կարող Այս երե՛ք. հերիք է սրան տոկոսից մի չնչին բան կոտրել և ահա իւր հարազատ եղբօր տակը կը փորի։ Այս չո՛րս, հինգ, վեց, եօթը, շուտ շուտ մուրհակների տէրերի անունները կարգալով՝ ինքնազոհ ժպիտն երեսին մի կողմն էր յետ դնում նա. օրանք բոլորն էլ իմ գործիս ու նպատակներիս կը դան, բաւական է միայն իմ կողմից մի թեթև հրաման։ Ե՞հ, ի՞նչ

եմ երկարացնում, նորից խառնեց նա մուրհակների ծալքը, ողջ գիւղն խմ տորուկն է, և զեռ երկմուռմ եմ: Դեռ մի դրամագլուխը հաշուեմ, տեսնենք ո՞քան կը լինի, ասաց նա և համրիչը վերցրեց, մեկ մեկ քցեց:

— 55000 մանեթ, օ՛հ, բարձրաձայն կանչեց նա, էս զլուխը, իսկ եթե, տոկոսը, տոկոսի տոկոսը վրան գալու լինինք, ո՞ւր կերթայ, 70000-ից կ'անցնի... Ո՞վ է, ձայն տուեց Բալասան աղէն դրսի սենիկի՝ հաղոցին:

— Ես եմ, աղայ ջա՞ն:

— Դու ե՞ս, Խուդո՛, նե՛րս արի:

Խուդոն խոնարհ զլուխ իջեցրեց, ձեռքերը սրտին խաչած կանգնեց:

Մեզ անծանօթ չէ, Խուդոն. աս այն մի հատիկ գիւղացին էր, որ մեջ մտաւ Մելիք-Բաղալի աճուրդի ժամանակ և էլի շուտ փախաւ. մենք չենք նկարագրիլ սրան, շատ չի քաշիլ՝ ինքն իրան գըլուխը ցոյց կը տայ. այսքանը միայն խմանանք, որ Բալասան աղայի ընդհանուր կառավարիչն էր 0. զիւղում և առաջին հաւատարիմու:

— Ի՞նչ եղան, հարցրեց աղան:

— Մի երկուսն եկել են, զլխիդ զուրբան, բայց մնացողները հենց խմանաս փախս են տալիս. Մելիք-Բաղալը, սաքի թէ, զլխացաւ ա բանել, տեղն ա մանել քնել, ոնց որ տեսնում եմ՝ աղուէսաւատի ա տուել. մինը հանդին ա գնացել, մէկելլ ջուր ա ջրում, Ղազարն էլ ատում էր՝ թէ թուրքերը նախրիցը մեր կովը քշել տարել են, մաշաղի Նասիր-Բէղին երեք մանեթ եմ խոստացել, գնացել ա տեղն արել, գնում ենք յետ բերելու. իմ կարճ խելքովն ամենքն էլ մշանեք են ասրբած, զրանք պտի հաւաքուած ըլնին Մելիք-Բաղալի տանը, զուռը ծածկած՝ Արտօյի համար քար հաւաքելու պատրաստութիւնումն ըլնին, չեն ուզում դալ:

— Տօ՛ զիժ ես, ի՞նչ է, անդի՛տ հայվան, ձողու պէս բարձրացել ես, տարին 12 ամիս զօրութիւնս տեսնում ես, զիտես, որ թրիս երկու կողմն էլ կարում է ու էլի գուրս ես տալիս, թէ չեն ուզում գալ՝ ի՞նչ կը համարձակուեն, թող մի չը գան՝ տեսնեն:

— Աղա՛յ ջան, որ Արտօյի քարը դուս զայ, ի՞նչ կ'անենք, էղ թղթերի կէսը ջուր կը դաւնայ: Խուդոն զլխով ցոյց տուեց սեղանի

վերայ դիզուած մուրհակները. համա դու ինձ զլամսի շինի, տես ո՞նց եմ տարին չը բոլորած՝ շղզկան մանկթներն առաջիդ կիտում. տես հինգ, տասը մանկթով ո՞նց եմ քեզ հազարներ աժող բաղերի ու մին հարիր արդում (աբրիւնք) տուող հողերի տէր շինում, հօ՛ դիտես, որ ձեռիցս կը դայ:

—Դէ՛, ձայնտ քե՛զ քաշիր, կո՛վ, դու էլ կարծում ես, թէ քո շնորհքն է, որ այսօր մարդամիջ ես խառնուել՝ ճռպոտում ես, տօ յիմա՛ր, ես որ Ավդալովին չը խնդրէի, քեզ ձիաւոր չը գըրել տայի, վերջը զեմսկի սորեադնիկ չանել տայի, քեզ ո՞վ շան տեղ կը քցէր, տ'օ, ասում են՝ ձի թիմարելու շընորհք էլ չես ունեցել. տամա անդամ ուրեադնիկդ գանդատուել է Ավդալովին, թէ ձեռքիցդ ոչինչ շնորհք չի դուս գալիս, բայց նա հրամայել է իմ խաթեր պահել. տօ՛, եթէ ես ամեն բանում քեզ չը հովանաւորէի, հացի տէր չանեի, դու հիմի ո՞րտեղ կը լինէիր, քեզ ո՞վ սուզիա կը շինէր. կո՛րի աչքիցս, յիմա՛ր ապերախտ, լոյսը չը բացուած՝ իմ փողերս բե՛ր, որ հինգ տարի է աւանց շահի վրադ տնքում է, ես կարող եմ առանց քեզ իմ պարոքերս հաւաքել. բաւական է, որ Արտօյին կանչել տամ, երես տամ՝ դրանս շունը կը դառնայ, իսկ եթէ եղուց մլքերդ ծախել տամ, փողս վերցնեմ, դու քաղցածութիւնից ճաշին կը քնես:

Խուզօն տեղն ու տեղը չոքեց:

—Ես զլուիս քարովը տուի, տաներիդ մեռնիմ, քո մի բալի զլխովը պտիտ տուր ինձ ու աչքդ վրիցս մի՛ հեռացնիլ, ես քեզ բարկացնելու մտքով չ'ասեցի, խօսք էր՝ լեզուիս տակից փախաւ. ողջ գեղն ու մհայն ա վկայ, որ ես, իմ կնիկը, իմ երեխէքը, տունս, տեղս, քո ծոխանքաջրովն (ահան լուացած ջռով) ենք ապրում, քո թիկունքովն ենք մարդամիջի մարդ, թէ չէ ես ո՞վ, Խուզօ բէզն ո՞վ:

—Հօ հիմի հասկանո՞ւմ ես:

—Զանս էլ չի դուս գալի՞ս, ինձ ոչ ով գզիր չեր շինիլ, ոչ թէ սուզիա ու էղուց՝ զլամսի:

—Ազա՛, ա՛յ զլխամեռ, իրա՛ւ, ի՞նչպէս ես դատաւորութիւն անում, ախար դու զիր չը զիտես, ժպիտն երեսն առած՝ քաղցրացաւ աղան:

—Տօ՛, զլխիդ արեիդ մատա՛զ, ո՞վ ա բան հասկանում, որ ես

Հասկանամ, սաքի, հողի՝ ունիմ տալացուկ, տեղն եկած վախոր
մարդ պաի ճշմարիտն ասի, մեր էս ողջ մհալումը նոր օրէնքները
հասկացող զլամնի միայն Արտօն էր, որ կար, որ վեց ամսից զգուաց-
րինք թուցրինք, թէ չէ ի՞նչ զատաստան, ի՞նչ կարդ ու կանոն, մե-
նակ պիսլըն ա խզմզում ու տուղիքն էլ՝ ձեռք դիսեցողը ձեռք աքա-
շում, զալամ չիմացողի տեղակ էլ յետ ինքը պիսըլը գրում ա ու
տակն աւելացնում, թէ «դիր ու զիտենալով» ինդրանօք զրեցի և
վկայ եմ: Հէնց էս զբսի փօրմերն են, թէ չէ էլ յետ վաղուցուան
տանուտէրութիւնն ա, դատաստանն օր յառաջ տանուտէրն իր քուր-
տու տակին ա տեսած ընտում ու փողերը չէրն ածում, մենք էլ մի
զհիցն ենք մեղ համար ճանգում ու ծծում: Նորը հնից ընդով ա
ջոկ, որ յառաջ ուտողը մին էր, հիմք՝ մի քանիսը:

—Եդ թո՛ղ, եկողներն ո՞վ են:

—Դարբնենց Մատօն ու փոշմանենց Սարօն:

—Փողերը բերել ե՞ն:

—Դեռ, աղայ ջա՞ն, փողի վրայ խօսք մի՛ քցիւ:

—Յետոյ դրանց ձեռքներիցը բան դալիս է՞:

—Ո՞նց չէ, աղայ ջա՞ն, մինն էս օր զլամնու կանդիտաստ ա,
մէկն էլ ամբարդար ու բազորշիկ՝ ապքի թէ խարջ հաւաքող, եր-
կուսի դունչն էլ մեղրի միջին թաղուած ա. մեր զլամնին Սարօնի
հետ չէ որ իր կանդիտաստ ա, համա Մատօնի հետ մին են, ամ-
բարի ցորենը քամուն են տուել պրծել, հաւերի կուտ էլ չի մնացել.
երկու շաբաթ ամեն զիշեր դուս էին տալի, հշակչու քարվանով զբր-
կում Երևանայ բազարը ծախում, վերջը մի զիշեր էլ տան ծածկը
քանդեցին թափեցին ու ախտ (ակա) գրեցին, թէ ամբարը քանդ-
ուեց, ցորենը հողի հետ խառնուեց, խարջ հաւաքելուս էլ խարջի
չափ մասրափ (ԳԵ-ՂԱՖԸ է եղած ներդին ծափ) են քցում ու հաւա-
քում, իրար հետ լավում: Քա՞նդել են զեղը, քա՞նդել:

—Լա՛ւ, լա՛ւ, կանչի՛ր ներս զան:

—Հա՛, աղայ ջա՞ն, լաւ միաս եկաւ, եալսէս աղասի մեր լա-
կոտի ձեռիցը:

—Խնչ լոկոս, Խուզո՛:

—Եմ շան տղի՝ մեր երեւանի՝ քեղ ծառայ Կարօնի. զլուխս
տանում ա, թէ Ալէքենց Բարսեղի աղջիկն ինձ համար ուղի:

— Տօ՛ գետինը մտնես, ես էղ լսել եմ; դու էղ ի՞նչ գլուխդ քարովն ես տալիս, ուզում ես քեռուդ թոռն ուզիլ տղիդ, բաս դու Ասուածանից չե՞ս վախում, զլիսիդ կրակ կը թափի երկնքից: Դու հիմի սուտ չես հաշում, թէ Կարապետն է զօռ անում, հիմի քո միտքդ չէ Բարսեղի կայքին տիրանալ, արի ուզիդն ասա՛:

— Քո ոսն իմ զլիսիցը շատ գիտի, է՞ն ա հասկացել ես. մեր պապի յետ քցածը քանց Պետրոսենց Գալօն տանի ուտի ուշունց տայ, հազիր մենք ուտենք, ողորմի տա՞նք:

— Աղա՛, էղ ո՞ր ճանապարհովն ես ուզում անիլ:

— Քո սայովն (օգոստ-նետին), իմ զլիսի ուէ՛ր ու տիրական ջան:

— Այ անհոգի, մի տեսի՞նքան շրհաս է, մէջն արիւն է խաղում:

— Ե՛հ, աղայ ջա՞ն, քո ձեռին ձի՞, արիւնն էլ կը ցամաքացնես, շրհասն էլ հաս կանես:

— Փանի՞ պորտն է:

— Պորտի ու փորի հետ ի՞նչ բան ունիս, աղայ ջա՞ն, սուտ չը կայ՝ հալալ քեռուս թոռն ա՝ որ ուզում եմ իմ Կարօցին:

— Աղջիկը շատ է սիրուն, որ աղէդ գժուել է վերան:

— Քո մեղաց պարտական ըլիմ, թէ աշքս աչքին առած ըլնի, կամ Կարօցի մոտքովն անց կացած ըլնի. մլքերի համար եմ ուզում:

— Ասում են, աշքի մէկը կոյք է, տնա՛քանդ, հեղնեց Բալասան աղան:

— Տօ՛, թո՞ղ քաշալ էլ ըլնի, զլիսիդ մեռնիմ, իր բաղերի թփերիցը կը քաղենք՝ զլուխը կը ծածկենք, իր հաւողի պտղները աշքը կը դնենք՝ պիսպիկ (բեռ) կը շինենք. երեք էնպէս բաղ ունի, մի քանի էն տեսակ բարելի հողեր ունի, որ օխոր ձեռնանի աղալոր պէս ամեն վախս նեղութիւնիդ կը հանեն:

— Այ գետինը մասած, ախար Գալ-ափունի տղէն մեղք ա, ասում են՝ երկու տարի ա իրար սիրել են, ասում են՝ հաստատ խօսք են սուել-առել, էքուց-էլօր նշան պէտք է դնեն:

— Ե՛հ, աղայ ջա՞ն, էն վաղ էր, որ նշանն ու հաստատ խօսքն անց էր կենում, հիմի պատկուած կնիկն էլ, ասում են, մարդին չի հաւանում՝ թողում ա գնում՝ ուրիշի կողքը տաքացնում. հիմի, ասում են, աշխարհքը լուսաւորուել ա, զեղեն ընչի՞ չը պոի լուսաւորուեն:

— Բաս մեղք չե՞:

— Մեղքն ու վարձքը ձեր չինովնիկներիցն ու զիստոններիցը հարցրո՞ւ. ատում են՝ հիմի էս ա զուս զնում. տեսար միի կնկայ աչքու մնեղ կայ՝ ուժումդ կայ, գլխին բամբաչի՛, ձևուիցը խլի՛:

— Ե՛, շատ լաւ, ասենք թէ հոդիներս մի քի՛ ժամանակ սկսենք, բանք զլուխ բերենք, ես ընչո՞վ պէտք է հոդուս ճանապարհը մաքրեմ, չէ՞որ այս մեղքը քաւել կուզի, ժամանակառագի խաչհամբոցը է պէտք, ո՞րտեղից:

— Քո զագաթը ո՞ղջ կենայ, քիչ կա՞յ, աեսնում ես պստի Մասիսը՝

Խուզոն ժապալով աչքով ցոչց տուեց մուրհակի կոյալ:

— Այ անսպիտան, ազա՛, զու բոլորովին մուֆտախոռ. (չըկաներ) ես եղել, զեռ տանուտէր չես դառել, աշքու ուրիշի դրանն է:

— Ըստի՞, քեզ մատա՛ղ, երեք տարի ա տուղիս չե՞մ:

— Աւրեմն շատ կաշառք ես կերել:

— Քո զլխովն եմ երգում ուտում, անհատնում աղբիւր ա, որ լիուլի խմում ենք ու քեզ կեանք ու արե խնդրում:

— ԶԵ՛, Խռողօ՛, չէ՛, լուրջ դէմք առաւ Բալասան աղէն, շատ դժուար գործ է այդ, մինչև գործակալին ու վանքումը բան կը հասկացնեմ, մինչև ճանապարհը կը դտնենք, հոգեհան կը լինենք, ի հարկէ մէջտեղը փող կը խաղայ, առանց դրան չի լինիլ, այդ ամենն իւր կարգին դու կը քաշես. բայց պէտք է ինձ հաստատ խօսք տաս, որ պսակուելուց յետոյ Բարսեղի վերի բաղն ինձ տաս:

— Ողջ տուն ու տեղս քոնն ա, աղայ ջա՞ն, բայց ես Բարսեղին ո՞նց խօսք հասկացնեմ. նա քանի կենդանի ա, մեզ մի չոփ չի տալ, որ աշքներս կոխենք:

— Դու էս օրուանից ինձ խօսք տո՞ւր, մնացածն իմ վզին:

Խնչղէս երեւում է, Խուզովն շատ հաճոյ շեղաւ իւր պաշտպանի առաջարկութիւնը. նա հաստատ գիտէր, որ Բալասան աղան այս անդամ կատակ չի անում. այն էլ իրան քաջ յացոնի էր, որ աղայի համար դժուար չէր ամեն ճանապարհ հարթել. խեղճն ատիսպուեց ծործորակը քորելով՝ կամաց քրթմնչիւնով արտասանել.

— Քո ցաւը տանի, աղայ ջա՞ն, էնքան ըլի դու բանը զլուխ բերես, կարօյիս զլուխը մեղի պուկումը թաղես, էն մի բաղն էլ

քո գառլ բալուկին՝ պատիկ աղին. Զալարու հաւողն ա՝ դու էլ կեր՝
մե՛նք էլ:

— Որ այդպէս է, գնա՛ ներս բեր այն պարօններին:

Ժ.

ՎԱՍՆ ՄԵՂԱՅԻ ԽԻԹԵԱՆՑ ԽՈՆԱՐՀ ԵՂԵՆ ՑՈՅՃ.

Ամեմ քայլուածքով, ձեռքերը խալաթի զրպանը դրած՝ չափում էր Բալասան աղան սենեկի ցատակը, երբ դուռը բացուեց և Խուզօյի առաջնորդութեամբ շարուեցին իւր առաջին երեք հոգի և բարի գալուստ մաղթեցին նրան:

— Օհո՛, դու էլ, սուդիա Դաւիթ, մեր Խուզօն քեզ համար
բան չասա՞ց:

— Ես նոր եկայ, աղայ ջա՞ն:

— Էլ ի՞նչ փորացաւանք ունիս:

— Դեռ սրանց հրամանք արա՛, յեսոյ կը խօսենք:

— Սրանց ի՞նչ ունիմ ասելու, ես չեմ կանչել. մեր Խուզօն եկաւ
ասեց, որ ուզում են ինձ տեսնել. ի հարկէ պէտք է զային, իրանք
իրանց պարտականութիւնը գիտեն. Մատօյի պարտքի ժամանակը մի
շարաթ է լրացել է, Սարօյնն էլ երկու օր կայ. շնորհակալ եմ,
զիտեն, որ ինձ փող է հարկաւոր, բերել են. սպասէ՛ք մուրհակը
հանեմ:

Աղան ձեռքը ծոցը տարաւ և մի քանի թղթեր հանելով՝ սկսեց
քրքրել:

— Նեղուժիւն մի՛ քաշիլ, աղայ ջա՞ն, միաբերան խօսքը դուրս
թռաւ երկուսի լեզուի տակից, մենք պատրաստութիւնով չենք եկել,
սուդիա Խուզօն մեզ կանչեց:

— Թէ չէ գալու չէիք:

— Պէտք ա ժամանակ տաս, աղայ ջա՞ն, թուղթը նորենք:

— Բերան չը բաց անէք, նեսկօն մեռնի, թէ սուտ եմ ասում,
մինչեւ վիզ թաղուած եմ:

— Խնդրում ենք՝ կենտ երկու ամիս, բամբակը գնումն ա՝ չա-
նաքինք, զղիսենք մաշինումը, ծախսինք, մեր հոգու պարտքը
սանիք:

— Մի օր չեմ կարող համբերիլ, պէտք է, նեսիօյիս արևն եմ ասում, տանը հաց չը կայ, երեխայ ծախելու տարի առ

— Կարաները զինով լիքն են, քնջիթը դայինիունումն (Հեթափ-քի չիւտահանք) ընկած ա, հերթ չը կայ, խալվարներով չալթուկին էլ տեղ չը կայ, բայց որ ոչ հանած ա և ոչ զին ա գնում, ժամանակ տուր, կիսադնի ջուրը չը լցնենք:

— Մա՛րդ էք՝ հասկաց՛ք, զրապանումն մախելու կոպէկ չը կայ: ոռնկիս արան էն զլսիցն եմ հնձել, կնկանս շոր շունի, ինձ փող է հարկաւոր, էզո՛ւց ևեթ, զրա համար եմ բանից, գործից աւարայ եղել, եկել. ես հօ՛ ձեզ պէս անդործ մարդ չեմ, մի օր եթէ դուր-լուղի դրժն յետ թողամ՝ տնով-տեղով սիրելրական կը լնիմ:

— Ի՞նչ անդործ մարդիկ ես զտել, աղա՛յ, ասաց անուտերի կանդիսաս Սարօն, զարունքը զալիս ա՝ մատներիս միսն ուտում ենք, զիշեր-ցերեկ տնորսովի շան նման տանջուում ենք, հետն էլ զեղամիջն հասարակութիւնի ցան ենք քաշում, խախալի (ցորենի հաղ) զլուխը մի բան չենք քցում, էլի՛ երեխեքը տկլոր, էլի՛ մի կտոր ցամաք հացի կարօտ. դէ՛, ո՞ւր ա զնում մէր աշխատանքը, ի հարկէ, քո հրամանոց քիւնն ա մտնում. զլուխս քարովը տուի, ասացի՛ իմ պապի արհեստը թողամ, սովորաքեարութիւն անեմ, եկայ քեղանից 150 մանեթ վեր կալայ. էս ա հինգ տարի ա, հինգ էնքան տուել 500 մանեթ էլ կայ. էլ ի՞նչ ես ուզում, աղայ ջա՞ն, խալ-եմ, զեռ. մանեթ էլ կայ. էլ ի՞նչ ես ուզում, աղայ ջա՞ն, խալ-եմ զնում են, բաղ են տնկում, հողագործութիւնի մէջ կեանք ու խը զնում են, բաղ են տնկում, հողագործութիւնի մէջ կեանք ու արեւ են մաշում, տաւար, ոչխար են պահում, արեւի տակին, սարե-արեւ են մաշում, տաւար, ոչխար են պահում, արեւի տակին, սարե-րի թմբին գող ու աւազակի, գէլ ու զաղանի հետ են կոռում, թէ ի՞նչ ա՝ մի կտոր ցամաք հաց գտնեն իրանց երեխեքանց հա-մար. գու քո հրամանքդ ամառը եացլազների (ամառանոց) հովերումը, ձմեռը գոգուան (բարբառաւած) բուխարու կողքին՝ կակուզ բարձի վր-բայ թինկն ես տալիս, էլ զեղցու վրայ միոք էլ չես ցաւացնում, հիմի էլ եկել ես, երկու ոսներս մի մաշիկ զնում (սովիպել), բողազ-զիմի էլ եկել ես, թէ տուէք. հէր օրհնած, մեզանից էլ լաւ կթի ներիս չոքել ես, թէ տուէք. հէր օրհնած, մեզանից էլ լաւ կթի բրդած կերակրի զլիսին նասի ու Ասոծուն փա՛ռք տուր:

— Դէ՛, անպիսա՞ն վուշ, յանկարծ կրակ կտրուեց աղասն և ի՞նչ-

պէս թնդանօթի պայմթիւն, տունը լցրեց իւր խրոխտ ձայնով, ո՞ւմ զլիին ես զայլի աւետարաններ կարգում, ո՞ւմ հետ ես կատամանին քցել (նուակցել), քաղցր զրոցներ ու կծու յանդիմանութիւններ անում. մյուսներ տի թակուի, նո՞ր ես իմանում, որ տաճաւալատիկը կը առանամ, քեզ համա՞ր եմ գտալը քրտինք թափել. քամակիցդ վառած մեղբամումը ուղարկեցի, եկայ ո՞տքդ, լնողեցի որ գաս ինձանից փո՞ղ տանին. հենց գիտէիր, թէ փողը ցանո՞ծ է. զու ժամանակին բերիր պարտքդ տուիր՝ ես չը վերցրի. կորի՛ այս րոպէին, իմ փողերս բեր, թէ չէ էզուց վիզդ պարան կը քցեմ; առզի զուուը քաշ կը տամ, շո՞ւտ, ասում եմ:

—Բաշխի՛, աղայ ջա՞ն, հանաքէի անում, ես չ'ասեցի, որ նեղանաս:

—Չա՛յնդ, անտաշ անսպիտա՞ն, ո՞ւմ հետ ես հանաք անում, ես քո հանաքարնեկե՞րն եմ, չափդ ճանաչի՛ր, տես ո՞ւմ հետես խօսում, մուժի՛կ գիւղացի, սկատի՞նա, անտառն. չորացի՛ առաջիս, ուղիղ կանգնի՛ր, սմի՞րնօ', պօդլե՛ց, սվինիա՛, բերգումը կը փտացնեմ քեզ, զու. չինոմնիկի հետ հանաքներ ես անում հա՞ երես տուի՛ ասուու. է՞լ ուղեցիր:

—Գլուխը քա՛րը տուեց, զլիսի՞դ մեռնեմ, մէջ մտաւ սուզիս Դաւիթը:

—Մեր գլամիսու կանդիտատ Սարօն լսու մարդ ա, աղայ ջա՞ն, ների՛ր, զա միշտ իր գլուխը քեզ համար յետ դրած ունի, յառաջ եկաւ Խուզօն, ինքը մի քիչ հանաքչի ա. մեզ որ ասում ա՞ ծիծառ զում ենք, հենց իմանում ա, թէ ամենքին էլ մի գազով կը չափեն, զէ՛, էշ գեղցի ա, ի՞նչ ա իմանում, թէ մուժիկն ո՞վ ա, չինոմնիկը ով:

—Չոքի՛, Սարօ՛, չոքի՛ ոտը պաշի՛ր, կուուը բունեց ու կուացրեց Դաւիթը, մէր աղէն ա, թո՞ղ իր քաղցր բալին բաշխի:

իեղծ Սարօն ծնկների վերայ եկաւ և լուս գլուխը ծուկ էր:

—Յետոյ փողերս ե՞րբ պէտք է տաս:

—Մի երկու ամսից, աղայ ջա՞ն, կը վերջացնեմ:

—Տօ՛ վերկա՛ց, ա՞յ տիմար, նորից քաղցրացաւ Բալասան աղան, զու որ քո անգէտ գիւղացութիւնովդ հանաք զիտես, բաս մեծաւորներս չը գիտե՞նք. տեսա՞ր, ո՞նց փորդ կատու քցեցի, չէ՞որ ես

Էլ քեզ էի փորձում, հա՛, հա՛, հա՛. ա՛յ յիմար, քեզանից ո՞վ ա
փող ուզում:

—Կատուին խաղ ա՝ մկանը մահ ա. լեզիս ջուր շինեցիր,
պլիսիդ մասու՛ղ, ախար ես էլ զարմացայ, էնպէս բան չ'ասեցի, որ սրբ-
ախ դիմուի, կմկմաց Սարօն:

—Դու էլ սրա պէս էլի, Մասո՛, թուղթը նո՞րում ես:

—Հա՛, աղայ ջա՛ն, ժամանակ տո՛ւր:

—Աչքի՛ս վրայ, էգուց գնացէք երկուսդ էլ մուրհակներ դրել
տուէք, ըստ առաջին պահանջման, զլավնու փեշազը թէկուզ չը
լինի էլ, վնաս չ'ունի, բայց գնել տուէք. եթէ գիւղումը վէքսիլի
թուղթ չը ճարուի, ինձ մօս կայ, երեկ կօզնաչէցը տուեց՝ թէ քեզ
մօս շատ եկողներ են լինում՝ ծախսի՛ր, խազնին փող ա պէտք:

—Մի՞թէ խաղնէն էլ կարիք ունի, աղայ ջա՛ն, հարցրեց Խուղօն:

—Տաւա՛ր անասուն, թագաւորի խազնին պրծնում կա՞յ, կօզ-
նաչէցը մեզ՝ իր բարեկամներին տալիս է, որ ամեն մի թղթի զնից
մի ապասի աւել առնենք, իր համար չայ-շաքարի փող դուս
գայ. դէ խազնումը որ ծախսուի, նշանակած զնից աւել չի կարող
առնել:

—Հա՛...

Քալասան աղէն պօրափելը վերցրեց, հանեց ծալքերից մի կապ
վէքսիլի թուղթ, ջոկեց երկուսը և տուեց Խուղօյին:

—Ահա՛, սրանց կը տաս, թո՞ղ զրել տան, նշանակած զներիցն
էլ հինգ հինգ շահի աւել կառնես, կը բերես:

—Մի շահին էլ ճուտեր հանե՞ց, աղայ ջա՛ն, ծիծաղելով տասց
տուղիա Դաւիթթը:

—Այ անհասկացող, անունդ դրել ես գատաւոր ու գլուխդ քա-
րից պինդ է, բաս ես նեղութիւն չեմ քաշել, շալակել հետո բերե՞լ,
էն էլ իմ ոտքի վարձն է:

—Մեր զիւղի զուքանները լիքն են, աղայ ջա՛ն, նրանք ամեն
մի թղթից երկու շահի են աւել առնում:

—Դէ՛ նրանք հասարակ դուքանչիք են, նրանց ծախսը քիշ է,
հինգ կոսկէին էլ բաւական է, բայց դու արի՛ ու մեր մեծաւորներիս
ծախսին դիմացի, Աստուած վկայ եմ ասում, մինուճար Նեսկոս մեռնի,
թէ խօսքումն ստութիւն կայ, հայ էք՝ հաւատացէ՛ք, ծախսի ձեռ-

քից գլուխ չենք թափում, գիտէ՞ք ինչ թանգութիւն ա, երեխայ ծախելու տարի ա, նեսկօն մեռնի, թէ սուտ է:

—Հեռի՛ քեզանից, աղայ ջա՞ն, հաւատում ենք, հօ թուրք չե՞նք:

—Դէ էլ հօ բան չունի՞ք ասելու. գնացէ՛ք, ըստ առաջին պահանջմանը չը մոռանաք, հիմի նոր օրէնք է դուրս եկել, ել ժամանակ նշանակել չը կայ:

—Աղայ ջա՞ն, թո՞ղ երեք ամսով զոնէ դրուի, վա՛յ թէ շատ նեղութիւն քաշենք:

—Ա՛յ տղէք, էլի քիչ մնաց բարկութիւնս բերում էիք, տօ՛, ձեզանից ո՞վ է փող ուզում, պահեցէ՛ք՝ ինչքան ձեր սիրաը կ'ուզի:

—Է՛, խնամի Դաւիթ, դո՞ւ ինչ զուլլուզ, կամ աղդ կը լինի պակաս, կամ մաղդ էլի:

—Քեզ յայտնի ա, աղայ ջա՞ն, որ իննը տարի ա՛ ես սուզիի կանդիտաս եմ. որ սուզիէն դատարան չի գալիս, ինձ են քաշ տալիս նստացնում. աշխարհքը չի ու մենծութիւնի տէր դառան, ես մի մեղալի կտոր էլ ա չունիմ, բաս իմ պատուին ամօթ չի՞. ինչ կընի իննամքդ բաց անես, ինձ համար մի մեղալ բերել տաս, ե՞ս էլ քաշ անեմ, էլ շատ ա սիրոս ուզում:

—Հենց էդքանը. օրն էդո՞ւց:

—Ղո՞րթ, աղայ ջա՞ն:

—Նեսկօն մեռնի, թէ սուտ եմ ասում:

—Վա՛յ, ես քո ոտքերին զուրբան զնամ:

—Տօ վատը դո՞ւք էք, գո՞ւք, ա՛յ անաղուհաց քրդի շներ, ես միշտ ձեր քամակին մեծ Մասի պէս կանզնած եմ, բայց դուք չէք հասկանում. ձեզ լաւ յայտնի է, որ էս ուէզդումը դեղ չը կայ, որ ինձ պարտ չընեն—Վաղարշապատ, Աշուարակ, Նդվարդ, Փարրի, Բիրական, Շարուր, Դարալագեալ բոլոր իմ ճորտերս են. քաղաքումը բանկերն են ինձ պարտ, գիտէ՞ք բանկն ի՞նչ ա. բայց ի՞նչ ձեր յիմար խելքի բանն է, էդ թող, սուլթաններն ու խաներն են բռում. դրանք ամենն իր կարգին, ես միայն իմ գիւղն եմ սիրում, ընչի՞—որովհետեւ մարդիս համար իրանը միշտ քաղցր է, իմ պորտս էս գեղումն է կտրուել, իմ ծնած տեղն է, իմ հող ու ջուրն է, ինձ համար ձեր մի մազը ուրիշի զլիսից բարձր է, ինչ ցաւ ունիք՝ ասացէ՛ք, իմ սիրոս կը պատուուի, որ բաց աչքով տեսնեմիմ

գեղացու նեղութիւնն ու չօգնեմ. որտեղ նստում եմ՝ ձեր վերայ եմ
խօսում, մեր մեծաւորների հետ ճաշի վրայ ձեր կենացն եմ խմում:

— Ասոււած կեանքդ երկար անի, աղայ ջա՞ն, ի հարկէ որ մեր
պարծանքն ես, համա մի խնդիր էլ ունիմ, աղայ ջա՞ն, շողոքորթ
հաճոյախօսութեամբ ասաց Դաւիթթը:

— Ասա՛, մի՛ վախիլ:

— Մի քիչ փող էլ ա պէտք, մի 150 մանէթի ձեռ բռնին

— Ա՛ռ վէքսիլի թուղթը, էգուց գրել առոր՝ բե՛ր:

— Տարով եմ ուզում, աղայ ջա՞ն:

— Վնաս չ'ունի, դու մի տարուայ շահն էս զլիսից հաշուիր
թումանին մի ապատվ, զրի՛ր ըստ առաջին պահանջման,
մինչեւ տարին քեզանից վորդ ուզող չը կայ:

— Էն ա դուզ տարի զրենք էլի՛:

— Զի՛ կարելի, օրէնքը թոյլ չի տալիս:

— Էդ օրէնքն ամենքի համար ա՞ , աղայ ջա՞ն:

— Ո՛չ, միայն մեծաւորների պատիւն է այս:

— Քո կամքն ա:

— Նստեցէ՛ք, տղէ՛ք, կանդնած ոտքներս սեւ ջուր վէր եկաւ:

— Կէ զնանք, աղայ ջա՞ն, էլ քեզ ի՞նչ նեղութիւն տանք, ասա-
ցին ամենքն և գլուխ իջեցրին:

— Ի՞նչ անշնորհք մարդիկ էք, ա՛յ մուժիկներ, վեց ամիս կայ՝
գիւղը չեմ եկել, մէկդ չեք հարցնում: Հիմի էլ եկաք, ձեր գործը
հոգացիք ու ձեռաց գնում էք. նստեցէ՛ք, քիչ զրոց տանք, ասու-
լիս անենք: Ազա՛ Խուզօ, էս շկաֆը բաց արա՛, արազի բուժիլը բեր,
էլի ես ձեզ պատուեմ, թէ չէ ձեզանում քաղաքավարութիւն չը կայ:

Ամենքը նստեցան և մի մի կթղայ օղիով օրհնեցին Բալասան
աղայի կեանքքը:

— Տե՛ս էդ տեղ ի՞նչ միրդ կայ, բեր թո՞ղ բերանները քաղցրաց-
նեն, հրամացեց աղան և Խուզօն մի քանի խնձոր յառաջ բերեց:

— Բե՛ր, ա՛յ որդի, բե՛ր, մուժիկից շնորհքը վերացել է, բաղերի,
բառանների, շալթուկի, շիրբախտի, լաւ մրգերի տէրերն իրանք են՝
ես եմ դրանց համեցէք անում: ասենք՝ էս մեր Խուզօնի կինն էր ու-
զարկել, անփող է, բայց մեր տան վերջին չոփն էլ փողով է ներս
զալիս, ո՛չ մի բարեկամ, ծանօթ, ազգական, գիւղացի, ընկեր միտք

չ'արեց՝ թէ տարուայ իւր բերքի ժամանակ՝ ք:ից շատից՝ ինձ համար բաժին ուղարկի. ձեզանից ի՞նչ կը պակասի, որ ամեն մէկդ իր ու նեցած զինուց, արաղից, մրգից, բրնձից, լաւ ձաւարացու սպիտակահատ ցորնից իմ բաժինը հանեք, նրանով հօ քանդուիլ չէք. աղքատ էք՝ հարստանալ չէք, հարուստ էք՝ աղքատանալ չէք, սուտ եմ ասում, աղէք:

—Մեզ համար շատ ամօթ ա, աղայ ջա՞ն, լաւ ես հրամանք անում, կրկին զէմքը ծուեց Դաւիթը, մեր ա՛շքի վրայ:

—Արաղը քո շնչին՝ Մատո՛, ես եկող շաբաթ մեծ ճաշ ու նիմ, մի մեծաւոր ինձ գեղեց է տուել, որ մի օր ճաշին ինձ մօտ պէտք է լինի, երկու լիար արաղ կերթայ, եղ թող քո պարտքը լինի, միւսներդ էլ ձեր մէջ հաշուեցէք՝ թէ էն օրուան տանձ ու խնձորը ո՞րդ էք բերում, միւս բաներն էլ ուրիշների վզին կը բարձնեմ:

—Քո ցաւը տանի մի տիկ արաղն, աղայ ջա՞ն, բայց աչքս էլ որ հանես, ճշմարիտը պէտք ա սսեմ, մի՞տդ ա, հերու, որ քեզ համար երկու լիար մեղը բերի լսից սիպտակ:

—Հա՛, հօր հոգու չէր, չհասի համար էր:

—Ինչ կուզի ըլնի, մին ա. բանն էս ա, որ հրամանքդ բալկոնի վրայ կանդնած էիր ու քո բարի աշքովդ տեսար, որ քո ծառէն աշխանէզ էլ չը թողեց ինձ, բակի դռնիցը չետ դարձրեց: Քեզ շխասին ասեմ, աղա՛յ, սրտիս շատ զիպտաւ:

—Յետոյ ես բալկոնումը միայն էի ու քեզ վերև չը կանչեցի՞, հետդ չը խօսեցա՞յ:

—Զէ՛, մօտդ մի ուրիշ աղայ էլ կար:

—Ես էլ հէնց զրա համար չը կանչեցի է՛, բաս դու չը զիտե՞ս, որ ինձ անպատճութիւն էր ուրիշ անծանօթ մեծաւորի մօտ մուժիկի հետ կանգնել մասլահաթներ անել. ի՞նչ անենք, թէ ծանօթ բարեկամ ես, իմ հարազատ եղբացն էլ որ գալիս է, է՛լի իմ սենեակը չի մտնում, նրա տեղը կուխնին է, որ կայ. ողորմածիկ հէրս էլ որ կենդանի լիներ, վերև չէի թողնիլ. ի՞նչ կառեն ինձ իմ ընկերները, ձեզ եմ հարցնում, չէի՞ն ասիլ, թէ սա ի՞նչ մարդ է, որ իր հացը սա է: Ախա՛ր դուք չը զիտեք, մի անգամ քիչ մնաց երկրիս մէջ թքանք էի դառնում. լուսահողի մայրս մի ձմեռ իւր

տունն այստեղ թողած՝ եկել է, թէ ուզում եմ ձմեռը քեզ մօտ անցկացնել, մխից ձանձրացել եմ, տում է հազում եմ, ծերացել եմ, ել չեմ կարողանում դիմնալ, որպէս թէ նրա պրառը ծխի միջն չի կարուել: Ինչ և իցէ, մի մենեակ յառկացրի իրեն, որ այնուեղ վեր ու նիստ անի մեր պառաւ քօծի հետ, իւր համար ուտի, խմի, քնի, հանգստանաց: Դու մի՛ ասիլ, զա խիստնեղացել է, որ մեզ հետ մեղան չենք նստացնում, քօծի հետ ենք ճաշ տալիս. ոէ զիւղացի մուժիկի պառաւ կին է, նրան ի՞նչ վայել էր զլիսաբաց հասկացող հարսի հետ ձգուել: Սա մաքումը խէթը պահում է: Մէկ օր մեզ մօտ քսանից աւելի խանումներ են հաւաքուած՝ լոտո են խաղում, միւս կողմումն էլ սեղանը սարքած է քաղցրեղէնները շարած՝ որ լոտօցից յետոց վեր կենան անուշ անեն: Հէնց լոտօցի տաք ժամանակը, յանկարծ իմ խայտառակչի մայրս զլուխը փալաներով փաթաթած՝ ճղճզոսուած շորով, բոբիկ ոտներին հին չառերը (Տաճակ) ծլմիացներով՝ տուն է գալիս, բար՝ իրիկուն ասում՝ ու մօտենում կարգով բոլորին ձեռք տալիս:

— Գօշա՛զ, քեռամի՛ն, հաւանեց Մատօն:

— Ել ի՞նչ զօշազ, հիւրերի մէջ փափացն ընկնում է, իրարուաչքով են անում և քթի տակին ծիծաղում:

— Նանի՛, ո՞ր տեղացի ես, հարցնում է խանումներից մեկը:

— Հէնց էստեղից եմ որ կամ, ծանրագողով սուր եօ զնի ասում է մայրս, ես զաղէ՛ն (Տաճակ), էս տան մեծն եմ, Բալօցիս մերն եմ, սա էլ իմ յարգեսօր հարսն ա, դուք էլ իմ ազիզ աչքի լիս զօնաղներն էք, համեցէ՛ք քաղցրեղէն անուշ արեք:

Հիմա գուշ իմ խեղճ կնոջ զրութիւնը հարցրէք, աչքերը սեանում է, քիչ է մնում սիրով թուլանայ, բայց որ խելօք է, կարողանում է իրեն զսպել. էն կողմիցը զրքանչս վեր է կենում, թէ աղջկէ՛ք, զորթ է ասում խնամիս, հերիք է ինչ խաղացիք, համեցէ՛ք միրգ անուշ արե՛ք:

Ամենքը վեր են կենում, լոտօն քանդուում է:

Երկու ամիս տներումն էլ ուրիշ խօսակցութիւն չը կար, մենք էինք բերանների ծամոնը:

— Հալբա՛թ դու էլ բնդուր համար յետ զրկեցիր ողորմածիկ մօրդ, աղայ ջա՞ն, ասաց Մատօն. լուսահողին շատ էր արտնջում:

շանս քանդեցի, ուե օրով մեծացըի, բերանիս թիվէն կտրեցի, մարդ շինեցի, ասում էր, որ էս օր ինձ մարզառեղ չը քցի:

—Այ եղբայր, ել ի՞նչ կարող էի անել, ձեռքիցս եկածն անում էի, երիւ տարէնը մի շալ շոր էի կարել տալի, բայց նա գոհ չէր՝ տարին մէկ շոր էր ուզում, զլսի շալ, ասզրի մաշխներ, կարմիր զանառոզ, զօշով շապիկ, զալամքեար արխալուզ էր պահանջում, ախար ես ընչի՞ տէր էի, միլիօններ հօ չունեմ. նեսկոն մեռնի թէ սուտ եմ ասում, առած ամսականս ծացրէ ծացր չի հասնում, պարտքով ենք ազրում, զէ հօ չե՞մ կարող այս մի քանի շահին չուր շինել: Հետո փառք Աստուծոյ, մեռաւ, ոյրծաւ, ականջներս հանգստացան:

—Դէ՛, բարի զիշե՛ր, աղա՛յ, ասացին ամենքն և վեր կացանո նուզոն սաստիկ անհանգստացաւ:

—Ի՞նչ էք շտապում, Դաւի՛թ, դեռ նառեցէք մի քիչ հանաք-ներ անենք, մօրս անունը միտքս եկաւ, սիրոս նեղացաւ:

«ոքա նորից նառեցին»:

—Ե՛, ասա՛, Սարօ՛, ի՞նչ կայ ձեր զիւզումը, ի՞նչ չը կայ, բերքն ի՞նչպէս է էս տարի:

—Փա՛ռք Բարերարին, իրա տուածից ամեն ինչ առատ ա:

—Գիւզն էլ հանգստութի՞ւն է, տանուտէրներդ լա՞ւ է կառավարում: զա մի կողմով չեղաւ, թէ տեսնենք դու ի՞նչ շնորհքի տէր ես. ուրիշ կանդիտասներ բազգաւոր են եղել. Պօղոսը, մի տարի չը քաշեց, իր տանուտէրը պօդսուդի (Քննութեան) տակ ընկաւ, տեղը տիրապետեց. Մարկոսն աւելի բազգաւոր էր, Վամիքը մեռաւ, տեղն իրան մնաց, բացց էղ քո պնդերես Կարապետը ոչ այն աշխարհն է զնում և ոչ գործի մէջ է ընկնում. ինչպէս ես նկատում եմ, զու մինչև նոր ընարութիւնը կանդիտատ էլ մնալու ես:

—Էս ա մեր պոչն էլ կը խուզեն էլի՛, ասաց սուզիա Աատօն:

—Ի՞նչպէս:

—Ժամանսկը լրացել ա, նաշալնիկն ապսպարել ա, որ երկ' օրից Զիթահանքումը հաւաքուինք, քար քցենք, զլաղսի ու սուզիէք ընտրենք:

—Հա՞, զարմացական դէմք առաւ Բալասան աղան, մէկէլ օրը ես նաշալնիկի մօտ էի, բան չասա՞ց. սխալ կը լինիս, ա՛յ աղայ, կարծեմ զեռ մի տարի կայ:

— Զէ՛, աղայ ջա՞ն, թուղթն արդէն եկել ա, հինգշաբթի բիրօր
(ըստբռութիւն) ա:

— Ցեաց ձեզանից ո՞րդ էք զլամինի դառնում, ո՞րդ սուզիէք:

— Ո՛չ մինա, ոչ մէկէլս, ասաց Դաւիթը, ջահէլ-ջուհուներն են հիմի աստամները սրել, հիմի նրանք են դեղի քէթխուզէքը, մեր ըստին մտիկ սուտող չը կայ:

— Մեղաւորը հայրերդ էք, ընչի՞ էք ձեր որդւոցն էդքան իրաւունք տուել, ընչի՞ մի քանիսին հասարակական վճիռ չէք շինում՝ Սիրիր քշել առալիս:

— Ո՞ւմ քշենք, աղա՛յ, մինն իմ տղէն ա, մինը քո, մինը սրա հօրօղպօր թուն ա, մէկէլս մի իշխանի քուեր որդին ա, ամեն մէկին ինձ պէս, քեզ պէս օխալ պաշտպան ունի, ոչ դու կը թողաս, ոչ ես, էնպէս ա՞՛, թէ ոչ, Խուզօ՛:

— Դուք էլ այնպէս բան արէք, որ աչքները վախենայ. վերցրէք մի քանի խեղճ, անտէր աղքատի տղայ գեղից դուրս արէք, թո՛ղ ձերոնք տեսնեն ու օրինակ առնին:

— Ո՞ւց, արդարը մեղաւորի տեղակ կորցնե՞նք:

— Որպէս թէ ազուաւները սե կը հազնեն, եթէ տասը չքաւոր ոչնչանան. միշտ ացբակէս է, թոյլը զօրեղի համար է ատեղծուած, արջը գայլին է խեղպում, գայլը՝ ոչխարին, ազուէսը՝ հաւին, կատուն՝ մկանը. ե՞րբ ես լսել, որ մուկը կաստին յաղթի. աշխարհքս էգակէս եկել է, էգակէս էլ շարունակուելու է, խրատում էր հալասան աղէն. ինձանից ձեզ խորհուրդ, ձեռքդ ընկաւ, տեսար որ քեզանից անուժ է՝ փշրի՛, ոչնչացրո՛ւ, մէջուղից քո օգուտալ հանի՛ր:

— Բա՛ս մեղք ու վարձք չը կա՞յ, հարցրեց Սարօն:

— Մեղքն ու վարձքը աէրտէրների սարքած թօռն ա, որ ձկան պէս քեզ մէջը քցի, կալնի ու իր համար կեր հանի, շատ էլ լաւ են միտք արել, բաս նրանք ասզրելու չե՞ն. բայց էս թողնենք, խոսքը փոխեց հալասան աղան, հիմի մաքներդ լի՞նչ է, ո՞ւմն էք ուզում ասնուտէր դնել:

— Գեղը ողջ կաննել ա, էլ յետ Արտօվին են ուզում, ասաց Սարօն:

— Արտօն էսանեղ է:

— Ոչ, աղա՛յ, նախշուանի կողմը զազախներին գարի ա պահ տալիս, ինքն էլ իսկի մի ուզում, բայց գեղը նոր ա հասկացէլ, որ էս

նոր սուպերի սարքուած օրից իրանք մի տանուակը են տեսել՝ էդ էլ
Արտօն էր, որ միայն վեց ամիս համ տուեց ու վերջն իր պատուիցը
վախեցած՝ թողեց քաշուեց:

— Աաւ էր կառավարում հա՞:

— Ախ, մեր գեղն էն օրն էր բազդաւոր, գառն ու գէլն իրար
հետ արածում էին:

— Դէ որ էդպէս է, հիմի էլ Արտօյին ընտրեցէք էլի՞:

— Գլխներիս վրայ կընտրենք, աղայ ջա՞ն, թէ որ համաձայնի.
ասում են թուղթ ա գրել, չի ուզում, ասում են՝ ամիսը հարիր
մանէթ փող ա առնում:

— Հա՛, հա՛, հա՛, բարձրաձայն քրքիչը երկար ծոր էր տալիս
բարձի վերայ յետ գնացած Բալասան աղէն, հա՛, հա՛, հա՛, Գոմ-
շակերենց Արտօն տանուակը թիւնից փախչում է, միամի՛տ մուժիկ-
ներ, դուք էլ հալած իւղի աեղ էք առնում էդ խօսքերը. հարիր
մանէթ, տո յիմարնե՛ր, ես լաւ գիտե՞մ, թէ դուք՝ հինդ օր չը կայ,
Արտօյի խաղեցինը ինձ մօտ ճաշի էր, մի ամիս ա, որ գողութիւնը
բոնել ա ու քո Արտօյին քաղցած փորով դուս շալրուել, զեռ ուղե-
ցել և պօգսուղի տակ ձգի, բայց նա շան պէս ոտքերն է լնկել, լի-
գել, ինքն էլ խղճացել է: Տօ՛, դուք հինց դիտէք Արտօն հիմի էլ
էն է. դողերի թագաւորն է, զիւղը տակն ու վրայ կ'անի, մօր ծիծ
կը կորի. պէտք է ասած՝ այն ժամանակ էլ նոյն էր, բայց մաշեն-
նիկ էր, իր աեղն էր ուզում տաքացնի, որ յետոյ ձեզ տզրուկի նը-
ման ծծի, բայց խովը շուտ քարին առաւ:

— Ո՞վ նրա իշխն չօշ ասեց, աղա ջա՞ն, ինչքան էլ աղաչեցինք,
պանկնոտացինք, չէլաւ, թողեց հեռացաւ:

— Դուք էդպէս կարծեցէք, բայց եթէ չը հեռացել՝ հիմի
կատրքմնիկ կը լինէր, թո՛ղ գնայ ինձ կեանք ու արեւ խնդրի, որ
աչքով արի, մաշեննիկը դուս պրծաւ:

— Կա ի՞նչ էր արել, աղայ ջա՞ն:

— Բաս էն ոչինչ էր, որ օրական նա մի մարդից երեք մանէթ
շարավ էր խլում, բաս էն ոչի՞նչ, որ մեծ ու վոքր չը հարցրած՝
բանա էր գնում, էն ոչի՞նչ՝ որ ինքնաղլուխ սրա նրա տանից պը-
զինձը դուս էր քաշում, տօրդ անում, ինքը ծախտում, ինքն առնում.
չէ՞ որ իրաւոնք չուներ: Զայնը աեղ հասաւ, ըեվիզօրը պատրաստ

էր, միւս օրը պէտք է զար սելսկի սուղը (ԳԵՂՋԻԿԱ ՇԱՊՈՒՅԹԻՆ) պեշատէր (ՀԱՎԵԼ), քո Արտօյիդ հրաժարականը հէնց էն օրը տեղ հասաւ: Եօթը ժամ լեզու եմ թափել նաչանիկին, որ հրաժարականը նոյն օրը հասցել է, թէ չէ գնա'ցել էր քո Արտօդ, — պօղեց, բագրօ'նիկ, դոլ, աւազակը:

— Դէ լաւ, աղա'ց, մեր կարճ խելքովը մի լաւ մարդ Արտօն էր, նա էլ որ մաշեննիկ դուս եկաւ, էլ ո՞ւմ ընտրենք, հարցրեց Սարօն:

— Տ' օ լիմար, լաւ մարդս ո՞րն ա, վասը որը, ամենքդ էլ մի սանտրի կուաւ էք, ընչի՞, դու չե՞ս կարող լինել, սա չի՞ կարող, նա չի՞ կարող. ահա մեր Խուզօն, դուք հօ լաւ զիսէք, որ զեազի մինն էր, աչքումն լաւ խաղաց, յառաջ քաշեցի, մարդամէջ հանեցի և էս օր 0. զիւղի պէս տեղի տուղիէն է, իշխանն է. պակաս մարդ է, ձեզ եմ հարցնում:

Մատօն ու Սարօն միմեանց նշանացի ակնարկներ արին, կարծես թէ զիկի ընկան:

— Ի՞նչ էք լուել, կրկին հարց տուեց բալասան աղան, մեր Խուզօյին որ տանուտէր շինենք, չի՞ կարող զլուխ տանել:

Մատօն ու Սարօն տարակուսական ուսաշարժութիւն արին:

— Դու ի՞նչ ես կարծում, ինա՞մի Դաւիթ, դարձաւ աղան զէպի վերջինս:

— Մեր կարճ խելքով Արտօն լաւ էր, բայց որ քո օրհնած բերանով հրամանք արիր, ես ի՞նչ իրաւունք ունիմ:

— Դուք եկէք ինձ լսեցէք, ի՞նչ ասեմ՝ կատարեցէք, թէ ձեր զիւղը դրախտ չը դառնայ՝ ինձ հաշհոցեցէք:

— Լաւ ասողի ջանին էլ կը մեռնմենք:

— Ողորմի' ձեր հօրը. ա'ց ձեզ զլամսիացու մեր Խուզօն, ես սրան եմ կամք տալիս, դուք էլ ինձ օգնեցէք, քարը զուրս բերէք, ձեր երեքին էլ սուղիա շինել կը տամ՝ ինչ պակասութիւն որ ձեր զիւղին գայ՝ մեղքն իմ վզին:

— Դժուար թէ զեղը Խուզօյին կամք տայ, աղայ ջա՞ն:

— Ընչի՞:

— Ես զլսամեռը աղքատ-ուղքուտի տունը քանդեց, աղայ ջա՞ն, ասաց Սարօն, մի շահով կաշառք էր ուտում. էդ զլուխը քարը, բայց որ քո հրամանոց սանադները շուտ շուտ էր մէջ բերում, վլո-

ոռւմ ու խեղճերի էլած չէլածը ծախում. ողջ զեղը հետը թշնամացել ա:

—Այ տղայ, ուրեմն աշխարհքս առ ու կուլ է, հիմա դուք վիզներդ եօթը զադ կախել էք՝ փող էք ուզում, Աստուած կը վերցնի՛, որ տանէք և ժամանակին չը տաք:

—Լա՛ւ ես ասում, աղայ ջա՞ն, բայց անխղճմտանէքութիւնն էլ բանի պէտք չի. սա շահը շահին կոխացնում ա, մի ծակ կապէկ չի բաշխում, հասարակութիւնի տունն էլ քանդուում ա, մի քի՛ շելա զնալ ա հարկաւոր:

—Նա՛տ լաւ, եկէ՛ք ձեր հետ մի պայման կապենք, Նեսկօյին թաղեմ, թէ սուտ ասեմ. դուք ինձ օգնեցէք՝ Խուզօյին տանուտէր շինենք, քանի սա նստած ա, գիւղիցը մի կոպէկ չը պահանջեմ. համաձայն է՞ք:

—Աաքի, աղա՛յ, սա ընչի՞ ա տաք տաք կպել, չը գիտի՞ որ իր գործը չի:

—Աա չի կպել, ե՛ս եմ ուզում, ես հէնց կ'անեմ, որ սա Արտօյին ձեր մոքիցը կը ձգի, ի՞նչ էք ասում, իմ խաթե՛ր: Երեքն էլ լոել էին:

—Դէ՛ վեր կացէք դուրս կորէք, ապերա՛խս անպիտաններ, դոչց յանկարծ տեղիցը վեր թռչելով Բալասան աղէն. մուժիկի որդի՛ մուժիկնե՛ր, ես էլ ձեղ մարդատեղ դրի, եղբօր նման հետներդ քաղցըր խօսք ու զրոյցներ արի, դուք էլ գլխիս էք ուզումնստել, մա՛րշ, դո՛ւրս. այդ երկուադ լուսը չը բացուած՝ փողերս բերէք, դու էլ, Դաւի՛թ, որտեղ փողը շաղ են տալիս, Էնտեղից վերցրո՛ւ, ով որ էլ քեզ համար ազնուութեան մեղալ բերել կը տայ, նրա՛ն դիմիր, երեք օրից կը սպարզուի, թէ ո՞վէ տանուաէրը, տեսէք՝ սկատինա (անստան) Վուշակերի թռուի օրը ի՞նչպէս կը սևանայ. դո՛ւրս, շո՛ւա, կո՛րէք փողերս բերէք:

—Մի՛ բարկանալ, աղայ ջա՞ն, ասաց Դաւի՛թը աչքով անելով միւսներին, թէ որ քո կամքդ ա Խուզօյին զլամիի շինել, մեր ա՛շքի վրայ, էզուց ևեթ զեղը շուռ տանք:

—Ի՞նչ կ'ասեմ օրինաւոր խօսքին, և էլ ձեր երեքին էլ սրան թեւ ու թիկունք շինե՛մ; դատաւոր ընտրեմ, լոյսը բացուի թէ չէ, որքան փող, Դաւի՛թ, կամնաս, առաջիդ համարեմ, սորանց էլ եթէ էլի պէտք է, թռո՞ղ վերցնեն, առաջակի բերաներ բաց է:

Կարելի է խօսակցութիւնը դեռ երկար տևեր, եթէ զբսի սե-
նեղից տոնաձայնը մի ուրիշ անձնաւորութեան ներկայութիւնը չը-
ծանուցանէր:

Խուզօն դուքս գնաց և շուտ վերադարձաւ. Նրա ակնարկը ա-
ղային շատ բան ասաց:

— Դէ՛, տղա՛քք, ձե՛ղ տեսնեմ, իմ աջ կուռն էք, էլ ձեր առա-
ջին փակ դուռը չի լինիլ, երեքդ էլ այսօրուանից սուզիա էք՝ որ
կաք, Գաւիթմն էլ սուզիացի մեղալի մօտ մի դեղին պօլիմպերիալի
շափ աղնուութիւնի մեղալ կրծքին է կախում:

— Բարի գիշե՛ր:

— Հօ չը տեսա՞ն վանեցուն, հարցրեց աղան Խուզօլից նոցա-
գնալուց ցեսոց:

— Ո՛չ, աչքով արի, մտաւ ծալքասոեղը:

— Լա՛ւ ես արել, նե՛րս կանչիր:

Ներս եկողը մի նիշար, ծաղկատար երեսով, բարձրահասակ,
կապտազոյն եւրոպական կիշամաշ սերթուկը սե արխալուզի վերայ
հազած, մուճակները ոտքերին երխուասարդ էր:

Նա դիւզական գրադիրն էր:

(Կը շարունակւի)

Մ Ի Ր Ա Ժ

Լ Ե Խ Ո Ն Ս Ա Ն Ս Ո Ւ Կ Ե Լ Ե Ա Ն Ց Ե

Այն գեղեցիկ մի պատկեր էր, որ տեսար,
Քանի պայծառ գեռ փայլում էր արեգակ.
Անապատում հրաշալի էր ալն աշխարհ։
Նա կախւած էր բարձր օդում՝ երկնի տակ։

Հըսկալի պէս կանգնած էին վերեւում
Սաղարթագեղ կանաչ ծառեր դրախտի,
Եւ դու զմայլւած էիր աչքիս երևում,
Հիասթափւած, մըտքամոլո՛ր պատանի։

Նոցա վերայ բըլքուլի պէս երգիչներ՝
Ուրախ, անհոգ ոստից ոստիկ թռչելով,
Երգում էին երանելի նւագներ
Ալնքան զւարթ, ալնքան հանգիստ, անվըրդով։

Եւ գոլնըզգոյն ծաղիկները նոցա շուրջ
Խընկի նըման բուրում էին անուշ հոտ.
Թէ խարուսիկ անգում լինէր նա անուրջ,
Սիրտ ու հոգի թրոչում էին նոցա մօտ։

Բայց մայր մըտաւ թէ չէ լոյսըն արեի,
Եւ փախարէն տիրեց թէ չէ լուս խաւար) —
Աւազ, հանգաւ գեղեցկութիւն միբաժի,
Այն հըրեղէն, ճոխ, երջանիկ այն աշխարհ։

Հ Ի Ն Գ Օ Ր

ՀԱՅԱՊԱՐՀԻ ՄՏՔԵՐ ՈՒ ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լ Է Շ Ո Ւ

(Շաբուհնակութիւն և վերջ¹⁾)

Թթենիների տակ ճաշելուց յետոյ՝ վերջին անգամ մտնում ենք վանքը: Վարդապետը «Հոգոց» է: ասում, մենք զլուխ ենք սուլիս փառաւոր շիրիմներին, Աղւանից կաթողիկոսների եկեղեցուն, երեսներս խաչակնքում ենք ու դուրս դալիս:

Ժամի մէկն է: Երկինքը պղուոր, ամպամած. արեգակը երրեմն նայում է, մի թոյլ, աշնանային լոյս է տարածում, որ աւելի վատացնում է մեր հոգեկան տրամադրութիւնը: Մեր հրաժեշտն ենք տալիս վանահայր վարդապետին, բռնում ենք ձիերի սանձերից և ոտով իջնում ենք վանքի քարե ճանապարհով: Հանելով մեզ ծանօթ առևտրական հրապարակին, դուրս ենք դալիս ճանապարհից, անցնում ենք Խաչենազետը: Գնում ենք ացցելելու գետի միւս կողմին գտնուող աւերախները: Բաւական բարձրանալով, համնում ենք այն աեղին, ուր երկում էր զիշերային կրամիլը. ես սխալած չէի այստեղի տաւարածները փոքր տղաներ էին, իսկ նրանց շները՝ շատ կատաղի: Նրանք ցոյց են առլիս այն թումբը, որի վերաց կաց մի հին եկեղեցի: Գնում ենք մի հնձած արտի և մեծ անտառի սահմանով, բարձրանում ենք մինչեւ թումբի կէսը. այդուղեղ մի գիւղացի է պատահում: Նա շտու լաւ մարդ էր, անսպէս քաղցր և հանեսա՝ որ

1) Տես «Այուբայր» № 1.

առաջնորդեց մեզ դէպի աւերակները։ Այդ աւերակները յայտնի են «Դարսաններ» անունով։ Թումբը, որի վերաց կանդնած ենք, ունի լաջնանիստ լանջեր, որոնք երեք կողմից աստիճանաբար իջնում են Խաչենագետի վերաց։ լանջերի երեսին երեսում են բազմաթիւ տների տեղեր։ խկոյն երեսում է, որ մենք գտնեսում ենք մի վաղուց անյացուցած և միայն իր գոյութեան ողորմելի հետքերը թողած գիւղի կամ գիւղաքաղաքի մէջ։ Եկեղեցին մի հասարակ շինութիւն է։ Նորա կորին բասծ է մի ահազին ծառ, որ, երեխ, շուտով կը քանդէ մնացածը։ Դիր ու ցիշատակ չը կաց։

Այդուղից բարձրանում ենք մի ցածրիկ ու երկար պատի մօտով, որ շինած է քարերի մեծ մէծ սալերից և կիսով չափ ծածկւած է ծառերի տակ։ Պատի վերին կողմում տեսնում ենք մի քարաշին տուն, որի կէսը փլւած է։ Ծառերն ու մացաւները ամեն կողմից հաւաքւել են շինութեան գլխին և խեղբում են։ Մանում եմ մի զբնով, բայց շէմքից զէն անյնել չեմ կարողանում։ կտուրը փրւել է, ինչպէս ասաց գիւղացին, երկու թէ երեք տարի սրանից առաջ։ անեակը լցւած է քարով, հողով և ծառերով։ մի քանի տարուց յետոց ծառերն ացնքան կը մեծանան, որ այլ ևս տեղ չեն դրունիլ աղաս աճելու, զու կանեն, պատերը կը ջարդեն, կը կործանեն։ այսպէս է անտառու տեղի աւերակի վիճակը։ Պատերը տաշած քարերից են և վերեսում կամար են կազմում։ Երեք ացգլիսի անեակներ տեսանքը։ Արձանագրութիւն էլի չը կաց, բայց ժողովուրդը շատ լաւ զիտէ թէ ումինն է այդ տունը։ Զալալ իշխանի պալատն է այդ, ասումէ քեզ ամեն մի զիւղացի։ Երեխ հէնց այդ պալատիցն են այս կողմի աւերակները «Դարսաններ» անունը տուացել։ Արտառուչ անուն, սրտառուչ աւերակի։ Այսուղ էլ երեւակայութիւնդ հանգիստ չի մնում։ իշխանական տան ներքին կեանքը ուզում է կերպարանք տուանաց, գուրս գայ կոյտ-կոյտ դառած քարերի տակից, ուզում է ցոյց տալ իր առօրեաց պատկերը, բայց միայն ուզում է... ահմենը, լսել անհնարին է, աւերակը լուս է, խորհրդապահ, սարսատիելի համբը ու յամա։ Մի քիչ հեռու մի ուրիշ քառակուսի փոքրիկ շինութիւն էլ կաց, որ բանու և զիւնաստուն է ասում։ այս՝ Զալալի զիւնաստունն է, ի հարիէ։ Ժողովարդն է այսպէս ասում, ա'յն ժողովուրդը, որ իր սիրած մարդուն չի մնուանում։ վեց հարիւր տարիներ են

անցել այս տեղերի զիսով և դեռ նա զիտէ իր բարեպաշտ իշխանի թողած յիշատակների տեղերը։ Այսուղից յետ ենք դառնում։

Այսուղից սկսում է, և բարձր ու բարձր գնալով ցցւում է մի անոնառաստա տար, որի գագաթն այսուղից չի երևում; բայց հեռուից զարմացնում է պատի սկս ուղղաձիգ լանջերով։ Այդուղ, այդ անմատչելի բարձրութեան զիսին է Զալալի բերդը, որ կրւում է Թարխանաբերդ կամ Խոխանաբերդ։ Մի նեղ, ոլորուն, սրտածաք ճանապարհ է տանում ներքեւից մինչև ացդ բերդը. ինչպէս պատմում են, գժւար, չափազանց զժւար է ացտեղ զալը, պէտք է շատ տեղ փորսող տալ, ճանկուտել գետինը, որ կարելի լինի տեսնել մի քանի հին շինութիւններ և ամրութիւններ՝ ծածկւած անտառի խորքում։ Խոխանաբերդը, բնութեան ահեղ ամրութիւնների սրտում զրած պատերազմական թակարդը, յայտնի է մեր պատմութեան մէջ։ Ես կարծում եմ, որ Թարպանների տերակ զիւղաքաղաքը զագաթի ամրութեան հետ մօտիկ կապ է ունեցել և վերջինս նորա միջնաբերդն է եղած։ Կիրակոս պատմազիրը պատմում է թաթարների արշաւանքի ժամանակ այսուղ տեղի ոնեցած ահազին կոտրածի մասին։ — Զալալ իշխանը հաւաքում է իր ժողովուրդը և ամրացնում Խոխանաբերդի մէջ։ Ծնամին տեսնում է, որ չի կարող զրաւել ացդ ամրութիւնը, հաշտութեան գաշինք է կապում։ Յետոյ զալիս է թաթար նուղա զօրավարը հարկ հաւաքելու։ Մի քանի մարդիկ նորա ձեռքն մասնում Զալալին, որ կալանաւորուում է։ Բուղան, ասում է պատմիչը, քանդեց իշխանի բերդը—Խոխանաբերդը, Դեռ և Ծիրապարը և այնպէս յատակեց, որ հետք անդամ չէին երևում՝ թէ նաքարը. և այնպէս յատակեց, որ հետք անդամ չէին երևում՝ թէ նրան շէն եղած են։ Մեր տեսած տեղն էլ լաւ յատակւած է. մը բնաւ շէն եղած են։ Մեր տեսած տեղն էլ լաւ յատակւած է. մը նացել են միայն տնատեղերը, եկեղեցին և մի հրաշալի աղբիւր, որ թափուում է մի ձորակի մէջ։ Խմում ենք ացդ անշուք աղբիւրից։ Չուրը զարմանալի պարզ է, միանգամանին կարծես բերել է և այնքան սառն, որ միանգամից չես կարող վրան ընկնել, խմել մինչեւ կը տանապը։

Մեղ առաջնորդող բարի զիւղացին, տեսնելով որ մէնք ամէն տեղ արձանագրութիւն ենք որոնում, տանում է մեզ մի տեղ. խոսերի և վայրենի բոյսերի մէջ նա ցոյց է տալիս մի խաչքարի կտոր, որի վերաց մի երկու տող զրութիւն կայ։ Կարգում եմ դժւարութեամբ։

— Քանի՞ տարւայ է, հարցնում է զիւղացին:

— Աեց հարիւր:

— Ա. Ե՞ց հարիւր... գոչում է նա ապշած. — վեց հարիւր...

Փա՛ռք շատ, Ասուա'ծ. Կրանք այսպէս բաներ են թողել, մե՞նք ինչ պիտի թողնենք:

Ասում է ու վերցնում քարը, դնում մի բաց և լաւ տեղ. մոռացւած քարի կառը միանդամից ուրիշ նշանակութիւն ստացաւ տգետ զեղջուկի աշխումն: Նա լաւ զիտէ որ ինքը, և առ հասարակ մենք ամենքս, միշտապէ չենք թողնելու. ուրիշն թո՞ղ ացդ հնութիւնը իր պատիւն ստանաց: Դիւղացին միշտ կը լիշէ նորան, ցոց կը տայ. նա, որ ժամանակի երկարութեան մասին այնքան լայն հասկացողութիւն չունի, տեսնում է որ ացդ աւերակները հարիւր տարւայ շինութիւններ չեն, խաների ժամանակից մնացած, ինչպէս ինքն է խմացել, աց վեց հարիւր տարւայ հասակ ունին: Հանաք չէ. ի՞նչպէս պէտք է անես, որ վեց հարիւր տարի քեզանից դործ մնայ, անսունդ կարդան և զարմանան: Եւ այս հասարակ քարի կառը, որ հարիւր տարիներ է մնացել, առվորական քարից բարձր է համարում: Այսպէս հասկացաց ևս մեր զիւղացու միտքը նորա զարմանքից, նորա շարժողութիւններից:

Բարի աւաջնորդին մեր հրաժարական բարեն ենք տալիս, շրջորհակալութիւն յացնում և զիմում ենք դէպի բարձր: Մեր առջեւը մի մեծ բարձրութիւն կայ, որ Հաւապատկ է կոչւում: Գնում ենք նորա գագաթի հին եկեղեցին տեսնելու. ճանապարհը բարձրանում է անտառի միջով և մենք գոհ ենք, որ առիթ կ'ունենանք վանքի անտառը մօտիկուց տեսնելու: Մտնում ենք անտառը և տեսնում: Ի՞նչ ասեմ: Ո՛րքան երեակացեք, չեք կարող իրական գեղեցկութեան մասին քիչ մօտիկ հասկացողութիւն կազմել. իսկ ես ացդ գեղեցկութիւնը նկարագրել չեմ կարողանում: Մենք ապշած նայում էինք դէս ու դէն: Դերեզմանական լրութեան մէջ, որ տիրած է անտառում, մեր ձիերը զուով զէպի բարձր են զնում նեղ և վտանգաւոր կածաններով: Իսկ մենք մոռացել ենք վտանգը, նայում ենք և չենք կշտանում: Հսկայ ծառերը կանգնած են միմեանց մօտ, ուղիղ ձգւած են գէպի վեր, կողմնակի ձիւղեր չունին, նաւի կայտերի պէս են և միայն գլուխներն են զարգարել գեղեցիկ տերեւախիտ

գլխարկներով։ Հասակի բարձրութիւնը զարմանալի է. Յեխ-Չորի ծառ-ուեր սրանց չեն հասնիլ։ Երբեմն բարձրանում ենք խորխորատների գլուխը. ձին, կարծես, ձգւած լարի վերացով է զնում, եթէ մի ան-զգոց քայլ անէ, մասածում ես, մինչև խորխորատի վերջը հասնելը կորու միս կը դառնաս. և այդ խորխորատի յատակից սկսած բարձրա-նում է հսկայ ծառը, զալիս է քեզ հաւասարում՝ և քեզանից էլ մի տովորական ծառի չափ բարձրանում։ Մանաւանդ զեղեցիկ է հաճարկի ծառը, սպիտակ մինչև տերեները, շատ բարձրահասակ և ուղիղ ու կոկ՝ ինչպէս մոմ։ Ծառ երից շատերը կորւած ընկած են, երկայն տարածութիւն են զրկել և այդպէս փառում են. բայց նրան-ցից մէկը մի հասարակ քաղաքացու ձմեռաց վառելափայտի պա-շար կարող է զառնալ. շատերը թէև կանգուն են, բայց կորւած են՝ տակից չորանալու համար։ Դիւզացիները շատ տեղ ծառի կեղեկի վերայ ձի, առիւծ և այլ անսառներ են քանդել։

Այս ի՞նչ տեսակ բնութիւն է... Երբ Հաւատովի զլուխն ենք զնում, մեր առջեւը բացում են նոր լիոնային տեսարաններ և ամեն տեղ նոյն թանձր ու մեծ անսուռք։ Հաւատովուին էլ անտա-ռապաս է։ Մանում ենք անտառի խորքը, որտեղից շրջակայք շեն երեւմ։ Ամենաբարձր կէտին ենք հասել. — ահա՛ և եկեղեցին, ծա-ռուերի մէջ մոտած, մաշառներով շրջապատած մոշի թփերը միմեանց են փաթաթեւել, շեն թողնում անցնել։ Ահ ու զողով մանում եմ ե-կեղեցին, տեսնում եմ մի լուռ, մնայլ աւերակ։ Այս թանձր անտա-ռում, ուր արջերն ու զայլերն են թափառում, սարի զլխին, հեռու-մարդկային բնակութիւնից, աւերակ ու ախուր եկեղեցին սարսափելի տալաւորութիւն է գործում։ ընկերներիցս մէկը զալիս է եսեւիցս, խօսում ենք ցած ձայնով. վախո՞ւմ ենք, թէ, տեղն է, այնպէս, որ չես կարողանում բարձր խօսել. երկու զգացմունքից էլ կան նիսութիւնը հասարակ քարերից է, ունի բարձր կամարակազ ճար-ճաքած կոռուր, որի ծեփը ներսից թափւած է, ամեն բոսէ վկչե-լու ես սպասում։ Դրաի պատերի վերայ երեք արձանագրութիւն ենք կարգում։ Մէկից իմանում ենք, որ եկեղեցին շինւած է 1203 թւին, ուրեմն Գանձասարից էլ վաղ, զիշխանութեան Հասանայ որդւոյ Վախուանդայ և ամնամոյ նորա Մամքանայ։ Նիսողն է մի ոմն «Յովհան առաջնորդ»։ միւս արձանագրութիւնն ասում է. «Յով Աթա-

նաս, որ զՓողին երկիրն դնեցի, Հաւոյ պատուկ տվի Հայր Պորգիի։ Խնչպէս պարզ երևում է, այս վանքին կից շինութիւններ են եղած, աեղերն այժմ էլ երևում են։ Հարաւային կողմից դլիսաւոր շինութեանը կցւած է մի կիսաքանդ սենեակ, որի պատերը ծածկւած են գեղեցիկ հապոյս ծեփով։ Նորա վերաց կան այս տեղերը այցելող ների անունները։ Ծեփը շատ պինդ է և կարծր, մի շքեղ զարդարուն սենեակ է եղած, սակայն թէ ի՞նչ նշանակութիւն է ունեցել՝ եւ չը գնուեմ։ Անեղեցու առջեւ կան գերեզմաններ և մի քանի խաչքարեր, որոնցից մեկը շատ մեծ է և զարդարւած է զեղաքանդակ խաչով։

Մենք շտապով ենք տեսնում այս բոլորը։ Որը թեքւել էր, որէոք էր շուտ զուրս գալ այս վայրենի և անհիւրասէր տեղերից։ Մենք սկսում ենք իջնել Հաւասրոկի Հարաւային լանջով, որ տառում է գեպի մեծ ձորը։ Ճանապարհը... բայց ի՞նչ ճանապարհ։ աւելի ճիշդն ասած, հետեւակ մարդկանց և գաղանների հետքերի տեղը հարիւրաւոր պատուններ է զործում, կորչում է ծմակի խորքում, վազում է մեծ մեծ ծառերի ճիւղերի տակով, զլիսիվայր զլորում է թեք-թեք տեղերով։ Մենք գնում ենք, քաշքաշում ենք, իսկ մեր ետեւից քաշ են գալիս մեր ձիերը։ Ոտնամանի, շորի, զէմքի մասին մտածելը ծիծաղելի կը լինի. կոյս ենք տալիս քար ու ժայռ, թուփ ու մացառ։ Վերջապէս մտնում ենք ձորը, որի յատակով մի փոքր ջուր է գնում։ Այդտեղ, չը զիտեմ որ կողմից, անսպասելի կերպով գալիս է մեր առջեւը մի համեմատաբար լայն ուզի։ Հեծնում ենք ձիերը, գնում ենք, զուրս գալիս մի լայն և ուզիլ ճանապարհ։ Երեսներս զէսի արեւելք ենք շուռ տալիս և քիչ ժամանակից յետոց՝ համում ենք Գառնաքար անունով զիւղը։ Փոքրիկ զիւղ է այդ, քանի տանից ոչ աւել և զետեղւած է ծմակի ծայրում, ձորի զլիսին։ Տաւարածը իր տաւարը հանդից տուն է թերում, ուրեմն շուտով կը մթնի. զիւղացիներից հարցնում ենք Յակոբաց վանքի ճանապարհը, մի կերպ հասկանում ենք, ելի քշում ձիերը։ Մոթը հետզետէ կոխում է, մենք գնում ենք մի շատնեղ կածանով։ Մեզանից քիչ հեռու մի զիւղացի կար. հարցրինք նորան ճանապարհի մասին, նա յայտնեց, որ մենք շեղւել ենք և եթէ այդ ուղղութեամբ գնանք՝ կը կորչենք ծմակի մէջ և ո՛վ զիտէ ո՛ր ժայռից ցած կը զլորւ ենք։ — Եւ նա աւելացնում է.

— Օրս գիշեր է դառել, ի՞նչպէս պիտի գնաք. ճանապարհը ծմակի միջով է և շատ երկիւղալի է. այդ տեղերից մարդն անպակաս է: Մարդ՝ այսինքն աւազակ...

Կեանքի մէջ անհասկանալի ժամեր են լինում. մարդ երբեմն ինքն իրան հաշիւ չի տալիս, իր անփորձութեամբ փորձւածից բարձր է դառում իրան, մի տեսակ անհոգութեամբ է վերաբերում դէպի նախազգուշացումը, խրառը, այն էլ այնպիսի ժամանակ, երբ նա պիտի լաւ մտածէ, թէ ի՞նչ է անում: Մենք էլ այդպէս էինք. զիւղացու ասածը առանց որ և է հետեանքի մնաց: Կարծես մէկը զուով հարկազրում էր, որ մենք այս գիշեր անպատճառ վահքը գնանք: Գնացինք էլ, տեսանք էլ:

Մտանք անտառը: Յոլորովին մթնել էր, երկինքը վարագուրած էր մութ զորշ ամպերով. լուսինն այլ ևս չէր կարողանում հասցնել մեղ իր աղօտ, անորոշ լոյսը՝ ինչպէս Վարագաբոյնի ճանապարհին: Գնում ենք անտառի միջով, մի անտառային փոքրիկ կածանով, որ միայն մեր ձիերն են տեսնում: Այդ անտառը Գանձասարի անտառի լնկերը չէ. այնտեղ ամեն ինչ աշխատում է բարձրանալ՝ մեծ հասակ քշել իսկ այսուղ մենք մի սովորական անտառում ենք, ուր ծառերն այնքան բարձր չեն և դեռ զետնից չը բարձրացած՝ ճիւղեր են տարածում դէս ու դէն. ծառը փաթաթւում է թուփին, թուփը կուչ զալիս, ընկնում ճանապարհի վերաց կամ տափականում է, սոզում, ինչպէս իր վայրենի կամքին է ցանկալի: Վայրենի կամք ունի և մեր կածանը: Նա տանում է մեզ, ուր որ ուզում է, ցածրանում, բարձրանում է, այսուղ ու այնտեղ է զլորւում, զուրս է զալիս, նեղ ժապաէնի պէս ձգուում մի խորխորատի եղերքով, բոլորովին անփոթ է, որ մենք մեր ձիերով ցանկարծ խցկում ենք այնպիսի խիտ ճիւղերի տակ, ուր կարող ենք աշք ու յօնք պատռել, ոտ ու ձեռք կոտրել: Այդ նորա բանը չէ, նա չի խոստացել որ ձիեր էլ տանէ. լեռնալին ուղի է, կացին չի դիպել նորա կողքերին, մարդու ոտը մի, հինգ, տասն անդամ՝ կոխել է զետինը և նա զոյութիւն է սոտցել: Մենք գնում ենք միմեանց ետևից շար ընկած. առաջնորդ չունինք, մեզ ցանձնել ենք ձիերի և կածանի կամքին, մէկ էլ բաղդի բերմունքին:

— Բարձր մի՛ խօսէք, ասում են մեզանից երկուսը: Լոռում ենք.

ամենքիս սրտումն է «մարդ»-ի երկիւղը։ Անցնենք անձայն, դուցէ շիմանան որ որսեր են զնում։ Եւ որքան առաջ ենք զնում, այնքան թահճրանում է անտառը։

Անտառը գիշերով... բնութեան ամենախորհրդաւոր և ծանր աեսարաններից մէկն է։ Սարսափելի խաւար է տիրում ծառերի տակ, խաւար, որ կարծես կաշկանդել, անշարժացրել է ամբողջ անտառը։ ոչ մի տերեւ չի շարժւում, մի ամբողջ աշխարհ՝ իր բոլոր բնակիչներով կլանել է, անհետացել։ Աշառաջն է երեւում, ոչ ետքը և ոչ կողքը։ չը գիտես ո՞ւր նայես, ի՞նչ տեսնես։ Մարդու սիրութ կուչ է գալիս, կծկում, մի անկիւն քաշւում. զգացմունք չը կայ, ամեն ինչ կատարում է մեքենայաբար, դիտակցական շարժողութիւն, կամք, ամեն ինչ կուլ է զնացած խաւարի, ահ ու երկիւղի մէջ։ Միայն խելօք ձին է իմանում թէ ո՞ւր է զնում. նա զնում է իրան յատուկ զգուշութեալը, ճանապարհից չի շեղուում։ Երբեմն պատահում են ձորեր, մենք զրանց չենք տեսնում, այլ հասկանում ենք։ Կարւած լսողութիւնը գետ հեռաւից է ըմբունում բարակ ջրի հանդարտ, տիրալի ձայնը. ո՞րտեղից է գալիս և ո՞ւր է զնում—այդ իմանալ անկարելի է. մէկ էլ լսում ես ինչպէս ձիաւորները շրմի՛-շրմիում են ջրի և ցխի մէջ. անցնում է այդ ձայնը և ձին դարձեալ նոյն ոսկալի լոռութեան, նոյն խաւարի մէջ փոխում է քայլերը։ Աջ ու ձախ կողմից միմեանց յաջորդում են մէծ մէծ ու բծեր, բաւում ես զրանց և իմանում, որ ծառեր են, որոնք ամեն տեղ տարածել են իրանց ճիւղերը։ Պաշտպանելի՞ր նրանցից, ինչպէս իմանում ես, թէւ գծւար է պաշտպանել այնպիսի բանից, որը որոշ չես տեսնում։

Չը զիտեմ, անտառն էր շատ մէծ, թէ այդ խաւարը. լուսութիւնն ու վախնէր դորա պատճառը, բայց մեր քմահաճ կածանը անվերջ էր երեւում։ Էեղի զիրքը չէր փոխում, իմանում էինք միայն, որ երբեմն իջնում ենք և բարձրանում։ Անորոշ զրութիւնը մեզ հասցրեց այն ժամին, երբ ամենքս համարեա՛ համոզւեցինք, որ այս չէ ճանապարհը, որ սատանան զիտէ թէ զէպի ո՞ր կողմն ենք զնում. մեր ձիերի տոների տա՞կն է կածանը, թէ փախել է կորել և մենք անտառի մէջն ենք լնիել՝ այդ էլ չը զիտէինք։ Բայց մենք չենք կանգնում, զնում ենք անդադար, բնազգմանը շարժւում ենք։ Միտ քը երկար լուրւած մնալուց յետոյ՝ յովնում է, բժմանում, մնում է

մի ինչ որ հասկացողութիւն, որ մի բան է թելազրում. այդ բանը վերջին միջայն է, որ ամեն մեկը ստահում է իր սրառում, չի համարձակում յախնել: Յետոյ իմացայ, որ մենք՝ հինգ հոգիներս, միենոյն վճիռն ենք կայացրել զատ զատ, այն է՝ զնալ, մինչեւ որ բաղզը զուրս կը բերէր մի շատ թէ քիչ յարմար, տափարակ տեղ, իջնել ձիերից, կրակ վառել և նորա շուրջը բոլորած՝ աչք դնել առաւոտին: Աւրիշ ի՞նչ անել, մտածել է ամեն մեկը. վանքը կորել է, անոռառը միշտ միւնոյն է, ճանապարհը մեզանից աւելի է մոլորւած: Եինում են տեղեր, ուր ծառերը նօսրանում են, խաւարն այնքան թանձր չէ. և այդպիսի տեղերում տեսնում էինք, որ մի ինչ որ սև երկար բան է զուրս եկած ձիռ առների տակից, ընկած է զէսլի ուրիշ կողմ՝ զա էլ կածան է. ձին կանդնում է, ըլ զիտ, ո՛րսեղով զնայ:

Այսպէս խարխափելով մեքենայաբար առաջ ենք մղւում: Բայց մեր ձիերը ու ժամֆափի են եղել: Իմ ձին, նկատում եմ, ասսարիկ նեղացել է, քրանել. նա յետ է մնում և միանդամայն անուշաղիր է խմ մըսրակի հարւածներին: Նս ձիռց իջնում եմ, յետ չը մնալու համար, տող եմ զնում: ընկերներից մեխն էլ իջնում է, որ ինձ հետ զնայ: Երեւակացեց՝ ք իմ զրութիւնը. այժմ առներավս եմ զգում, թէ որքան անպիտան բան է մեր կածանը: Առներս կամ սայմաքւում են, կամ ընկնում թփերի խորդ ու բորդ տեղերի մէջ, հազիւ ևմ ինձ պահում վայր ընկնելուց: Այս ծմակը, իր զիշերացին արհաւիրներով, բաւական չէ որ հարփագրում է մեզ հալածականի պէս փախչել խոյս տալ իրանից, գեռ ոյժ և կարսզութիւն էլ է տալիս այցպէս անելու. քրանենք ու յոդնածութիւն մոռացւում են, եթէ վայր էլ ընկնես, զարձեալ կը կանգնես ու անտրասունջ կը զնաս:

Յանկարծ առջեից զնացողը ձայն է տալիս.

—Այ ևս ճանապարհ չը կայ:

Մենք մօտեցել ենք մի փոքրիկ ջրի, որ վշտում է ծառերի մէջ: Ճրադ ենք վասում: մեզանից մեկը ճրագը ձեռին առաջ է զնում ճանապարհ զանելու. մենք կանգնած՝ անհամբեր նայում ենք, ապասում նորա վճռին: Տեսնում ենք ինչպէս թոյլ լոյսը երբեմն զուրս է զայիս ծառերի եանից, լուսաւորում է մեր ձիերի շհասութեամբ կախ արած զլուխն ու ականջները և նրանց վերայ իջած ճիւղերը:

Ակտասի մի փոքր անկիւնն է լուսաւորւած և այդ անկիւնում ըստ-
ւերներ են, որ արագ արագ ոստոսում են, միմեանց վերաց վազում,
միմեանց հետ խառնում, հակացական պաղաներ են գործում ու
փախչում, ընկղուում են խաւարի մէջ: Ճրագի փոքրիկ բոցը լոյսի
խո րձեր է ուղարկում ճիւղերի և բռների միջով, լուսաւորում է
ճարշճոտ տեղի վայրի բոցերն ու բանջարները: Մեր ընկերը գլուխը
կախ արած դէս ու դէն է տանում ճրագը և տնտղում է:

— ՞ տե՛լ եմ, խօսում է նա վերջապէս Ազատ շոնչ ենք քաշում,
թեթեանում ենք, որախանում, որ այդ տեսակ թանկաղին դիւտ
ենք արել: Տեսնում էք, թէ մարդու սիրտն ինչով է ուրախանում:
Կարծես մենք լաւ էինք ճանաչում այդ ճանապարհը, կարծես մենք
շատ դիսէինք, թէ ուր ենք գնում: Այդպէս չէ՞ արգեօք և մեր չար-
քաշ կեանքը. խարխափում ենք, դէս ու դէն ընկնում և մի պա-
տահական ոլոր-մոլոր կածանի յոց դրած՝ գնում ենք: Գնում ենք,
յուատով որ կածանի վերջ ունի, մի տեղ կը տանէ և ուրախանում
ենք, կազդուրում այդ խարուսիկ յուսով, առանց որի մեր շրջապատը
կարող էր մեր սիրոը ճաքացնել:

Ճրագի լուսով շարունակում ենք ճանապարհը ցիսի և ջրի մի-
ջով. այժմ տեսնում ենք, որ մի քիչ դէպի բարձր ենք գնում: Եաց
ճրագն այնքան փոքր է և անզօր այս խաւարի մէջ, որ միայն ան-
օրոշ սաւերներ է դոյացնում: Ճիւրը շփոթւում են, չեն կարողանում
գնալ: Ճրագը հանդցնում ենք:

Եաց մեզ համար ուրիշ ճրագ է վառւում. ահա՛ լում ենք
շնահացոց և բոլորովին անսպասելի կերպով մեր առաջն է դուրս
դալիս մի պարսպապատ շինութիւն:

— Վա՞նքն է, հասել ենք:

— Փա՛ռք Աստոծու:

Ծեծում ենք պինդ փակած գուները, ներսից ձայներ ենք լուս: Հեն
ուղում բանալ, ասում են՝ այս ժամանակ գուռ բաց անել չի
կարելի: Ելի «մարդ»-ի երկիւզն է, որ այսուեղ տիրում է. առաջնե-
րում աւազակները սպանել են վանահացը վարդապետին և այնու-
հետեւ դոները միջնելուն պէս՝ պնդացնում են: Երկար ու բարակ
բանակցութիւններից յետոյ, դուռը բացւում է, երբ պարզում է որ
մենք հասարակ ուխտաւորներ ենք: Երկու միբ շուն ասրափելի ա-

ղաղակներով մեզ վերայ են յարձակւում, բայց մենք ուրախ ու հանգիստ անցնում ենք, մտնում վանահօր սինեակը: Ժամացոցը որոշում է, որ ժամ ու կես ճանապարհորդել ենք ծմակի միջով:

Մեզ ընդունում են քաղցրութեամբ: Վանահայրը, մի բարձրահասակ և յաղթանդամ վարդապետ, զես ու գեն է վազում: մեզ գերել է հանգիստը, իսկ վարդապետը ծառայ չունի և հարկադրւած է անձամբ հոգալ մեր բոլոր պէտքերը. նորան օգնում է ոտքից ու ձեռքից ընկած մի ծեր քահանայ, որ այսոեղ աքսոր է զրկւած մի շնաս պատկի համար: Մէջքը ծալւած տէր հայրը կատարում է հայր սուրբի պատւեցները, մի և նոյն ժամանակ քժի տակ իր ազօթքներն է կարդում: Մեզ համար թէց են պատրաստում: և, տաք կազդուրիչ հեղուկին աչք զրած, մենք բոլորում ենք, մի մտերմական շրջան կազմում, կամաց հաղորդում ենք միմեանց մեր տպաւորութիւնները: Ամենքը մի տեսակ խօսքեր են ասում: անտառը բոլորի վերայ մի և նոյն ազդեցութիւնն էր արել:

Թէյից յետոց գուրս ենք գալիս պատշաճմբը և տեսնում ենք երկնքի մի գործը—թխափերը պատուել են և լուսինը տարածել է իր լոյսը: Այսպէս էր մեր բաղդը...

Անցաւ մի ժամ: Մենք մուացել էինք մեր կրած տանջանքները, այժմ էլի խօսում էինք, ծիծաղում: Մեր շրջանի մէջն առած վարդապետին ու քահանապին՝ ընթրիքի նաևեցինք: Պարզ և համեստ էր մեր ընթրիքը. ուսում էինք մեծ ախորժակով, մի մի էլ խօսում էինք վարդապետի «եօթն կողպէքի տակ պահած», պաշտած» թթու և դեղին-պղասոր զինին: Այսպիսի մտերմական շրջանում շուտ է սկսում և տաքանում ախորժելի խօսակցութիւնը: Խօսում էինք զլխաւորապէս վանքի և այդ երկու մենաւոր կրօնաւորների ապրուստի մասին: Վանահայրը պատմում է, որ վանքը շատ աղքատ է, համարեա՛ ոչինչ արդինք չի տունում և ոչ էլ մի տեղից օժանդակութիւն: Ո՞րտեղից տունան: Վանքն ունի կալւածներ, բայց շրջակայ զիւդացիները այն աստիճան աղքատ են, որ չեն կարողանում հողը մշակել, անտառներից օգուտ քաղել, ել վանքն ի՞նչ տունայ: Գիւղացիների զրութեան վերայ է կանգ առնում մեր խօսքը: Վարդա-

պետն ու քահանան, որ առևն օր շրջում են զիւղերում, մեզ պատմում են շատ բաներ: Եզներ չունին օր վարեն, ասում են մեզ, երկուերեք տունը հազիւ մի եղն տնի, այդ պատճառով էլ հողերի մեծ մասն անմշակ է մնում: Կ'ոչ եղն, կան զիւղեր, որոնց բնակիչների մեծ մասն անխղին չունի. քնում են շորերը հազած, ծածկելով որ և է, զաղանի մորթու տակ: Աղքատութիւնը դառն է մըշտական:

Ծանր խոռքեր էին:

Մենք զնում ենք մեծ ճանապարհով, տեսնում ենք զիւղեր, կարծում ենք թէ ապղուղ ապրում են մարդիկ այնպէս, ինչպէս զիւղացին պիտի ապրէ: Նացում ենք, բայց ոչինչ չենք տեսնում: «Արտաքինս որիշին է այրում, ներքինս ինձ», ասում է հասարակաց առածը: Դա զիւղացու պատասխանն է՝ ուղղած. զէպի այն մարդիկ, որ գիւղացի անունը լսելուն պէս, հասկանում են մի մարդ, որի հորը գեղին ցորենով է լիքը, կարապ՝ խղով, տաշոլ՝ հացով, կթան կովերը կարագ ու սեր են տալիս ամեն օր. և այդ մարդը առասօրէն ապրում է, նահասկետական պարզ և լի կեանք է վարում: Այսպէս են հասկանում, բայց այսպէս չէ: Պիւղացի ժողովուրդը՝ թո՛ղ մի անզամ էլ կրկնւի այս հնացած ու մաշւած միտքը՝ մեզ բոլորովին մի անյաց ժողովուրդ է, ապրում է իր համար, ապրում է և իր վիշտն ու ցաւը իր շեմքից դուրս չի թողնում: Կը գնաս, կը մտնես—կը տեսնես, չես գնալ՝ երեւակացի՛ր կաթնի ու խղի առասութեան մէջ ապրող մի մարդ: Խոստովանում եմ, ևս էլ շատերի պէս էի. իմ ճանապարհորդութեան ժամանակ այնքան զիւղեր տեսաց և ոչ մեկի մէջ մի քիչ չը մնացի, աչքով չը տեսաց, չը հասկացայ նրանց կեանքը: Բայց կարելի՞ է մեղաղեկինձ. Հինգ օր ճանապարհին դէն ձի քշել, աշխատել գոնէ հարեանցօրէն տեսնել շատ տեղեր,—ես այդ էի միայն կարող անել. ուրիշ միջոց չը կար, հանգամանքների ձեռքին էի, բայց դոնէ հասկանում էի, որ այն չեմ անում, ինչ որ խսկապէս հարկաւոր էր: Այնու ամենացնիւ, որքան և արագինթաց էր իմ ուղեորդութիւնը, Խաչենի իմ տեսած մասը միանդամայն ինձ անծանօթ չը մնաց: Պատահական մանր դէպքերը, ճանապարհի վերայ մարդկանց հետ հանգիստումները, կարճ խօսակցութիւնները հասկացողութիւն ու ին ինձ ժողովրդի

կացութեան մասին։ Եւ ես մի քանի խօսք կ'ասեմ, չը վախսնալով որ մի գուցէ ասածներս իրողութիւնից հեռու լինին։

Խաշենի վորբիկ դաւառում ես ինն թէտամն գիւղ տեսայ։ Առաջին հաստատութիւնը, որ այդ զիւղերը շատ աղքատ են, ինքը բնութիւնն է։ Մի երկիր, որ դաշտեր քիչ ունի, մի երկիր, որի փառքն ու սպարծանքը լայնատարած թանձր անտառներն են, մի այդ տեսակ երկիր ի՞նչ է կարող տալ բնակիչներին։ Մարերի լանջերին են կպած այդ զիւղերը, ո՞չ լաւ ճանապարհներ ունին, ոչ այնպիսի հողեր, որոնց վերայ երկար կարողանային աշխատել։ Անտառը գեռնրանց համար աշխատանքի դուռ չի բացել և շրւտով էլ չի կարող բանալ։ Ծմակից, մենք բոլորս այսպէս ենք հասկանում, կարելի է չոր վառելափայտ հանել, ծախել. իսկ երբ մօտիկում քաղաք չը կայ, աւելորդ է այդ մասին մտածել անգամ։ Մնում է տափտակ շինելլ։ Այս արհեստն էլ այնպիսի զրութեան մէջ է, որ ոչինչ է համարւում, ամենքը տախտակ շինել չը զիտին։ Մարդը վերցնում է ուրագն ու սղոցը, վերցնում է շատ օրերի համար հաց, մնաս բարեաւ է ասում իր ընտանիքին, գնում է ծմակի խորքը. այնտեղ շինում է մի որջ, որի մէջ աւզում է, հարեւանութիւնն է անում արջերի հետ. ցերեկը բանեցնում է իր ջրհեղեղեան խեղճ ուրագը. վայրենի ծմակի լսութեան մէջնորան սիրտ է տալիս միայն ուրագի թխկթիսկոցը։ Նինում է մանր տախտակ, ծմակից դուրս է տանում մի քանի շաբաթից յետոց, ծախում է այնպիսի գնով, որ մի օրւայ աշխատանքը 40—50 կոպէկ է նատում։ Այդ է այն օգուտը, որ տալիս են նորան ահազին անտառները։ Նրանց խորքում երբեմն սպատակում ես այզպիսի տեղերի, ուր զիւղացին տաշել է փացոր և զարմանում ես, թէ ի՞նչպէս է խեղճն այստեղ ասպել, ի՞նչ զըկանքներ է կրել։

Ուրեմն ծմակը զիւղացուն շատ հարկաւոր չէ, մինչև անգամ նեղում է նորան, որովհետեւ բռնել է այն տեղերը, ուր կարելի էր վար ու ցանք անել։ Առանց վար ու ցանքի նա ոչինչ է, երբէք չի կարող այնքան փող աշխատել, որ մի տարւայ հացը ուրիշից առնէ, իր տունը զնէ։ Հողը, վարելահողն է նորան կերակրողը. Հողը չը կայ, նա ասպրուստ չունի, եղն չունի, քնում է տուանց անկողնի, չոր գետնի վերայ, աղքատ է, այնպէս տաստիկ աղքատ, որ նորա կինն ու երեխան տեսած ժամանակ, լացդ է զալիս։ Մի զիւղի՝ ճանապար-

հին իմ առաջը դուրս եկաւ մի զիւղական աղջիկ։ Մեծացած էր նա, նշաննելու աղջիկներ։ Խնձ լաւ յայտնի է հայտ մի յատկութիւնը։ Երբ աղջիկը մեծացաւ, առանից դուրս ձգելուց դառաւ, ընտանիքը նորա վերաց է հաւաքում իր բոլոր հօգսերն ու մտածմունքները։ աշխատում են որ մեծացած աղջիկը լաւ հաղնւի, լաւ երեաց մարդկանց մէջ։ աշխատում են մոռանալ անային շատ պէտքեր, բերաններից կարում՝ նորա վերաց են դնում։ Բայց իմ տեսած աղջիկն ի՞նչ ուներ հագած։ Ես երկար մտիկ էի անում նորա ետևից, երբ նա քշում էր եշը, մտիկ էի անում, բայց չի կարողանում որոշել թէ ինչից է շորը կարած։ Այսքանը միայն լաւ խմացայ, որ արխալուղի միայն մի թեւքն էր հագած տակի վերաց։ մնացած արխալուղը գլուզած, կախ կախ ընկած կատրների մի հաւաքածու էր, որ երեւում էր նորա մէջքի վերաց և նորա ուների շարժողութիւնից ծանր կերպով օրօրւում էր մի կողմից զէպի միւսը։ Նա քարշ էր տալիս այս կտորանքները միայն նորա համար, որ տեսնողը շատէ թէ նա հալաւ հագած է ման գալիս։ Մեր մօտովն անցնելիս՝ նա մէզ վերաց մի հացեացք ձգեց, որ անտարբերութիւն և մի տեսակ արհամարհանք էր արտաշայտում։ Բնութեան հարազատ զաւակը հպարտ էր իր ցնցուիների մէջ։ նա, կարծես, չը զիտէր էլ որ ինքը շորեր չի հագած և նորա համար բոլորովին մի և նոյն է, թէ ի՞նչ կը մտածենք նորա համար մենք՝ աւելի լաւ հագնւած քաղաքացիներու նւրիշ տեղեր էլ տեսայ նմանօրինակ պատկերներ։ Գիւղերի մօտ տեսայ մէծ ու փոքր երեխաներ, որոնց վերաց միայն մի կտոր հալաւ կայ, որ ամառ-ձմեռ նորանց հագուստն է, մնացած տեղերը բաց են, երեւում են չոր, բարակ ոտներ, տափակ ու սկորացած կուրծք, վոխո, հողի գոյն ունեցող զէմքեր, և կէ՛զո, կէ՛զո՝ որքան կարող է լինել։ Ես, ի հարիկ, չեմ կարող ասել թէ բոլորն էլ այդպէս են։ բայց թէ տեսածներս հաստատում են մեծամասնութեան դառն աղքատութիւնը՝ զա իմ համոզմունքն է։ Աղքատութիւնն է պատճառը, որ մէծ մէծ զիւղեր չը կան։ իւրաքանչիւր զիւղ բաղկացած է 7, 15, 35 անից։

Ես մասնացոց արի հողի պակասութիւնը։ Բայց պէտք է մասնացոց անեմ և այն, որ այդ պակասութիւնը կազ ունի չը զիտեմ ծուլութեան թէ աղքատութեան հետ։ Կան հողեր, որ կարող են արտ

գառնալ, բայց արտ չեն. կան տեղեր, որ պաղասու վարելահող դառնալու համար աշխատութեան են կարօտ. հարկաւոր է մաքրել թփերն ու մացառները, հարկաւոր է աղբով պարարտացնել կամ ջրել: Բայց մեր զիւղացին շատ վախկոս է. նա չի անում, չի հասկանում որ կարող է անել. նախ պէտք է ապահով լինի, որ մի բան էլ կը ստանայ և ապա աշխատէ: Նորան շրջապատող վայրենի բնութիւնը իր անհամար գժւարութիւններով չի դրել նորա մեջ փորձասէր հոգի, տոկուն, ցամառ. մրցութեան սպահանջ. նա գուցէ չի ել հաւատայ, որ աշխարհում ապրում են մարդիկ, որոնք ահազին ճահիճներն են վարուցանքի տեղ շինում և հնձում: Անփորձութիւնը, անօգնականութիւնը, գարերի աւանդական խրատը որ և է բանի մասին—այս ամենը հարկադրում է նորան ընդունել խոժուագէմ և անհիւրասէր բնութեան մօտ մի դրութիւն—աղքատ լինել: Ուրիշ ճար որ չը կայ, աղքատ մնացիր, աղքատ ես և քեզ շատ լաւ են հասկանում Յելուշորի, Հաւապահի, Սրջածորի, Կրատափի և այլ տեղերի անտառները. այսպէս պէտք է հասկանալ զրութիւնը: Խոկ երբ միանգամից աղքատութիւնը կոխում է, մնա՛ս բարեաւ ամեն տեսակ բարօրութիւն. հող էլ լինի, չի մշակի, նա անտրատունջ կը քնի, առանց վերմակի և ման կը գայ այնպիսի արխալուղ հաղած, որի մի թեքը միայն կարելի է կրուը զցել: Նախապաշարւած է զիւղացին, կաշկանդւած հոգեպէս. իր այդ գրութիւնը ճակատագրական է համարում և երբ տեսնում է, որ հողագործութիւնը մի հատ եզնով զլուխ չի գալիս, ինքն իրեն համոզւում է, որ վարելը նորան չէ տւած, գնում է հետու տեղեր, ուր արտեր շատ կան, մշակ է գառնում, հնձում ուրիշ արտերը, որ գոնէ իր ստացած հնձավարձով ապրէ կէս կուշտ և կէս քաղցած: Խնձ պատմում են Քոլատակ զիւղի մասին, որ գոլնում է Յակովբայ վանքի մօտ: Քիւղացիները համարեա' թուրք թափառականների օգնութեամբ և առերքով են միայն ապրում, երբ նորանք Խաչենագետի ամիերով սարն են զնում կամ սարից զալիս են: Ճանապարհի վերաց առետուր են սկսում, թուրքերին ընկոյզ, շինած մահակներ են ծախում: Թուրք թափառականների շնորհիւ սպրե՛լ... երբ այդ թուրքերն իրանք ողորմելի թշւառներ են՝ սարու ձոր ընկած...

Այս ամենից յիշոց ևս մասնիւթերում եմ ներկայ տարին, որ այն-

քան վաստ է, այնքան գառնու Զափից դուրս անձրևներն այս տարի գիւղացու շատ ցոյսերն են փացրել, դաշտը մի չնչին բան է տեր, այս պատճառով հենց այժմ, զեռ աշունը չը սկսած, հացի պակասութիւն է. ես չը տեսայ մի տեղ, ուր գանգասու չը լինէր. խորշակահար արտեր տեսայ, որ թողել են, իմանալով որ արդիւնք չը կաց Եղած ցորենը աև է, անհիւթ, հաց չի դառնում, մինչեւ որ կորեկ չին խառնում: Աւնեորների համար էլ զգալի է պակասութիւնը, ի՞նչպէս պիտք է միւսներն ապրեն: Պէտք է երեւակացել, թէ ի՞նչ օրի մէջ կը լինին զիւղացիները, երբ երկիրը ծածկւած կը լինի խոր ձիւնի տակ: Խարապելի՛ բաներ: Մի քանից ամսից չետոց ձիւնը կը դայ, այս լեռները, անմատչելի անտառները բոլորովին կը կտրւեն ամեն հաղորդակցութիւնից: Ո՞րտեղից օդնութիւն տառնան, և ո՞վ կը տայ: Սովը, ինչպէս և տարափոխիկ հիւանդութիւնը, ամեն անգամ անարգել կարող է զիւղը մտնել, զիւղացու բկից կախել: Գիւղացին ամեն դէսլքում է անպատճառ և անփորձ: Պաշար պահել չը զիտէ, հասարական՝ ամբարի գաղափարը երկնքի ասողի պէս հեռու է նորահասկացութիւնից: Առաս տարիների թողած աւելորդը վաղուց ծախսել, կերել է, այժմ, ինչպէս ասում են, մատը բերանումն է մեացել: Կար մի ժամանակ, այդ զիւղացին ցորենի առեւտուր էր առում: Փողը շափազանց քաղցր բան է, ունեորն ու չունեորը ծախել են այն, ինչ կարողացել են բերանից կտրել: Եւ այժմ ահա պակասութիւն է, թանեկութիւն է.—ո՞ւր գնայ: Նա ծախելէ, որովհետեւ չը զիտէ, որ իրան միշտ պաշար է հարկաւոր, չը զիտէ՝ որովհետեւ զիւղացի է, որը բացի զրանից շատ ուրիշ բաներ էլ չը զիտէ: Իսկ նորանք, որոնց ձեռքում կացին թւանշաններ և որոնց առաջ զիտութեան թէօրիան շատ և շատ հետաքրքիր հետեղութիւններ, հաշիւներ էր բացել, ծափ էին զարկում ուրախացած, որ մեր երկիրն էլ արտահանում է հում ապրանք: Միայն այս փասողը, ցորենով լիքը վագօնների երկար շարքը, ուրախացնում էր և չը զիտէին որ այդ արգիւնահանութիւնը քամում, սպառում է երկրի ներքին ոյժերը: Մուանում էին այդ պարոնները, որ մեր երկիրը չունի հաղորդակցութեան յարմար ճանապարհներ, որ մեր զիւղացիները ապրում են ասրերի և ժայռերի զաղաթներին, այնպիսի տեղերում, ուր միայն ամառն է, հնարաւոր երկար զնալ ու զալը, պակասութեան,

սովի ժամանակ աղէտալի գրութեան մէջ կը լինեն, առանձնացած լինելով միւս տեղերից։ Հիմա հրամացեցիք տեսէ՛ք։ Այն տարին մէնք էժան հաց տւինք ֆրանսիացուն և գիրմանացուն, նորանք լաւ աղրեցին։ Հիմա մէնք ենք զժուարութեան մէջ, հիմա էլ թո՛ղ իրանք ցորեն բերեն մէր խաչենցուն կամ վանանդեցուն տան, յտու առանան իրանց տւած ֆրանսիերը թո՛ղ առանան, զիւղացին ուրախութեամբ կը տայ, միայն թէ հարկադրւած շը լինի իր սոված երեխացի բուռը, հացի փոխարէն, երկու-երեք եփած բակլա կամ սիսու ղնել։

Մենք սխալում էինք, ուրեմն մէր ուրախութիւնը անհիմն էր։ Եւ դեռ շատ կը սխալւ ենք, շատ բաների վերաց կ'ուրախանանք, վոխանակ տիրելու, որովհեաւ մէր երկիրը, մէր տունն ու տեղը չենք ուստմասիրել։ Վանահացը վարդապետի պատմածները իմ մէջ զանազան մարքեր են յարուցանում։ Նո յանկարծ ցիշում եմ՝ ոռուսաց գրականութիւնը, մատրերում եմ թէ վերջին տարիներս ոռուս ինտիլիդենցիան ի՞նչ տեսակ զիրք է բունել զէպի զիւղացին։ Ուսպէսակի, կոմս Տօլսոց, Զլատովրասոսկի իրանց գրւածքներով, լրագրութեան մի յացանի մասն իր քարոզներով անցնում են իմ ցիշողութեան միջով։ Գեղարւեսորը, հրապարակախօսութիւնը, մասնադիտութիւնը միացած, ձեռք ձեռքի տւած՝ մակլ են զիւղական աշխարհը, վորում, ուսումնասիրում են, զարմանալի փառուեր են զուրս հանում։ Գիւղացու կեանքը, պատկերը պարզում է, բարձրանում մասձողների աչքի առջեւ։ Նո հաւատացած եմ, որ մեզանից ամեն մէկը, որ գոնէ մի տարի շարունակ ոռուսականութեանն է հետեւ, զատ շատ հասկացողաթիւն կը լինի կազմած ոռու զիւղացիների նիստ ու կացի, հոգեկան ընդունակութիւնների, բարի ու չար զործերի մասին։ Գրում են և չեն բաւականանում միայն մաքեր առաջարկելով, զբելով։ «Գի՛ւղ համեցէք, պարտներ, զի՛ւղ համեցէք», գոշում են նոքա առանց հանաքի, լրջութեամբ, զինուորած բազմաթիւ առողջ մաքերով և փառուերով։ Հրաւիրում են ինտելիդենաներին, որոնք մայրաքաղաքներում հալում են, մաշտամ, չիմանալով թէ ի՞նչ անեն։ Ուսւսաց յարգելի թերթերից մէկը, «Հեծվյան, ահա՛ քանի տարի է արծարծում է այն միտքը, որ ինտելիդենցիան իր կոչումը կարող է պարզել այն ժամանակ միայն, երբ պատրաստ ու

փափուկ պաշտօնների եռելոց վաղելը կը թողնէ և յետ կը դառնաց գաւառները. այդ հարցը այժմ էլ ոռու պարբերական գրականութեան օրւայ հարցերից մէկն է: Հազւագիւտ բան չեն այս տեսակ նկարագիրները. «մէկ ի՞նչպէս ես սովորեցայ վարն ու հունձը»: Այս ապրի «Ծերենի Վետնուք» ամսագրում տպագրւում էին Գլէբ Ուստինսկոյ յօդւածները «Ժամանակի պատճեն» վերնագրի տակ, որոնք հիացնում են լնդերցողին. հասարակ ժողովրդի կեանքը, նորա կրած աշխատանքը, ապրուառը այնպէս զեղեցիկ ուսումնասիրւած և մի տաղանդաւոր զրչի տակ նուրբ դժագրութիւններով պատկերացած էր, որ լնդերցողը չեր կարող չը յափշտակւել, ըլ հիանալ: Մի ուրիշ ամսագրում, («Ռուսակա Մասլի») նոշնուղէս այս տարի, տպւեց Կարենինի «Մոյ միք» վերնագրով վեպը, որ նկարագրում է մի ինասելլիդենտի գիւղ գնալը և գիւղացիների հետ ապրելը, նորանց բոլոր զաշտացին և անացին աշխատանքներին սովորելը: Եւ ո՞ր մէկը յիշես:

Այդ ամենը յիշելուց յետոյ, երբ յետ եմ դառնում մեզ մօտ, տեսնում եմ խաշենցու դրութիւնը իր լեռների և ծմակների մէջ, ես հարցնում եմ: «մի՞թէ մեր մէջ չէին կարող գանւել մարդիկի, որոնք եթէ ոչ վար ու ցանք անեին, զոնէ ուռնինասիրէին, նկարագրէին այդ կեանքը»: Այդ հարցը տալիս եմ ինձ և ծիծաղում: Խնչուիս կարելի է մինչև անդամ այդ տեսակ հարց գնել. բայն չունես, խելքդ զլիսի՞դ չէ: Այդ տեսակ սառն, արհամարհական հարցեր կարելի է լսել մեր մէջ: Ո՞վ է գնացողն, անողը: Երիտասարդը համալսարանում ուսում է սուսնում և վերջացնելուց յետոյ, քանի որ թարմ է, ջահել է, հարցնում է՝ ի՞նչ անեմ, ո՞ւր գնամ: Խսկ երբ մի քիչ ման է դալիս, աշխարհի համն ու հոսն առնում է տեսնում ես լուեց, այդ հարցն էլ չի կրիսում: Նա շատապում է պսակւել և մի լաւ իւզալի պաշտօն ձեռք բերել. այնուհետև համալսարանական ուսումը նորա ձեռքում մի զէնք է, որով հասարակ մահկանացուներին կարելի է կուցնել նորա առջեւ, հեղինակութեան փառքը վայելելը նայց ինչո՞ւ խօսենք միայն համալսարանականների մասին. ահա ուրիշ գասակարգի երիտասարդներ, որոնք ըստ երեսզթին իրաւունք չը պիտի ունենացին պատրաստ պաշտօն ու փափուկ ուսումներու. — դրանք նոյն այդ զիս զացիների

որդիներն են, որոնք մի կերպ միջին ուսման տէր են զարձել։ Հիսուս որ Սպէստէրի, Տօկլի, Կամափ անոնները լսում են և հասկա նույն նորանց ինչ լինելը, խորյն մեծ կենարոններ են վազում։ Քանի քանիսը այս բոպէին քաղցած նատած են նոյն խակ Թիֆլիսում, երեւակայում են իրանց մի կերպ նահատակներ, մի կերպ քանահատած մեծութիւններ և թշւառ, աննպատակ կեանք են փշացնում։ Ոչ միայն գիւղը, այլ և գաւառական քաղաքը՝ երեւակայում են նորանք—չի կարող տեղաւորել իր մէջ նորանց պէս մեծութիւնը. ուստի և փախչում են։ Փորձի՛ր հինգ այսպէս խօսել զրանցից մէկի հետ։

— Սպասի՛ր, պարո՞ն, ինչո՞ւ այդքան շուտ փախչում ես պատեղից։

Պարոնս քիթը վեր է քաշում, արհամարհանքով ասում է.

— Ա-ե-ա'-նը չը կայ։

Կեանք չը կայ... Բայց տեսնել մեծ քաղաքի առօրիայ իրարանցումը, խլանալ նորա աղմուկի մէջ, ամեն անզամ երես առ երես շփւել անառակրութեան, մարդակերութեան, կեղոփ և ազականութեան հետ, տեսնել քաղաքակրթութեան արտաքին շուքը, լսատած, զարդարած պատկերը և մի և նոյն ժամանակ հոգեկան գատարկութիւն, ամեն զրկանք կրել—սա կեանք է... Չը կան մշակներ, խկական մշակներ, որոնց համար զործը հոգեկան պահանջ լիներ, որոնց համար աշխատութիւնը պարձանք և երախտապարտութիւն չը լիներ. մենք անում ենք մի բան և գետ կէսին չը հասած՝ պահանջում ենք, որ մեզ ճանաչեն, պատւեն. և երբ այդպէս չի լինում, վշառում ենք, ընկնում։

— Այս կողմերի զիս զացիների մեծ մասը վերմակ չունի, որ մանէ նորա տակը ու քնի, ասում է մի պատահական վարդապետ Մենք պլշում ենք, զարմանում... Մի՞թէ այդպէս է...»

Զ Ա Ր Բ Ո Ր Դ Գ Ո Ր.

Յիզիքական և հոգեկան տանջանքներից յետոց հանդիսաւ քնել, արեգակը ծագելուն պէս վեր կենալ, նացել փոքրիկ և անշուք պատահանով, տեսնել մի պարզ և չքնազ առառօս, որի մի մասը ա-

մառնային է, միւսը աշնանացին — կը լինի՝ արդեօք մի ուրիշ բաւա-
կանութիւն՝ ես մինչեւ օրս չը գիտեմ:

Յակոբայ վանքը այսպիսի մի առաւօտ պարգևեց: Գլուխս
բարձրացնում եմ, Խաչենի խրոխս լեռների առաւօտը իր հսկայական
շաքներով, ոսկեզօծ գագաթներով և թարմ, սաստիկ թարմ
օղով հալածումէ ինձ մեր քնարանից: Հաղուում եմ շտապով, շորե-
րիս կէսը թողնում եմ թափւած և գուրս զնում: Անետակը, որ
մեզ այնպիս լաւ հիւրասիրել է զիշերային մռայլ և տանջանքներով
լիքը անոտափ ծայրում, մի շատ ողորմելի, աւերակ շինութիւն է:
Հարաւային կողմից ունի մի հնացած պատշգամբ, որ շինուած է
փշրւած և վտած տախուակներից. այդուղ զրած է մի հին, կաց-
նով շինած աթու, որի տեսքը ծիծաղ է յարուցանում: Նստում եմ
այդ աթուի վերայ և նայում եմ՝ չեմ կշտանում:

Պատշգամբս կանգնած է բլուրի վերայ, որ կազմում է արեմուեան
կողմից եկած լեռնային ծառազարդ բարձրութեան մի լանջը: Իմ
առջեւն լնկած է մի երկայն նեղ հովիտ, որի միւս կողմից լնկած է
մի ուրիշ լեռնաշղթայ: Այդ շղթայի ստորոտով հոսում է Քոլտուակի
գետակը, որ յաջնի է իր քաղցրահամ ձկներով: Խոկ ամենաբարձր
գագաթներից մէկի վերայ, առաւօտեան երկնքի կապուտակութեան
մէջ, բազմած է Կաչաղակաբերդը: Նա իմ հանգեպն է և իմ ունորա
մէջ ուրիշ սար չը կայ, այլ միայն օդի ովկիանոս, որ թոյլ է տալիս
ինձ բաւական հեռաւորութեան վերայ տեսնել բերդի մարմինը, որ
լուսաւորւած է արեգակի լուսով և բարձրացած խոր ձորերի վերայ,
որոնք դեռ ևս լնկուած են գիշերւանից մնացած կիսաթափանց
կապուտակութեան մէջ: Կաչաղակների բերդը երկար դէսի իրան է
ձգում նայողին, բայց անորոշ և անհասկանալի է մնում նորա առջեւ:
Նկատելի են մոխրագոյն սեպացած ժայռեր, որոնք երեք կողմից
վիթխարի պարիսպներ են կազմում: Նայում ես և կարծում թէ այդ
բերդը շինուած պատրաստւած է մի ուրիշ տեղ և բոլորովին պատա-
հաբար զրւած է այս սարի զլիսին իբրև մի զլիսարկ: Դէսի արեւելք
երեւում են լեռներ և լեռներ, որոնք մի տեղ մօտենում են միմեանց
և նեղում Խաչենագետը: Այդուղ երեւում է Ցեխ-Չորի անտառը, խոկ
նորա ետևում բարձր է տարել իր գլուխը Պակի և. Դէորգի սարը.
Նորա գագաթին կանգնած է մի վանք, որ սպիտակին է տալիս: Խոկ

արևմտեան կողմից ընկած է այս զիշեր մեր անցած անտառը, որի շարունակութիւնը գալիս է վանքի շուրջը պատռմ և իջնում գեղի հովիտը:

Աւաշւելու համար մեզ ուղարկում են վանքի աղբիւրը: Երկու գաղան շներից պաշտպանուելու համար՝ զինուորւում ենք ահաղին ձողերով, գուրս ենք դալիս մեծ գուներից և քիչ առաջանալով, ծառերի և կանաչների մէջ գտնում ենք մի ցուրտ աղբիւրը: Մեր անցած անտառի մի մասն է և հենց այս ջուրն էր, որ հարկադրել եր մեզ ճրագ վառել: Այժմ, առաւոտեան պայծառ ճառագայթներով ողողւած անտառը որքա՞ն գեղեցիկ է: տերեն ու խոր այնքան պայծառ կանաչ գոյն ունին, այնքան թարմութիւն, զովացուցիւ խոնաւութիւն են արձակում, առաւոտեան ցօղն այնպէս հեղ ցնդուղներ է տալիս և այս կայտառ ու բարակ ջուրը գնում է կորչում միմեանց պինդ բունած բյուերի և պատուակների մէջ... Որքան անշնորհք լինիս, որքան անծանօթ մուսաների լեզուին, գարձեալ զգում ես, որ կարող ես մի երկու երեք տող նւիրել բնութեան: Հպարտ է այդ բնութիւնը, այնքա՞ն հապարտ, որ հեռացնում է իրանից այստեղ ապրող մարդուն, չի թոյլ տալիս որ այդ խեղճը մի քիչ լաւ ապրէ: Իսա մարդու ձեռքին չի նւաճւում, բայց և այնպէս որքա՞ն գեղեցիկ է:

Ս. Յակոբաց վանքը հասարակ և անզարդ շինութիւն է: Փոքրիկ տաճարը շրջապատուած է բազմաթիւ նեղ ու մմին խուցերով, ծակ ու ծուկերով: Թէև վանքը հին է, Գանձասարից էլ հին, բայց, ինչպէս երեւում է, շատ անգամ է վերանորոգւած: Նախկին շինութեան քարերը վերանորոգիչները առանց որ և է յարմարութեան և ճաշակի զրել են պատերում, այնպէս որ գերեզմանաքարը սիւնի վերաց է երեւում: Խաչքարը առատաղի և պատի մի մութ անկիւնում: Ամբողջ շինութիւնը մի անշնորհք կարկատանի տպաւորութիւնն է թողնում: Խնչ ասել կուզի, այս վանքը Գանձասարից էլ վաս է պահւում: Վայտի մասերը փառել են՝ կախ ընկել, աւերակը կատարեալ աւերակ է: Յացց աս էլ հին ժամանակները հոչակառ վանք է եղել և, կարծեմ, աթոռանիստ: Նորա վիճակը կոչւելիս է եղել Մեծարանց վիճակ: Պատերի մէջ զբած հին քարերն ունին արձանագրութիւններ: Ժամանակներ կայ Յակոբոս արքեպիսկոպոսի և ԱՄԿ-

ծարանց¹⁾ հայրապետիո զերեզմանը, որի արձանագրութիւնը կրում՝ է 1223 թւականը: Գաւթում թաղւած է Ազւանից Յովհաննես կաթողիկոսը, մի տեղ զրած է մեծ իշխան Զալալի որդի Յովհաննես կաթողիկոսի խաչքարը. իսկ մի ուրիշ արձանագրութիւն, որի դիմին զրած է «Զալալին հրաման», վկայում է որ Ծովառեղ անոնով հողը վանքին է նւիրւած 1251 թւականին. այժմ էլ այդ հողը վանքի սեպհականութիւնն է: Զալալ և Զալալ իշխան ամեն տեղ... Ամեն քարի վերաց, ամեն մի մասնապատ արձանագրութեան մէջ, ծմակ-ների խորքերում, սարերի ճակատին և ձորերի յատակում միշտ այս անունն է յիշւում...

Վանքի նշանաւոր սրբութիւնն է Մծբնայ Յակովի հայրապետի աջը, որ մեծ յարգանք ունի Պարտբաղում: Աջը զրած է մի փոք-րիկ խուցի մէջ, փայտի փոքրիկ գմբէթի տակ: Հիւանդութիւնների, երաշտի և վեասակար անձրենների ժամանակ, աջը տանում են զիւ-զերը, նուշի, թափոր են անում: Այս վանքն էլ ունի կալւածներ՝ մօտ երեք հազար գեսեատին տարածութեամբ, բաց, ինչպէս ասացի, արդիւնք շատ քիչ է տատցւում: իսկ թեմական դպրանոցի գան-ձարանը այսուելից կոպէկ չի մտնում:

Ա. Յակովի աջը համբուրելով՝ ձի ենք նստում և շարունակում մեր ճանապարհը: Խջնում ենք Հովհանք, անցնում ենք մի քանի թումբերով և համսում ենք Խաչենագետ՝ Առջաձոր զիւղի զիմնացը, զնում ենք զետի մերկ ափով: Մերկ եմ ասում, որովհետեւ այդ հարթ ու ջրառատ տեղերում՝ այզիներ չը կան. զարմանալի՛ ծուլութիւն և զիւղական անհասկացողութիւն: Խաչենագետի ձորի իմ տե-սած մասում միշտ Դանձասար այզիներ չը կան, եթէ չը հաշւենք մէկը կամ երկուսը: Խակիչները ուսում են, ինչ տալիս է անսասուր—զկեռ, լնկոյզ և այլ վայրենի պատուզներ:

Անցնում ենք Յեխ-Զորի մօտով և շուտով սկսում ենք բարձրա-նալ մի ճանապարհով, որ թանձր անտառի միջով տանում է զէպի

¹⁾ Հ. Խճիճեանը («Ստաբանը. Հին Հայաս») լիսում է Արցախի նա-հանգում Մեծիրանք զաւառ, բաց նորա համար առանձին չի խօսում, ո-բայինուն անդամական է զաւառի սեղը: Այս արձանագրութիւնը պարզ ցոց է տալիս, որ հիմ Մեծիրանք ակժմեան Խաչենի մի մասն է:

Պակի սուրբ Գէորգ: Ծմակը Յեխո-Զորի ծմակին նման չէ, թէև նորա հարկանն է, ծառերն այնքան բարձր չեն:

Ես չեմ նկարագրում այդ ճանապարհը. իմ լնթերցողը, կարծեմ, մինչեւ այժմ պատմածից հասկացել է թէ ի՞նչ է լեռնային ճանապարհը Վարաբազում. այսքանը միայն կ'աւելացնեմ, որ այդ ճանապարհը շատ երկար է, գնում է սարն ի վեր, միշտ և միշտ դէպի բարձր: Մեր տանջւած ձիերը գեռ ճանապարհը չը կիսած՝ յոդում են, բոլորս իջնում ենք և ոտով բարձրանում, տեղ տեղ հանգստանալով: Դեռ լաւ է, որ արեգակը շատ չէր այրում. եթէ այրէր, ըլ զիանմ ո՛րքան քրտինք պիտի թափէինք: Կէսօրից անց հասնում ենք Աւլուբաբ անունով փոքրիկ զիւզը, որ մի շատ զեղեցիկ տեղ է ընկած: Տները (մենք համրեցինք՝ տանն և մէկ հատ էին) միմեանց կողքի են շինուած և նայում են մի լայն փողոցի վերաց: Տեղը բլրի գագաթ է, ծածկւած կանաչ խոտով. կանաչ լանջիվերը վերջանում է մի անտառապատ ձորի մօա, խոկ նորանից գէնը երեւում են նոյն տեսակ կանաչ տեղեր ծմակների մէջ: Մի քանի տասնեակ տարիներ սրանից առաջ է զիւզն այսուեղ շինուել. առաջներում Աւլուբաբը եղել է Խաչենագետի ափին, բայց, պատմում են, մի ինչ որ հիւանդել է կոտորել, զիւզը ցրել է, մի մասը ուրիշ զիւզեր է զնացել, մնացորդը բարձրացել է այս բարձրութեան զլուխր: Բայց, երեխ, հեշտ չէ Խաչենի զեղեցիկ տեղերը զրաւելլը. ուլուբաբցիք շատ դըժւարութիւններ պիտի կրեն ջրի պակասութեան պատճառով. մի բեռն ցորեն աղալու համար՝ նորանք պիտի իջնեն այդ բարձրութեան զլիսից, Խաչենագետի վերաց շինած ջրաղացների օդնութեան դիմեն. ես, որ այդ ճանապարհը տեսել եմ, ասում եմ, որ ահագին դժւարութիւն է մի բեռն ցորեն աղալլը:

Աւլուբաբի մօտից երեւում է բարձրութեան զլիսին նսասած վանքը, զէպի ուր տանում է մի քարքարոտ և դժւար կածան: Գնում ենք այզտեղով և քրտինքի մէջ կորած, միանգամայն փշրւած հասնում ենք վանքը: Մենք այսուղ պիտի զիշերենք և մեր ձիերին հանգիստ տանք: Մենսակ մենք չէինք. օրր շարաթ էր և կացին ուրիշ ուխտաւորներ էլ:

Սուրբ Գէորգի սարը շատ բարձր է. վանքի տեղը այդ սարի

ամենաբարձր կէոն է և շրջակայ ուրիշ սարերը — Կաչաղակաբերդ,
Գանհասար բաւական ցած են երևում: Մարդու առջև լայն ու մեծ
տեսարան է բացւում, հօրիզոնը շատ հեռու է գնում և այս բարձ-
րութեան զիսին կանդնած՝ կարելի է տեսնել բիւրաւոր գանազան
տեսարաններ և տեղեր նայում ես զէպի արևելքը. — անսահման տա-
փարակ տարածութիւններ, այժմ գեղնած, անկենդան փուած են
այս հսկայի ոտների տակ: Հսկան այնպէս տիրաբար բարձրացրել է իր
զլուխը, որ ամեն տեղից ցոյց է տալիս իր տիտանական հսկակը:
Ասում են՝ որ այսաեղից երևում է Կուրը, երկաթուղու Եւլախ կա-
յարանը. իսկ այս կողմերի մի բնակիւ հաւատացնում էր, որ նազուից
շատ հեռու չը գտնւող Հաջի-Կարուլ կայարանից էլ տեսնում է
Սուրբ-Գէորգը. կարող էք երեւակայել թէ ո՞րքան բարձր է աս և
ի՞նչպիսի յաջող տեղ է կանգնած, որ հարթավայրերի նեղ, կուշ ե-
կած հօրիզոնից վեր է գնում այնքան հեռաւորութեան վերաց: Հիւ-
սիսային, արևմտեան և հարաւային կողմերում երևում են անժին-
արեր, հովհաններ, երեւում է Նուշին, կարծես ձեռքի ափի վերաց
զրած, երեւում են և Շուշուց դէնը գտնւող սարերը: Ես կ'ասեմ, որ
մի օր, երկու օր այսուղ մնալով և չորս կողմից նայելով՝ չի կարելի
ամեն մի տեսարան զատ զատ տեսնել, հասկանալ և նկարել. այնքան
շատ են նորանք, այնքան տեսակ տեսակ, որ մի, երկու ժամեաց ըն-
թացքում աչքը միայն մէկից դէպի միւսն է վազում և միայն հար-
թավայրի ընդհանուր տեսքն է տեսնում:

Վանքի տեղը, ինչ ասել կուզի, գեղեցիկ է, բանատեղծական:
Սեպահմբերի սկիզբն է արգէն, բայց խոալ գեռ կանաչ է և թարմ:
Թանձր անտառը սարի բոլոր կողմերից բարձրանալով՝ գալիս է, վան-
քի շուրջը մի բոլորակ կազմում: Վանքը մօտաւորապէս երկու հա-
րիւր տարւաց շինութիւն է, հասարակ, զուրկ հին վանքերի գեղե-
ցիկ քանդակներից. մինչև անգամ վանքի հիմնադիր Յովսէփ վար-
դապետի արձանագրութիւնը քարի վերաց չէ, այլ աջակողմեան խո-
րանի կամարակապ առաստաղի ծեփի վերաց: Այդ խորանում գտնե-
ւում է հիմնադիրի զերեզմանը, որի վերաց մոմ են գառում: իսկ բեմի
առաջ մի ուրիշ զերեզման ծածկւած է բազմաթիւ մոմերով — այդ է
ս. Գէորգի մասունքների պահարանը, որ մեծ քանակութեամբ ուխ-
տաս որներ է բերում Վարաբաղի ամեն կողմերից: Աերսից էլ շնու-

թիւնը անսպածոյմ է, բայց լաւ ո՞ւ ունի. կտուրը գարձեալ իսախոս-
ւած է և ջրի կաթիւները այսուեղ կը աւերմունք են զործում:

Աշնանային ցուրտը, որ ամբողջ ամառը այս տեղին շատ ացե-
լութիւններ է, անում, այժմ վերջնականապէս հաստատւել է. ամեն
կողմից փչում է թէեւ ոչ սաստիկ, բայց բաւական ցուրտ քամի, որի
համար ոչ մի արդելք չը կաց, ազա՛տ է այսուեղ, ինքնիշխան: Ա-
րեգակը հաս ու հաս է Գանձասարի լիուներին, որնց ետևումն է
մայր մտնում: Մենք դէս ու գէն ենք շրջում և ցրակց կուչ եկած
մտածում ենք՝ թէ ի՞նչպէս պիտի գիշերը լուսացնենք: Թէեւ ամառ-
ւայ տօներին այսուեղ թափուում է ուխտաւորների ահազին բազմու-
թիւնը, բայց ոչինչ յարմարութիւն չը կաց նորանց համար. երկու
հաս սենեակներ կան, որ կարող են ապաստանարան դառնալ. զբ-
րանցից մէկում ապրում է վանահացր քահանան, մի ինչ որ անձ-
նաւորութիւն, որ թողնելով իր տունն ու տեղը հեռու. Սինիքում,
առանձնացել է այս ոարի զլիսին և բոլորովին մնակ է—ինչն ու-
մէկ էլ ինքը. երկրորդ սենեակը, մի հին ու մտացւած շնութիւն,
որ սակացն ամբողջ է և ամուր կազմւածք ո՞նի, աւելի զում է, քան
տունն Խակ մենք քննելու շոր, մինչեւ անդամ հաստ վերարկու էլ չու-
նինք, ուրեմն ի՞նչ կը լինի մեր զբութիւնը: Նատախուր հարց է, մանա-
ւանդ մի այսպիսի տեղ, ուր բնութիւնը հաստատակամութիւն չու-
նի և ուզած ժամանակը ցոյց է: տալիս իր այլանդակ քմահաճու-
թիւններից մէկը. Գանձասարի զլիսին հաւաքւել են ամուրը, որո-
տոցի թոյլ ծայնը մը ականջին է հասնում: Մենք տեսնում ենք թէ
ինչպէս թափուում է անձրեւը Գանձասարի զլիսին. երկնքի մի ծայ-
րում հաւաքւել են ամուրը, կախ լնկել երկրի վերաց, իսկ մայր
մտնող արեգակը մի կողմից իր ծուռ հառագայթներով լուսաւորում
է այդ ամսպերն ու անձրեւը, որնոնք հետզհետէ գէսի մեզ են զալիս:
Սպասում ենք զրանց ճնշւած, վհատած սրտերով: Բայց անձրեւ-
բեր ամպը անցնում է մեզանից բաւական հեռու և անշարժանում
է երկնքի մի ուրիշ կողմում:

Հետզհետէ զալիս են ուխտաւորներ, բերում են ոչխարներ. նո-
րանք իջնում են բաց երկնքի տակ, կրակ են վասում, վուում են
կապերաններ և խորին իրանց բանին ու զործին են կենում. որը զւ-
նում է չուր բերելու Աւլուբաբ գիւղի մօտից, որը փայտի պատ-

բաստութիւն է տեսնում. մարդ ու կնիկ, հարս, աղջիկ, երեխաց միմնաց են խառնում. մեռած, սառած զաղաժը կենդանութիւն է; սամնում նայ ոխտաւորները զիւղացներ են:

Այդ իրարանցումը, հանաքն ու ծիծաղը, բարձր ու հանդարտ խօսակցութիւններն ինձ վերայ շատ ախորժելի տաղաւորութիւն են գործում, և ես կանգնած տէրուերի մենակի կարին՝ խորին ուշադրութեամբ զիսում եմ զբանց, տեսնում եմ հայ զիւղացու կեանքի նշանաւոր երևոյթներից մէկը. տեսնում եմ և ցիշում իմ մանկութիւնը, այն երջանիկ և միշտ քաղցր ժամանակները, երբ այնքան ողերուած, ուրախ և զւարժ մենք ել ոխտ էինք զնում, տեսնում էինք շատ աեղեր, շատ մարդիկ. կարելի՞ է մոռանալ այն հոգեկան երջանիկ տրամադրութիւնը, այնքան մէծ ուրախութիւնը...

Աւխտադնացութիւնը, այս', հայ կեանքի մի հաստ երակն է կազմել և այժմէ կազմում է: Անցիշելի ժամանակների սրբազործած այդ սովորութիւնը իր մէջ ծածկած ունի շատ խորհրդաւոր, շատ հետաքրքրական զծեր: Մեր ժամանակը իր վայր ու վեր անող, դէմք ու կերպարանք փոխիտող ձեռքերով գես չի մօտեցել այս սովորութեան, չի խախտել նորա հիմքերը. էականը, հնութեան կը տակած կարգն ու կանոնը, ծէսն ու արարողութիւնը մնացել են և դեռ. շատ կը մնան: Էականն ասացի, որովհետեւ մի քանի երկրորդական կողմերը փոխումեն իրանց կերպարանքը, կապ ունին ժողովըրդի արագին կենցաղալարութեան հետ, որ, ինչպէս յացնի է, ժամանակի փոխիտութիւններին է ենթարկւած: Քաղաքն ու նորա քաղաքակրթութիւնը զիւղերի վերայ մէծ աղջեցութիւն են զործում. հին, նոհապետական օջախը երկաժի վառարաններին է իր աեղը տալիս, մէծ փափախը՝ մահուաի թեթեւ զիւարկին. և զիւղացն, որ օտարութեան մէջ քիչ զրուաւորութիւն և փող է ձեռք բերում, փոխում է շատ անգամ իր կնոջ հաղուանն անգամ: այս է սպառնառը, որ սխտառեղերում տեսնում ես զիւղական կարմիր հաղուանների մէջ նւրոսպական ճաշակով կարած հաղուաններ, որոնց սպակառում է միայն տուր բնիւրը, այն էլ երեկի հետու չէ: Պանդիտութիւնը, որ զժւարութիւն շունի նաև մէր անշափահասների համար, հաստատել է մեր մէջ մի զբոսաւեր հոգի: Մեր ժամանակներն ով է տեմնել, որ փոքր աղան այնպիսի երեսպատճեամ իր փողոցութեամ երգի թրքական զա-

հազան կեղասու երգեր, ինչպէս այժմ երգում է կօշխակարի աշակերտը, երբ իր վարպետի ծանր շոնչից ազատուելով, երեկոցնան դուրս է վազում խանութից: Նա զեռ չը մեծացած՝ մեծ է, զրպանում պահում է առարձանակ, և քաջ ձեւանալով զօռ է տալիս կոկորդին, բղաւում է իրան անծանօթ լեզուով, որպէս թէ երգում է. լսողը զայտանում է, ուզում է, բռնել նորան, ականջիցը ձգել բաց միթէ զրանով կարող կը լինի կարել այն բարակ ձայնը, որ երգում է ծծերի զեղեցկութիւնը, երգում է սիրեկանի հետ անցկացրած գիշերները: Երգիչները շատացել են, պետք է որ երաժիշտներն ել շատանան. և ահա պատրաստ է զարմօնիան, ինչպէս մի երաժշտական զործիք, որի վիրաց չեշտ կարելի է առողութեան գարմօնիան, պետք է ասել, շատ է տանջւում, որովհետեւ նորան հարկադրում են հիւսիսալին եղանակների տեղ հնչեցնել մեր տեղական ծանր, առաձգական եղանակները, որոնց կախարդիչ ովքը երկար ու ձիգ, բարակ ու ոլորտն ելեւէնուների մէջն է. իսկ զարմօնիան երբէք չը պիտի կարողանաց այդ տեսակ ձայներ հանել. զրանց համար լեզու չունի. այս պատճառով էլ նա իր կէս եւրոպական և կէս ասիսկան սրտով ու մաքով միայն ծիծաղ է պատճառում մինչև որ չի ձանձրացնում: Բայց ուխտազնացութեան համար սրանք մանր հանգամանքներ են. նայե՞նք, ուրիշ բաներ տեսնենք:

Աւխտազնացութիւնը պարզում է, հրապարակ համում ժողովրդի հոգին, նորա մատոր կեանքի այնախիսի կողմերը, որ ուրիշ անգամ զիսուզութեան տակ չի մանում: Նեժունոսականը խառնուում է, քրիստոնէականի հետ, հաստատելով որ այդ ամեն կարգ ու կանոն տուղծագործել է ինքը ժողովուրդը, իր խելքի և մաքի ոժժով, որ այնքան պինով և տաք է պահում մի անգամ հաստառածը, մի ժամանակ հասկացածը: Տեսնում ես մի ժողովուրդը, որ սիրով և անողբունը կրում է իր խաչը, որովհետեւ հասկանում է, իր ցաւը և այդ ցաւի զարմանն էլ զիսէ: Ահա բերել են մի ծանր հիւանդ, վերմակների մէջ փաթաթած: Նկատեցէ՛ք, վերջին յոյսը սուրբն է. զեզ ու բժիշկ հեռացած են հիւանդից: Փորձեցէ՛ք մտածել այս զէսլքի վերաց. չէ՛ք տեսնում արդեօք թէ որքան առանձնացած, կղզիացած է ժողովրդի միտքը: Աշխարհում կաց և գոյութիւն ունի բժշկականութիւնը, որ վաստ թէ լաւ՝ զործ ունի մարդու հիւանդութիւն-

ների հետ. բաց նորա հետ գործ չունի զիւղացին, նորա ձայնին ականջ չի գնում թէ այն պատճառով, որ այդ ձայնը նորան շատ տերար կերպով է հասնում և հեղինակութիւն չունի և թէ իմանալով, որ եօթն բժիշկ մի տեղ էլ հաւաքւեն, ո. Դէորդի զօրութիւնն չեն համեմիլ: «Ալ բոնենք սուրբի փէշիցը», ասումեն: Եւ բւնում են, պինդ են բւնում, աղաշում են, պաղատում: Աղաչանք, պաղատանք—ահա' այն միակ զօրաւոր զէնքը, որ ոնի զիւղացին իր կեանքի դժւար բուգիներում: Նորան կանչումեն զատարան, նա չի զնում: և երբ նորան մեղադրումեն, զատապարտում, երբ բոլոր դաները փակում են նորա առջե, նա սկսում է աղաչել, պաղատել: «Տնաշին, ասում են, եթէ, այսքան մի սուրբի աղաչել, հիմա սրտիս ուզածը կատարւել էր»: Բաց աղաշանքը կեղծ զէնք չէ, արհեստ չէ, որ զործ են ածում անզգայաբար: Պէտք է իմանանք, որ աղաշանքը, «փէշ բանելլը» հաւատով և յուսով ապրող սրտի խորքիցն է զալիս: Անհասկացող է այդ մարդը, տգէտ է. նայում է իր երկնքին, տեսնում է իրան ծանօթ աստղերը և հաւատացած է՝ որ ուրիշ տեղ, ուրիշ երկրում չը կան այսպիսի երկինք ու աստղեր: Նորան փող է հարկաւոր և նա զնում է վաշխառուի մօտ «Հոգին գրաւ գնում», փող վերցնում, իր տունը քանոդում. ացդպէս է անում, որովհետեւրիշ ճանապարհ չի ճանաչում: Միաքն ու հասկացողութիւնը սահմանագուած են, մի նեղ շրջանի մէջ մոտած. և երբ նորա հասկացողութիւնից դուրս բան է պատահում, նա իրանն անել գիտէ: Երբ ծմակում ծառ է կարում, շիմանալով որ իր տոմսակի ժամանակը անցել է և բռնւում է սկսում է աղաչել. և երբ նորա որդին ասաստիկ մրսում է և թոքերի բորբոքումն տոանում՝ նա էլի սկսում է աղաչել, պաղատել: Նորա բոլոր հասկացողութիւնները հաւատի վերաց են հիմնւած, ջերմ հաւատի վերաց. և ինչպէս հաւատումէ որ օտար երկինքը աստղեր չունի, այնպէս էլ հաւատում է որ անտառապահը իր աղաչանքին կը լսէ: Խ՞նչ դժւարութիւն կարող է լինել, երբ անկեղծ աղաշանքը, պաղատանքը կայ: Ամենքն էլ սիրտ ունին, ամենքն էլ յարգումեն սրտի սրբութիւնը: Եւ տեսէ՛ք: Ամբողջ ընտանիքը մի երկար շարք կազմած, մատաղացու ոչխարը առաջ զցած, ոտարբորիկ պատյան է զալիս վանքի շուրջը. եօթն անգամ պատյան է զալիս, յայտնումէ որ ինքը, այդ ընտանիքը, սուր-

բի ոտի առակ մատաղ է զնում: Ամենքն ացապէս են համոզւած: մինչև անգամ վեց տարեկան երեխան էլ ունի դէմքի վերաց մի տխուր, աղաչաւոր արտայայտութիւն: Վերջանում է այդ արտարողութիւնը, արի՛, նայի՛ր վանքի մէջ: նոյն բնասանիքը սիւների մօտ ծունկ է չոքում և ացղտեղից չոքէշոք զնում է դէպի գերեզմանը, մոմ է վառում, ուխտ է անում: բերանը լուս է և միայն երբեմն ձեռքը բարձրանումէ կրծքի վերաց և զարնում այդ տեղին, երեսը քառում է քարերին, մինչև անգամ աչքերը թացանում են: Այսուհետեւ ընտանիքի մեծը ահով և դողով վերցնում է գերեզմանի ծոցից քիչ հող, փաթաթումէ և զնում հիւանդի մօտ: Նորան նատացնումեն, հողը ջրի մէջ խառնում, տալիս են նորան: Ամենքը երեսները խաչակնքումեն, մաշւած հիւանդը խորին յարգանքով և հաւատով խմում է: Ծնողական մորմոքւած սիրալ գէմթ առժամ հանդառանումէ, և ամենքը խօսում են, սովորական անհոգութիւնը մտնում է նորանց մէջ: ի հարկէ, չեն էլ կարծում թէ դուցէ հիւանդի աշատեղ բերելլ աւելի մօտեցնում է օրհասական բուդէն: Ահա՛ սրտեր, որ ապրում են ացապիսի հաւատով: Ես ամենեւին փիլիսոփացութիւն չեմ անում: և կարծեմ, ով որ քննէ ուխտաւորների իւրաքանչիւր շարժւածքը, պիտի մի և նոյն եզրակացութեան հասնէ: Աւրիշ ի՞նչ բանով բայցարել: Մենակ հիւանդները չեն ուխտ զնում: ամեն մարդունի իր սրտի խորհուրդը, իր մուրազը: Ա.անքի զրանը զրած է մի փոքրիկ քառակուսի քար, որ ունի քառակուսի լայն ծակ: այդ ծակով անցնում են շբեր կանաքը ամուլութեան կապանքներից ազատւելու համար¹⁾: Մետիապաշտութիւն է, ի հարկէ, կ'առեն ամենքը: Խեչ անուն ուզում էք՝ տէք. բայց կարեոր է ոչ թէ այն, որ մարդիկ մնուախապաշտ են, այլ այն թէ՝ ինչո՞վ են զեկավարւում և կառավարւում այդ մարդիկ: Աւնենալով կեանքի բոլոր հանդամանքների համար մի այնպիսի կարողութիւն, ինչպէս է աղաչանքը, իր բոլոր գործողութիւնների ժամանակ ունենալով ացդպիսի վառ հաւատ, որ երեխապական պարզամտութիւն է առաջացնում:

¹⁾ Եղն այդ անուակ մի քար ես տեսակ և Հաւատովուկի աւելքակ եկեղեցու առաջ, ուրիմն անառել էլ մի ժամանակ փորսող են աւել չընը կանաքը: Հաւատաբուկն էլ, ուրիմն, մի ժամանակ ո. Գէորգի ոլէս հաջտկաւոր ոխտառեղի է եղել:

Ասածներից յետոց թոյլ տւէք ծանօթացնել ձեզ հետ մի անձնաւորութիւն, որ բաւական հետաքրքրելի է, որովհետև աւանդական է մեր մէջ, ունի մի տիպի բոլոր յատկութիւնները: Դա սուրբի «մուղղուսին» է, այսինքն լուսարարը և մի և նոյն ժամանակ հլուծառան: Դա մի կարճահասակ, աև միրուքաւոր մարդ է, ունի տափակ շրթունքներ, մէծ, սրածացր քիթ և խորհրդաւոր աչքեր, գլուխը ծածկած է չժի թասակով, որ այս աեսակ մարդկանց պաշտօնական գլխարկն է: Արագաշարժ է, ամեն ծակ ու ծուկ մտնող, գուրս եկող և շատախօս: Նա դիտէ պատմել, գիտէ իր պատմութիւնները աղոյլ անել, քաղցրացնել. և այդպէս հազար ու մի բան է պատմում, գլխաւորապէս սուրբ հրաշքները, որոնց ինքն էլ ականատես է եղել: Նրեսուն տարի է, որ նա ծառայում է սուրբին: անզրագէտ է, բայց այնքան սուր են ականջներն ու յիշողութիւնը, որ իր մտքի մէջ շատ բան է ամբարել և, ինչպէս ասում են, մի տերտէրից էլ շատ բան դիտէ: Նա մեզ պատմումէ, թէ ի՞նչպէս մի օր նորան երեացել է այս վանքի վանահայրերից մէկը, Վուկաս վարդապէտը, որ հարիւր յիշուն և աւել տարիներից առաջ է մեռել: Գարնան մի արե օր էր, ասում է. ես նատած էի այստեղ, մանիշակներ շատ կային փուած, բացւած, ես նորանց մտիկ էի տալիս. մէկ էլ տեսայ մի սպիտակամիրուք ծեր վարդապէտ, որ ողջոյն տւեց և յայտնեց ինձ, որ իր զերեզմանը հողի տակ թաղւած է: Վանահայրը բացակաց էր վանքից. ես գնացի ցոյց տւած տեղը, քանդեցի, զերեզմանաքարը գտայ. վարդապէտը եկաւ, տեսաւ և զարմացաւ: «Մուղղուսին» ցոյց է տալիս այդ քարը, որ ցից է դրւած մի քանի ուրիշ զերեզմանների մօտ: Հրաշքով բացւած զերեզմանը ուխտատեղի է դառնել. քարը մեացած է գիւղական պատրոյկների ծխից, տապանագրի միայն մի քանի բառերն են զուով կարդացւում: Զեռքը ծոցում դրած, «մուղղուսին» կանգնում է նորա մօտ և պատմում է ամեն մէկին այդ հրաշքը, աւելացնում է և ան, որ Վուկաս վարդապէտը մի անգամ էլ երեացել է նորան վանքի մէջ, հրամացել է յիշոցներ չը տալ, բերանը մաքուր պահել: Այդ ամենից յետոց, ի՞նչ կարծիք, որ «մուղղուսին» սուրբի ընտրեալն է, ուստի և պատիւ շատ պիտի ստանայ ուխտաւոր ժողովրդից: Եւ ստանում է, ինքն է ասում, ասլրում է լաւ, նորա դէմքը բաւականութիւն է յայտնում:

«Յոլորը մերսնք են», ասում է յոց տալրով ուխտաւորներին: Հշմարիս է, նա ինքն է որ այդ զիւղացիներին հրաշքներ է պատմում և աւելի ևս պինդ կապում նորանց ո: Գէորգի հետ: Ես կը բերեմ նորա պատմութիւններից մէկը:

Վանքի արևելեան կողմում երևում է մի սալ քար, որ համբուրում են բոլոր ուխտաւորները: Այդ քարը զերեզմանաքար է և, ի՞նչ էք կարծում, ոչ թէ մարդու, այլ... արջի զերեզմանաքար: այլպէս է հաւատացնում մուզբուսին: Ահա՝ և պատմութիւնը:—Յովսէփի հայր սուրբը, ասում է նա, որ այս վանքը շինել է, սուրբ մարդ է եղել և կանանց երես ամենեին չի եղել տեսնում: Վանքը շինելիս ժամանակը, մի քանի կին ուխտաւոր են գալիս: Հայր սուրբը հեռանում է վանքից, գնում է անտառը: Մէկ էլ լսում է, որ մէկը անտառի մէջ վա'ց է կանչում մարդու լեզուով, կասես թէ մարդ է: Գնում է այդ ձայնի վերաց, հանում է տեսնում, որ մի արջ ընկած է թփերի մէջ. Հայր սուրբը չի վախում, մօտենում է, ի՞նչ է տեսնում: Արջի մի ոտը ուռել է, մի բեռն դառել. նայում է ոտին, տեսնում է որ թաթի մէջ մի մէծ սուր փայտ է խրւել, որից ուռելէր և նա վա'ց էր կանչում: Հայր սուրբը հանում է զանակը, բռնում է արջի ոտը, սուր փայտը զուրս հանում, վերքից թարախ է թափում և վարդապետը պինդ կապում է ոտը, ինքը յետ դառնում վանքը: Գալիս է, տեսնում է, որ չէ', արջն էլ է զալիս: Վանքը շինող վարդապետները երբ տեսնում են որ արջը գալիս է վարդապետի ետեւից, վախում են փախչում: Հայց վարդապետը հասկանում է, որ վերևից է այս հրամանը. բոլորին հանգստացնում է և թողում է որ արջը վանքի մօտ ապրէ: Արջը դառնում է վանքի ծառան, կատարում է ինչ որ հրամայում են: Խնքը, ի հարկէ, խօսել չի կարողանում, բացց, ինչ որ նորան բերանով ասում են, հասկանում է ու գնում: Հայր սուրբը նորա անունը գնում է Վարդան: Վանքի էշերը զուրս են անում և արջ-Վարդանին հրամայում են, որ գնաց զիւղերից վանքի բաժին ցորենն ու գարին հաւաքէ. նա գնում է և բերում: քանի անդամ էլ Գանձակ են ուղարկել, զնացել է ու եկել: Նատ տարիներ այսպէս ծառացում էր. ժամանակ անցաւ, Յովսէփի հայր սուրբը հիւանդացաւ, իմացաւ որ պիտի մեռնէ. այդ ժամանակ արջը Գանձակ էր գտնուում: Հայր սուրբն ասաց միւս վար-

զաղետին, որ երբ ինքը մեռնէ ու թաղւի, արջը յետ դառնալով՝ իրան սպանելու է։ Ացգէս էլ լինում է։ արջը գալիս է, մոմուալով անհանգիստ որոնում է իր բարերարին։ նորան չայտնում են, որ բարերարը մեռել է։ նա գնում է նասում գերեզմանի մօտ, գլուխը վերցնում է, այնքան զարնում քարերին՝ որ մեռնում է։ Նորան թաղում են պատեղ, աջ խորանի առաջ և նոյն գիշերը գերեզմանի վիրայ լոյս է գալիս։

Ես, ի հարկէ, ամուղդուսու» պատմութեան կմախքն եմ գնում։ պէտք է տեսնել թէ ի՞նչ տեսակ շարժւածքներով, ի՞նչ խօսքերով է պատմում նա. կարծես ինքն էլ այդ ժամանակը եղել է և իր աշքով տեսել։ Այս տեսակ առասպելների տոպրակ է կարճահասակ «մուղդուսին»։ նորան լսում են և հաւատում։ Զրիափերութեան համար հարկաւոր էր զիւղացու հաւատացող սրտի մի անկիւնում մի փոքրիկ տեղ բոնել. ամուղդուսին կարողացել է այդ անել, վայելում է իր զիւղութեան և իր ընտրեալ հոգու փառքն ու պատիւը։ Եղորը մերոնք ենու, ասում է։

Յրն անցաւ, երեկոյ է։ Լուսինը լողում է բարձր և պարզ երկնքի երեսին. իսկ նորա տակ անսահման դաշտավայրերն ու մեծամեծ սարերը ընկղմած են մի կախարդական լոյսի մէջ։ Սնընդհատ փշում է լեռնային ցուրտ քամին, մենք մրսում ենք, կուչ ենք գալիս ահազին խարոյիկի ծառացած բոցի շուրջը, տաքացնում ենք մեզ։ Բոլոր ուխտաւորները քաշւել են իրանց տեղերը, ընթրիք են պատրաստում։ Խօսք, ազաղակ ու երգ խառնւած են միմեանց։ Մանաւանդ շատ աղմուկ է հանում մի խումբ, որ մեզանից քիչ հեռու է. այդանու կան զիւղական ինքնուս երաժիշտներ, մէկը փըշում է իր փողը, միւսը երգում է։ Աւրախութիւն է տիրում այդ շրջանում. մերթ ծանր և մերթ արագ ձայնում է փողը, միանման խուլու ձայներ է հանում նւազողի հասա ու կոշտ մատների տակից։ Տիս'ւր են մեր եղանակները, մելամազնու, ճնշւած. նորանք պիտի ազգեն իրանց ծանր, ախրազին հնչիւններով, պիտի ունենան այնպիսի ձայներ, որոնք միանգամայն պիտի սրտից բռնեն։ Մենք ուրախանում ենք, զւարձանում տաղուկ և վհատեցուցիչ եղանակները լսելով. մէր սիրան այնպէս է, որ գեղեցկութիւնը ըմբոնում ենք նորա տխուր կողմերով միան. սիրում ենք լսել սիրոյ մասին և

լուսմ ենք ու թէ նորա ձայնը, այլ մեր բերանով տիրամած զէմք ենք տալիս նորան, մոայլ, վհատեցուցիչ գոյներով ենք նկարում թէ ի՞նչ է նա:

Մենք մի փոքրիկ պտոյտ ենք զործում ուխտաւորների շուրջը: Տեսնում ենք ուրախացող խումբը, փողահարին ու երդչին. մնացած ները ծափ են տալիս, խրախուսական ձայներ են հանում և զովում են երաժիշտներին. իսկ մէկը, որ երեխ ուզում է բոլորի ուշադրութիւնը գրաւել, զուցէ մի նոր փեռայ, տափակ տափակ հանաքներ է անում և ամենքի փոխարեն ինքը կուշու կուշու ծիծաղում: Քացւած է պարզ և անսպաճոյն սուփրան, որի շուրջը նատած են նաև կանաչք ու աղջկերք, նատած են և լուս: Անցնում ենք, ահա մի ընտանիք, որ ինչպէս երեւում է, շատ աղքատ է և նատած է լուս ու մունջ, ցամաք հաց է ուտում, շոր էլ չեն բերել իրանց հետ, երեխ կը քնեն գետնի վերայ: Վանահայր քահանայի մենեակի առջևով անցնելիս՝ նայում եմ զէպի ներա: Խորին լոռութիւն է տիրում: անկողնի մէջ պառկած է հիւանդը, իսկ նորա զլիսի կողմի պատին կպցրած է մի զոյգ մոմ: տիտուր լոյս է տարածում մի անկիւնում զրած զիւզական կաւէ նաւթաճաճրազը. մի կին արձանացած է հիւանդի մօտ, զլուխը զէպի նորան է կուացրել: Ացտեղ ու այնուեղ թափւած են մարդիկ, որն արդէն քնել է, որը քորում է իր դրասով և որը կոստրում է մորթած ոչխարը:

Մենք էլ վերջացնում ենք մեր ընթրիքը լուսնի տակ: Քահանան մեզ մի վերմակ է տալիս և մենք պառկում ենք չոր կապերախ վերայ, մի կերպ ծածկում ենք քամու յարձակմունքներից: Քայց մեր տեղը բոլորովին բաց է և զիտենք որ անպատճառ պիտի մըրսենք. կրակի բոցը երբեմն ցած է ընկնում, բաժան բաժան է զառնում և սկսում է սողալ փայտերի վերայ, երբեմն էլի սաստկանում է, բարձր խիստ, երբ զիւզացի երիտասարդը խանձողները միմեանց վերայ է հաւաքում: Ես պառկած եմ մէջքիս վերայ, ուշադրութեամբ նայում եմ երկնքին: Ացտեղ, այդ բարձրութեան վերայ, մի բան պիտք է լինի. այդ զիտէ և կրակի մօտ նատած զիւզացին, որ կէս ժամ առաջ գուշակում էր թէ քամին շուտով կ'անցնի միւս կողմը և մենք նրանցից պաշտպանւած կը մինենք փանքի պատով: Երբ կինքը մի բան է պատրաստում: Գանձասարը հանաք չէ անում, այն

կողմից շարունակ ամպեր են գալիս, դիզում մեր կողմում: Այս ամպերի միջից լսում է մի թոյլ թնդիւն. անցնում է մի քանի րոպէ, կայծակը սկսում է, կայծեր հանել: Տեսարանը զեղեցիկ է: Այստեղ, մեզանից բարձր, երկինքը պարզ է և լուսինը իր քաղցր լոյն է թափում: տիրում է մի խաղաղութիւն. բարակ քամին թէև քըսում է մեր դէմքերին, բայց այնքան երկիւղալի չէ, որ մենք հեռանանք լուսի լոյսից և պատերի մէջ ապաստան որոնենք: Բոլոր ուխտաւորներն ել վճռել են քնել այդ արծաթափայլ շողերի տակ: Եւ յանկարծ հիւսիսից վրայ է հանում այդ բանաստեղծական անդորրութեան դէմ մի խոժուագէմ, երկիւղալի և կոպիտ փոթորիկ. ամպերը եռանդով դէպի հարաւ, դէպի լուսինն են արշաւում և կարծես ուզում են մինչև տեղ համնելը վախեցնել, հալածել լուսինը շանթ ու որոսով, որոնք դուրս են թափուում նրանց դորշ-կապուագոյն ծալքերից և աջ ու ձախ վազում: Կայծակի դեղին բոյըլ վայցը լում է լուսի ապիտակ լոյսի մէջ, բայց դեռ անզօր է նորան ոչնչացնելու, կարծես հալւում է, սեանում, կարճանում: Ամպերը գալիս են ու գալիս: Ո՞չ, պէտք է վախչել այդ հրեղէն օձերի երեսից, որոնք գալարուում են օարասփելի արագութեամբ, ճեղքում են, պատուում իրանց գոյսութիւն տող ամպերի կուրծքը: Բայց ո՞ւր գնանք, ո՞ւր գոնենք մի ազատ անկիւն: Երկու սենեամները լցւած են, մարդ ու անասուն մի յարկի տակ պաշտպանուում են երկնքի պատուհասից: Մնում է միայն վանքը. նա կը լինի մեր պաշտպանն ու հովանաւորը. քահանան թոյլապում է և մենք վերջնում ենք մեր վերմակը, մոնում ենք լուս ու մռայլ կամարների տակ, պառկում ենք մի անկիւնում: Այլուեղից էլ լսում ենք, թէ ի՞նչպէս մեզ ծանօթ խումբը շարունակում է իր ուրախութիւնը. փողը հանդարտ բռուացնում է, ոսով ու ձեռքով ոգևորութեան կրակի մէջ ընկած երգիշը անընդհատ իր թուրքերէն է երգում, հանաքչու ձայնը անհոդ որոսում դրսում:

Տենք քնում ենք: Այդ խոնաւութեան մէջ, այդ չոր դեանի վերայ քնելը զուցէ մի ուրիշ ժամանակ անխելքութիւն կը համարէնք, բայց այժմ կատարեալ երջանկութիւն է. և այնպէս քաղցըր քնում ենք, որ սաստիկ փոթորիկն ու անձրեւը երազ ենք կարծում: Դրսում ինչ ուզում է, թո՞ղ լինի, մերը՝ քունն է:

Հ Ա Ն Գ Ե Ր Ո Ր Դ Յ Օ Բ .

Գիշերւայ անձրել սաստիկ է եղել. փափռուկ ցեխ ենք կոխ տալիս, երբ առաւտօտը շատ վաղ դուրս ենք գալիս մեզ հովանաւոր կամարների տակից: Մուայլ և վհատեցուցիչ է բնութիւնը. երինքի երեսն դեռ կուտակւած են մօխրագոյն ծանր ամպերը. հողը, բոցը, օդը խոնաւ են, ցուրտը մարդու սկսորներին է հասնում: Մեզ առում են, որ անձրւի հետ հատ հատ ձիւն էլ է եկել:

Սարից իջնում ենք ուրիշ ճանապարհով, որ համեմատաբար յարմար է այնքան, որ սայլեր են զնում մինչև վանքը: Բայց սայլի ճանապարհ ասելով՝ մեծ բան չը կարծէք, նոյն լեռնացին ճանապարհն է, այն զանազանութեամբ, որ քիչ լայն է և այնքան մեծ լանջիվայրեր չունի: Միայն Վարաբաղի գոմեշներն են, որ այս տեսակ ճանապարհներով սայլ են քաշում: Ես տեսայ թէ ինչպիսի մեծ ծառացութիւն է անում այդ հսկայ և անձոռնի անսառնը այս տեսող տեղերում: Կամ հետ մի սայլ էր զնում, որի վերաց նստած էր մի պառաւ ուխտաւոր կին: Մի աեղ ճանապարհը յանկարծ բարձրանում է, մի շատ լժեք զառիվայր է կազմում: Գիւղացիները ցրծապատել էին սայլը, որ ձեռքիրով և ուսերով գոմեշներին սայլը դիսլի բարձր տանելու համար. աղաղակ, իրարանցում, միմէանց հըրամացում են, ամեն մեկը մի տեսակ կարգադրութիւն է անում: Բայց մինչև մի բան վճռելը՝ աջ կողմից լծած ջահել գոմեշը, գլուխը զէս ու զէն ծումունով՝ ձգեց, համարեա՛ մենակ տարաւ սայլը զառիվայրի զլուխը: Անհանգիստ աղաղակները զարմանքի և գովասանքի են փոխում:

—Այ, ուսի՞դ մատաղ, ըհէյ, գոչեց փաղաքշական քաղցր ձայնով մի զիւղացի: Ես նայեցաց, տեսայ որ գա աղքատ հաղուտոի մէջ մի մարդ է, բաւական համակրելի դէմքով, միջին հասակի տէր: Նա նայում էր գոմեշին, որի ուսին մասաղ էր զնում, և այդ բոպէին նորա դէմքը ուրախ էր, հպարտ:

—Առ անսառնը լաւ բան է հա՞, հարցնում եմ ես:

—Բօ՛, քե՛զ մատաղ, ի՞նչ ես ասում, տղա՛մարդ է, տղա՛մարդ, թէ ու թիկունք է: Գիւղի մարդ ենք, արհեստ չունենք, ոսճիկ չունենք, մերն էլ զրանք են անսառները: Առ, տղամարդ անս-

առնը որ գրանն է լինում, գլուխս նորան մատող, մարդ իսկի միտք էլ չի անում:

Նատ հասկանալի է, թէ ինչո՞ւ զիւղացին անսառնը իր երեխացի պէս է սիրում, պահում է, պաշտում և երբ նա սատկում է, սե սուզը զալիս է ամբողջ ընտանիքը պատում:

Օրը հետզետէ բացւում է, արեգակի նւազ լրաց անցնում է ամպերի միջով, տիտուր և թողլ լոյս է սփուռում թշջած երկրի վերաց: Պատահում են ուխտաւորներ, որոնք մօտիկ զիւղերից գանքն են գնում: Ահա ձանապարհի կողքով մենակ գնում է զեղջկուհին, երեալ ծածկած է, թէ տակ տանում է մի աքաղաղ: Ահա գնում են և երեք երեխաներ, մի էշ և մի ոչխար: Մեր ձիերը տեսնելուն պէս՝ փոքրիկները քաշւում են մի կողմ, կանգնում են, նայում են մեզ զարմացած, բերանները բաց. նորանց մօտ կանգնած է մատաղացու ոչխարը նոյն չափ զարմացած, զունչը վեր ցցած: Եւ երբ մենք անցնում ենք, լսում ենք նորանց կարծիքը, որ շուապում են հաղորդել միմեանց մեր մասին:

— Ուռամնե՛ր են, է՛...

Գիւղացին ինձ հետ է: Նա Ղշաղեցի է, ունի մեծ ընտանիք: Հարցնում եմ նորանց ապրուստի մասին: Ապրուարը զժւարացել է, պատմում էր նա: — Ի միջի այլոց նա պատմում է, թէ ի՞նչպիսի «օշիններ» են գնում նորանց զլուխը խեղճ, վիզը ճկած ամրզաները, որ քաղաքում այնպէս խոնարհ և աննշան բան են երեւում, հէնց որ զիւղերն են գնում, առիւծ են դառնում: Տզրուկներ են, աներես, անկուշա ազրուկներ, որոնք գոյութիւն են սուանում հէնց այս զիւղերից: Մի որ և է տեղ գրագիտութիւն սովորելով, զիւղացին վագում է մանում որ և է զիւանատուն, քիթը կապած հարսի պէս ծառացում է, շատ անդամ ռոճիկ չի սուանում, տանում է ամեն տեսակ ստորութիւն, մոռանում է իր զիւղը, քաղաքացի է զառնում և մինչեւ մազերը սպիտակելը մնալով միւնոյն պաշտօնում, ապրում է զիւղացու հաշով, միշտ ի շարն է գործ գնում նորահաւատը, աղաչանքը: Ամեն կեղտուառթիւն դուրս է զալիս նորանից, այն զիւղացուց, որ ուսումի հետ ստացել է սաստիկ ընչամիրութեան քաղց:

Հասնում ենք սարի ստորոտը, անցնում Աէջ զիւղի միջով: Դա

մի վոքրիկ զիւղ է, ունի մի բանդւած եկեղեցի. զիւղայիներն այնքան աղքատ են, որ չեն կարողանում եկեղեցու քանդւած կտուրը շնորհիլ, թէև քահանաց ունին: Տները գետնափոր են, ցածրիկ և ողորմելի, մի ողորմելի լանջիվայրից կպած, որի կողքով հօսում է մի ողորմելի բարակ ջուր: Այդ աղքատ առուախն է, որ ջրում է; երկու-երեք հատ բանջարանոցներ:

Ուշվից շատ մօտիկ է Նշաղ գիւղը, որ թէև նորանից մեծ է, բայց ելի աղքատ: Նշաղում մենք իջնում ենք մի տան բակում, նստում ենք հասու ու կողին տախտակներով պատած մի ինչ որ հածկի տակ: Տանտիկինը մեզ համար մի շքեղ ձւաձեղ է պատրաստում, հիւրասիրում է գոմշի համեղ մածնով: Հանգստանում ենք, կազմուրւում, մոտադիր ենք մինչև իրիկուն Խաչքենդի հասնել: Մեր առջեն այլ ես չը կան բարձր սարեր ու մեծ մեծ անտառներ: Բնութիւնը աղքատ է, խոնարհ: Ցիշում եմ մեր տեսած տեղերը և մի վերջին անգամ տեսնելու համար՝ նայում եմ դէպի Խէցիդի-շէնի կողմը: առաջին անգամ տախտակների ճեղքով իմ աչքին երևում է Կաչաղակաբերդի զլուխը: Զարմանալի՛ բերդ, ուր որ գնում ես, աչքիդ առջեն է, ամեն տեղ ցոյց է տալիս իր յանդուգն զլուխը, որ արհամարհական հսկարտութեամբ բարձրացած է այսուեզի վերաց:

Յողնելով Նշաղ գիւղում մեր Վարագաբոյնցի ընկերին, ձի ենք նստում և բնուում ենք դէպի Նուշի տանող ճանապարհը: Երկինքը ամպերի սատորիկ մրցութեան ասպարէզ է գարձել. երեեմն արևն է հաստատում և մեզ ալրում, իսկ երբեմն թեթև անձրեն է կաթկամթում: Կէսօրից մօտ անցնում ենք Խաշբուլաղ գիւղի մօտով, որ, երեի, այդ անունն առացել է մեծ ալբերից, որ բղիում է քարի միջից: Այդ զիւղում կան քաղաքի տների ձեւով շինած տներ, ինչպէս նկատելի է, ունեորները շատ են: Անցնում ենք Խոջալլուի զետը թթի այգիների միջով, գնում ենք բաւական ուղիղ ճանապարհներով: Բայց ամպերը, երեւում է, չը պիտի թոյլ տան մեզ հանգիստ կերպով մեր ճանապարհը վերջացնելու, նորանք հաւաքւել են մի տեղ. օգլ ծանրացել է, խեղդում է մեզ, քրտինքը առասութեամբ դուրս է թափւում, և շուտով մեր զլիխն սրտոց են գալիս որոտոցն ու կայծակը. անձրելը մեզ բանում է Դահրաւ զիւղի մօտ և նորանից աղասուելու համար մենք մտնում ենք տեղացի քահա-

նայի երկցարկանի նորաշէն տունը: Տէր հայրը մեզ լաւ ընդունում
է պատշգամիքի վերայ, թէև ինքը հիւանդ պառկած է: Նուտով
արեգակը արև է տալիս, մենք էլի ճանապարհորդում ենք: Անձրեւ
մեկ էլ վրայ է հասնում Բալլուջայ զիւղից վերև. թրջւած մանում
ենք զիւղը, որ բաւական մեծ է և ունի մի նոր ու գեղեցիկ եկե-
ղեցի: Զի կարելի ասել, որ այս զիւղն էլ աղքատ է. արդէն երբ
բազմաբարդ է, նշանակում է որ ասպրուսոի միջոց կայ, իսկ ասպրուսոը
վաս չէ, քաղաքային ձեփի տներ կան: Առհասարակ պէտք է ասել,
որ մեր զիւղերը հետզհետէ կերպարանավոխուում են. հնադարեան
գետնափոր խրճիթները («զարագամ»—աև տուն) իրանց կոլոր կտուր-
ներով և ահազին երդիկներով հետզհետէ անհետանում են և նո-
րանց տեղը երեւան են գալիս փոքրիկ աներ՝ փոքրիկ լուսամուտներով
և տափակ կառւրներով: Նորաձեռներով, անկասկած, մենակ շի-
նութիւններին չի զիսչում, այլ նորաձեռներով ներս է մոնում
ընտանիքի ծոցը. թէ ի՞նչ տեսակ ցեղափոխութիւնն է գործում նա-
հապետական կարգերի, նիստ ու կացի և վարք ու բարքի մէջ—մեզ
բոլորովին յացնի չէ, այդ տեսակ բաներօվ հետաքրքրողներից չենք:
Բալլուջայի մօս, գետի ամին, կայ մետաքսի գործարան. ոս էլ ի
հարկէ, իր ազդեցութիւնն է մոցնում զիւղայիների մէջ, որ էլի
անպայտ է. ընդհանրապէս զիտենք, որ այսպիսի տեղերում են տա-
րածւում վեներական ախտերը:

Բալլուջայից մօտ է Խնածախը Բալլուջայից
փոքր է, բայց աւելի լաւ արտաքին տեսք ունի, որովհետև զիւղի
մէջ ծառեր շատ կան: Դարաբաղի հայ զիւղերը ընդհանրապէս ոլ-
խուր կերպարանք ունին, չոր ու ցամաք տեղերի վերայ են, ծառեր
չեն անկւում զիւղի մէջ. փողոցներ համարեա՛ չունին, կտուր կտրի
վերայ է բարձրանում:

Խնածախը վերջին զիւղն էր, որ աեսնում էինք: Մութը հասած
անցնում ենք նորա միջով և անդադար ձիերը քշելով՝ հասնում
ենք Խանքենդի աւանը, ուր և զօրքերի բանակատեղին է:

Հրաշալի երեկոյ էր. երկինքը պարզ. բոլորակ լուսինը առատ
լոյս էր թափում ծառերի մէջ կորած Խանքենդու վերայ: Նորա լայն
և ուղիղ փողոցներում, ինչպէս և միշտ, տիրած էր մեռելային լուռ-
թիւն: Չքնաղ անկիւն է այս Խանքենդին. փոքրիկ սպիտակ աները

ծով ու անհոգ կանգնած են ծառերի մէջ և նորանց փոքրիկ պատուհանների մաքուր ասլակիների վերաց խաղում է լուսնի արձաթեաց ճառագայթը։ Գարուն ու ամառ այբտեղ բուրում են ծաղիկները, անսպակաս է մաքուր, առողջարար օդը։ Մի տեղ շինած է շատրւան, որի պարզ ջուրը լուսնի լոյսի տակ պսպղալով հանգարտ մրմնջում է և թափուում գլխիվայր։ Երբեմն լուսում է փողոցով զնացողի ոտի ձայնը, կանաչազարդ բակի մի անկիւնից բաւեչում՝ է եզը, կամ փողոցի դրան քամակին պահապան շունը մի երկու երեք անդամ հաշում է։ Անցնում են այդ ձայնները, և կրկին մեռելային անվրդով լուսութիւնը մտնում է ծառերի տակ, շրջապատում է ու իր զօրեղ գրկի մէջն է առնում այդ բանաստեղծական անկիւնը։ Մոտում է բարձր կամարի պայծառ լուսառուն, որ ծանր գնում է՝ հաւատարիմ իր գիշերացին ճանապարհին։

Մենք նստած խօսում էինք, պատմում էինք մեր ծանօթներին մեր այս հինգ օրւայ տպաւորութիւնները։ Նեռու աեղեր չինք գընացել, բնութեան աշխարհահոչակ հրաշալիքները չինք տեսել, մարդկային հանճարի դիւթող կերտածներով չինք զմայլւել։ Տեսել էինք մեր երկիրը, խմել էինք բազմաթիւ քաղցրահամ աղբիւրների ցուրոցուրոց ջրերը, լեռների և ծմակների խոնաւ, բացց մաքուր օդը ծըծել էինք, կշտացել, կազդուրել։ հայրենի հովը մրացրել էր մեզ, արեգակը տաքայրել էր, լուսինը գգւել մեզ։

Եւ բաղդաւո՞ր էինք....

ՆԵՐԾՆՉԱՆՔ

Հեր.

Ն Ժ Դ Ե Հ Ի

Ով սուրբ ներշնչանք՝ երկնալին դու կալծ,
Քեզ եմ սպասում ես, շնորհաբեր քո այց.
Եկ, ինձ ազատիքը տանջող մըտքերից,
Թախծալի սըրտիս դառն ցաւերից.
Հըզօը ժեւերավիդ ոլանանք, թռչենք,
Աշխարհ պատրանաց միտոին հասնենք,
Ուր ցնորք տենչական, տեսիլք և լոլսեր
Հանգիստ, երջանիկ կը տան ինձ ժամեր.
Եւ երգ սրտառուչ, վայրենի, անկասլ
Կը քոմէ աչաց արտասուք հրատապ:

Մասկու 1885 թ. յուլ.

ԵՐԱԶ

Հեղ.

ՆԺԴԵՇԻ

Տանջանքից յոդնած տառապեալ հոգիս
Ընկըզմւեց քընի օրօրող տլիս.
Եւ քաղցր երազ թեթև թեթրով
Տարաւ ինձ եղեմ, սար, դաշտ անդնելով:

Ջերմ, թեթև, մեզմ օդ, լոյս առատ, քնքոյշ
Լըցրած են չքնաղ այն եղեմ անոյշ.
Եւ ես երջանիկ, ուրախ, իմ գրկում
Տեսնում եմ նորան, լոլիս, գանգատւում:

Գեղանի իր գլուխ կպցրած նա կուրծքիս,
Հեղ, պարզ իր աչեր գարձրած երեսիս,
Մըմնջում էր նա, ժպտում, արտասուում,
Եւ սիրոյ խօսքեր ականջիս հընչում:

Մոռացայ ես վիշտը, կարօտ ու տանջանք.
Կարծում էի թէ տլսու յաւիտեան
Բաժանելու չէ գըժնեայ հանգամանք,
Եւ արդէն հասայ վայր երջանկութեան...

Բայց ահա, ցնցւած ես անոյշ քընից,
Տեսայ ինձ մենակ, հեռու նորանից.
Եւ վիշտ մշտաքաղց գարձեալ ինձ տիրեց,
Տառապեալ իմ սիրո թախիծը գերեց:

ՊԱՏՐԻԿԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Ա. ՆԱՄԱԿՆԵՐՆԻ

Նորերս մեռաւ մեր աչքի ընկնող երիտասարդներից մէկը՝ Պատրիկեանը, որից նորան ծանօթ երիտասարդութիւնը սպասում էր մեծ հասարակական գործունեութիւն։ Դուցէ ժամանակով յաջողւի զրելու Պատրիկեանի կենսազրութիւնը։ Պատրիկեանի մասին ամենաշահական տեղեկութիւնները կարելի է ստանալ նորա սպառոր քրոջից, որի հետ Պատրիկեանը ունեցել է անդադար և ամենամանրամասն նամակագրութիւն։ Պատրիկեանի քոյրը յանձնեց ինձ իւր եղբօր այն նամակները, որոնց մէջ նիւթեր կան մեր հասարակական կեանքին վերաբերեալ։ Մեծ նամակների թիւը քամնից աւելի է։ Նոցանից լոյս ընծայելու յարմար են ներկայումս միայն մի քանիսը։ Ես փոխեցի նամակների մէջ մարդկեների և տեղերի անունները։ Մի քանի նոյնաբովանսպակ նամակներ միացըրի՝ ընդհանուր պատկերներ ներկայացնելու համար ընթերցողին։ Բացի այդ՝ նամակների համար՝ համեմատ նոցա բովանդակութեան՝ յօրինեցի վերնազիրներ։

I

ՕՏԱՐՈՒԾԻ ԱՅՅԵԼՈՒ.

Սերելի Հռ'յը.

Դու դուցէ զարմանաս միմեանց վերաց ինձանից երկու նամակ ստանալուդ համար։ Առաջին նամակս զրեցի երեկ—վերտպարձիս երրորդ օրը։ մէկն էլ զրում եմ այսօր։ Նամակը արդէն ուղարկած էի, երբ մի նոր ծանօթութիւն արի մի օտարոտի հիւրի հետ, որի մամին կամենում եմ մի քանի բան պատմել։

Խնչակէս գրել եմ քեզ, ես իջած եմ հիւրանոցում։ Երեկ ամբողջ օրը քաղաքում շրջադաշտում էի և բաւականին յոգնեցի։ Տուն դաւնալուց և ճաշելուց յետ՝ թէք էի բնկած բազկաթուի վերաց և կիսամռացութեան մէջ մնածում։ Իի նոր զործունեութեանս սկըզբնառութեան վերաց Յանկարծ գուռը թխուցրին։

—Մտէ՛ք, ներս եկէ՛ք, ասացի ես

Աենեակը մտաւ միջահասակ մի պատանի։

—Դո՞ւք էք սպարոն Պատրիկեանը, Հարցրեց նա՝ ինձ դաւնալով։

—Ես եմ, այս։

—Ես ձեզ հետ խօսելիք ունիմ մի երկու ժամաց։ Դուք ուրիշ ոչի չէ՛ք սպասում այսօր։

—Ո՛չ ոքի։

—Ուրեմն թոյլ տւէք մի երկու ժամ ձեզ հետ խօսակցելու ինձ համար շատ կարևոր մի խնդրի վերաց։

—Խնդրեմ նասեցէ՛ք և յայտնեցէ՛ք ձեր յանկացածը։

Պատանին գձեց վերարկուն ամժուի վերաց, եկաւ նասեց գէմ ու գէմս և մի բուգէ լուռ նայում էր յատակին։ Ես նայեցի նորա գունատ երեսին, վայր իջեցրած ունքերին, նորա միմեանց սեղմած շրթունքներին և սկսեցի սպասել։

—Դուք ինձ՝ ի հարկի՝ չէք ճանաշում, սկսեց սպասանին. բայց չէք էլ հարցնում ո՛վ և ի՞նչ լինելու Այդ շատ լաւ էք անում, որովհետեւ ի՞նչ հարկաւորութիւն կաց անունս զիտենալու։

—Իսկ դուք իմ անունը զիտէ՛ք։

—Այո՛. բայց դուք ինձ հարկաւոր էք, իսկ ես ձեզ հարկաւոր չեմ։ Միթէ՛ ձեզ համար միւնոյնը չէ, եթէ ես Միքայէլեան, Աերոբեան, Մանուկեան, Տիգրանեան, կամ մի ուրիշը լինէի։

—Ես պատրաստ եմ լսելու ձեր ասելիքը. ի՞նչ բանի է նա վերաբերում։

—Այս բոսէին կը յացոնեմ. միայն ոչ ոք ինձ չի՞ խանգարիլ Գիտէ՛ք՝ ես չէի կամենալ, որ ասելիքս ընդհատուի։ Դուք հրամայեցէ՛ք ծառացին, որ ոչ ոքին ներս չը թողնի։

Ես պատրաստ ծառացին, որ ոչ ոքի ըլնդունի։ Օտարոսի հիւրս գլխով նշան արաւ շնորհակալութեան տեղ։ Եւ յետոյ սկսեց այսպէս։

—Ես երեք տարի է, որ զիմնաղիօնական կուրս վերջացրած

եմ և այս երեք տարւաց մէջ շատ բաների վերաց մտածած եմ—գուցէ լաւ և ուղիղ չեմ մտածած՝ այդ մի ուրիշ խնդիր է—բայց մտառանջւած եմ, շատ ցաւած։ Ես կամենում եմ կեանքիս եղանակը փոխել։ Բայց նախապէս ձեզ մի խնդիր տամ։ Ի՞նչ էք կարծում, ինչո՞ւ ես բարձր ուսումնարան չը գնացի ուսումն շարունակելու։

—Ճշմարիտն ասած՝ չը զիսեմ. գուցէ աւարտումի վկացական չունէք, գուցէ ձեր միջոցները չեն ներում։

—Ո՛չ, ո՛չ, ո՛չ. այդպէս բաներ չեն. վկացական էլ ունեմ, միջոց էլ մի կերպ կը գտնէի։ Բայց ես ինձ մի խնդիր սուածարկեցի՝ թէ ինչի՞ է պէտք բարձր ուսումնը։ Ես ձեզ մի դէպք կը պատմեմ իմ կեանքից. գուցէ նա հեշտ կերպով պարզի ասելիքս։ Երբ որ դեռ ուսանող էի զիմնազիօնում՝ ես շատ բարձր գաղափար ունեի համալսարանական ուսանողութեան վերաց։ Ինձ շրջապատողները երեխաներ էին, գուցէ ես ինքս էլ նոցանից մէկը։ Դիմնազիօնական կեանքը ինքը մի աստիճանաւորի կեանք է. ամեն բան ձեւած, սարքած, կարգած, կանոնի տակ գծած։ Մեք լսում էինք ուրիշներից և կարգում էինք զրքերում; որ համալսարանն է ազատ մտածողութեան և ազատ զարգացումի տեղը, որ նա մտքի լաբօրատօրիա է, որ նա համոզմունքներին հաստատ կերպարան տուղ մի վարժոց է և այն և այն։ Ես և երկու միւս ընկերներս յաճախ խօսում էինք այդ առարկացի վերաց։ Մենք խորհում էինք մեր սիրելի մտածութիւնների կողաը այդ բովքի մէջ զձել նորան զտելու համար։ Ի՞նչ էք կարծում, լաւ բովէներ չե՞ն կեանքի մէջ այդ բովէները։

—Այո՛, լաւ բովէներ են, պատասխանեցի ես։

—Գուցէ յիշողութեան համար, բայց ոչ ապագայ տանշանքներին ենթարկելու համար։

—Բայց գուք, ինչպէս երևում է, առնում էք իրերի միայն մի...»

—Խնդրում եմ ինձ մի՛ հերքէք այժմ, որովհեաև պատմութիւնս կը խանգարւի, ես պէտք է նախ ասելիքս վերջացնեմ։ Այդ ձեր խօսքերն էլ արդէն ինձ պէտք է փոքր ինչ այժմ զբաղեն։ Ես եկել եմ ձեզ մօտ այն նպատակով, որ ձեր կարծիքը, ձեր հերքումը, ձեր հաւանութիւնը ստանամ։ Ես ինքս յետոյ պէտք է խնդրեմ, որ ինձ դատէք. բայց այժմ թոյլ տւե՛ք շա-

րունակեմ։ Խնձ համար այդ բոպէները թռունաւոր են։ Գուցէ բոլորովին ուրիշ կերպ ընթանար իմ կեանքը — եթէ այդ բոպէները փոքր ինչ ուրիշ կերպ լինէին... Ես թողի իմ պատմութիւնը. զո՞ւք էք մեղաւոր. զուք շտապեցիք իմ զէմ խօսելու. ձեր հերթը յեսոց է։

Պատմնին խօսում էր շտապելով. բայց հատ-հատ արտասանելով բառերը, կարծես ամեն մի բառի վերայ շեշտում էր։ Նա խօսում էր՝ աչքը գարձած ուղիղ իւր դէմ. բայց չէր նայում ինձ վերայ, մինչև անդամ ինձ գարձած ժամանակը։ Նա խօսում էր այսպէս, որ կարծես կենդանի մարդիկների հետ երբէք չէ խօսացել, այլ զբքերի հետ միայն։

— Ասելս այն էր թէ, շարունակեց նա, ամենավառվուն մըտածմունքներից մէկն էլ եղել է ուսանողական կեանքը բարձրադոյն դպրոցում։ Իմ ընկերները հաստատ մնացին իւրեանց որոշումին՝ ձևական կողմից — այսինքն գնացին բարձր ուսումի, իսկ ես մնացի։ Խէջու մնացի։ Զարմանալի՛ է մարդու կեանքը. որշա՛փ նա հեշտ կարող է խաղալիկ գտնալ հանգամանքներին։ Այսպէս չէ։ Մնալուս պատճառը համալսարանի ուսանողներն էին, որոնք ընդհակառակն ամեն կերպ ինձ դրդում էին, որ ես հաստատ պահեմ բարձր ուսում ստանալու միտքս։ Բայց այնու ամենայնիւ նոցա մի ուրիշ խօսակցութիւնը ինձ բոլորովին փոխեց։ Այս մանրամասութիւնները զուցէ ձևանձրացնեն. բայց թոյլ տւե՛ք պատմեմ, ինչպէս յարմար է թւում ինձ։

— Խնդրում եմ շարունակեցէք, պատմեցէք ինչպէս կամենում էք։

— Դիմնազիօնական ուսումը վերջացնելուն միայն մի շաբաթ ժամանակ էր մնացել. վերջին հարցաքննութեան պատրաստութիւններով էինք զբաղւած։ Զը զիտեմ ինչ մի հարցաքննութիւն ոււած էինք և ուրախ էինք, որ վերջին առարկայի համար մի ամբողջ շաբաթ ժամանակ ունենք։ Երեկոյեան դէմ մտնում է ինձ մօտ ընկերներիցս մէկը և ասում է. «զնա՞նք Ծամիկեանի մօտ. նորա մօտ երկու Պետերբուրգի ուսանող հիւր են»։ Ես հարցրի թէ ո՞րտեղից է Ծամիկեանը նոցա հետ ծանօթ և իմացայ, որ հայրենսակիցներն են. իսկ յայսնի է, որ որչափ էլ մարդիկ զանազան լինեն միմեանցից՝ երբեմն մի բան կապում է հայրենսակիցներին։ Այս փիլիսոփացութիւնը ես կամաւ առաջ եմ բերում այն պատճառով, որ այն ժամանակ նոյն իսկ այդ կերպ ես պատասխանեցի ընկերիս և այն բոպէին իրաւունք

էլ ունեին Ծամիկեանը երբէք զբաղւած չէր ոչ մի թէ՛ գիտնական և թէ հասարակական խնդրով, կամ գոնէ նոցանով հետաքրքրւած չէր: Ուստի անկարելի մի բան էր թւում: Ծամիկեա՞ն և համալսարանական ուսանողներ: Ես, ի հարկէ, համաձայնւեցի ուրախութիւնով և գնացինք Ծամիկեանի մօտ: Երկայն կը տեւի—եթէ ես պատուեմ մանրամասնաբար այնտեղ եղած խօսակցութիւնները. ուստի ամփոփեմ կարճ կերպով:—Ես ծանօթացաց ուսանողների հետ և մի կէս ժամփց յետոց սաստիկ վիճում: Էի: Խօսում էի միայն մէկի հետ: Միւսը մեր Ծամիկեանի օրում մի բան էր: Ազդ վերջին ուսանողը ացդ երեկոյ ինձ չէր զբաղեցնում, բայց յետոց շատ անգամ նորան ցիշել եմ: Եւ նա սաստիկ հարւած տւառ այն բարձր գաղափարին, որ ես կազմել էի բարձր ուսում առնողի վերաց: Ազդ երեկոյ, կարծես, նորան ամենեին նկատում էլ չէի. նա էլ չէր մանակցում վէճին, այլ Ծամիկեանի հետ միասին մտաբերում էր չը գիտեմ ինչ մի գետի եղերք, որտեղ շատ անգամ զբօսանքի են դուրս գալիս նոցա հայրենակիցները: Ես վիճում էի առաջին ուսանողի հետ: գուռք պէտք է որ նորան ճանաչէք, կամ գոնէ: Լսած լինէք նորա մասին—Մակարեան ազգամնունով:

—Այո՛, լսած եմ. մի անգամ տեսած էլ եմ նորան, բայց ծանօթ չեմ:

—Մակարեանը ուսումը վերջացրել էր: Իմ շատ վառվուռն և եռանդալից հայեացքին նա նայում էր ծերի յոդնածութիւնն էր արտացացառում: —Ե՛հ, մեք էլ ենք այդպէս մտածել... Ե՛հ, հեշտ է ասելլ... ի հարկէ կարելի է մի բան անել, բայց ներքին խոչընդուներ... Ուր է պատւանդանը... և այն, և այլն: Զը նայելով իմ սաստիկ վառւած լինելուն՝ այնու ամենայնիւ զգացի, ինչպէս սաստիկ մեռելութեան մի շունչ փշեց Մակարեանից: Բայց ես չէի կարող զսպել ինձ և սկսեցի մինչև անգամ ակնարկել, որ զարմանալի է երիտասարդ մարդկանց մէջ տեսնել ացնպիսի պառաւ տրամադրութիւն: Մակարեանը սկսեց փոքր ինչ իրան պաշտպանել և մինչև անգամ դարձաւ իւր ընկերին, որ նոյնպէս խօսակցութեան մէջ մոտաւ: Մեք սկսեցինք ուղիղ զիպչել սկզբունքներին: Մակարեանը ձեւական կողմից ինձ հերքեց և ես փոքր ինչ լնկնեցի. բայց չը համոզւեցի և նորա հետ չը համա-

ձայնւեցի, իսկ մի քանի կողմնակի կերպով ցըւոծ նախադասութիւն-ները ինձ մինչև անգամ շւարեցրին. զորօրինակ՝ Մակսարեանը դառ-նալով իւր ընկերին՝ ասում էր. «Բաւական չարչարւել ենք և ջախ-ջախւել մեր ուսանողական կեանքում. մեր բոլոր ոյժերը քամեցին, իսկ ապրելու ժամանակ չը մնաց. ինչով ենք մեղաւոր, որ մշտա-կան տանջանքի դատապարտւենք. այնտեղ պահանջներ, այսուեղ պահանջներ. մարդու զլուխ տրաքւում է. — և ո՞վ է պատրաստել մեզ գործունէութեան համար և ո՞վ է պատրաստ մեզ օգնելու, մեզ սպաշտանելու մեր գործի մէջ: — Խօսակցութիւնները շատ երկարա-ցան. ես խօսում էի սաստիկ գրգուած և կարծես թէ ջղային կեր-պով հիւանդացած. այնպէս որ Մակսարեանը աշխատում էր ինձ հանդատացնել և ինձ հետ համաձայնել, բայց ես նկատեցի, որ միակ յիմար դեր կատարողը ես եմ այդ հասարակութեան մէջ: Յան-կարծ վերջ դրի խօսակցութեանս. բայց մի երկու բոպէից յետոյ՝ ըլ-կարողացաց լաց պահել և զուրս վազեցի սենեկից և ուղևորւեցի դէպի խուլ փողոցները և քիչ մնաց, որ զուրս գայի քաղաքի Մը-ջանից: Բայց աչքի առնելով ուշ լինելը՝ շտապեցի տուն զառնալ: Արդէն բաւական հանդատացել էի և աշխատում էի առ ժամանակ չը մտածել եղածի վերաց: Տուն գարձած՝ տեսաց ընկերիս իմ սե-նեսկում նստած: Նա զարմացել էր իմ բացակայութեան վերայ բայց վճռել էր սպասել և պատմեց, որ իմ գնալուց յետոյ խօսակ-ցութիւնը բոլորովին դադարել է. նա հազորդեց, որ Մակսարեանը ասել է, որ ինձ հետ իրը թէ վիճել անկարելի է, որովհետեւ շատ մօտ եմ առնում սրախ ամեն բան և շատ վրդովում: Այդ բոլոր պատմածները ես լսում էի հանդարտ, առանց իմ կողմից նկատողու-թիւն անելու, որովհետեւ մտադիր չէի խօսելու: Ընկերս յետոյ կցեց, որ Մակսարեանը մի ժամանակ եռանդով հետաքրքրւում է եղել զանազան տեսակ ինդիբներով, որ նա բաւականին կարդացած էլ է և այն: Այդ բոլորը ինձ համար մի հնագիտական լուրի նշանակութիւն ու-նէր: Ես լուռ էի մնում: — Ընկերիս գնալուց յետոյ ես ինձ զսպել չը կարողացայ. կրկն զարթեցին իմ մէջ պատահածի մանրամանու-թիւնները: Մի երեկոյում ինչքան փոփոխութիւն իմ սպասածի, իմ կարծածի մէջ: Այդ երեկոն ինձ համար երեք տարի դարձաւ: Այժմ ես կարողանում եմ վոքր ի շատեւ հանդարտ պատմել, բայց այն ժա-

մանակ ես խորովում էի: Մի հարւածը այն էր, որ տեսայ ուսանող՝ Ծամիկեանին ընկեր, նորանից ամենեին չը բարձրացած. բայց դա գեռ շատ մեծ հարւած չէր, որովհետև բացառութիւններ ամեն տեղ լինում են և Ծամիկեանը մեր մէջ միթէ միեւնոն բացառութիւնը չէր: Միւս հարւածը այն էր, որ ուսանողը արդէն ուսանողութեան ժամանակ կորցրել էր իւր եռանողը և մատաղ ովքը և հոգեսպէս ծերացել: Երբորդը այն էր, որ նա այնքան հեռացել էր ժողովրդից, որ ձեւակերպում էր իւր գաղափարները կամ իւր ներքին իդար մի օտարոտի ոճով, օտարոտի բացագանչութիւններով: Ես վախինում եմ, որ այսուղ արդէն ինձ չը հասկանաք դուք:—Ինձ լիշեցնում է, թէ ո՞րշափ ուրեմն այդ ուսանողը հեռացել է մեր հասարակութիւնից, որ իւր օրտին սիրելի մտքերը չի կարող յայտնել իւր շրջապատռներին: Ես մտածում էի՝ եթէ դա է հետեւանքը—այդ յոգնածութիւնը, վաղ պառաւութիւնը,—ուրեմն ինչո՞ւ է պէտք ուսանողութիւնը: Ես ինքս ասում էի ինձ. կը զնամ, ուսում կ'առնեմ, բայց ոյժերս կը սպառեմ և կը դառնամ հայրենիք. ո՛ւմ և ինչի՞ եմ ես պէտք: Յանկարծ միտքս եկաւ, որ մեր քաղաքում հինգ իրաւագէտներ կային, երեք բժիշկ, երկու արհեստագէտներ. դրքա բոլորն էլ բարձր ուսում են ստացած. դոցանից միայն մէկը—բժիշկ Սալարեանը—կինդանի մարդ է՝ հասարակական ինդիրներ քրքրող և ընդհանուր շահերի ջառագով: Ուրեմն, ուրեմն, ուրեմն, կրկնեցի ես մի քանի անգամ և այն էլ բարձր ձայնով և անվճիռ թողած ինձ տանջող խնդիրը՝ աշխատեցի քնանալ: Ես անվճիռ թողի ուսանողութեան մասին իննդիրը. ես ասում էի՝ թէ այնուղ կան երեխ և լաւ բացառութիւններ: Տեսնում էք, որտեղ ես հասայ. ես դեռ մի քանի ժամ առաջ կարծում էի, թէ վատ ուսանողութիւնն է բացառութիւն: Այդ խնդիրը ես չը վճռեցի. այլ մի ուրիշ իննդիր արդէն բոլորմին հաստատ վճռեցի—այն, որ ես բարձր ուսում ստանալու չը պէտք է գնամ: Այդ երեկոյ վճռեցի. և ահա՛ երեք տարի է, որ հաւատարիմ եմ վճռիս և յոյս ունիմ միշտ հաւատարիմ մնալու: —Գուցէ այս մտքերի հետ դուք համաձայն չէք. բայց ես յայտնում եմ իմ կեանքի մի կոորդ, ինչպէս նա եղել է և կայ: Զեղ համար դա մի պատմութիւն է, իսկ ինձ համար՝ իրադորժւած ողբերդութիւն: Ես մտադիր չեմ՝ պատմելու շատ ուրիշ

մանր դէսլքեր, թէ ինչպէս, զորօրինակ, նոյն իսկ Մակսարեանը աշխատում էր ինձ յետոյ համոզել, որ գնամ բարձր ուսումնարան և այլ այլ տեսակ անցքեր: Ընկերներս զնացին Մօսկվա և Պետերբուրգ, ես այսուղ մնացի: Նամակներ ստանում էի նոցանից և մինչև այժմ էլ ստանում եմ, թէև ուշուշ Հարցնում եմ ձեզ այժմ: Ի՞նչ զանազանութիւն կայ նոցա և իմ մէջ:

—Ի՞նչ տեսակէտից, հարցը ես:

—Ի՞նչ տեսակէտից կամենում էք: Փորձեցէ՛ք զանազան տեսակէտներից:

—Առաջինը, ասացի ես, նոքա ստանում են իրանց ընտրած մասնագիտութեան համեմատ մի համակարգւած ուսում, երկրորդ...

—Սպասեցէ՛ք, պատասխանեմ առաջին կէտին: Ես խնդրեցի ընկերներիցս մէկին, որ ուսումնասիրում է իրաւաբանութիւն, ուղարկի ինձ բոլոր դասախոսութիւնները, յետոյ ինքն՝ քրքրելով զանազան զրքեր՝ կազմեցի մի մեծ ցուցակ այնպիսի զրքերի, որոնք վերաբերում էին իմ ցանկացած զիտութիւններին և սկսեցի շատ խիստ կարգաւորութիւնով կարդալ, քննելով միևնոցն ժամանակ աղբիւրները: Ընկերներիս նամակներիցը ես տեղեկանում էի, որ նոքա շատ էլ կանոնաւոր չեն յաճախում դասախոսներին, որ նոցա լսածներն էլ կրում են պատահականի բնաւորութիւն: Դրաւագէտ ընկերս մինչև անգամ երբ անցեալ տարի տուն էր դարձած և ինձ պատահեց՝ երկայն խօսակցութեան մէջ յցին յախնեց, որ նորա համալսարանական ընկերների մէջ գուցէ ոչ ով այնպիս մանրամասն չը գիտէ առարկաները, ինչպէս ես: Այս երեք տարւայ մէջ, ես անցել եմ բոլոր իրաւագիտական առարկաները, որչափ կարելի է մանրամասն բացի դա, բոլոր ազատ ժամանակս նւիրել եմ ընդհանուր ընթերցանութեան և ես հաստատ գիտեմ, որ համալսարան զնացած ընկերներս այնքան չեն կարդացած, որչափ ես:

Իսկն ասած՝ ինձ շատ զարմացրեց այլ տեսակ տոկունութիւնը. ես զեռ կամենում էի ինքս փոքր ինչ մոտածել պատանու վերայ. բայց նա սպասում էր իմ երկրորդ հարցին:

—Երկրորդը, ասացի ես, ուսանողական շըջանի ազատ երիտասարդական կենցաղավարութեան աղղեցութիւնը ուրիշ է, քան ձեր սենեկացին ուսանողութիւնը:

—Երկրորդ տեսակէտը կարող էր, ի հարկէ, նշանակութիւն ունենալ—եթէ խօսքը իմ լնկերների վերաց չը լինէր։ Ես նոցա ազատ երիտասարդական կեանքի ո՛չ մի բարերար ազգեցութիւնը չեմ աեսած։ Նոքա միայն աւելի համարձակ են դարձած և այն, ինչ որ զիմնաղինում նոքա յայտնում էին երեխայաբար, բայց երեքն էլ ամաչելով իւրեանց անկատարելութիւնից, այժմ նոքա յայտնում են միևնունը աւելի ազատ, շեշտելով և իրեւ մի պատգամ արտասանելով։ Բայց ես, որ նոցա ճանաչում եմ վաղուց և զիտեմ նոցա բնաւորութիւնները, միայն զարմանաւմ եմ և բարկանում։ Իսկ սենեկային ուսանողութեան վերաբերմամբ ես ինքս էլ ցաւում եմ և ձեզ զիմելու պատճառը մասամբ այդ է։ Բայց համեմատութեան կողմից կ'ասեմ։ Միթէ՞ համալսարանական ուսանողը, եթէ անձնատուր է իւր մասնաղիտութեան, նոյնակէս սենեկային չէ։ Ես կարդացել եմ դոնեղերմանական ուսանողների վերաց այդ տեսակ նկարագրութիւններ։

—Խնդրեմ, առանց ինձ հարց առաջարկելու, շարունակէ՞ք ձեր ասելիքը, պատասխանեցի ես նորան։ ինձ հարցեր տալլը դժւարացնում է, որովհետեւ ես իմ կարծիքը ունեմ ուսանողութեան վերաց —թեր և դէմ։

—Այս՝ ճշմարի՛տ է ձեր ասածը. բայց իմ հարցեր տալլը այն նպատակն ունէր, որ ձեզ ցոյց տայի թէ ես շատ բաների վերաց մտածած եմ և խորհած։ Երեք տարւայ չարչարանքս չեն կորցրած, ի հարկէ, իմ եռանդը, բայց նորան տւել են մի ցաւոս, մի սրտամաշ կերպարանք. ես միշտ անբաւական, միշտ բարկացած, միշտ դատաքննող —կարծես կեանքի մարդ լինելուց հեռացել եմ։ Պէտք է ասեմ, որ այստեղ արդէն սկսւում է անորոշութիւն. ես հաստատ ձեզ ոչինչ չեմ կարող ասել. —մինչեւ այժմ՝ անցեալ իրողութիւն էի պատմում, այժմ սկսւում է իմ ներկան և բոլորը խառնիխուռան գրութեան մէջ է ընկնում։ Այժմ հասել է ժամանակը, որ ես պէտք է կեանքիս եղանակը փոխեմ, որ պէտք է աշխատեմ աւելի ու աւելի դործունէութեան մօտիկանամ։ Եւ այս բանում դուք ինձ պէտք է օգնէք։ Ես կարդացել եմ ձեր մի քանի նամակները (ո՞ւր և ի՞նչպէս այդ միենոյնն է)։ ձեր նամակների միջից երկու նախաղատութիւն ինձ վերաց ազդել են և այդ պատճառով ես մտադիր եմ խնդրել ձեզ երկայն խօսելու։

— Ի՞նչ նախադասութիւններ են:

— Գուցե մինչև անգամ դուք մոռայած եք, որովհետև տարիու կէս առաջ զրւած բաներ են նոքա: Ես միայն կարճ մաքերը կարող եմ ասել: Մէկն այն է թէ՝ մեր մէջ անգործադիր ոյժեր շատ կան զանազան որակութեան, պէտք է և կարելի է մեծ գործ գոնել նոցա համար. միւս նախադասութիւնը այն է թէ՝ պէտք է օգտակա ժողովրդական կեանքի այն արտայացաւութիւններով, որաեղ վառ է ստեղծագործական ոյժը և խաղում է կենդանութեան երակը: Դուք ցիշում էք դոյցա:

— Ես հաւատում եմ, որ այդ տեսակ բան կարող էի զբել. սակայն, իմ կարծիքով, թէւ այդ երկու նախադասութիւնները մեծ ամփոփ ունեն՝ այնու ամենայնիւ կարօտ են լրացնող կէտերի, որոնց պէտք է աշքի առաջ ունենալ:

— Այժմ ես խորում եմ, ասաց պատանին, որչափ կարելի է հանգամանօրէն յայտնեցէք ինձ ձեր հայեացքները:

Ես սկսեցի մանրամասն քննել մեր հասարակական կեանքի դրութիւնը: Գրաւեցի առարկայով և մեծ զգացմունքով խօսեցի: Պատանին սկսեց կամաց-կամաց զլուխը բարձրացնել և ինձ վերայ նայել. յետոյ բոլորովին անձնատուր եղած մի տեսակ անգործութեան՝ թուլացրեց իւր կիտած ունքերը և մեղմ մոտածութիւնով լսում էր ինձ: Ես չեմ պատմում կրկն իմ ասածները. դա աւելորդ է, զու գիտես արգէն իմ գաղափարները:

Նրկայն խօսակցութիւնից յետոյ, եկանք այն եզրակացութեան, որ նա մի քանի ամիս էլ կար մի տարի պարապւի ուսումնասիրելով գործնական կեանքի պայմանները և պահանջները, աշխատի ացցելել շատ գիւղեր և քաղաքներ:

Ինձնից հեռանալիս, պատանին ջերմ, բայց կտրուկ սեղմեց ձեռքս և հեռացաւ, չը յայտնելով իւր անունը: Օտարութի ացցելու չէր... բայց ինձ համար շատ բան հասկանալի է:

Նամակս չերկարացնելու համար, ես գուրս դձեցի մեր վերջին խօսակցութիւնները: Դու, ի հարկէ, անբաւական կը մնաս նամակս կրնասելուց: Բայց մտածի՛ր, սիրելի քո՛յք, մի բոպէ. — միթէ՞ պատմածս չէ ամենազլիսաւորը, միթէ՞ օտարութի այցելուիս խոսացանութիւնը չէ ամենահականը: Խոկ այն, ինչ որ ասւեց, խօսեց

յետոց—լմել ես դու շատ անգամ մեր վէճերում։ Եթէ քեզ պակասորդ բան է թւում մնացած նորա պատմածի մէջ—այդ նորա մեղքն է։ Այսքանովս բաւականացի՛ր։ Նամակս էլ տեսնում ես, որ բաւականին մեծ է դուրս գալիս։

Հիւրս ինձ ասաց, որ նա գեռ մի քանի օր քննելու է մանրամասն իմ ասածները, սակայն աւելացրեց, որ եթէ ինձ հետ տեսակցելու լինի—չի վճռւիլ մի տարուց առաջ։

Ի՞նչ ես կարծում։ Ցգրութիւն։

Քո Ա. Պ.

ՊԵՐՃ ՊՈՅԵԱՆՑ

ԵԿ

ՆՈՐԱ ՎԵՊԵՐԸ

Ուսումնասիրութիւն

Ն. ՔԱՐԱՄԵԱՆՑԻ

...Zufällig naht man sich, man fühlet, man bleibt,
Und nach und nach wird man verflochten;
Es wächst das Glück, dann wird es angefochten,
Man ist entzückt, man kommt dem Schmerz heran,
Und eh man sich's versieht, ist's eben ein Roman...
Greift nur hinein in's volle Menschenleben!
Ein jeder lebt's, nicht vielen ist's bekannt,
Und wo ihr's packt, da ist's interessant.

Faust. I. 129—137.

Աշանգիպում ենք պատահմամբ, զգում, կենում,
և եռ զկետէ հանգոյցներով՝ շղթայում,
և ձում է երջանկութիւնն, յետոյ հալածւում,
և բազուրւած նրանով՝ մեղ գտնում է աղէտ,
և եռ ըլ զարթած ցնորդից, վէպն է սկսում՝ յաւէտ...
և Մեկնեցէք ձեռներդ դէպ շտեմարանը կենաց.
և Տեսել ենք ամենա, շտաբը ենք անգէտ,
և ւստի կուզէք նիւթ առէք, գըաւէչ է շահաւէտ»:

Ֆանսուա. II. 129—137.

Բ.

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՍԿԻԶԲԸ.

Առողջ և բնական զարգացումն ունեցող գրականութիւնները բաճառ-
տեղծութիւնով են սկսում իրենց գոլութիւնը. հին դասական գրականու-
թիւնների պատմութիւնը հաստատում է այդ ձշմարտութիւնը Յապտնի է:

որ հայկական հին մատենապրութիւնը զժբաղդաբար բնական և կանոնաւոր զարգացումն չէ ունեցել. նա ծնունդ է հայ եկեղեցու պիտոքի, ստեղծըւած է եկեղեցականների ջանքով, ծառալիք է երկար ժամանակ գրեթէ միայն եկեղեցուն և սեպհականութիւնն է եղել եկեղեցականների. ուստի հասկանալի է նորա բանաստեղծութիւնից զուրկ լինելը, հասկանալի է նա մանաւանդ վիպական բանաստեղծութեան կատարեալ բացակալութիւնը. Հայկական հին կամ գրաբար մատենապրութիւն ստեղծւելու նրապատակն էր եկեղեցական դպրութիւն ունենալը. այս պատճառով նա սկսում է թարգմանութիւններով, ծաղկում է մի ուղղութիւնով, այսինքն՝ նորա լուսոր արտադրութիւնները, լինին նոքա բանաստեղծական թէ դիտնական, հետևանք ևն եկեղեցու պիտոքին. նորա վիպական բաժինը սըրբերի վարքն է (Legende), քնարերգականը միաստեսակ ներբող է և զուրկ է քնարերգական ազատ երգերից, երգիծաբանութիւնից և եղերերգից, իսկ ամենաբարձր տեսակը բանաստեղծութեան, թատրերգութիւնը, զուրս լինելով բոլորովին եկեղեցու շրջանից, ամեննեին ծնունդ անդամ չէ առել. Այնուամենակնիւ ալդ գրականութիւնը կրում է հայկական հոգու գորշմը. ուստի իրաւամբ մեր հին գրաւոր կամ գրաբար մատենապրութիւնը կարող ենք անուանել հաչկական—քրիստոնէ ական գրականութիւն.

Տարբեր եղաւ մեր նոր կամ աշխարհիկ գրականութեան զարգացումն. Մեր ազգային զարգացման ընթացքն այնպէս է եղել, որ մենք որոշեալ գրական գառաջապիմութիւն պէտք է անժխտելի կերպով ունենալինք և ունեցել ենք. Մեր ազգը բանաստեղծութեան երկու առաջին տիսակների շրջանն էլ, վիպականի և քնարերգականի, անցել է, բայց երրորդին՝ այն է թատրերգականին չէ հասել. եթէ հին դպրութիւնը բոլորովին իւր շրջանից դուրս է համարել ժողովրդական գրականութեան արտադրութիւնները և չէ կամեցել ծառալիք դրան, ալդ չէ նշանակում, որ մենք այն շրջաններից չենք անցել երբեք. եթէ այս վերջին ենթադրութիւնս անելու լինինք, ալդ կը հերքւեր գրաբար մատենապրութեան մէջ պատահ աբար մնացած հետքերով և ալժմեան ժողովրդական բանաւոր գրականութեան մնացորդներով. Դարերի ընթացքում հայկական դպրութիւնը բամասութեամբ զլացաւ ծառալիք հայ ոգու բոլոր արտադրութիւններին, նա մի տեսակ հին գոգլի Փ—սրբադրում մատենապրութիւնն էր. բայց վերջապէս կոտրւեց նորա լամասութիւնը և ժողովրդական պահանջը լաղթեց զարաւոր նախապաշարման. Գրաբարի անմասչելի դառնալն և նորանով գրելու դժւարութիւնը պատճառ եղաւ աշխարհաբարի բարձրանալուն. և երբ լիզուն բարձրացաւ իւր ընկած վիճակից, նորանով պահանջ գրական արտադրութիւնների արժեքն էլ աւելացաւ. ժողովրդական և կէս ժողովրդական երգերը գրի առնեցին, սրբերի վարքն և իրաւական պատմութիւնները ժողովրդի լիզուով գրւեցին և տարածւեցին:

Գործնական կեանքին վաղուց արդէն ծառապում էր գրութեան ար-
ւեստը. նամակները, զաշնաղիրներն և պայմանապիրները դրւում էին սո-
վորաբար աւելի աշխարհաբար կամ աշխարհաբարով խառն գրաբար. սա-
կան դեռ ևս չը կար աշխարհիկ գրականութիւն, մինչև որ ժամանակը Խա-
չատուր Արովեանի ձեռով լուծեց աշխարհաբարը կաշկանդող կապերը. Ա-
րովեանի «Աէրք Հայաստանին» մի կողմով համեմատելի է Դանուէի «Աստ-
ուածավին կատակերգութեան»: «Աէրք Հայաստանին» թէն չատ հեռու է
դասական և չարատե չքնաղ «Աստուածավին կատակերգութիւնից», բայց
մի պարագանք չատ նման է. ինչպէս նա հիմնաքար եղաւ. խոալական գը-
րականութեան և լեղուի, նոյնպէս և Արովեանի վիպական եղուուի: Մեր նոր գրականութիւ-
նը ծաղկեցնող առաջին մշակները անխտիր կամ Արովեանի աշակերտներն
են և կամ աշակերտների աշակերտները: «Աէրք Հայաստանին» իբրև բա-
նաստեղութիւն և գեղարւեստական արտադրութիւն՝ չատ փոքր արժէք
ունի. նա մի գերմանական լողէալական (գաղափարական) ուղղութեամբ
գրւած անհաջող վիպասանութիւն է, բայց հեղինակի բուռն զգացումնե-
րը նորան կենդանութիւն են տալիս և նա կարողանում է սպակ ընթեր-
ցողի վիրաշ: Արովեանի այդ բանաստեղծութիւնը մի կողմով գուտ հաչ-
կական է, այդ նորա զգացումների խորութիւնն է, որ արտազայտում է
Գրիգոր Նարեկացու նման բառերի անհնարին կուտակումով: Այս պատ-
ճառով «Աէրք Հայաստանին» ևս լաջող կերպով կարելի է անուանել «Աշա-
կենական ի խորսց սրտէ խօսք ընդ Աստուծոյ»:

Իւր ամենին ըմբոնելի լեզուով, անկեղծ զգացումներով և վառ հաչ-
կականաբական ողով, Արովեանը գրաւեց մի անդամից ընդհանուրի համակ-
րութիւնը. միւս կողմից նա նոր վիպասանութեան օրինակին ծանօթաց-
րեց հայ հասարակութեան, որի ճաշակն առնելով սկսաւ սա և անուհետեւ
այդ տեսակ նիւթ պահանջել. Ռուսական արշաւանքների և աշխարհակալու-
թիւնների հետեւանքն եղել էր համեմատաբար հանդիսան նիւթական կեանք
և մուտք ուսման և գիտութեան ճաշակի: Կային արդէն նորաբողոջ ծա-
ղիկներ հակական գաւառներում և գիտերում. թէ Ներսիսնան և թէ տէ-
րութեան ուսումնարանները տևել էին նորակիրթ երիտասարդներ, որոնք
ոգնորւելով Արովեանի բանաստեղծութեամբ, սկսան նորա շաւզով ընթա-
նալ և զարգացրին մեր նորածին գրականութիւնը: Արովեանի այդ առաջին
աշակերտներից էր մեր աշխաման արդիւնաւոր վիպասան Պերծ Պոօշեանցը,
որի գործերի ուսումնասիրութիւնից առաջ, նորա կենսագրութեան հետ
ծանօթացրինք, որ մեզ նրա վիպասանութեան չատ կէտերը հաս-
կանալուն նպաստում է:

Այդ ուսումնասիրութեան նպատակն է Պոօշեանցի վիպասանութիւննե-
րի զեղարւեստական և գրական արժէքը որոշել՝ միանգամայն և նորա տեղը
գրականութեան մէջ:

Պ.

ՊՈՅԵԱՆՑԻ ԿԱՐՄԻՔԸ ՎԵՊԱՍԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ.

Ընդհանուր էր մեղագրանքը դէպի մեր պատմագիրներն, որ ժողովրդական կեանքը անտես էին արել իրենց երկերի մէջ։ Այս մեղադրանքն համում էր անարդարութեան, որովհետև նոցա զատում էին մեր ժամանակի չափով։ Հասկանալի է այդ արդէն, որ անցած և անդառնալի կրուստը վերականգնել կարելի էր միայն եռանդուն լինելով նոր գրականութեան մէջ այդ կողմով։ Այս եռանդն անչափ շատ էր, որ միայն այդ էր կարծւում գրականութեան նիւթ։

Խաչատուր Աբովեանի գործն առաջին փորձն էր ժողովրդին մօսենալու, բայց աճնպիսի փորձ, որ բոլոր այն ժամանակւան գաղափարներով տոգորւած երխոսսարդութեան պիտի ովկորէր։ Աղպէս էլ եղաւ. «Այրք Հայաստանին» դարձաւ գեղագրութեան օրինակի Նման մի օրինակ մեր ժողովրդական գրողներին։ Լսնք Պոչեանցին այդ մասին, որովհետեւ այդ խօսքերով որոշում է նա իւր ապադաւ գրուծունէութիւնն։

«...Մածելով այս ամենը Խաչատուր Աբովեան ուսումնականը և զգալով ան-
« շուշա ազգի աւանդութեւնները և ծէս սերն կեն գանացնելու
« հարկն, գրեց իւր «Գլորի ՀԱՅԱՍՏԱՆԻ» աշգիւնաւոր շաբադու-
« թիւնը, նկարագրելով հօրա մէջ նըեանու նահանգի Քանաքեռ դիւղի լեզուի
« դարձուածքը և անային մի քանի սովորութիւնն քը...։ Սա առաջինն
« եղաւ, որ մի դիւցազնն է ձեռքով լինայեց մեր ազգին իւր առանին կե-
« նաց նկարագրը և յայտնապէս ցոյց տուեց...։ Ոէ չէ եղել Սպասին, կամ թէ ե-
« զել է մի աննշան ոմն, հոգ չէ. Աղասու վերայ պատմուածնեըլ ամեն հայ մար-
« դու յատկութիւնն է...»։

Ուրիմն լաւ հասկանալով վիսլաւկան բանաստեղծութեան էութեան մի մասն, Պոչեանցը Աբովեանի գործը համարում է նկարուղիս և ճշգրիտ նը-
կարուղիր կեանքի. իսկ նրա վիսլաւկան ձեր և Աղասու անձնաւորութիւնը
նրա համար երկրողական զեր ունի. նա կարող էր և չը լինել, միայն
թէ ոտղորութիւնները և լիդովի նկարուղիրը մինէր վիսլաւկան գաղափա-
րը դուսութիւն չունի նրա համար, վիսլաւկան ձեր միայն ձեր միայն
կամաչական ձեր, որ ընթերցանելի լինի գրւածքը. նա թերևս համա-
ձանէր իսկ վիսլանակ առ վիսլաւկան ձեր ընդունել բռն պատմական ո-
ճը, որպէս վիսլովրդի կեանքի նկարագիրը ծչպրիտ լինի և ոչ մի շինծու
բան չը գոնուի աճնաւզ։ Սրա պարզ հետեանքն ան է, որ Պոչեանցը վի-
պասանութեան նոր ուղղութեան է հաւանում, նա պաշտպան է իրական
ուղղութեան և որ զվարուրն է անկախ եւ պատմական ազգեցութիւնից
և ուրիշ պատմաներից զրուած, քան եւ պատմական իրական բանա-
տեղները։ Մեր ուսումնասիրութեան ընթացքում մինք շատ անդամ
առիթ կ'ունենանք ապացուցանելու այս իրողութիւնը։

Վերոքիշեալ լսուածաբանի խօսքերին հետևում է Պոօչեանցի զործութեան ծրագիրն, որ սովորուած ենք ամրողջովին լսուած ըերեւու.

«Կարդալով մեր նախնեաց պատմութիւնները և գանելով նրանց մէջ ժողով վրայաց մի քանի նկարագրեց, աչքներիս առաջն ունենալով մեծաքան» «Քար Արովեանի «ԱՅՆՔ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ» սիրահարուեցանք մեր հայոց մեզ թողած աւանդութիւնների վերայ և կամե լով ծառայել ազգեստ, իբրև յանձնէ եւեալ, եթե ցենք ըստ մեր տկար կարողութեան մեր հայրենեաց սովորութիւնը, վարքն ու բարքն և այլ այսպիսի արտաքին ծիսերը. ըայց գետառու թեամբ մեր գրուածքն ախոր ժեկ անելու համար. ու ի են «Եկ ազգիս, թէ մեծ ծին և թէ վոր քը ն և տեսնելով կոյս սերոյ սը ըստ թիւնը, երկու կուս սից մէջ նորդութեամբ պատմեցինք. Աշտարակ գիւղու սովորութիւնը, ի մէջ ըեցելով ամենա - «Փոքը և չնցին համարուած արարուղութիւններ անդադար առաջ գույն գանական եւ լուսու լաւուն ու զատը....»

Հարունակութեան մէջ ցոյց է, տալլս հոգինակը՝ թէ այդ վիշած սովորութեանց մէջ կան բարտական դասեր և թէ այդ սովորութիւնները գույն հայկական են և Արարատեան նահանգի անխառն բնակիչներին լուսուկ, որոնց ներկայացուցիչ կարող են համարեւել Աշտարակցիք:

Յառաջաբանի վերջում կրկին անզամ պարզ առուում է թէ բոլոր նպաստակը սովորութիւնները և լեզուն նկարագրելն է եղել, և սրովինաւ չէ կարողացել հեղինակը բարիկենդանի չորեքշաբթի օրւանից մինչև ծաղկազարդ գիւղական կեանքը նկարագրել, թողնում է պատեհ ժամանակի. Այս խոստումը կատարում է նա «Հացի Խնդրիո մէջ, ուր նա վիպասանութիւնը սկսում է «Սօս և Վարդիթերի» վերջանալու կէտից»:

«Հացի Խնդրի» լսուածաբանն ակսպէս է սկսում. — «Սօս և Վարդիթեր» վիպասանութեան մէջ Արարատեան նահանգի սովորութիւնները նկարագրուում վիպասանութեան պահանջմանց համեմատ պակաս էր մը նացել բուն բարիկենդանից մինչև ծաղկազարդի կեանքը. Նոյն գրքիա լսուածաբանի մէջ ես խոսացել էի, երբ և իցէ, այդ սովորութիւններն էլ լրացնեմ, որով Հաջատանի զլսուող նահանգի տեղական կեանքի պատկերը իւր բար բառի, առածն եղութիւնն երի և ծէ սերի հետ ազատած կը լինեմ ժամանակի անհետացնող ժանիքներից.... Նկարագրելով «Սօս և Վարդիթերի» մէջ 40 թւականների տեղական սովորութիւնները, ես դիմամակ աչժմ ևս «Հացի Խնդրի» նիւթը վերցըի նոյն թւականներից, որ մի որոշեալ ժամանակի կեանք ամրողջապէս նկարագրեմ»:

Ազամբառ ուրեմն, Պոօչեանցը իւր այդ երկու գրւածներով կամեցել է վիպական ձևով միան ժողովրդական կեանքի նկարագրեց տալ. Այս նպաստակին հասնելու համար, նա վերցրել է 40 թւականների Արարատեան կեանքի շըջանն և նկարագրել է երկու վիպասանութիւնների մէջ, զառաջ բերելով անտեղ ամրաղջ սարւան կեանքը, առանց մի օր անդամ բաց

թողնելու։ Այս երկու վիպատանութիւնների մէջ պատմական աճանաւորութիւններ չառաջ չեն զալիս և ոչ էլ պատմական գէպքեր, սոքա ժամանակակից հասարակական վիպատանութիւններ կարող են համարել։ Պոօշեանցի միւս երկու վիպատանութիւններն ունին պատմական տիպար, թէև կեռնքի նկարագիրն աւելի ժամանակակից է։ Խնչպէս այնաև նպատակ է ունեցել հեղինակը սովորութիւնները, ծէսերն անմահացնել, ալստեղ էլ ցանկացել է նա իրան հասած պատմական տեղեկութիւնները աղատել կորստից, ուստի և ասցա վերակ պիտի նախնք ոչ իբրև զուտ պատմական վիպատանութիւնների ժողովածովի վերակ։

Դ.

«ԱՕՍ ԵԽ ՎԱՐԴԻԹԵՐ» ՈՒ «ՀԱՅԻ ԽՆԴԻԹԻ»։

Յօդւածիս ճակատի նշանաբանի ճշմարտութիւնը՝ թէ պէտք է միայն ձեւք մեկնել դէպի մարդկավին կեանքի շտեմարանն և ամենայն տեղ հետաքրքրելի և շահաւելու նիւթ կարելի է գտնել, ապացուցանւում է։ Պոօշեանցի վիպատանութիւններով, նա գրեթէ անխտիր (բացի Շահէնից) իւր նիւթն առնում է մի գիւղի (Աշտարակի) կեանքից. բայց բոլոր նրա վիպատանութիւններն էլ հետաքրքրելի են և նրանց մէջ նկարադրած կեանքի հանդամանքներն և անձնաւորութիւնները խրեանց տիպարով ամենագեղիցիկ նիւթեր են քաղաքակրթութեան պատմութիւն գրողի համար։ Խնչպէս ապացուցնք՝ Պոօշեանցի առաջնակարգ նորատակը նոյն իսկ քաղաքակ է և ան նէ և ոչ բանաստեղծականը, որ ի հարկէ երբեմ չաղթող է հանդիսանում և առիպում է, անդամահատող արձանագրողին իւր վաստից գնալ. այս հանդամանքն աշքի առաջ ունենալով, մի նշանաւոր զուգադիպութեան վերակ մատնանիշ վնել կը կամենապի։

Ֆրանսիական վիպատանութեան իրական (ռէալական) ուղղութեան խոկան հայրը, Հօն որ է դը Բալդակ (1799—1850), գրեթէ նոյնն է ցանկանում տալ ֆրանսիական հասարակութեան համար և փրաւի տալիս է իւր վիպատանութիւնների մէջ, ինչ որ Պոօշեանցը մեր հասարակութեան, Ահաւատիկ Բալզակի խոկական խօսքերը. «Երբ կարդում ենք այն չոր ու ցամաք և անտանելի ցուցակագրութիւնները, որ պատմութիւն են կոչւում, այն ժամանակ նկատում ենք, որ բոլոր երկրների և ժամանակների մատենապիրները մոռացել են տալու մեզ բարքերի նկարուղիրն և պատմութիւնը։ Ահա այս պատկասորդը կամենում եմ, ինչքան ուժերու կը ներեն, լրացնել. Ես կամենում եմ հասարակութեան կրքերի, առաքինութիւնների և ախտերի ամբողջ ստացւածքը ներկալացնել, նմտն բնաւորութեանց հաւաքումով տիպարներ տալ և երկաթի տոկոնութեամբ և ջանքով ժմթ. դա-

րու մասին այն զիգվը զրել, որ մեզ զժբաղդաբար Աթէնքը, Հառվմը, Տիրոսը, Սեմիփարը, Պարսկաստանն և Հնդկաստանը չեն թողելու¹⁾:

Ի հարկէ երկու բանաստեղծների նոշանաման նպատակից չէ հետևում և նոցա նոշնաստեսակ լինելը. Բալզակ, համաձան ֆրանսիական հասարակութեան կրթութեան և իւր բանաստեղծական բարձր աւիւնին, Պոօշեանցի հետ չը պիտի համեմատել, ոտկան ահա զարձեալ մի ապացուց. Թէ ինչպէս ժամանակով և տարածութեամբ հեռաւոր մարդիկ նոյն շատիզը կարող են ընտրել միանանցից անկախ կերպիւ. Բալզակ լաւ հասկանում էր մարդկացին գործողութիւնների ներքին շարժառիթները և այն կեանքի պատկերը, որ նա կառնենում էր տալ, պինդ շաղկապահ էր այդ ներքին շարժառիթների հետ, որ, նրա կարծիքով, մեր գալաւոմ ոչ եթէ սէրն և վասիլ չութիւնն է, այլ փողը, որին երկրպագում են ամենքը: Պոօշեանցը թէն իրրե սուր նկատող և բանաստեղծ տեսնում է այդ շարժառիթները, բայց կարծեք խոչ է տալիս նրանցից. Նա իւր նպատակն աչքի առաջ անի. միշտ ձգտում է կեանքի արտաքին պատկերը տալ և ըստ կարելոցն փախչել ներքին շարժառիթներից. սական այդ փախուստը միշտ չէ լաջողութնրան. օրինակ «Հայի Խնդրում ընդհակառակն», իւր բանաստեղծական տաղանդի շնորհիւ, հակառակ իւր ցանկութեան, նկարագրուած ախպարների և հասարակութեան ներքին կեանքը թիւակոխում է ալտարին նկարագրութիւնն և առաջնակարգ տեղը բռնում:

Պոօշեանցի «Սոս և Վարդիթերն» և «Հայի Խնդիր»-ը իրեն միմնանց հետ կապւած Աշտարակի, կեանքը նկարագրող վիպասանութիւններ, միասին կ'ուսումնասիրնենք: Չենք կարող այսակեզ մի երկրորդ զուգադիպութիւն ևս Բալզակի հետ չը նկատել. Բալզակի «Մարդկասին կատակերգութիւն» վիպական երկն էլ վիպասանութիւնների կապակցուած շարաւարութիւնն է:

Ե.

«ՍՈՍ ԵՒ ՎԱՐԴԻԹԵՐ».

«Սոս և Վարդիթեր»²⁾ վիպասանութիւնն նւիրւած է Աշտարակ զիւղի մեծին և փոքրին մի սասաւորով, որի ոճն ու ողին խոկոն լիշեցնում է ընթերցողին «Վէրք Հայաստանի» զբքի տաղաչափական կտորները:

Վիպասանութեանու բագանգակութիւնն համառօտ լիշենք այսակեզ—Աշտարակ զիւղում երկու զիւղական հասարակութեան կատարելատիւլ ներ-

1) Dr. A. Stern: Geschichte der Weltlitteratur. 1887 Stuttgart. S. 673.

2) Պեղմ՝ Պոօշեանց. «Սոս և Վարդիթեր», Եւկրորդ տպագրութեւն, Թէփլիս. 1887. տպ. Վարդանեանի:

կազացնող երիտասարդներ սիրահարւած ևն միմեանց հետ տղան, որի առունն է Սօս, զիւղացոց միջին կարողութեան տէր տան զաւակ է, իսկ աղջիկը, Վարդիթերը, հարտատ և առաջնակարդ ընտանիքին. Սիրու ծագումը մեզ չէ նկարադրում բանաստեղծը, ապ նրա լառաջաղիմութիւնը: Աղջկան ծնողները սկզբում հակառակ են երկու երիտասարդների միաւորութեան, սական նրանց անդրանիկ որդի Արտաշիրը և զիւղի տիրացու վարժապիս Դարեգինը, որ Սօսի սրտակից ընկերն և ողջում-աղջերն է, չաջողում են փոխելու ծնողների կարծիքը չօգուտ Սօսի: Գարեգնի ճարտարութեամբ Հանականքում սուրբ Կարապետի տօնին, վարդավառին, Վարդիթերի մայրը բոլոր սեղանակից Աշտարակցիների առաջ խոստանում է իւր աղջիկը աալ Սօսին, մի բոլորովին տարօրինակ ձեռլ էլ աղջիկ ու տղակ միմեանց ձեռ են տալիս: Արշաւիրն և նրա մայրը կարողանում են Հեթումի, տան տիրոջ, միաքն էլ փոխել չօգուտ Սօսի և նշանդրութիւնը չետաձգւում է մինչև աշունք: Բայց երբ Սօսը իւր նպաստակին արդէն մօտեցած էր կարծում, Արշաւիրի միտքը փոխւում է. նա որ աշխատել էր ապ գործը գլուխ բերել, աչժմ պահանջում է նրա քանդումը, միւս կողմից էլ Սօսի փեսան, Տիրանը, 15 ռուբլի փող վաստակելու համար, աշխատում է համոզել Սօսին մի ուրիշի աղջկան հետ ամուսնանալու, բայց երբ չի լաջողում, թէ իսմ է անել տալիս և ինքն էլ Հեթումի տունը գնալով, խալտառակում է նրանց, թէ իւր աներոջ տղի լնոնեիցն են ընկել և ուղում են անպատճառ պսակել իրենց աղջկան հետ: Տիրանի խօսքերը կատաղեցնում են Հեթումի ընտանիքն և նորա մերժում են Սօսին: Սօսը խելադարւում է, Վարդիթերն հիւանդանում, Գարեգինը զիւթէ վալրենացած՝ Սօսին լետ է բերում զիւղը, բայց նա առնելով իւր Վարդիթերի մահւան գոչը, ինքն էլ մեռնում է. նոյցա միասին են թագում և Գարեգինը նոյցա զամբանի վերակ գրել է տալիս.

« Ահա սիրու պտուղներ,
« Մի աղան մարզու զոհեր,
« Ով ըստեղից անց կենակ,
« Յիշ Սօսն և Վարդիթ և ր »:

Վիպասանութիւնը վերջանում է մի եղերական երգով, որ Գարեգինը երգում է իւր սրտակից սիրելիների վերաց:

Վիպասանութեան առակը (fabula), ինչպէս տեսնում է, շատ սժիրական է և փաքք. նրա նեղ շրջանակը չէ համապատասխանում վիպասանութեան ընդարձակ ծաւալին, իսկ սիրու զարգացման նկարագրին նւիրած բաժինը անհամեմատ մեծ է, քան եթէ խանդարող հանգուցներին նըւիրած բաժինը:

Վիպասանի նպաստակը լինելով «երկուց կուսից միջնորդութեամբ պատամել Աշտարակ զիւղի սովորութիւնք», ուշք չէ զարձրել գործողութիւնների և անձնաւորութիւնների բնաւորութեանց և ձգտումների զարգացման

վերակ. վիպասանութեան հերոսը, Սօսը մի կողմից ներկաւանում է մեզ իբրև կատարելաստիպ զիւղացի աշխատաւոր և քաջ երխասարդի, միւս կողմից բարձր հոգեկան ձգտումն ունեցող և զգացուն զիւղացի մարդու, որով բացատրում է և նրա սերտ բարեկամութիւնը Գարեգնի հետ. իսկ Գարեգնի անձւեր սէրը հետեանք է երեխ Սօսի այդ իսկ բարձր բարուական ձգտման, որ արտաչափուում է և նրա բանատեղծական աւիճակ:

Սօսը ներկաւացրած է իբրև զաղափարական տիպար (Idealtypus) զիւղացի երխասարդի, որի այդ աստիճան առաւելութիւնները մեզ չեւ բացարած և կամ նոյց զարգացումն իրենց պատճառներով չեւ զրած մեր առաջ, այլ ուղղակի տամած է, որ նա քաջ և կորովի էր, խելօք էր, համեստ էր, բարուական էր, եկեղեցաւեր էր, բանատեղծ էր և այն և այն, ինչպէս նաև Գարեգինը զիւղական համեստ, բաց կշոր ունեցող ուսուցչի տիպար է և անձնեւեր ընկեր. երրորդ զաղափարական (իդէալական) անձնաւորութիւնը պիտի լինի Վարդիթերը, որի նկարագրութիւնը սակայն համապատասխան կարելի է զանել զիւղական աղջկաց տիպարի, եթէ զաղափարական համարենք նրա սէրը դէպի հասարակական զիրքով իշրանից ստոր Սօսը:

Պոօշեանցի այս վիպասանութեան միւս բոլոր անձնաւորութիւնները առած են ուղղակի կեանքից, նոյց զժագրութեան մէջ չը կաէ ոչ մի չողկած և ուղղած զիծ, նոքա ամենն ևս նկարւած են ուղղակի բնութիւնից. աղսպէս Հեթումը, հարուստ, աշխատասէր և իւր զիրքն հասկացող զիւղական ծերունին, նորա աշխատասէր և լամառ կինը, Արտաշիր զիւղական հարստի որդին, Պարէտ Սօսի մեծ և հօր տեղ բանող եղբայրը, շահատէր և անխիղճ Տիրանը, Գարեգնի Անուշ քոյրը և այն. Եթէ առաջին երեք անձնաւորութիւնները, Սօսը, Վարդիթերն և Գարեգինը սպացուցանում են Պոօշեանցի ի դէ ա լ ա կ ա ն (զաղափարական) ուղղութիւնը, որ հետեանք է Արտիւանի հետեղութեան, միւս երկրորդական անձանց նկարագիրը նրա իրական (ոէալական) ուղղութիւնը, որի առաջին ներկաւացուցիչներից մէկն ինքն է մեր զրականութեան մէջ:

Գառնանք այժմ վիպասանութեան բուն նպատակին, այսինքն նրա մէջ նկարագրւած սովորութիւններին և ժողովրդական կեանքի պատկերներին, որի միացն արտաչափութեան իբրև մի ձեւ է ծառացում վիպական կապն և բարուական զաղափարը, որ է սիրու բարձրութիւնը կեանքի ամենք շահէ իրից. Վիպասանութիւնը սկսում է՝ մարտի 15-ից և տեսում է մինչեւ միւս տարւան բուն բարիկենդանը. այս շրջանի զիւղական կեանքի բոլոր երեսութիւնները նկարագրւած են այսուղ գրեթէ առանց բացառութեան և առանց ուշ գարձնելու, թէ արդեօք կապ ունի՞ն վէպի առակի հետ թէ ոչ և եթէ չունին էլ՝ սաւութուում է մի շատ թով կապ, որպէս զի առիթ լինի նկարագրելու զիւղական կեանքի մի որ և է նշանաւոր կողմը. Ծառզարդարի շաբաթ երեկովից է սկսում վէպը և նկա-

բազմում է ծառզարդարի կիւրակէն, աւագ երկոշաբթին, երեքշաբթին (խնոցահարի և վիմար խմաստունի օրը), հինգշաբթին (տանալւագի օրը), ուրբաթ գիշերամ եկեղեցական սուզը, շաբաթ օրը (ձու նաշխելու օրը) և երեկուեան թաթախումն. Զատիկի օրւանից սկսում է մի չարք գիւղական հասարակական կեանքի բնաւորական սովորութիւնների նկարագրութիւնը, ողջում-ազուր դառնալու, ջրիդի, եալլու, գերւզմանօրհնէքի, կարմիր կիւրակէի գրասանքը:

Կարմիր կիւրակէի երկոշաբթի օրւանից սկսած բանաստեղծը տալիս է մենակ գիւղացու ամարավճն պարագմանց, գրուանքների և առհասարակ կեանքի մանրամասն նկարագիրը, ուխտագնացութիւնները, համբարձման վիճականանութիւնը, մի թաղման նկարագիր, որի կապը շատ թուլ է վիսպասանութեան հետ և կամ, աւելի լաւ ասել, որ ամեննեին կապ չունի (տես եր. 121), վարդակառը և սուրբ կարապետի ուխտագնացութիւնը, ագիների մշակութիւնը և թուրքերի գողութիւնը (որ դարձեալ մի թով կապւած միջնավկապ է), մաթ եփելը, արագ քաշելը, չուջուրի եփելլը: Գիւղական աշնանսղին կեանքից նկարագրած են նշանդրէքն և հարսանիքը շատ կենդանի կերպով, միան թէ սուզա ևս դարձեալ անկապ միջնավկապիր են: Զմերագին կեանքից համառօտ նկարագիր կաէ ջրօրհնեաց և տուրբ Սարպաի տօնի, որով գրիթէ վերջանում է սովորութիւնների նկարագրութիւնը:

Այս սովորութիւնների և կեանքի երեղինների նկարագրութեան մէջ երեսում է Պոօշեանցի տաղանդը, նրա վիտելու նշանաւոր կարողութիւնն և նկարագրելու չնորհքը: Շիշ տիսել է Հակասանի գիւղական կեանքը, նա պէտք է անշուշտ վկայէ Պոօշեանցի նկարագրութիւնների իրական լինելը: Աչքի ընկնող թերութիւններից կարելի է համարել նրա կեղծ զասական ոճը տեղ տեղ, որով սկսում է իւր վիպասանութիւնների գլուխներն և զործով անձանց զասական (classisch) և հին տնտեններ տալը, օրինակ՝ Արտաշիր, Ձեթում, Պարէտ, Տիրան և ալլն:

Աչքաթող անել կարելի չէ նաև Պոօշեանցի վիպասանութիւնների դիասւորական (tendenziös) ուղղութիւնը, ժամանակակից խնդիրները վիպասանին ևս առիթ են աւել լարմար տեղերում խօսելու հասարակական սպակասութիւնների մասին. «Սօս և Վալոդիթերի» մէջ արդ անքան աչքի չի ընկնում, ինչքան «Հացի Խնդրի», բայց մանաւանդ «Հանէն»-ի մէջ: «Սօս և Վարդիթերի» մէջ երկու խնդիրներ են զրաւում վիպասանի ուշաղրութիւնը, մէկը՝ քահանաների և առհասարակ եկեղեցականների: տղիառութիւնը, երկրարդ՝ կրթութեան պակասութիւնն ու կանանց հարեւմական կեանքը: Առաջին խնդրի մասին նա իւր կարծիքը լայնում է ժա. դիմում, երես 93—94. իսկ եկեղեցականների սպասութիւնը նկարագրում է տէրուէրի քարոզով զլ. դ. երես 33. Պոօշեանցը քահանաներից կենդանի խօսք և բարի օրինակ է պահանջում: Ուսման և կրթութեան մասին նա խօսում է հարեանցի կերպիւ զլ. դլ. եր. 143, * որ նա պահանջում է աշխարհական-

ներից գրել կարդալ սովորել և այդ չը թողնել միայն հոգեորականներին։ Կանանց հարեմական և ծածկւած զրութիւնից գուրս դարս ձգտումը ստիպում է երեխ բանաստեղծին այն Հանավանքի բակի տեսարանը ստեղծելու, ուր հաստարակութեան առաջ աղջիկը ճեռ է տալիս իւր սիրածին, որի հարկէ բնական չէ. այս ոկրտոնքն է զարձեալ Գարեգինին խօսեցնողը զէ. ի. եր. 184, ուր նա երեսը բաց պատակ է պահանջում։ Պիտի նկատենք սակայն, որ այս վիպասանութեան մէջ նկատելի չէ այն հրապարակախոսի լիզուն և ձեզ, որ այսպիսի խնդիրներում ունի վիպասանը իւր միւս երկերի մէջ. իւր կոչման ուղիղ հասկացողութեամբ նա արդպիսի նկատողութիւնները ծանօթութիւնների մէջ է զնում. աշակեղ, օրինակ զէ. եր. 167։

2.

«Հ Ա Յ Ի Խ Ն Դ Ի Բ»

Յաղօ. «Միշտ յառաջ, մեսս բարեւաւ,
Լցըո՛ւ քսակէ փողով։
Այսպէս խեղիսառակիս լինձ քսակ եմ շինում։
Կը սրբապղծէի խորամնիութիւնս անշուշտ,
Թէ ժամանակս վատնէի այդ անխելքի համար,
Առանց զւարձանալու և օգտւելու նորանով։

(Ոթէլլօ. Հանդէս ա. եբրորդ տեսարան):

«Սօս և վարդիթերուին լաջորակում է, թէև ոչ ժամանակադրական կարդով, «Հացի Խնդիրը», որին հեղինակն իւր առանձին հրատարակութեան լատաջարանում չարունակութիւն է համարում «Սօս և վարդիթերին»։ Այս երկու վիպասանութիւնների մէջ նա կամնում է «Ժամանակի անհետացն ող ժանիքներից» ականել «Հայսասանի զլիսաւոր նահանգի տեղական կեանքի պատկերը իւր բարբարի, առածների, աւանդութիւնների և ծէսերի հետ, որ գուղութիւն անեին մեր ներկայ կեանքի առաջին շրջանում։ Տեսնենք այժմ թէ ի՞նչպէս է կատարում վիպասանը իւր խստառամն։

Աշտարակի հարուստ զիւղացի Խէչանենց Խէչանը մի բարիկենդան օր զիւղացի իշխանաւորների հետ խնճուքի նստած ժամանակ, զալիս են զիւղի փոքրիկ աղանձները իրենց վարժապետից բարիկենդանի հարկը պահանջելու։ Այս աշակերաներից մէկը, Սմբատ անունով, Խէչանի խնդրով երգում է և աղնալիս ողեսրում է ծերունուն, որ սա բոլոր բազմականների առջև Սմբատի հօր հետ միասին իւր աղջիկ Հեղնարին բաշխի և արթման է անում (նշանում է) Սմբատի հետ։

Խէչանի եղբայրը մեռած լինելով՝ նրան էր մնացել և իւր եղբօր ժամանդութիւնը. խոկ ինքը տղաց ժառանգ չուներ, նրա մեծ հարստութիւնների ժառանգ էր համարում իւր միակ աղջիկը, Հեղնարը, որ թէև ա-

ուանձին զեղիցկութիւն չունէր, բայց, իւր հարստութեան որատճառով, Աշտարակին երխասասարդների փափագած հարսնացուն էր, ուստի և Սմբատին շասնըն էլն նախանձում և աշխատում իսկել նրա ձեռից աղդ հարուստ առարջ, իսկ Սմբատն ինքը սիրահարւած էր որք Հերիքնազի վերակ, որ Խէչսնի քրոջ, Տարիամի աղջիկն էր: Չը նացելով Հերիքնազի և Սմբատի զւապի միամիանց ատածած փոփագարձ սիրուն՝ նրանք երկուուն էլ սրբապըդութիւն էլն համարում հակասակել ճախատուպրին, աւտինքն՝ բաշիք և արթմին: իսկ Հերիքնազը վճռում է միանգաման զոհել իւր սէրն, զոհել իրեն անձը, միան թէ Հեղնարին բազգաւորացնէ: Արդէն բոլոր խոչընդոտները բարձւում են, Հերիքնազը աշխատել է համողել Հեղնարին պատկւել Սմբատի հետ: որու հակառակորդ հարուստ, պարծենկու և երկշոտ Արշակը, որի հետ Հեղնարը գիշերային տեսակցութիւններով դը ի ջակի միջոցով սիրոհարւած էր, երկիւղից խելագարւած էր և հարսանիքն սկսւած եկեղեցի պիտի զնոտին, երբ զործակալի և մովրովի հրամանը եասավուշ Տարգարի ձեռովի պսակը խափանում է: Ահա ալսաեղից է սկսում վիխաստնութիւնը:

Պոտիի խանգարման պատճառ եղող անձնաւորութիւնն է ուս բանաստեղծութեան վլխաւոր ձերուը, առացի խնգրի աւսինքն փող և հարստութիւնն ձեռք բերելու համար, ամեն չարագործութեան ընդունակ և մանկութիւնից գովայթեան, աւազակութեան մէջ սնած հալրենապուրկ ոմն միկիտան Սաքօն: Սաքօն մովրովի պալատի մօտ մի զինետուն ունէր և միջնորդ էր զաւառի կառավարչի և ժողովրդեան մէջ, որոնց երկուսին էլ նախարում էր օղուա քաղելով ժողովրդի օրմէնքին տեղեակ չը մինելուց և մովրովի անկաշա ապահութիւնից: Սաքօն իւր ժամանակի զաւառական հասարակութեան կենդրոնացնող ուժն էր, նա հասարակ ժողովրդի, հոգեսրականների, բարձր և ստորին պաշտօնեանների, աւազակների և մարդասպանների բարձրեկամն էր և նոցա չարաքերութիւնների զեկավարովը, կառավարչական անօրինութիւնների ամենալաւ զործադրութեան միջոցը զմնողը, գլուզացների խնդիրների և վէճերի վճռուղը և աւազակներին աւարի տեղը ցոյց աւովճ և ազատուղը: Հարկան ալս սոնինը կատարում էր նա լոգուս իւր զրաբանի, ամենքը զիտէին նրա անչափ փողասիրութիւնը, բայց զարձեալ ասիստ.ած էին նրան զիսիլու իրենց գործին զաջող ելք տալու համար: Սաքօն ձանաչում էր երեանի գաւառի բոլոր զիւղերն և զիւղացիներին մի առ մի, զիաէր նրանց փոխաղարձ չարաքերութիւնները, կարողութեան չափն: նա ծանօթ էր մովրովի չարաքերութիւններին իր միծաւորների հետ, զիաէր հողերականների թուլ կողմերն և բոլորից էլ շահուամ էր չնչին մասն հանելով և իւր գործիք զարձող անձանց: Երկար ժամանակ նու իւր աչքը անկել էր Խէչաննենց Խէչանի հարստութեան վերակ և կամունում էր նրան ժաւանդել, որի զիւրին ձանապարհը Հեղնարին էնութիւն սոնելն էր: բայց զգուշ ոիխտի վարել, որավճեան Խէչանն իրեւ

բնական խելօք և ազնիւ մարդ, առուամէլը այդ չ բէ չ մի կ ի առն ին։ Նորմէ
մոլորդն էլ զիտէր Խէչանի հարսաւութիւնն և անհամբեր ոպասում էր քա-
մելու ազգ հիւթալից պառազն։ իւր հաւատը դէպի Սաքօի ձարագիկութիւնն
անսահման էր, ուստի և նրան էր լանձնել ազգ գործն առանց զիսանալու,
որ սա վարդաց աչց որսն իրեն համար էր պատրաստել։ Սաքօն տարածում
է իւր որպատթի ցանցերն։ Եասապուլ Մարդարի պարզամտութիւնից օգ-
տարելով նրան է խոստանում Հեղնարին և Խէչանի հարսաւութիւնը, որ կո-
րողանակ արգելել պատկի։ Մոլորդն արդին շացած իւր նախատեկով,
պաշտօնիցը զուրո հրաման է տալիս արգելել պատկին։ իսկ զործակալ հոգրը,
օգուտ քաղելով իւր զիրքից, եկեղեցական արգելք է դնում պատ-
կին։ Պատկն արգելում է, բայց Սաքօն, ըստ կարողանալով տիրանալ իւր որ-
սին, փորձում է բարեկամանալ Խէչանի հետ, խնամախօսներ և բարիխօսներ
է մէջ ձգում, տէրութեան շնորհակալութեան մէջալ է գնում իւր փողով
Խէչանի հսմար. բայց աչտ էլ չէ բաջողում։ Անիւններ աւաղակն այժմ՝ զի-
մում է աւազակների օգնութեան և կամնանում է Հեղնարին վախցնել, բայց
Հերիքնազր սպանում է աւազակներից մէկին և ակտ դաւն էլ անստազ ելք
է ունենում։ Սաքօն անհաջողակիւնից վհասաղ անձն չէ. նա անսկազու-
թիւնը իւր համար ընդհակառակն իրբե միջոց է ծառաւիշնում. Խէչանը,
իրբե մարդասպան, բանան է զրուում մոլորդի հրամանով։ Խէչանը ողմմ Սա-
քօի ձեռին էր, միկիանը իւր բոլոր խորամանկութեան հնարներն զործ
զրաւ զրաւելու պարզամիտ Մմբատի սիրան և սկսու ծծել նրանց հա-
րըսութիւնը։ Նա բարերար հանդիսացաւ Խէչանին և կարողացաւ ան-
հետացնել նրա կասկածը իւր չարամտութեան վերա։ Ահա երբ Սաքօն
ինքն իւր նուաստակին հսասած կարող էր համարել, եկաւ արգարաթեան
վրէժինզրութիւնը, մոլորդի զրծերին քննիչ եկաւ կաստիւրութեան կող-
մից և ժողովուրդը կեղեքոզ մոլորդն ընկաւ զատաստանի տակ. իսկ նրա
աջ ձեռն, չարամտեանց զործազիրն և խորհրդատուն ալատւեց, ծախելով
իւր զինեատենն և զնաց Երեան՝ Խէչանի, որին անհունիցի բանան էր ուղարկել
տակ, հաւաստարմութիւնից օգտակալ. և նրա հարստութեան տիրանալու։
Սաքօն նկատել էր Մմբատի կասկածն իւր հսուատարմութեան մասին, ուս-
տի մի փորձ արաւ սպանել տալու նրան, սական ազգ ևս անհաջող անցաւ։
«Սատանի վետի ոտն» Սաքօն կարողացաւ մինչև քննչի աչքից ծածկել Խէ-
չանին և արգելել Մմբատին իւր ձախն հասցնելու քննիչին։ Այս դառն
վործութիւնների ժամանակ, Հեղնարն անկողնին էր ծառաւիս և հիւծւած
միան հօր ալատութեանն էր սպասում, որ նրան աեսնի և շռնչը տաց։
Եկաւ վերջապէս աղաստութեան ժամը, վրէժինզրութեան ծարաւը
Սաքօի զործիքին, Մարդարին, գրգեց օգնութեան համնելու. Մմբատին և
նրանք քննիչի հետ երբ մտան բանան ալատելու. Խէչանին, Սաքօն զեռ-
և շարունակում էր իւր մեքենապութիւնները. նա Խէչանին ստորագրել էր
կտմինում տակ իւր ազգին պարզելու մուրհակը, որ զուսը բացւեց և հըն-

չեց նրա աղոտութեան աւետիսն. իսկ չարապործը փախաւ և կրկին խռոսոփեց արգարարագոտութիւնից:

Խէջմբի զարձաւ իւր տանը հալւած և մաշւած զնդանի կեաճքավ, տեսաւ իւր մահամերձ Հեղնարին, որ իւր նշանածը Հերիքնազին էր պարզել և մտոնաւմ էր հանգիստ հաղալ իրբե մի հայ կին, որ իւր մեղքերի պատիմը ատառում է հանդարս հողով. Սմբատն ամուսնանում է Հերիքնազի հետ, իսուու թաղում է Հեղնարին, Մարիսամին և Խէջանին:

Վարչմինդրութիւնը մզում է Մարզպարին՝ Սաքօին դանելու և պատճեւու, բայց Սաքօին խորամանկրութիւնն և խելքը զարձեալ չաղթանակը տանում է և ետապուլը զո՞ն է լինում Սաքօին չարսութեան:

Այս է ահա 48 զինից բագկացած 356 տիժոծալ երես ունեցող վիպատանութեան համառօտ բովնդպակութիւնը, որ հեղինակն, իւր ցանկութեան համաձան, նկարադրամ է զիւղական կեանքի հոտեւալ ստիլութիւններն և կողմերն, —բարիկենդանի տօն ա խ մը բա թիւնը, ձի արշաւը, բերան փակեք, ձւո բթի, դրի ջակ, ին ա մա իւս ս, դատաստան հայն, Այս վիպատանութեան մէջ գործակից է զրեթե բոլոր զիւղական և զաւառական հասուրակառութիւնը, —մոլլալի, զրագիրներն, եասավուները, վարդապեաները, քահանաները, զիւղապեաները, հարուստ և աղքատ զիւղացիք, միկիստոնր, աւազակներն և վերջապէս քննիչը:

Օգոստ քաղելով վիպատանութեան բովանդակութեան ընդարձակութիւնից, բանասակադը աեղ է աւել թէ ընդարձակ և թէ համառօտ տեղագրական նկարագրութիւններին (ուես զլ. Գ.): Առաջներն և ժողովրդական ասացւածները նունպէս խնամքով ժողովւած և ըստ չարմարաւթեան դրի են զրւած (զլ. բ. ժէ. խ. լ. խ. խաղն), որ արժէր հեղինակի բոլոր գործերից ժողովել և միտսին դասաւորել:

Այս է ահա մօսաւորապէս այն հարուստ նիւթն, որ մեզ տալիս է բանաստեղծը և որի համար նա ինքն ըստ ինքեան զբամ է իւր բանաստեղծութիւնը: Սական աշչափ չէ միան նրա տւածը. աւելի մեծ արժէք ունեցող մի բան ևս աւել է նա մեզ իւր տաղանդի չնորհիւ, որ ահա այս վիպատանութեան մէջ չաղթել է հեղինակի գիտաւորութեանը: Պոօչեանցը կամեցել է մեղ առածների, սովորութիւնների և ծէսերի ժողովածու տալ ու աւել է մի համալի նկարագիր քառանական թւականի հայ ժողովրդի բարիքի ու վարքի և փրաւի մի բան տոտե զծական արտադրութիւն և ոչ վիճակուրական կամ ժողովրդական:

«Հացի խնդրի» հերոոը, միկիստան Սաքօն, մեծ վարդակառութեամբ է նկարագրած. աղդ մի լուսանկարչական պատկեր է և ոչ թէ վրձինի կամ զրչին նա հապենազուրկ մի բաղդախնդիր է, որ իւր մանկութիւնը անցրել է զինևաճառի խանութամ ու ապականւած հասարակութեան մէջ, ականատես

է եզել մարդկալին ամենասոգեղ գործերին և տեսել է մարդու անարժան կողմերն. ընական խութի տէր լինելով, ճանաչել է զարաւ Աստածուն՝ առանց Եազօի խրառների միշտ լսու համացել է՝ պահու լցու. գրաբանդ, փող, սիրելի Խողը կողու (0թէլլօ Ա.3). Ահա միկիանի մանուկ աշակերտը զնումէ իւր բունը ամրտղջ մի գաւառի սրտում և կեզեքում է ամենին, չիմարացնում է զօրաւորներին ու ակարներին. Նրա համար ոչ մի սուրբ և անձեւանմիտիլի բան չը կակ. — Ա աքօն իր միսը կուտի և մտքի դրածին կը հաս ոն իո... (Երև 270). Նա կողաստել կը տառ, կը կողապահ, կը չարչարի, կը մեղագրի, զառապարտել կը տառ անմեղին, անմեղ հայ աղջկան փախցնել կը տառ թուրք աւաղակի ձեռով, մարդ սպանել կը տառ, միան թէ վաղ ձեռք բերի. իսկ այս ամենն անալիսի ոլոր մոլոր ձանալարհներով կը կատարի, որ վերջը կարող է խուսափել արգարութեան ձեռից եւ, վրէժինդրութեան կասաղութիւնից էլ. Ահա մը կասաղեալ Եազօ իւր չարութեամբ, որ սակախ իւր ժամանակում և երկրում ամենին անձանօթ ոնն չէ, նրա անունը լսողն անմիջապէս ճանաչում է աղդ հրէշին: Ամբողջ պիստասանութեան հերոսը Սաքօն է, որի խօսքերն և անունն աւելէ զրովին, թէի աւելի լարմար կը լիներ վլագասանութիւնը հենց Սաքօ անուանել, ինչ պէս աղդ արել է այս զործի զերմաներինի թարդմանիչը: Նթէ Սաքօն կատարեալ տիպար է ժամանակի ծնունդ չարազործների մի անսակին, Խէշանենց Խէշանը միւս կողմից տիպար է լարեսիբար հին դիւզացու, որի փառասիրութիւնը միան հիւրասիրութիւնն է և լարեզործութիւնը, իսկ ցանկութիւնը՝ հեռու մեալ ուրիշների զործերից հանգիստ խղճմանք ունենալու համար: Խէշանը մի աղնիս և առողջ զառաղութեան տէր մարդ է, նրան աշխարհապէն փառքերն չեն հրասպուրտում, նա չի ձգուում մէղալ ունենալու, չի ուզուում գիւղազետ կամ զառաւոր զառնալ, նա ճանաչում է աւաղակներին բոլորին էլ, բայց ագ և ցանկութիւնն էլ չունի նրանց հետ կռւելու: Սաքօի խորսամնեկութիւնը լաղթում է վերջապէս արգարաւունքը Խէշանին և նա հաւասում է սասանալ Սաքօին: Գմբաղդութեան մէջ էլ Խէշանը մնած է, զիտէ կրել ամենալն առաջանք և քրիստոնէական համբերութիւն ունի, միան ցաւումէ իր պատճառով հիւծւողների վերալ: Խէշանը բարեսիրու, անխարդախ և արդարաւունք գիւղացու ափազմն է:

Միւս զործուղ անձնաւորութիւններից աչքի ընկողներն են Սմբատոն, Հերիքնազն ու Հեղնարը: Սմբատը ներկաւացրած է իրբե իւղ է ալ զիւղացի երիտասարդի, որ պարտաճանաչ է և զգացմունք ունի, չի խուսափում վըտանգից և արխասիրտ է: Պարտաճանաչութեան զգացումը լաղթում է նրա սիրուն, ինչպէս և Հերիքնազի սիրուն, որ նոխնազն իղեալ է զիւղացի օրիսրգի, զեղեցիկ է, բարեսիրու և անձնազոն, պարտաճանանչ, սորա երկուսն ևս աւելի զարափարաւուկան են, քան եթէ իրական անձնաւորութիւնները նրական հրապարին հրապուղներից զրմինէ զարիկ, բայց հաղարս և ծածկամիտու, որի

բնաւորութեան վատկանիշն է փառասիրութիւնը, սա չ սիրում աշխատասէր, զիդեցիկ և համեստ Սմբատին, այլ վնասում է փակուն ամուսին, որին մասավ ցաց տան գեղամիջին: Հեղնարի մահան անկործում արած իսուառումքը թէն քիչ անբնական, բայց սրաւաշարժ է, մանաւանդ իւր հօր հետ ունեցած խօսակցութիւնը:

Հարիանցի նկարագրուած և երկրորդական անձնաւորութեանց մէջ նշանաւոր են եասաւուլ Մարգարը, մովլուկը, քննիչը և Արշակը, միասնթէ քննիչը չատ իղէալական է նկարագրուած: Հրաշալի հն պատահմամբ և հարևանցին կարագիրները գիւղացոց, գիւղագլուխների, թուրք աւաղակների, եկեղեցականների պատկերներն, որոնք, քանի մի խօսք արաւաննելով և կամ գործ կառարելով, բոլորութին ծանօթ են երևաւմ մնուի:

«Հացի Խնդրի» վիպական զարսիարն է չարութեան չալթանակը, թէն չարութիւնը մասամբ լազմաւում է քննչի երիալով և մովլուկի և Սաքօի չարութիւններին վերջ տալով՝ սուկան լարուական գեղեցկի պահանջը չէ չաղեցնում վիպատանը, որովհետեւ Սաքօն ազատւում է արդարագաստութեան ձեռից, այլ ընդհակառակն նոր չարագործութիւնների ասպարէզ է բացւում Սաքօի առաջ՝ մովլու զառնալով: Սորանով «Հացի Խնդրի» անկատար է մնում և վիպատկան ամբողջութիւն չէ կազմում, որ հարկաւ մի մեծ թերութիւն է, սական այդ արդարանում է թերեւս Պուօշեանցի իրական ուղղութեամբ, որովհետեւ աշըրի առաջ ունենալով իրական մի ախպար, որ կեանքի մէջ գոյնը փոփոխելով զանազան կերպարանքով մեծամեծ վնասներ է տալիս հասարակութեան, չէ կամեցել վերջ տալ տպառել Սաքօի քաջագործութիւններին, անպէս որ գեռ պէտք է սպասենք այս վեպի վախճանին: Պուօշեանցի վիպական ուղղութեան ձգտումն, որ է արտաքին կեանքի պատկերը տալ, վնասել է նրա բուն բանաստեղծական արտադրութեան:

Դալով վիպասանութեան զրութեան ոճին, թէ և այդ պէտք էր առ անձինն բոլոր վիպասանութիւնների մասին միանգամից քննել, բայց որավիճակի «Հացի Խնդրի»-ը ըստ իս Պուօշեանցի ցարդ հրատարակւած գլուխ—զործոցն (Chef-d'oeuvre) է, ուստի անտեղի չեմ համարում անտեղի իսկ նկատելու, որ ազգ ոճը չառ ընդարձակ է և անմշակ: Վիպասանութեանս մէջ կան գլուխներ և երեսներ, որոնք առանց որ և վնասի կարող են զուրած ձգւել և ոչ միան չեն խանդարիլ վիպասանութեանը, այլ կը գեղեցկացնեն: Ընդարձակ և առանց վիպասանութեան սերտ կոտը աչքի առաջ ունենալով գրելու պատճառը՝ հարկաւ: Պուօշեանցի այն գիտարութիւնից է բղխում, որ նա ուղում է ամենան ինչ որ գիտէ և լուրէ, առիթ ունենալ մի որ և է ահօղ պատմել, ազդպիսով խանդարւում է վիպական ընթացքն և կարդացողի ուշագրութիւնը ցրւում: Խնչ կապ ունի զրագրի հերոսութիւնը «Հացի Խնդրի» մէջ, զործակալի ընդարձակ նկարագիրն, նահաղվեանց-կամսորական կոչւած ամբողջ գլուխը, զօնադն Աստածանն է և ապն (Պ. Ի.

իւր. լր. խղ.): Ակտապիսի միջանկեալ և վկասասանութեան հետ կապ չունեցող հաստատներն շատ են վնասում Պոօշեանցի վէպերին և անշռւշտ գոմիլի է այս բանաստեղծութեան դերմաներէն թարգմանչի ընթացքը, որ այսպիսիսի կտորները բաց է թողել թարգմանութեան ժամանակ.

Ակտապիսի աւելորդ միջանկէպերի պատճառը թերես հեղինակի այն ցանկութիւնն է, որ կամենում է ծաղրական և մայշնել կեանքի նկարագրութեան մէջ, ինչպէս օրինակ՝ Յաքուլի, Ռամազանի և Շահազադի կամարականի նկարագրութիւնները. սակայն ծաղրական և նկարագրել չէ լաջողում Պոօշեանցին իւր բոլոր վէպերի մէջ. և այդ նրա թերութիւններից մէկն է:

Այս պակասութեան հետ միասին նկատելի է և մի ակտակ լրագրական վարդապետով լեզու, որ երբեմն զառնում է ընթերցողին և սկսում է կամ խրատել և կամ մի բան ցանկանալ: Այս, հարկաւ, վիպատաճի սըխալ ճաշակի հետևանք է և լաւ հեղինակութիւնների անծանօթութիւնը, որով ճաշակի վարդացումն պակասում է, ուստի և նկարագրութիւնների մէջ շատ անգամ անշաջող և տնարեսու կտորներ կան:

Այս պակասութիւնների պատճառն անշռւշտ վիպատանութեան անմշակութիւնն է, Պոօշեանցը սովորութիւն չունի իւր գրածն մի անգամ ամբողջացնել և լեռով մշտիկ հետղիւտէ թէ ըստ բոչանդակութեան և թէ ըստ լեզուին, ուստի և նրա գործերն միշտ անկատարութեան ասպաւորութիւնն անում: Այս հետ միասին ցանկալի էր, որ լարդելի վիպատաճը աշխատէր նախ խռոսափել լրագրական ոներից և լեզուից և, երկրորդ, զարգացնէր իւր բանաստեղծական ճաշակին ընտիր եւրոպական վիպատանութիւններ կարգալով:

ԱՆՁԱՏՄԱՆ ԺԱՄ

ԱՐԾԻԻԵԱՆԻ

Տնւր ինձ քո ձեռքը, ով Կոյս նազելի,
Թո՛ղ վերջին անգամ սեղմեմ ես նրան
Իմ մատաղ կուրծքին, ուր անջնջելի
Դրոշմւած է պատկերդ չքնաղ, կուսական:

Թո՛ղ վերջին անգամ քո հետ միտսին
Ճաշակեմ սիրոյ անհուն քաղցրութիւն,
Եւ ջերմ արցունքով քեզ, ընկե՛ր անգին,
Վկայեմ սրտիս լառ մտելմութիւն:

Եւ սիրանւէր համբոլըն անուշիկ
Թո՛ղ վերջին անգամ, անջատման ժամում,
Սրբազան ուխտի գըրոշմէ կնիք
Մեր սիրաբորբոք մատաղ սրտերում:

Մօսկուա.

ԳԻՒՂԱԿԱՆ ՎԱՐԿԸ

ՈՌԻՍԻԱՅՈՒՄ ԵՒ ԱՆԴՐԿՈՎԿԱՅՈՒՄ:

(Յօգւած առաջին)

ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՆ ԵԱՆԻ

Առաջուց յայտնենք, որ մեր այս յօդաածի նպատակն է Ռուսիայի գիւղական վարկի զարգացման պատմութեան մի ընդհանուր տեսութիւնը տալ. իսկ ապա մենք կը դիմենք գիւղական վարկի կարեւորութեան խնդրին մեր երկրում, աչքի առաջ ունենալով մեր գիւղացիների նորագոյն տնտեսական կեանքի պահանջները:

Գիւղական վարկի խնդիրը թէ՛ ուսւաց և թէ եւրոպական մասնագիտական գրականութեան մէջ արգէն լուծւել է և գործնականապէս իրագործւել է մինչ այն աստիճան, որ թէ՛ արևմտեան Եւրոպացում և թէ Ռուսիայում գիւղական վարկի հիմնարկութիւնների կարեւորութեան մասին այլ ևս չեն վիճում: Գիւղացիները լիշեալ երկիրներում, իրանց յայնի պիտոցքներին բաւարարութիւն տալու համար, ունին հաստատութիւններ, որոնց նոքա դիմում են հարկաւոր դէպքերում՝ վարկ (կրեմի) ստանալու համար: Բայց, չը նայած որ խնդրի ացդ կողմը վճռած կարելի է համարել, այնու ամենայնիւ այնուեղ ևս մամնվը և դիսութիւնը իրանց կողմից տակաւին խիստ զբաղւած են այդ վարկի խնդրով. սակայն միայն զլաւորապէս այն տեսակէտից թէ՛ ի՞նչպիսի ձեւեր պիտի տալ գիւղական վարկին, որ նոքա համապատասխանէին երկրի ժամանակակից գիւղատնտեսական և առհասարակ տնտեսական նոր պայմաններին: Եւ իրաւ, այժմ այդ պայմանները այն չեն, ինչ առաջ են, և գիւղական պահանջները նոյնպէս ընդարձակւել են, որպէս և հասարակական շատ ուրիշ պի-

առցքներ։ Ահա այդ ընդարձակւած պահանջները, որոնք հասարակական նորագոյն պայմանների ծնունդ են, զբգել են զիւղացիներին դէպի աւելի մեծ արդիւնաբերութիւն։ Հանգամանքները այնպէս են փոխւել, որ հողատէրը կամ հողագործը, պարտքի մէջ չը խրւելու համար, սովորած են միջոցների զիմել, որ միևնուն հողից աւելի արդիւնք ստանան, քան առաջ ստանում էին։ Խակ դրա համար սովորած են նոքա հողի մշակութեան ձևը փոխել մացնելով՝ նոր, աւելի պատշաճաւոր, աւելի արդիւնք խոստացող մշակութեան ձևեր կամ մշակութեան սիստեմը (անտենզիվայ բջլեցիա, intensive Wirtschaft)։ Բայց խիստ մշակութիւնը կամ արդիւնաբերութիւնը պահանջում է և աւելի մեծ փող, որ միշտ չի ճարւում նոցա մօտ, ում նա հարկաւոր է։ և ահա թէ ինչո՞ւ զիւղական վարկը դառել է մի անհրաժեշտութիւն և ահա թէ ինչո՞ւ զիւղական վարկը արդէն իւր կազմակերպութիւնը ստացած է, արեմուեան նորոգացում և նորոգում։ Յիշեալ երկիրներում այժմս, ինչպէս ասացինք, զբաղւած են զիւղական վարկի ձեւերի փոփոխան խնդրով ժամանակակից պահանջների համեմատ, մինչդեռ մեզանում զիւղական վարկի խնդիրը նոր է արթնացել և սորա անհրաժեշտութեան զիւղակցութիւնը զեռ չէ թափանցել զիւղական շրջանները, մասամբ շնորհիւ այն հանգամանքի, որ երկրիս մասնուլը քիչ է իրան նւիրել անտեսական-ժողովրդական հանգամանքների ուսումնասիրութեան։

Բայց քանի որ մեզանում կազմակերպւած զիւղական վարկը հաստատութիւններ չը կան և քանի որ այդ հաստատութիւնները մեզ մօտ սիստի ազգւին ռուաց օրէնսդրութեալը, հարկ կայ ուրեմն, զեթ ընդհանուր գծերով ծանօթանալ նույնացի զիւղական վարկի պատմութեան հետ։ Դորանից էլ կը սկսենք։

Գիւղական վարկը նորոգացում ստացել է իւր սինդիքը գիւղական վարկը իների ճորտութեան վերացման օրէնքից, որ տւած է 19 միուր, 1861 թ., Հէնց այդ օրը զիւղացիները ձեռք բերին քաղաքացիական բոլոր իրաւունքները, դառնալով վերջապէս ինչնուրոցն զործողներ և պատապանատու իրանց գործերի համար թէ՛ մասնաւոր և թէ՛ հասրակական կեանքում։ Նոյն օրը, զիւղացիները, համաձայն 19 միուր-

ւարի տւած օրէնքի, սուացան մշտապէս օգտւելու իրաւունք այն հողերից, որ մինչ այդ ժամանակ մշակում էին զիւղացիներից ժամանակաւոր ապէս և այն էլ, ինչպէս յացնի է, մեծ մասամբ յօզուա հողատէրերի, ստանալով իրանց զառն աշխատանքի արդիւնքից միմիան մի որոշ չնչին մասն իրանց դոցութեան համար: Խսկ 19 փետրւարի օրէնքի զօրութեամբ զիւղացիների աշխատանքի արդիւնքը պիտի մնար իրանց, վարձատրելով հողատէրերին օրէնքով որոշւած տուրքերով: Այս զիւղական վերանտրողութիւնը ապացոց էր, որ տէրութիւնը լրջօրէն ցանկանումէր զիւղացիներին դարաւոր ծանր լուծից իրօք ազատել և յետոց զիւղական հողացին սեպհականութեան դործի զարգացման խնդիրը առաջ մղել: Փետրւարի 19-ին տւած օրէնքի հետ զուգահեռաբար լրց տեսաւ մի ուրիշ օրէնք, որի անունն էր հողեր յետ գնելու օրէնք (Պոլոյշենի օ ԵԿԿՈՒՅԹ, Ablösungsgegesetz) և որի նախատակն էր զիւղացիներին հողի սեպհականութեան տէր գարձնել: Եւ ահա՛ թէ ինչպէս տէրութիւնը ուղեց օդնել զիւղացիներին, որ սոքա կարողանան հողատէր գառնալ: Զեր զիւղացիները միջոց՝ չունեն, որ կարողանացին օդաւել հողեր յետ գնելու օրէնքից: Համաձայն նոյն խսկ այդ օրէնքի, պետութիւնը փոխ է տալիս զիւղացիներին մի յացնի գումար, որով վերջինները յետ են առնում հողատէրերից սոցա կալածների այն մասերը, որ տւած էին զիւղացիներին մշտապէս օգտւելու, համաձայն ճորտութեան վերացման վերը յիշած օրէնքի՝ 19 փետրւարի 1861 թ.: Պետութիւնից զիւղացիների սոացած գումարների զրաւականը կազմում էին նոյն խսկ այդ առնելիք կալածների մասերը: Դիւղացիները վերադարձնում են սոացած գումարները պետութեան մաս առմաս, երկայն ժամանակամիջոցներում: Մենք աւելորդ ենք համարում այս օրէնքի մանրամասնութիւնների միջ մտնել, որովհետեւ գա կը հետաշներ մեզ մեր աշխատանքի խսկան նախառակից: Մեզ հարկաւոր էր առաջ բերել այն անհերքելի ապացոցը, որ յիշեալ օրէնքի գործնական իրագործումն ոչ այլ ինչ էր, եթէ ոչ զիւղական հողացին վարկի իրագործման առաջին քայլը: Սրանով բայցւեց զիւղացիների համար զործունելութեան մի նոր ասպարեզ, ուր նոքա ովիտի հանդիսպէին այնպիսի անսուսական պայմանների, ըրոնց մասին զիւղացիները զազափար անդամ՝ չունեին՝ չնորհիւ իրենց ամեն

հռանդ մեռցնող նախլին անտեսական նահապետական կեանքի:

Բանլ աս է, որ ճորտութեան ժամանակ, ուրեմն մինչ 1861 թ., հողատիրութիւնը ու հողագործութիւնը իրար հետ սերտ կապ-
ւած էին, որովհետեւ հողատէրը միւնոյն ժամանակ և հողագործ
էր այս մոքով, որ, թէպէտ և հողագործական աշխատանքները կը-
րում էին ճորտերը, այդ ճորտ-գիւղացիները իսկապէս ոչ այլ
ինչ էին, եթէ ոչ հողատիրոջ մշակները, բանւորները. այնպէս որ
հողերի արգիւնքը պատկանում էր հողատիրոջ, իսկ ճորտերին ազգ-
ուում էր արգիւնքի մի մասը, որով նոքա ապրել կարող աշխին:
Հողատէրը տէր էր նաև իւր հողերի մշակութեան, տէր էր հողագոր-
ծութեան: Բաց 19 փետրւարի 1861 թ. աւած օրէնքի գօրութեամբ,
որով գիւղացիները ազատութիւն սասցան, հողատէրերը կարող էին
աւելի հեշտութեամբ իրանց հողերը ծախել, գրաւ դնել և կապալով
տալ: Այդպիսով հողը, որ առաջ անշարժ մի սեպհականութիւն էր,
գտաւաւ ապրանքի նման շարժած ական սեպհականութիւն, նա դառաւ
առևետուրի առարկաց: Հողատէրը սկսեց նայել իւր հողի վերաց, որ-
պէս մի առարկացի վերաց, որ իւր առանձին գինն ունի ինչպէս մի
արժեթուղթ, որը նմանապէս կարող է ծախել, գրաւ դնել: Իսկական
հողագործը կարող էր մէկը լինել, հողատէրը՝ մի ուրիշը. հողատէրը
իրաւոնք չունի խառնւել կապալառուի անտեսութեան մէջ, ուրեմն
հողատէրը կարող էր և հողագործ չը լինել: Այսպիսով այն երկու բա-
ները, որ առաջ իրարից անբաժան էին՝ հողատիրութիւնը և հողա-
գործութիւնը, այժմ բաժանեցին մէկը միւսից և դարձան ա-
ռանձին ինքնուրոցն անտեսական միութիւններ: Բնական է, որ այդ
երկու ինքնուրոցն անտեսական միութիւնները իրանց գոյութեան հա-
մար տարբեր պահանջներ էին երեսն հանում, այնպէս որ սոցա-
բաւարարութիւն տալու համար միջոցները նմանապէս պիտի տար-
բերեին: Եւ վարկն էլ, նկարագրած իրերի փոփոխման գօրութեամբ,
պիտի անշուշտ բաժանեւէր: Մէկը գառնար բուն հողագործական,
միւսը՝ հողատիրական: Վարկը առաջ միմիան հողատիրական լինե-
լով, 19 փետրւարի վերանորոգիչ օրէնքի երեալուց յետոց, ստանում
է մի ուրիշ ձև ևս, որը կոչումն ունի միսիան երկրագործութեան
պէտքերին ծառացելու:

Գնդական հողացին վարկի մինչ այդ աստիճան զարգացման

Հետ միասին զարգանում էին միենոյն ժամանակ անտեսական նոր պայմաններ, որոնք անտեսական կեանքի բարեռքման համար զգալի հետևանքներ ունեին: Նւ այդ պայմանների երեալուն աջակցում էին թէ՝ երկաթուղիների կառուցումը, որը մեծ զարկ էր տալիս արդիւնաբերաւթեան ընդլայնման և թէ գառասառանական վերանորոգութիւնը, որը կեանքի մէջ նոր իրաւական յարաբերութիւններ մնացրեց¹⁾: Այդպիսի հանդաման ըներում ապրում էին զիւզացիները, և իրանց նորաձեւ տնտեսութեան պիտոցները հօգալ անկարող էին:

Դիւզացիները ունեին միայն գուեհիկ և կոսկիտ աշխատանք, որ ժառանգած էին իրանց նախկին նահավետական կեանքից և որը զուրկ էր բոլոր ընդունակութիւնից ժամանակի սկահանջներին համապատասխանելու: Բաւական չէր զիւզացիներին սեպհականատեր դարձնելու համար միմիայն իրաւունք տալ, այլ հարկաւոր էր նմանապէս նոցա տնային-կենսական և զիւզատնտեսական պիտոցքների լրացման գործը առաջ մղել: Դիւզացիների այս կարգի պահանջները հետզհետէ բազմանում էին, երբ որ խելացի տնտեսութիւնը արգէն ստիպրզական էր զառնում, մանաւանդ երբ համոզւեցին, որ խելացի եղանակիներով արդիւնաբերելլը կարող էր հեշտացնել, որ զիւզացիները աջողակ կերպով մրցեն այն ասպարիզում, ուր նոցա հրաւիրում էին արդիւնաբերութեան և վաճառականութեան նոր պայմանները: Մի ասպարեզ, որի համար, բացի աշխատանքից և հողից, սկահանջւում էր զիւզացիներից դիտութիւն և մանաւանդ կապիտալ, այսինքն այն, ինչ նոցա բոլորովին պահատում էր: Աւքեմն ի՞նչ պիտի անեին զիւզացիները, որպէս զի նոքա փրկւեին այն անկումից, որը սպառնում էր նորանց այնքան դժւարութեամբ ձեռք բերած հասարակական տնտեսական զիրքին: Արովհետեւ ի՞նչ օգուտ այն իրաւունքներից, որոնցից չը պիտի կարողանալին օգուտել, նա մանաւանդ որ, ճորտութեան վերացումից յետոց, զիւզացիները կորցրին իրանց նախկին խնամառարներին, յանձին նախկին հողատէրերի, իրքի ազատներ, իրանց բոլոր հողաերը իրանք պիտի քաշէին: Միւս կողմից զիւզական հողը, որը զանւում էր յետ զնւելու պրօցեսի մէջ, համարեա

¹⁾ Եւ որի հետ «Մուրձ»-ը իւր ընթերցալիներին առաջին խել համարից սկսել է ծանօթացինել «Դաստասառանական վերանորոգութիւն» վելացիրը կրող լողւածով:

թէ ոչինչ ապահովութիւն չէր ներկացնում, որպէս զի գիւղացիները գոնէ փոխառութիւնների զիմեին իրենց անցետաձգելի կարիքների համար։ Դիւղական հողը, այդ գիւղառնուեական ամենազիւառոր տարբերից մինն՝ կարծես կորցրել էր իր միակ նշանաւոր յատկութիւնը, այն է արժեքը, չնորհիւ ի հարկէ մասամբ հողագործութեան անարդիւնաւէտութեան։ բայց դա ունէր և մի ուրիշ պատճառ, այն է, որ 70-ական թւականներին կապիտալները ձգտում էին դէպի աւելի շահաւեկո ձեռնարկութիւններ։

Կապիտալները մտան երկաթուղական և գործարանական ձեռնարկութիւնների մէջ, որոնք հէնց այդ ժամանակ տենդային արագութեամբ զարգանում էին։ Հողագործութիւնը, այսպէս ասած, մոռացւած էր։ Մի կողմից գիւղական վարկի հաստատութիւնների բացակայութիւնը և միւս կողմից կապիտալների հողից հեռանալն դէպի երկաթուղիները և գործարանները—այս երկու հանգամանքները զցել էին գիւղացիներին այն անելանելի դրութեան մէջ, որը մի փոքր նմանեցնում էր ճորտութեան վերացումից առաջ եղած նոցա հասարական-տնտեսական զրութեան։ Բայց որպէս զի այդ դրութիւնը ծագրացեղ հետևանքների չը համնի, տէրութիւնը առաջմ անկարող լինելով բուն հողագործութեան օգնել, սկսել էր օգնել գիւղացիներին, որ տքա զոնէ սերմեր ձեռք բերեն և իրանց ուրիշ կենաւական աղիտոցքներին բաւարարութիւն տալ կարողանան։ Նա այդ անում էր վարկ տալով գիւղացիներին։ Բայց այս տեսակ գիւղական վարկը ունէր միմիայն ժամանակաւոր և օժանդակիչ նշանակութիւն և նա տրում էր գիւղացիներին քամբազութեան դէպքերում և ահա թէ ինչո՞ւ նա կրում է գրականութեան մէջ ընդհանրապէս «ողորմութեան վարկի» անուն (երեմիտ ազգութիւն, Mildthätigkeitkeitskredit)։ Հէնց այդ ժամանակ ծագում է վարկի այն տեսակը, որը փոխանակ գիւղական տնտեսութեան օգնելու, տրակառեալ խանգարման էր նպաստում։ Տնտեսական գիտութիւնը վազուց ի վեր աւել է սոյն վարկին իրաւամբ վաշխառուական վարկի անունը (Ростовицкай кредитъ, Wucherkredit)։ Այսպիսի վարկ առանալու համար, գիւղացիները զիմում են կամ խոշոր և հարուստ հողատէրերին, որոնք, ձեւանալով իրը թէ պահպանում են գիւղացիների հետ հարեւանի յորաբերութիւններ, տալիս են վեր-

ջիններին պահանջած վարկ, կամ դիմում են մասնաւոր փողառեր մարդկանց, որոնք, շըջելով գիւղից գիւղ՝ նպաստակ ունին գանել փողի կարօտ գիւղացիներ և, ի հարկին, վարկ տալ սոցա. բայց այդ վարկը տրում էր աջնալիսի ծանր պայմաններով, որ ամենատուեն և տոկուն գիւղական աշխատանքով խակ հազիւ թէ գիւղացին կարողանում էր իւր յանձն առած պայմանները կատարել: Այդ պայմաններից ամենածանրն է բարձր տոկոսը, որ տալիս են գիւղացիները վաշխառուներին: Վաշխառուական տոկոսները համում են 20% մինչ 40% և աւելի տոկոսների, որոնք սովորաբար, բայցի չոր հացից, գիւղացիներին ուրիշ համարեա ոչինչ չեն թողնում: Եատ յաճախ պատահում է և այնպէս, որ գիւղացիները, չը կարողանալով իւր ժամանակին վճարել տոկոսները, բոլորովին զրկուում են իրանց հողի սեպհականութիւնից: Աերջապէս գիւղական վարկի օրինաւոր հաստատութիւնների բացակայութիւնից ծագում է այն տեսակի մասնաւոր վարկը, որ գիւղացիները սովիպւած իրարու փոխադարձաբար տալիս են, չնորհիւ իրանց պահանջների և ինսուերեանների համերաշխութեան: Այս վարկը, որ կոչում է ստիպեալ փոխադարձաբար վարկ՝ (взыгданный кредитъ, Zwangskredit) արտաշայտում է օրինակ հետեւեալ ձեւերով: — Մէկ գիւղացի միւսին փոխատութիւն է անում, որպէս զի փոխ առնողը մի երրորդ գիւղացուց սերմեր կամ նման պիտոցքներ ձեռք բերէ, կամ գոնէ դորա բեհը տայց: Ստիպւած վարկի երկրորդ ձեր այն է, երբ գիւղացիները իրար կապալով հողեր են տալիս մշակելու համար (այսպէս կոչւած սելյեա արենձ, գիւղական կապալ). վերջապէս ստիպւած վարկ է կոչում նաև, երբ գիւղացիները փոխադարձաբար հում նիւթեր են մատակարարում տնալին արդիւնաբերութեան համար:

Թէ վաշխառուական և թէ ստիպւած վարկի ձեւերով գիւղացիներից վերցրած պարտքը, ինչպէս հաշւում են, կազմում է եղել թուսիայում 70-ական թւականներին մօտ մի միլլեարդ (հազար միլիոն) բուբլի, ի հարկէ բայցի այն պարտքից, որ գիւղացիները արել էին հողեր յետ գնելու համար Յիշած վարկերի գումարը ցոյց է տալիս թէ՝ գիւղական վարկի օրինաւոր հաստատութիւնները ո՞րքան նպաստած կը լինէին գիւղացիների բարոյական և տնտեսական բարելաւութեան, եթէ նոքա այդ ժամանակ դոյութիւն ունենալին:

Գիւղական վարկի մինչ այդ ատոմիճան վատթար զբութիւնը, նպաստելով գիւղացիների տնտեսութեան քայլացման, ներկայացնում էր մի յուսահատիչ հասարակական ախտ, որը անուշադիր չը պիտի անցնէր թէ՛ տէրութիւնն և ժէ այն գործող մարդկանց աշքում, որոնք անհասկած մեծ ծառացութիւնն էին արած 1861 թ. ճորտութեան վերացման գործին։ Գիւղացիները չէին կարողանում 1861 թ. օրէնսդրութիւնից առաջ եկած տնտեսական պայմաններում գործել առանց նիւթական օգնութեան, որ ընդունակ էր հասցնել միայն կանոնաւոր և գիւղական վարկից Ահա՛ մի մեծ խնդիր, որի լուծումն տէրութիւնը պիտի իւր ձեռքն առնէր, քանի որ այն գործի իրագործումը մասնաւոր ոչերից վեր է։ Գրականութիւնը իւր կողմից հեշտացրել էր այդ գործը, որովհետեւ նա սկսել էր իւր ուշքը դարձնել գիւղի վերայ և ուսումնասիրել զիւղական կեանքի նոր պայմանները և կարողացել էր շատ նիւթեր ժողովել գիւղական-ժողովրդական վարկի վերաբերեալ։

Տնտեսական կեանքի նոր պայմաններից ծագում էին գիւղական նոր պիտոցքներ, որոնք զիւղացիների համար մասամբ անձնական և մասամբ էլ զուտ զիւղատնտեսական բնաւորութիւն էին կրում։ Այս երկու տեսակ՝ անձնական և զիւղատնտեսական վարկի պահանջներին համապատասխան հաստատութիւններ բանալու համար, տէրութիւնը բացեց 21 մարտի 1869 թ. գիւղական բանկերը, որոնք փոխառութան ազական ընկերութիւնների խնկական ախտական ների հաղմակերպութեան զիմունքները հետևեալներն են։ Ընկերութեան անդամների ընդունելութիւնը կատարւում է ընտրութեամբ։ իւրաքանչիւր անդամ հաւասար իրաւունք ունի ընկերութիւնից վարկ վերցնելու, բոլոր անդամները միասին պատասխանատու են ընկերութեան առջեւ իւրաքանչիւրի համար, որ վերջինը իր պարտաւորութիւնները կը կատարի, այսինքն կանոնադրութեամբ որոշած ժամանակին վարկի տոկոսները կը վճարի և զումարն էլ կանոնաւոր կերպով կը վերագրանի ընկերութեան։ Պէտք է ցիշել ընկերութեան մի ոչ աննշան սկզբունքի մասին եւս դա այն է, որ ընկերութեան զուտ արդիւնքից կազմում են՝ յօգուտ անդամների՝ բաժիններ (ոչ, Gewinnantheile)։

Այս համառօտ նկարագրութիւնից հետևում է, որ փոխատու-
խնայողական ընկերութիւնների հիմնելը զիւղական վարկի մի նոր
ձեւ առեղծեց, որ իւր կազմակերպութեամբ համապատասխանում է
զիւղացիների անառաջական նոր զիրքին: Թէ մինչ ո՞ր առողջան
զական վարկի նկարագրած այդ նոր ձեւը դործնականապէս նշանա-
կութիւն ունեցաւ, այդ կարող են հաստատել միայն թւերը, որոնք
անհերքելի են Փոխատու-խնայողական ընկերութիւնների քանակու-
թիւնը Ռուսիայում հասնում էր 1872 թւին մօտ 60-ի. այս թւա-
կանից մինչ 1875 թ. նոյա թիւը բարձրանում է մինչ 282-ի, իսկ
1875-ից մինչ 1878 թ. փոխատու-խնայողական ընկերութիւնները այն-
քան աճում են, որ դոյց քանակութիւնը աւելի քան եռապատկ-
ւում է հասնելով 966-ի: Ինչ վերաբերում է ընկերութիւնների
գործունելութեան արդիւնքներին, այդ կարող են ցոյց տալ 1884
թւականին արած հաշիւները 752 զիւղական փոխատու-խնայողական
ընկերութիւնների համար. այդ հաշիւներից երեսում է, որ այդ ըն-
կերութիւնների անդամների թիւը հասնում է եղել 205,000-ի,
որոնց առած է եղել մօտ 25 միլիոն բուբլու վարկ:

Սակայն զիւղական վարկի այս հաստատութիւնների թիւը
սկսում է հէնց 1884 թւականից աւելի քիչ աճել: Այսպէս, 1877 թ.
նոր հիմնեցին 57 և 1878 թ. 156 այդ ձեփ ընկերութիւնները
բայց 1884—86 թւականները այդ ընկերութիւնների տարեկան
աճման թիւը համառում է մինչ 25-ի: Եթէ ուզենացին փոխատու-խնա-
յողական ընկերութիւնների աճման նւազումը վերագրել նոյա անօգ-
տակարութեան կամ անժամանակակից դառնալուն, դա կը լինէր ան-
կասկած սխալ և անհիմն կարծիք: Փոխատու-խնայողական ընկերու-
թիւնների թւի աճման նւազելու սկզբնապատճառը պիտի անշուշտ
որոնել մի այլ հանգամանքի մէջ: Կիւղացիները այդ ժամա-
նակ սկսել էին ձգտել՝ իրանց սեպհական հողերի
սահմանները՝ ընդարձակելու: Այս երեսից զարմացմամբ
նկատեց թէ՛ գրականութեան և թէ զեմատվօնների (նահանգական
գասակարգացին վարչութիւնների) կողմից միայն այն ժամանակ, երբ որ
զիւղացիները արդէն ձեռք էին բերել մի քանի միլիոն զեսեատին
հող՝ առանց որ և իցէ վարկի հիմնարկութեան միջնորդութեան, այլ
այն մասնաւոր ծածուկ միջնորդներին զիմելով, որոնց կործանիչ հե-

տեանքների մասին մենք վերը մասամբ յիշել ենք: Բայց և այնպէս, զիւղացիների այդ ձգտումը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ համոզիչ նշան, որ զիւղացիները գիտակցաբար սխել էին իրանց տնտեսական գործունէութիւնը ընդարձակել: Այդպէս հասկացան ռուսաց զեմատվօները, որոնք ներկայում ամենակենդանի և հաւատարիմ պաշտպաններն են նահանգական տնտեսական բարզաւաճման, մանաւանդ զիւրազգաց զէպի ամեն բան, ինչ զիւղացիներին է վերաբերում: Դոքա, այդ զեմատվօները, ջանացին պահպաննել զիւղացիների այդ շարժումը, յառկացնելով մեծ զումարներ վարկի հիմնարկութիւններ բանալու, որոնք պիտի նպաստէին զիւղացիների հողի սեպհականութեան ընդարձակելու գործին: Ուրեմն զիւղացիների համար վարկը ստանում է այժմ այն բնաւորութիւնը, որը ոչինչ նմանութիւն չունի նախկին փոխառութնայողական ընկերութիւնների հետ: Փոխառութնայողական ընկերութիւնները պաշտօն ունիին զիւղացիների զիւղառնութեական և անձնական կարիքներին ծառացելու. և այս գործին աջակցելու դերը, պէտք է ասած, յաջողութեամբ են կառարում: Մինչ այսօր էլ զիւղական վարկի այդ հիմնարկութիւնները զործում են առանց խոչընդոտի և առանց դուրս գալու իրանց բուն պաշտօնից: Դոքա նոյն շաւդով շարունակում են գործել և այժմ, կը զործեն զեռ ևս ապագայում, որովհետեւ այս կարգի կարիքներ զիւղացիները միշտ ունենալու են, ինչ ձեւ մեծութիւն էլ ստանար զիւղական հողացին սեպհականութիւնը ժամանակի ընթացքում: Բայց աչքի առաջ ունենալով փոխառութնայողական ընկերութիւնների գործունէութեան նպատակը, պէտք է խոսանվանել, որ զոքա անինդունակ երևեցան զիւղացիների հողեր գնելու պահանջներին բաւարարութիւն տալու: Եւ որպէս մենք ասացինք, զիւղացիների այդ պահանջը շատ զգալի կերպով երևաց այս վերջին տարիներում: Ահա թէ ինչո՞ւ փոխառութնայողական ընկերութիւնները, որոնք զիւղացիների այդ կարիքին բաւականութիւն տալ չը կարողացան, այս վերջին տարիներում աւելի քիչ աճեցին իրանց թւով: Այժմս պահանջ երևաց կազմակերպել մի այնպիսի վարկի, որը օգներ զիւղացիներին իրանց հողացին սեպհականութիւնները ընդարձակելու: Սորանից ծագում էր մի նոր զիւղական հողացին վարկի խնդիր, որը պետութեան համար ընդ-

Հանուր նշանակութիւն տուացաւ թէ՛ զիւղական անառեսութեան բարելաւութեան և թէ առհասարակ հողասակալութեան յաջող բաժանման տեսակէտից: Պետութիւնը լաւ ըմբռնելով այդ զրութիւնը և այդ զրութեան համապատասխան վարկի պահասութիւնից անմիջապէս բղխող անմիջիթար հետևանքները երկրի տնտեսութեան համար, շատապեց մայիսի 18-ին 1882 թ. հրատարակել մի օրէնք, որի հիման վերաց բացւեց գիւղացիական¹⁾ հողացին վարկի բան կը (քրեստյանական պատճենական բանե): Գիւղացիական հողացին վարկի բանկը նսկատակ ունի հեշտացնել զիւղացիներին հողեր գնել երբ որ վերջնները զորա մէջ շատ հարկաւորութիւն ունին, ի հարկե, իրանց սեպհական հողերի տակաւութեան պատճառով: Բանկը զորա համար վարկ է տալիս իրան զիմող զիւղացիներին ուղղակի փողով: Խակ այս հարկաւոր զրամը ձեռք բերելու համար զիւղական հողացին բանկը դուքս է տալիս տոկոսաբեր թղթեր, որոնց վաճառելլ և փողի վերածելլ²⁾ յանձն է առնում պետական բանկը (Государственный банк): Այս տոկոսաբեր թղթերը կոչւում են զիւղացիական հողացին բանկի պետական վկայաթղթեր (свидетельство), որոնք բաժանեած են երեք մեծութիւնների՝ 100, 500 և 1000 րուբլու և բերում են տարեկան 5^{1/2}/0: Պետական բանկը նմանասին յանձն է առնում վկայաթղթերի շիջուցումն (погашение, amortisation), որը կատարուում է տիրամաժների (тиражъ) միջոցով տարեկնը մի անգամ վիճակահանութեամբ և միայն այն դումարների համեմատ, որոնք զիւղական բանկում դիզել են զիւղացիների վճարած շիջական փողերից (сумма погасительных ссуд) երկու նախընթաց վեցամսեակների ժամանակամիջների մասնակամիջնոցում: Այս դումարների և տոկոսների վճարման և վերադարձման համար ապահովում են գլխաւորապէս զիւղացիների հողերը որոնք բանկի համար զրաւական են կազմում, և նոյնպէս պետական ընդհանուր միջոցները:

¹⁾ Մենք դիտմամբ ենք գործ ածում զիւղացիական խօսքը, որովհետեւ ալդ խօսքը աւելի լաւ է արտապատում վշած հիմնարկութեան նպատակը, քան եթէ ասէինք՝ զիւղական կամ զիւղացիների բանկ:

²⁾ Տոկոսաբեր թղթերի վաճառման մասին ասում են՝ այդ թղթերը լրաց անացնել, réaliser, реализовать. Խակ ալդ զարծողութիւնը կոչւում է реализація, réalisation, լրականացումն:

Գիւղացիական հողային բանկը վարկ է տալիս ամեն գասահարդի զիւղացիներին, այն է՝ ըրոլոր զիւղական համայնքներին և զիւղական ընկերութիւններին, որոնք բաղկացած պիտի լինին երեքից ոչ պակաս անդամներից։ Սոքա մէկը միւսի համար երաշխաւոր են ստացած գումարների վերացարձման և տոկաների վճարման վերաբերմամբ։ Վերջապէս վարկը արւում է և առանձին զիւղացիներին։ Հողային վարկը արւում է զիւղացիներին ըստ ցանկութեան 24¹/₂ և 34¹/₂ տարով։ Գիւղացիները վճարում են բանկին այդ ժամանակամիջոցում տարեկան 3³/₄⁰%, իսկ բանկի վարչութեան ծախքերը ծածկելու և պահեստի գումար (չպահու բանկու համար՝ 1¹/₂⁰/0 տարեկան)։ Բայց փոխառութեան գումարը շիջուցման համար՝ 1¹/₂⁰/0 տարեկան։ Իսկ 34¹/₂ տարով տւած գումարների շիջուցման համար՝ 1¹/₂⁰/0 տարեկան։

Գիւղացիական բանկի հողային զործունէութեան ամենազլսաւոր կետերը գծագրելու ց յետոյ, հաղորդենք նաև այս հիմնարկութեան միքանի տարւայ գործունէութեան արդինքը ցոց տւող մի քանի հետաքրքրական թւանշաններ։ Յունւարի 1-ին, 1886 թւին, զիւղացիները, մեզ զբաղեցնող զիւղացիական վարկի միջնորդութեամբ, զնել են հողեր 763,241 գեսեատին՝ արժողութեամբ 39,700,000 րուբլու։ Այսքան գեսեատինից ուռւաց 7 հարաւային նահանգների վրայ գալիս է 377,000 գեսեատին կամ 49,4⁰%, արժողութեամբ 23,000,000 րուբլու կամ 57, 4⁰/0։ Սա անկասկած մի առաջոց է թէ՝ ո՛րքան անհրաժեշտ է եղել զիւղացիների համար հողային վարկի հիմնարկութիւնը, նամանաւանդ զիւղական հողային բորժութեան բաժանման խնդրի տեսակէտից, որ պիտի համարել 19-րդ դարու լուծման ենթակայ անտեսական-հասարակական ամենազլսաւոր ինսպիրներից մէկը։ Խուսիայում զիւղացիական հողային վարկը ստացել է գործնականապէս այդ չափ մեծ նշանակութիւն այն պատճառով, որ զիւղացիների հողը այնուեղ շատ պակաս էր (մալօչեմելք)։ Հիմա թէ մեր Անդրկովկասեան նահանգներում զիւղական հողի սեպհականութիւնը ո՛րքան պակաս է մեր զիւղացիներին և թէ այդ ստկաւութիւնը իրբե լուցընդուն է հանդիսանում երկրիս զիւղատնտեսական զարգացման, թէ ոչ—սոքա ինսպիրներ են, որոնք իրանց առաջնա-

կարգ նշանակութեամբ առանձին հետազոտութեան կարօտ են: Տէրութիւնը, ինչպէս արդէն յացտնի է, վճռել է նաև Անդրկովկասում բանալ գիւղացիական հողացին բանկի մի մասնաբաժին, որը պիտի նպաստակ ունենայ, վերը յիշած գործունէութեամբ, մեր գիւղական ազգաբնակութեան հողացին պիտուքների լրացման ծառացելու: Առ այժմ կարելի է ասել, որ բանկը տեղեկութիւններ հաւաքելու ժամանակ այն հողերի մասին, որոնք գիւղացինները ուզում են առնել, պէտք է որոշէ զգուշաբար թէ՝ այն գիւղացինները, որոնք դիմում են բանկի աջակցութեան՝ ի՞նչ դասակարգի են պատկանում: Բանկը սկզբունքով պիտի օգնէ լոկ այն գիւղացիններին, որոնք շատ հարկաւորութիւն ունին հողերի մէջ: Զը նայած այդ սկզբունքին, բանկին վիմող գիւղացինների թփի մէջ կարող են գտնել և այնպիսինները, որոնք արդէն բաւականաչափ հողեր ունենալով, էլի կը ցանկանան հողեր գնել, որովհետեւ հողը շատ շահաւետ գործիք է, երբ որ նա կապալով է արւում: Պարզ է, որ այսպիսի գիւղացիններին հարուստ կարելի է համարել, որոնք իսկապէս հողագործների միջին դասակարգին են պատկանում: Հողեր գնելուց յետոց, սոքա կ'աշխատեն իրանց նոյն իսկ նոր հողերը կապալով տալ միւս գիւղացիններին, որոնք հողի կարուտ են, այն էլ վաշխառուական վարկին համապատասխան պայմաններով: Գիւղացիական հողացին բանկը պիտի նմանապիս զգուշութիւն գործ գնի իմանալու թէ՝ ո՞վքեր են այն մարդիկ, որոնք գիւղացիններին հողեր են ծախում: Արդեօք սոքա խոշոր հողատերերն են, թէ դարձեալ հարուստ անուանած համագիւղացինները: Եւ ահա թէ ինչո՞ւ է հարկաւոր այդ զգուշութիւնը: Նաո յաճախակի պատահում է, որ չունեոր դասակարգի կարօտեալ գիւղացինները իրանց պարտքերը, որոնց մէջ և հարկերն են պարունակում, վճարելու համար, հարկագրւած են լինում ծախելու իրանց սեպհական հողերը կամ, ևս առաւել, իրանց հողերի որոշ մասերը: Այդ գիւղւածներում ներկայանում են հողեր գնելու համար ամենաշատապ կերպով կրկին հարուստ հողագործ գիւղացինները: Եւ որովհետեւ գիւղացիական հողացին բանկի կանոնադրութիւնը գիւղացինները: Եւ որովհետեւ գիւղացիական հողացին բանկի կանոնադրութիւնը գիւղացինները է հողեր գնելու միջոցը ամեն տեսակ գիւղացինների համար, ապա մեր հարուստ գիւղացինները, օգուտ քաղելով բանկի յիշեալ կարդալիրութիւնից, կը սկսէին, մ.ծ օգուտներ

ստանալու նպատակով, շահագիտութեամբ (спекуляциј, spéculatior) բգրադւել՝ հողերը իրանց խզճուկ համադիւղացիներից առնելով և կրկին շահաւետ կերպով ծախելով նման խզճուկ գիւղացիներին։ Եւապէս, օրինակ, մեր հարուստ գիւղացին՝ ներկացացնելով բանկի վարչութեան հող ծախողի հետ կապած վաճառման պայմանագիրը, կը ստանար բանկից համեմատ փոխառութիւն, որի գրաւականն է նոր գնած հողը, և այսպէս իր ծախսած կապիտալը ազատելով, կրկին կը զիմեր հողերի նոր շահալիտութեան (Güterschacher կամ Güterspeculationi): Եթէ գիւղացիական հողացին բանկը, որի յարառև գործունեութիւնը մեզանում գիւղական հողացին սեղհականութեան վիճակը զգալի փոփոխման պիտի ենթարկի, վերը լիշած հանգամանքները ի նկատի չի առնիլ, մենք կարծում ենք, որ բանկը այդ գետքում անգիտակցաբար նպաստած կը լինի հողերի աւելի ևս մեծ սակաւութեան, հակառակ իր առաջադրած նպատակին։ Այսու ամենացնիւ գիւղական հողացին բանկը, օգնելով փոքրիկ և չքաւոր դիւղացիներին հողեր ձեռք բերելու, մասամբ և խիստ հարւած կը տար գիւղական վաշխառուական վարկի գոյութեան, որը, ինչպէս յայսնի է, գիւղացիներին ամենուրեք մեծ չքաւորութեան մէջ է գցում։ Քանի որ գիւղացիական հողացին վարկը օրէնքով կանոնաւորւած չէ մի որ և իցէ երկրում, գիւղացիները, հողի կարօտութիւն քաշելով, ատիպւած են լինում հարուստ գիւղացիներից կամ վաճառական հողատերերից հողեր վերցնել կապալով։ Կապալառու գիւղացիները կապալի համար, ըստ պայմանի, կանխաւ յայսնի գումար են վճարում, որ նոքա սովորաբար պատրաստի չունին։ Գիւղացիները այս գեպքում ճարահատեալ նմանապէս կապալով են տալիս իրանց հողերը համագիւղացիներին շատ աժան գնով, օրինակ՝ գեսեատինը 8 րուբլով, փոխանակ 11 լուբլու, որ կարելի կը լինէր սասմալ, եթէ հողը կամաւոր և ոչ ատիպողական կերպով կապալով արւէր։ Գիւղացիները իրանց սուացած փողը վճարում են հողատերերին և կասրում են վերջինների հետ մի պայման, որի զօրութեամբ նոքա կապալի մնացած փողը վերջնականապէս պիտի վճարեն յորենը համելուն պէս։ Եթէ որ հունձը վերջանում է, գիւղացիները իրանց դառն աշխատանքով հաւաքած հացը հարկադրւած թողնում են հողատերոջ արտերում, որովհետեւ՝ չը նայած պայմանագրին՝ գիւղացիները

կրկին չունին փող կապալի մնացածը վճարելու համար. այնպէս որ, հացը արտերում շատ մնալուց յետոյ, վերջապէս փշանում և կորչում է: Պատահում է և այսպիսի զէպք, երբ հողատէրերը պահանջում են կապալառու զիւղացիներից հնձած հացը մաս առ մաս վերցնել արտերից և այն ժամանակ իրանց պարտքն էլ մաս առ մաս վճարել: Գիւղացիները հողատէրոջ միշեալ կարգադրութեան հետ, ի հարկե, մասամբ համաձայնում են և իրանց հացը շուտով ծախելու են տանում, որպէս զի ստացած փողերով իրանց պարտքը ըստ կարելոց կանոնաւոր կերպով վճարեն: Այս հանգամանքը այն տիրալի և յուսահատիչ հետեւանքն է ունենում, որ տեղացին շուկաների վրայ մրանդամից շատ հաց է հաւաքւոմ, այնպէս որ վերջինի գինը չափազանց վայր է ընկնում: Հացի պուղը, որը, օրինակ, ծախում էր 60—70 կոտկով, զիւղացիները սոխաւած ծախում են 36—40 կոտկով: Եթէ հաշէինք այս կորուստի սոկուլ $33^0/0$ և գումարէինք սորան այն կորուստի տոկոսների հետ, որ կրում են զիւղացիները իրանց հողերը կատարով տալով, մենք կը ստանացինք մօտ $40^0/0$, որ նասում է զիւղացիներին այդ զարհուրելի վաշխառուական վարկը: Ահա՛, որքեմն, մի կողմէց այս կործանիչ վարկի վերացման նախատերու համար է, որ տէրութիւնը հիմնում է զիւղացիական հողացին վարկի հաստատութիւնը նաև մեր երկրում: — Մաղթելով, որ այս տէրունական ձեռնարկութիւնը իրագործւի և իր նախատիւներին հեշտութեամբ հասնել կարողանայ, մենք պիտի մատնացոյց անենք այն ծանրակիւու խնդրի վրայ, որը անշուշտ նմանապէս մեծ ուշադրութեան արժանի է: Բացի զիւղացիական հողացին բանկից, որը նախատի պիտի ունենայ մեր զիւղացիների երկար-ժամանակեայ վարկի (долго-срочныи кредитъ, срэдит à longue terme) կարիքը լրացնելու, հարկաւոր կը լինի հոգալ և կարճ-ժամանակեայ վարկի (кратко-срочныи кредитъ, срэдит à court terme) մասին, որի կարեւորութիւնը ահա զին է մեր զիւղական կեանքում, բացց որը, որպէս և շատ ու շատ ուրիշ կարեւոր խնդիրներ մեր պարբերական մամուլը ցայժմ, կարող ենք համարձակ ասել, յանցաւոր լուութեան է մատնած, թէսլէտ և համոզւած ենք միւս կողմից, որ այդ անհոգութիւնը ոչ չարութիւնից, այլ մեր հրասպարակախօսների անձեռլն-հասութիւնիցն է: Գիւղացիների համար ծաղում են տարւայ ըն-

թաղքում պիտոյքներ, որոց համար զրամական օժանդակութիւն է պահանջում: Գիւղացիները ունին սերմեր զնելու և տնտեսութեան հետ կապւած ուրիշ ծախսեր, բաց մանաւանդ հարկեր վճարելու պարտականութիւն: Եւ որպէս զի այս գէպքերումն էլ գիւղացիները չընկնեն վաշխառուների ձեռքը, ինչպէս զժբաղդաբար այժմս լինում է, հարկաւոր է նմանապէս մերը ցիշած փոխառութիւններ, որոնց մասին մնք մի ուրիշ յօդւածում մանրամանաբար կը խօսենք: Նաև այդ կողմից նուսիացի փորձը կարող է մեզ մի յայտնի չափով ղեկավար լինել: Իրողութիւնը սա է, որ գիւղացիական հողացին բանկի հիմնարկութեան հետ զուգընթացաբար հիմնում էին գիւղական բանկեր փոքրիկ, կարճ-ժամանակեայ վարկի կարօտութիւնը լրացնելու համար. բանկեր, որոնց կարևորութիւնը պաշտօնապէս ճանաչւեց տերութիւնից. գորա ծնունդն էր 1883 թ. տւած օրէնքը՝ գիւղական բանկերի մասին (положение о сельскихъ банкахъ): Հենց այդ գիւղական կոշւած բանկերն են, որ պէտք է գիւղացիների կարճ-ժամանակեայ վարկի կարօտութեան բաւականութիւն տան: Ամեն կերպ պէտք է ցանկալ և յուսալ, որ գիւղացիական հողացին բանկի ճիւղը Առվկասում բացւելուց յետոյ, երկար չը պիտի սպասենք, որ բացւեն մեզ մօտ նաև զիւղական բանկեր: Առաջինը, որպէս տեսանք, պիտի այս երկար-ժամանակեայ վարկ, որով միայն գիւղացին հող կարող է գնել, երկրորդ տեսակի բանկերը պիտի հայժհայթեն գիւղացիներին կարճ-ժամանակեայ վարկ, որը հարկաւոր է անձնական գիւղատնտեսական պիտոյքները լրացնելու համար:

Գ ՐԱԽ Օ ՍՈՒԹՅԻՒՆ

Մ. ԱԲԵՂԵԱՆ, «ՆՄՈՒՇՆԵՐ», Շուշի, 1888 թ. 8-Ճակ 108 եր.
տառ. № 12. թուղթը և տիպը մաքուր, գինը 40 կոպ.:

Հեղինակը երեխ կամեցել է հասարակութեանը ծանօթացնել իր բա-
նաստեղծական չնորհքի հետ և այդ պատճառով լուս է ածել այդ ոտանաւոր
«Նմուշները»: Ոտանաւորների մի քանիսի նիւթը հին եկեղեցական աւան-
դութիւններից է և ամենաալանդակ կերպով, իբրև թէ «ժողովրդականաց-
րած»: Ընթերցողի վերաց աջ՝ բանաստեղծական ոգուց բոլորովին զուրկ՝
ոտանաւորները աճնպիսի տպաւորութիւն ևն թողնում, որ կարծես հեղինակը
զուով իր մոռքից հանել է բառեր և կուտակել նոցա միմնանց վերաց, միան
պահպանելով չափը: Չափի համար նա զոհում է, ամեն բան և թով է տա-
լիս, օրինակ, ալսպիսի բռնութիւններ լեզուի վերաց: «Արում'ի» (փոխանակ
լուում էի), «հիմ'» (փոխանակ հիմա), «ահա' նոտեղ» (փոխանակ ահա ախտեղ):
Խրթին բառերի կողքին լանկարծ ամենառամկական բառեր և ոճեր. օրի-
նակ, «բրմուտ, խիշտ, դանդաշումն, թօն, հիւղ, մլար, ժիսոր, նենգժեռ» և
այն, և դոցա կողքին՝ «կպնում, հրէն, զարզանդում, զարա, զաղում» և
այն: Պ. Աբեղեանը նորոգում է էլի մի անհամ անհարազատութիւն մեր
լեզուի մէջ: «Նէ, ներա» իգ. սեռի համար, փոխանակ հա, նորասո: Առհասա-
րակ լեզուն շատ անհարթ և անախորժ է:

Ճաշակ տալու համար ընթերցողին հեղինակի ինքնուրովն ոտանաւոր-
ների մասին, գեղարւեստական-բանաստեղծական կողմից, չառաջ բերենք
մի քանի կտորներ.

Սուրբ Վարդանը հեծաւ իւր ձին,

Զանեց հալոց զիւղ ու քաղաք,

«Ով սէր ունի լուս-Հաւատքին,

Թող զալ, ասաց, նա իմ քամակ»: (եր. 27)

Ահա և մի սիրահարական բանաստեղծութիւնից մի նկարչական կը-
տոր (եր. 81).

Անդադրում գետակն է ալիք

Միան վարելով մնչում,

Եւ քամին, սիրուն իմ Ալիկ,
Մէկ-մէկ հանգարառուկ չնչում:

Բերենք մի կտոր էլ, ուր կը տեսնէք ինչ բանաստեղծական համեմատութիւն է անում հեղինակը (եր. 90):

Ա'ս, անցաւ, կորաւ, իմ ուկի երազ,
Սրախ մէջ մնաց միաէն մռայլ մռւթ,
Ինչպէս վերջալաւ ժպիտն հեղանազ
Շուտով մթնեցնում է արևամուտ...

Պ. Աբեղեանը արել է մի քանի թարգմանութիւններ գերմաներէնից, Փրանսերէնից և ռուսերէնից: Թարգմանիչը չէ ասում թէ զերմանական բանաստեղծութիւնները արդեօք թարգմանել է բնագիրներից, թէ ռուսական թարգմանութիւններից: Առհասարակ բոլոր «Նմուշներ»-ի թարգմանութիւնները անգործ են և չեն բարենում բնագիրների ոճն ու ոգին: Հասկացողութիւն տալու համար ընթերցողին ազդ թարգմանութիւնների մասին, բառաջ բերենք Գեօթէի Երկոնց-ի թարգմանութիւնը՝ «Մէրու-Շահապետ» (եր. 77): Համեմատելու համար բնագրի հետ, մի քանի կտորներ բերենք և կը տեսմեք՝ որքան թարգմանութիւնը հեռու է բնագրից թէ բառերի և թէ ընդհանուր ոճի ու ոգու կողմից: Ահա օրինակներ զատ-զատ առներից:

Wer reitet so spät durch Nacht und Wind...

Ան ով արշառում գիշերը ցրախն...
Mein Sohn, was birgst du so bang dein Gesicht
Որդի, ինչ ևս կուչ եկել ինձ կոյնում:
Der Erlkönig mit Kron und Schwef.
Մէրու-Շահապետ, ազին, հրէն, երկան.
In dünnen Blättern säuselt der Wind.
Ան քամին խշաց հանեց սոսափիւն.
Erlkönig hat mir ein Leid gethan.
Մէրու-Շահապետ, մէջքս, կոսրից. և այն:

Ազդ ալլանդակութիւն է և ոչ բանաստեղծական թարգմանութիւն: Աւելի լաւ կ'աներ պ. Աբեղեանը, եթէ ազդ «Նմուշները» պահէր իր մռամբիս՝ միաէն իբրև «պատանեկութեան ժամերից միշտակ»:

ԱՐԵԱՆԻ ՄԵՇՐԱՅԵՍՆ—ԱՐԻՆԴԻ. «ԵՐԱԿԱՑՄԻՒԹԻ»։ պատկերազարդ հատուածներ մանուկների համար, հրատարակութիւն Կամսար Սարգսեանի։ 1887 և 1888 թ. Թիֆլիս։ չորս գիրք (իւրաքանչիւրբ 4-ծալ՝ մօտ 50 էրեսից)։ գինը իւրաքանչիւր գրքոյկի 50 կուդ.

Որովհետեւ իւրաքանչիւր գիրքը լուս է տեսած տարւակ չորս հզանակներին, ապդ պատճառով զրգութեարի երեսին զրւած է. Առաջին գիրք—Գարուն, Երկրորդ գիրք—Ամառ, Երրորդ գիրք—Աշուն, Չորրորդ գիրք—Զմեռ։ Ոչինչ ներքին կատ բովանդակութեան և տարւակ եղանակների մէջ չը կատ (աստիճան՝ օրինակ, հաստածները զարնան զրգում բոլորովին իրանց բովանդակութեամբ չեն վերաբերում զարնան)։

Մանուկների համար գրած զրքերի բովանդակութիւնը պետք է հետաքրքրելի, պարզ և բնական լինի։ Խակ «Երախալրիթ»-ի հաստածները մեծ մասսմբ անպէտք են մանուկների համար իրանց թուլ, անհետաքրքրելի և շինծու, կարկատած բովանդակութեամբ։ Ամբողջ չորս զրքերում կարելի է ցաց տալ միայն հետեւալ փաքր ի շատէ լաջողւած հաստածները։ Առանձաւորներից՝ (Գ. I) Տարեսիրա մանուկ, Եղնիկ. (Գ. II) Աղքատ, Արտառ. (Գ. III) Որը, Աչնան տերեն, Ծիծեռնակ. (Գ. IV) Չորս Եղանակ, —Արձակ գրւածներից՝ (Գ. II) Որսորդ, Եղջերուսեր. (Գ. III) Գոլութեան հետեւանք, Ուսկի և կրակի. (Գ. IV) Սալսրենի, Բուեն և Չնչին արարածների մեծ զերը։

Ինչ վերաբերում է լեզուին, նա չանի մանկական հաստածների համար անհրաժեշտ լատկութիւնները՝ պարզ, կոմիկ, կանոնաւոր, զողարիկ չէ։ Ի՞նչ միտք ունի ալսպիսի անձանի բառեր. «Ալտորատին, շալսալուրիկ», ցուփիկ, ճնջոշառմ, փուչփուչացներ» և ալլն. զոքա ոչ լեզուն են «Ժողովքրդական» շինում և ոչ բոլոր հայ մանուկներին հասկանալի են և վերջապէս, կարիք չը կատ ալսպիսի անձոռնի բառեր զարծածելու։ Նունպէս պէտք է հռու կենալ ալսպիսի անհոտ ոճերից. «Ճիսը վեր էր թափում, կէսը զնում էր, կարծես» (Գ. 2. եր. 34), «Գոմի սեդ տչերից կրակ էր ցալում» (Գ. 2. եր. 35). «Գլսարկը սրպէս սրբիչ հանդիսացաւ» (Գ. 2. եր. 25). «Իսկ ցողն արծաթի զնդի նման պարզել էր մարզակեսնում»։ «Պանդակները չխկչիսում են» (Գ. 3. եր. 17) և ալլն։ Միթէ մի առանձին գեղեցկութիւն է, երբ ամենահասարակ բաների մասին խօսելու, ալսպիսի ձռնոան, փքւած խօսքեր և ործածում. «Ընկրույնին վշտողին չըշխն արձակից և սեամած ամազ անփախաւոս դարձաւ նրա փոքրիկ աշերից» (Գ. 1. եր. 36)։ Ապդ նման և նորան, երբ օպերացում ամենահասարակ մի բանը ասում են երգելով կամ թարանական արտակարգ շարժւածքներով, զիցուք՝ առնւր ինձ մի բաժակ ջուր» նախաղատութիւնը։ Ոտանաւորները գրւած են անախործ լեզուով։ Ալսուղ չէ կարելի չը նկատել պ. Արինդին, թէ առնեն մի զրւածք սատնաւորի ձևով, զիս չէ նշանակում նա բանասանելծաթիւն է։

Չորրորդ դրվի վերջում հրատարակչի կողմից գրւած լոդւածից, ի միջի ազլոյ խմանում ենք, որ «Երախտըրիքի» մէջ տպւած հաստածները «ազ և ալ ահեղիրի հավերի կեանքից է առնուած» ևթէ «բոլոր պատկերները դէմքի կողմից բաւն հայի տիպար են ներկալացնում»: Դժւար չէ համոզւել, որ ազգ միասն լոկ հրատարակիչներին շաստուկ խօսքիր են. ինչպէս պատկերները, նախորդէս և բովանդակութիւնը (չէ որ միայն անուածները հավական լինելով, դեռ չէ նշանակում, որ հավերի կեանքից են) ոչինչ բնադրոց հավական կարան զծեր չունին, ալ մի անորոշ, սովորական, ընդհանուր եւրոպական ձև անին: Հրատարակիչը ասում է, որ «Երախտալորիքը» գրւած է, երբ հեղինակը 17—22 տարեկան էր, տասիր արդարացնելի է, որ «ալառվը կարող է մի փոքր խստկ լինելու կարծես մանուկները և հաստակութիւնը պէտք է տառեն հեղինակի մոքի խստութեան արտապաւթիւնները... Հրատարակիչը մասաւ ասում է.—«Երախտըրիքի», մէջ զետեղւելով միայն մանկական գրւածները, բանաստեղծութիւնները առանձին գրքավ կը հրատարակւին, որովհետեւ իրանց մոքերի խստութեամբ (?) կարող էին անհասկանալի մնալ մանուկներին:—Եթէ այդ բանաստեղծութիւններն ել վիսակ պատուին են, ի դուր տեղը մի ուսեցնելք հասարակութեամ. առանց դուսան ել նորա տուամոքը խանգարւուծ է բազմաթիւ անհամ և խակ գրւածներով, մանաւունդ «բանաստեղծական»:

Ալսոպէս արհմեա ալդ բոլոր չորս գրքովիների տեղ եթէ տպւեր մի փոքրիկ գրքավկ, վերե լիշած հաստածներից բազկացած Ըմի խօսքով ընտրութեամբ), մնաք տեսլի մնա կարծիք կ'ունենալինք թէ հեղինակի և թէ հրատարուկչի մասին, խակ մանուկները, տալով 2 ոռուբլու վիտանակ 50 կոտեկ, կ'ունենալին ընթերցանութեամ հպմար մի օգասկար զրքովի. խակ ալմէ՞ 2 ոռուբլի տալ և զնել ալդ չորս ջրալի վիսակը գրքովիները՝ բոլորովին ապարդին մի ծախը է, մեր կարծիքով:

1. Ա.

Ս. Փիլ.Օն. «ԶՐՈՅՑՆԵՐ ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԵՅ», Առաջին մաս. Տիկիս, Թումինեանի տպար. 1888թ., 4-ծալ. 76 էր. զինն է 40 կոպ.:

Տարրական գրքերը, նա մանաւուղ բնական վիտութիւնների վերաբերեալ պէտք է կազմւած լինին մի խիստ որոշ սիստեմով, նախազծով և հաստութեամբ: Զը պէտք է երրէք մի բան պատամել, առանց նախ և առաջ ամենահասարակ հիմանքները (առանց որոնց անկարելի է պատմածը հասկանալ) պարզելու: Ալլովիսի գրքովիներ պէտք է անորդ կողմւած լինին, որ ընթերցողը կամաց-կամաց, սիստեմաբար ծանօթաւատ նրան մատակարարող զիսելիքների հետ:

Պ. Ս. Փիլուեանը սկսողին (հեղինակը աչքի առաջ է, ունեցել հայոց ծխական դպրոցի աշակերտներին, նաև «ան վաքրիկ և հասակաւոր ընթերցասէրներին, որոնք դպրոցում ուսած չը լինելով բնական պատմոթիւնը, կը փափազին լցուցանել ազ թերին իրանց մոսաւոր զարգացման մեծ խնդրում») առանց բնդանուր, ամենասարբական տեղեկութիւններ տալու դասաւորութեան (կլասսիֆիկացիոնի) հմտութեարի վրայ, առանց ցոյց տալու կենդանաբանութեան մէջ ամենանշտանաւոր բաժանմունքները, առանց այդ բաժանմունքների ընալորոշ մի ընդհանուր նկարազիրը տնելու, և, վերջապէս, առանց թւելու սկզբուց գոնէ ամենազլիսաւոր բաժանմունքների լոկ անունները, դիցուք հէնց ալպէս՝ Ոկենդանիները բաժանմունքների լոկ անունների և Անողնաշարաւորների: Ողնաշարաւորներին պատկանում են հետեւալ դասերը՝ Կոթնաստներ, Թուչուններ, Խողուններ, Երկակենցաղներ և Զկներ, իսկ Անողնաշարաւորներից մէնք կը զննենք միանց միջատների դասը»: Մենք ասում ենք, զոն, առնւազը, ալս պէտք է ասէր իր նոր սկսողներին: իսկ պ. Ս. Փիլուեանը ակապէս է սկսում, ոչինչ չասելով նախապէս (եր. 7):

Ա.

Մ Ա Ւ Բ Դ

Քետու մի քանի երես անցնելով (եր. 12), զնում է մի ընդհանուր վերնագիր՝ ԿԱԹՆԱԱՍԻՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

Բ.

Կ Ա Տ Ա Ւ

Էլի մի քանի երեսից վետու (եր. 30) ԳԼՌԵ Բ. Թուչուններ, վետու (եր. 41) զլուխ Գ. Սողուններ և Զկներ:

Նախ՝ որ այդ վերնագիրներից սկսողը ոչինչ չի հասկանալ զասաւորութեան մասին, երկրորդ՝ ինչու մարզը կաթնասուններից գուրս է, երրորդ՝ ուր է «գլուխ Ա», որ եր. 30 չանկարծ պատահում ենք «գլուխ Բ»: Հորրորդ՝ ինչ հասկանալ սկսողը թէ սողունները և ձկները առանձին տռամճին զատերի են զասավանում, քանի որ սկզբուց ոչինչ հասկացութիւն չեք տեղ զասաւորութեան ամենասարբական վիտութեարի մասին: Կենդանաբանութեան մէջ ամենամեծ երկու բաժանմունքների վերաբերեալ՝ Ողնաշարաւորների (Vertebrata) և Անողնաշարաւորների (Evertebrata), նոցա մէջ եղած զանազանութեան, նոցա ընդհանուր բնապրոցութեան (харакտերիստիկա) մասին նա ոչինչ չի առում, այլ միանց եր. 45, ի միջի աչլոց, զրից անելիս, մի տեղ բգեղի մսուին խօսելիս, նկատում է, աներև զնուուած կենդանիների ուլլասկազմի ամենակարևոր մասն ողնաշարմն է, ուստի նրանք կոչում են ողնաշարաւոր կենդանիք և որովհետեւ բզեզը չ'ոճի աչդ, կոչւում է անողնաշարաւոր կենդանիու: Ամա, ինչպէս հասկանալ սկսողը

թէ շերամը, ոջիլը, ճանձը, լուն և ալզն, ողնաշարաւորներին են պատկանում, թէ անողնաշարաւորներին։ Զէ որ դուք, պ. Ս. Փիլօհան, սպասում էք որ սկսողը դեռ ոչինչ չը գիտէ։ Հենց զորա համար զգուշացնում էք նորան ասելով. «Թիթեռնիկն էլ բղէզի նման ուկրներ չունի» (եր. 48), Ռւբեմն եթէ միւսների մասին (ոջիլ, լու, ճանձ և աղն) ոչինչ չէք ասել, ընթերցողը կարող է կարծել թէ նոքա ուկրներ ունին։ Ախար, չէ որ ընթերցողները դեռ ոչինչ չը գիտեն, հենց զորա համար լուրջ կերպով նոցա ասում էք. «կովը ծնում է հորթեր, որոնց կերակրում է իր կաթով» (եր. 26). «մաքին ծնում է զառներ, որոնց կերակրում է իր կաթով» (եր. 28) և այն։ Եւ լանկարծ ալդպիսի ընթերցողների առաջ շարում էք կմախքի ուկրների անունները, նկարագրիները, չը տալով մինչև անդամ մի ամենաանհրաժեշտ, մի որ և իցէ կաթնասունի կմախքի նկար։ Մինչդեռ գիրքը զարդարել էք, զործի համար բոլորավին աւելորդ, պաճուճանքներով, մանրմունը նկարներով՝ «Աղբիւրից» վերցրած։ Խնչալիս ձեր ընթերցողը, որը կեանքում ոչ մի կմախք չի տեսել և զիս ոչինչ չը գիտէ և առաջին անգամ է լսում մինչև անդամ թէ «հաւը ձու է ածում» (եր. 51), թնչալիս ապահիսի ընթերցողը հասկանաք ձեր մարմնակազմական բացատրութիւնները, առանց մի ամենահասարակ նկարի։

Բոլոր մարմնակազմական (անասոմիական) և Փիզիօլոգիական ու կենցաղավարական տեղեկութիւնները անկանոն, առանց որոշ մի կարգի, խառնափնթոր, կցկատը շալրթւած են զէս ու զէն ամենաալանդակ կերպով։ Եւ այն չի, որ մի լայտնի հետեւողութեամբ, պարզ սկսի մի բան նկարագրել, այլ անկատար, խառնափնթոր, զէսից զէնից մի քանի անկատ, աննշան խօսքեր է որ կրկնում են։ Դիցուք խօսում է կմախքի մասին։ Գոհանակ բոլոր կաթնասունների կմախքի վերաց սի ընդհանուր տեղեկութիւն տալու, պարզելով տաածը մի որ և իցէ նկարի վերաց, և ամեն մի ներկայացուցչին դարձ էասկանից զանազանութիւնը նկատելու, պ. Ս. Փիլօհանը ամեն մի կաթնասունի մստին, առանձնապէս, անկապ, ոչինչ չը պարզող խօսքեր է որ կրկնում է։ Առնենք, օրինակի համար, նորա ասածները վերին և ներքին անդամների (ծագերի, ալիքնքն՝ ոտների) մասին։ Ակաթնասուն կենդանիներ վերնազրի տակ առաջին տեղն է բանում («կատուն»), որի ծագերի կտղմութիւնը ալսալիս է բացատրում իր ընթերցողներին (եր. 12). «Առաջին ոտները կպած են ողնաշարին թիակի երկար ուկրով, իսկ վետին ոտները—կոնքի ուկրներով» (իսկ ուրիշ կաթնասունների մօտ թնչալիս է, միթէ մի ուրիշ տեսակ է)։ Պետք (եր. 13) «կատուի խըրական-չիւր ոտը կազմուած է երեք երկարացրած ուկորներից, որոնք միաւորուած են չողերով և արդ ուկրների միաւորուած տեղը շարժական է. ոտները վերջանում են կարծ մասներով»։ (միթէ զա է ծագերի կմախքի նկարագիրը և միթէ ուկորների միաւորութիւնը ուրիշ կենդանիների մօտ ալլապէս է)։ Յնոոու գալով Շանը՝ ասում է, «Յան առաջին ոտները բաղկանում են ուսուկ-

րից, դաստակից և թաթից, իսկ վետին տոները—ազդրից, ոլողից ու ներքանից, ոլողների վերև գտնուած է փոքրիկ ծնկուկրը» (բոլորովին վայր ի վերու խօսքեր). Եթէ չեք կամեցել բոլոր ուսկորները թւել, գոնէ բաժանմունքները ձիցդ ասէիք). Զիոռ ոտների մասին արժանի է գտնուած նկատել միան. «Զիոռ պինդ ու տժեղ ոտները վերջանում են սմբակով, որը շատ հասա ու լան է» (եր. 23), (իսկ որ աւելի նշանաւորն է և հետաքրքրելին՝ թէ այդ սմբակը ինչ բան է, միւս կաթնասոնների ծայրիրի որ մասին է համապատասխանում, դորա մասին աւելորդ է համարել հեղինակը խօսել): Ասացէք խնդրեմ, ինչ ահինանաւոր և կանոնաւոր հասկացողութիւն կարող է կազմել ընթերցողը, հէնց օրինակի համար, կաթնասոնների վերին և ներքին անգամների կազմութեան մասին: Պէտք է նկատել, որ նոնքան անկատար են և միւս տեղեկութիւնները, Պ. Փիլօւենը ամեն անդ իր պարագն է համարում կրինել. «Մարդու մարմնը կարմիր է և տաք» (եր. 10), «Լատ-վէ արփանը տաք է և կարմիր, չնչում է թոքերով» (եր. 14) (իսկ մարդու ինչով): Համնելով Շանը՝ էլի ասում է, «Ի՞րա արիւն էլ նոնդէս տաք և կարմիր է, չնչում է նոնդէս թոքերով» (եր. 17): Ալսովէս, պարտնը ոչինչ հառկացողութիւն չ'ունի կարգ ու կանոնի և դասագրքեր կազմելու մասին: Կարծեմ բաւական է ինչքան խօսեցինք. եթէ քննենք բոլորը, պէտք է մի նոյն հաստութեամբ, գուցէ և աւելի, զիրք զրմնք:

Սի խօսքով, կարելի է ասել, որ պ. Ա. Փիլօւենի «Զրոյներութիւններում մի ամենախալսաւակ, տգէտանձնավատառութեան, աֆերիստական դործ է: Չը նակած հեղինակի, մեծ մեծ խօսքերին (առև Ազզ), նա ոչ միան ակդ դասագրքով չէ կարող Ալյուցանել թերին իւր փոքրիկ և հասակաւոր ընթերցասէրների մասաւոր զարգացման մեծ խնդրումն), ազ նաև կարող է միան սկսողների մտքերում լարուցանել կատարեալ խուռաչփութիւն և թերի, սասր կարծիք բնական պատմութեան մասին:

Լ. Ա.

Ա. Փիլօւեն. «ԿՈՐԱԾ ՄԱՅԻՍԻՒԹԻԾ». Վէպ-Նկարագիր Նոր-Բայազէտի վարք ու բարքի. Տիլսիս. Տպարան Մ. Դ. Խօսինեանցի, 1888 թ. 8-ծալ, 175 եր. տառ. № 12, գինն է 50 կոպէկ:

Այդ գրքովէ մի բաւական գեղեցիկ և բագմակումանի նկարագիր է է Սեանայ լճի մօտ գտանող աղն ծաղկաւէտ, կանաչազարդ ու աղլիրառան գիւղաքաղաքի, ուր օդի մեղմութիւնը «անմահական» աղլիրների ջրերի հետ միասին՝ պարգեել ևն «Գէօկչեցի» հային առողջ, վայելուշ կաղմւածք, առողդ և գեղեցիկ պատկեր, կարսլի սիրս և ուրախ, վւարճաւեր բնաւորութիւն: Ալնանդ ջերմեռանդ ովատագնացութեան հետ կապւած մշտական քէմն ու ուրախութիւնը, գուռնան ու նազարան, երդն ու պարը վերջ

չունին. այնտեղ հարսանիքը, իւր նահապետական պարզութեամբը, վեց-հօթն օր է տեռամ: Բնութեան ազդ գեղեցիկ դոդում մէրն էլ բռուն է և վեհ: Անտեղ սիրող սրանքը, եթէ խոչընդաների են հանգիստում, իրանց զըսվոր մահու են մատնում անխոռով ու անտրոռնչջ: Եւ իրաւ, գրքովիկ հերաների՝ Սմբատի ու Մարգարտի ուրը աննման է: Տեսարանները, մանաւանդ գրնալով վերջը, անքան սրտաշարժ են, որ զժւար է արցոնքը բանել: Աըրտաշարժութեան կողմից կարելի է համեմատել այդ վեպիկը «և արմ է ն Սիլվառի» (Խումինիավ թագուհու) զողորիկ վեպիկների հետ:

Ցաւալի է միան, որ չեղուն (չեմ խօսում տեղական բարբառի մասին) վերին տատիճան անմշակ և զուրկ է քերականական տարրական կանոններից: Օրինակ՝ «Նոր-Բագալիշտոր, որ պարծենաւմ է իւր հովասուն օդով և առաջ ջրերավ, ահա խաչերի ջրերն են միւս բազմութիւն աղբւրների մէջ առաջին տեղը բռնում, որ սատրերկրեաւ խողովակներով ճիւղաւորուած ցրուում է քաղաքի մէջ և այլ տեղեր» (եր. 129): Մարդ մնում է շւարւած: Դվասաւոր նախադասութիւնը, միջանկեալով ընդհատուելուց չեսուց, չէ վերջանում, սկսում է նոր գլխաւոր նախադասութիւն: Անոն բային լողնակի, բայը եղակի գրւած և ազն. համաձանութեան (syntaxe) հան սնդամ չը կար: Մատենագիրը չը պիտի զոհելացնէ իւր լեզուն. ընդհակառակն, նորա ուղղակի կոչումն է՝ ժողովրդին կանոնաւոր լեզուի ընտելացնելով՝ կանոնաւոր մոածելու վարժեցնել:

Յ. 1.

«ԸՆՏԻՐ ՀԱՏՈՒԱԾՆԵՐԻ» (Քրեսթոմաթիայ). Հայ լոյրոցների համար: Ա. մասն.—Արձակ. երկրորդ տպագրութիւն (հարիւր նոր հատուածով). յօրինեց Յովհաննէս նազարեանց. Թիֆլիս: Տպարան Մարտիրոսեանցի, 1889 թ. 504 երես., տառ № 12, գինն է 1 ր. 25 կուլ.

Գրքամ յօրինողը կամ առաւել ծիշդ առելով՝ կազմովը, արդէն ծանօթ է մեր գրականութեան մէջ իրքն հեղինակ հաներն լեզուի դասագրերին Անծանօթ չէ մեր մանկավարժներին պ. Նաղարմանցի այս զործը, որի երկլուրդ տպագրութեանը լուս տեսնելն արդէն մի առանձին գնահատութեան նշան պէտք է համարել, թէս առաջին տպագրութեան ժամանակ (1883) պ. յօրինողը անպիսի հոչակահար միջոցների չըր զիմել, ինչպէս այժմ: Զեկուցողիս կարծիքով, աւելորդ էին գրքի սկզբում հրատարակւած երկու նովաստաւոր քննադասութիւնները: Եթէ վեց տարի առաջ այս զիրքը ոչ մի փառաբանող չէր, անշուշտ նրա երկրորդ և տուարայշրած տպագրութեան համար ակժմ առաւել ևս աննպատակ են մի մանկավարժական ժողովի և կամ մի սոսկականի հարծիքը: Ընտիր հատուածները մի ժողովածու են դանագան ազգային և օտար մատենադրիների:

գրւածներից քաղած չօդւածների, որոնք դասաւորւած են մատենագրութեան տեսութեան որոշած բաժիններին համաձայն: Ակապիսի հատւածների ժաղամածուները շատ կան օտար մատենագրութեանց մէջ, որանք զործ են դրւում զպրոյներում (ոչ ժողովրդական, այլ միջնակարգ), իբրև զասագիրք լեզուի և նախաշաւիղ մատենագրութեան տեսութեան և պատմութեան և կոչւում են Chrestomathie (քրեստոմաթի): լունարէն քրեստոմաթէ է ի առաքով, որ կը նշանակէ ժողովրդու ընալիր հատւածների: ինչո՞ւ ուրեմն քրեստոմաթի աչ և ոչ՝ քրեստոմաթի:

Այս երկրորդ տակագրութիւնը ընտան համար է ճոխացրած է և փոփոխած: մանաւանդ փոփոխած է չօդւածների կարգը, բացի դրանից, ունի և երկու մեծ լաւելւած դրբի սկզբումն՝ «Տեսութիւն գրականութեան» եր. 18—43 և վերջում՝ «Գրաբար չօդուածներ» եր. 489—504:

Ծնտիր Հատուածների գլխաւոր բաժիններն են. I. Նկարագրութիւններ. 1) Բնութեան երեսութիւն, 2) Աշխարհագրական (ա. Փիզիքական, բ. ժողովրդագրական), 3) Համապարհորդութիւններ, 4) Նամականի, 5) Հանդէսներ, 6) Պատկերներ, 7) Զուգակչիո, 8) Խորհրդածութիւններ. II. Վիպասանական հատուածներ. 1) Վարքադրութիւն, 2) Կենսագրութիւն, 3) Խնդրական առաջ բութիւն, 4) Փամանակագրութիւն, 5) Ցիշատակարան, 6) Պատմութիւն, 7) Փիլստոփակութիւն, 8) Հոգեսրութիւններ, 11) Հովուական. Ծնդամնը 167 չօդւած, իսկ 168-երրորդը, որ կոչւում է «Խաչ օղնեամ ինձ (Գ. Մուկադեանց)» չը կաէ գրքում, թէն ցանկում նշանակւած է: Գրաբար հատւածների թիւն է 24, որով հատուածների թիւն ամբողջապէս կը լինի 191-մինչզեռ առաջին տպագրութիւնն ունէր 145 հատւած, աւսինքն երկրորդ տպագրութեան մէջ աւելացրած են ոչ եթէ 100, ինչպէս գրքի երեսումն է տպած, այլ միան 46, չը հաշւելով գրականութեան տեսութիւնն և երկու խնձնարարական քննադատութիւնները, որ եւրոպական հրատարակութիւնները գրքի պատրարտութեան (Prospectus) մէջ են տպում:

Այն մատենագիրներն, որոնցից հատուածներ են հանւած, բաւական րազմաթիւն են, աղքաղին մատենագիրներից շատ սակաւ են պակաս, օրինակ՝ Պուշկանցը. զրա փոխարէն կան այնպիսի գրողներից հատւածներ, որոնք անծանօթ են և որոնցից բերած հատւածներն լաւ կը լինէր թողնել, քան թէ տպիլ (տես. լոդ. 75):

Թարգմանական հատուածների լեզուն շատ անմշակ է, օրինակ, կարդում ենք. «առանում էր ուռած ջրերը», «Ջիջ» (նեարդ), «առվորութիւն», «Փիզիքական» (բնական), «չեմ համարձակիլ (լ) մտածել», «Թիֆլիզի հաճերն աճերան նմանեցրին իրենց վրացիներին», «պատմողական», «առեղաւորուեցաւ նոտարանի վերաց» և այլն և այլն: Տեղիա սղութիւնը չէ ներում շատ օրինակներ բերել: Զարմանալի է, որ պ. չօրինողի աչքից փախել են Փ. Վարդանեանի գեղեցիկ թարգմանութիւններն, որոնցից աւելի ընալիր օրինակներ կարող են բերել:

Ընտիր Հասուածների մանկալարժական, զբական նշանակութեան և նրա կաղմակերպութեան մասին խօսելն մեր նպաստակը չը լինելով՝ թողնում ենք այդ մի այլ առթի, իսկ գալով «Տեսութիւն զբականութեան» կոչւած բաժնին, քանի մի խօսք կ'ուզէինք ասել:

Պարոն յօրինողի «Տեսութիւն զբականութեան» կոչւած բաժինը ամբողջովին թարգմանութիւն է և կամ մեզմօրէն ասելով փոխադրութիւն է առուերին «Սպեцијаլ Տеорія Словесности.» Հ. Մինիա. Ը. II. 1881. դրվից, որից հանած է տաղաչափութեան վերաբերեալ կոտրը միայն, Զեկուցովի կարծիքով, պէտք էր նախ՝ աղբեկը լիչել և երկրորդ՝ առելի մշակել ապր բաժինը, աչքի առաջ ունենալով և այլ ազդ տեսակ զբքեր և ոչ թէ միայն մի զբքից թարգմանել, որի տեսութեան հիմնական զաղափարներն վիճելի են:

Վերջացնելով մեր զեկուցումը Ընտիր Հասուածների մասին, պարագ ենք համարում լանձնարարել այս գիրքը մեր հաներէնի ուսուցիչներին, որ իւր առատ նիստով շատ օգտակար կարող է լինել զպրոցներում իրքեւ մատենադրական ճաշակ զարգացնող և շարադրութիւններին ուղղութիւն տւող առաջնորդ:

Ք.

ՆԻՒԹԵՐ Ա.ՆԴՐԿՈՎ.ԿԱՍԵԱՆ ԵՐԿՐԻ ՓԵՏԱԿԱՆ ԳԻՒՂԱՑԻՆԵՐԻ ՏՆՏԵՍԱ-ԿԱՆ Վ.Լ.Ա.Ա. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՅՆ. Հասարակութիւն Պիտակ. կալւածների Մինիստրի հաւատարմատար Կովկասում—ի. ի. Տիմիկների. Թիֆ-լիս. 7 մնձագիր հասորներ, 2-ծալ, բոլորը միասին 5525 եր, տառ № 12.

Այս նշանաւոր հրատարակութիւնները պատկանում են մեր զարուամնանշանաւորներին՝ Անդրկովկասի վերաբերեալ: Նոքա մնձ գեր պիտի խաղան մեր երկրի զիւզական կեանքին վերաբերեալ զբականութեան ու օրէնսդրութեան մէջ: Նոքա զուրկ չեն թերութիւններից, բայց քննադատներ նոյա ամբողջութիւնը զեռ ևս անհնարին է: Մեր առաջին պարտականութիւնն է ծանօթացնել նոյա բոլանդակութիւն հետ, որը չափազանց հարուստ է: Ալգրան հարուստ նիւթի հետ ծանօթացներու ամենազարմար միջոցն ենք համարում՝ ուղղակի զնել ընթերցողի առջև զբքերի բովանդակութիւնը, լառաջաբանը, հրահանդը և ծրագիրը, որով հաւաքւած են թարգմանութիւնը, թողնելով միւս անդամին ծանօթացներու հրահանդի և ծրագրի հետ:

Յ. Ա. Ռ. Ա. Զ. Ա. Բ. Ա. Ն.

Անդրկովկասեան երկրի հինգ նահանգների (Թիֆլիսի, Քութավլիսի, Երևանի, Գանձակի և Բաքուի) աէրունական բնակեցրած տեղերի տարառութիւնը ճշգրիւած չափուած չեն, բայց, մատաւրական հաշուով, նոքա

կազմում են մօտ 3,800,000 զեսհատին ¹⁾: Այդ հողերի վաստ կառ 4,061 գիւղ, որոնց մէջ, կամերավի հաշտով (1872 թ.), կաէ 223,081 տուն և 803,895 հողի արական սեռ.իւ

Վերողիշեալ թւերը ցոյց են սալիս, որ կանոնաւոր վերաբերմունքից դէպի տէրունական, բնակեցրած հողերը կախւած է երկրիս հարկասու ապդէպի տէրունական մի նշանաւոր մասի բարօրութիւնը և, ուրեմն, նորագաբնակութեան մի նշանաւոր մասի բարօրութիւնը և, ուրեմն, նորագաբնակութեան մի նշանաւոր մասի բարօրութիւնը միմիտն ծխառավաճաները անպէս են, որ ժողովրդի բարեկենցաղութիւնը միմիտն ծխառավաճաները չէ կախւած: Երկրի շատ տեղերում հողը բաժին ²⁾ հողերի մնաւութիւնից չէ կախւած: Երկրի շատ տեղերում հողը ոչ մը դին չունի մշակութեան համար, եթէ նորան չը ջրեն: Ուրեմն, բարար և ապահով հող ունենալուց վաստ, պէտք է հողալ, որ դիղացիները բաւականաչափ և ապահով կերպով ջրից օգտուել կարողանան: Բացի դորանից, բարականաչափ և դաշտավին տէրունական արօտատեղերի, այն է եզազների և լիոնավին և դաշտավին տէրունական արօտատեղերի, այն է եզազների և լիոնավին և դաշտավին տէրունական արօտատեղերի (մինչև 3,000,000 զես.) առաջացրել է անստեղազների առաստութիւնը (մինչև 3,000,000 զես.) առաջացրել է անստեղազների առաստութիւնը (մինչև 3,000,000 զես.) առաջացրել է անստեղազների և արօտատեղերից օգտուելու օրէնքների խնդրի մէջ: Ընդ սմին, Նորին Գերապահառութիւնը, համաձայնաւութեամբ կովկասի քաղաքացիական բաժնի կառավարչապետական իշխ. Ա. Մ. Գօնդուկով-Կորսակովի, գրադապից աջն հիմունքները, որոնց վերաբ պիտի հիմնուեր լիշեալ խնդիրների մասին օրէնքների նախազիծը:

Պետական կալւածների պ. մինխատը, պետական-քարտուղար Մ. Պ. Օստրօվսկին, 1883 թ. Կովկասում եղած ժամանակ, ցոյց տւեց իւր հստատարմատարին ³⁾ այն կազը, որը կաէ տէրունական գիւղացիների հողալին խնդրի և ջրից և արօտատեղերից օգտուելու օրէնքների խնդրի մէջ: Ընդ սմին, Նորին Գերապահառութիւնը, համաձայնաւութեամբ կովկասի քաղաքացիական բաժնի կառավարչապետական իշխ. Ա. Մ. Գօնդուկով-Կորսակովի, գրադապից աջն հիմունքները, որոնց վերաբ պիտի հիմնուեր լիշեալ խնդիրների մասին օրէնքների նախազիծը:

Արօտատեղերի մասին խնդիրը արդէն իւր լուծումն ստացաւ օրէնքների կարգով, այն հիմունքներին համաձայն, որոնք ներկայացրած են մինիստրների կոմիտետի բարձրագույն հաստատաւած որոշման մէջ ⁴⁾:

1) Մէ զեսհատինը հաւասար է 60 սաժէն երկարութիւն և 40 սաժէն լայնութիւն ունեցող, ուրեմն 2400 քառակուութ սաժէն տարածութեան և գրանցիական 109^{1/4} արէն (are).

2) Գիւղական հողերը, երբ նոքա առանձին մարզկանց սեպականնութիւն չեն, ամբողջ գիւղին է թողած օգտուելու, բաժանում են գիւղացիների մէջ կամ ուղարկող գիւղին է թողած օգտուելու, բաժանում են գիւղացիների մէջ կամ մարդկանց թուլակը և կամ կարգեցին մասնակցող մարդկանց թուլ կամ մաստ: Մէկ բանեցի (ծուխեցի) և կամ կարգեցին մասնակցող մարդկանց թուլ կամ մաստ: Մէկ բանեցի (ծուխեցի) և կամ կարգեցին է կամ մարդկանց թուլ կամ մաստ:

3) Զիլէկեւ Խւան Խւանովիչ, գաղտնի խորհրդական, որը զբուխ է Կովկասի պետական կալւածների կառավարչապետեան սկսած 1880 մէկ ց:

4) Որի հետ անշուշտ կը ծանօթացնենք մէկ ընթեցողներին:

Զրի վերաբերեալ օրինագծեր պատրաստելու համար հարկաւոր դատ-
քց Թէվլիսում մի Մասնաժողով գումարել, կազմւած զանազան մարդկան-
ցից, պանց մասնակիութիւնները կազ ունին առաջադրած խնդրի հետ,
որպէս նաև ջրանցքների փորձւած տերերից և միրաբներից: Այդ Մասնա-
ժողովից 1883-ին մշակւած «օրինագիծը ջրից օգտակար իրաւունքի և Ան-
դրբեկով ջրանցքներ անցնելու կարգի մասին» տւած է ալժմ բարձ-
րապոն կառավարչական հիմնարկութիւնների համեցողութեան:

Անդրջապէս ձևանարկել պետական զիւղացիների հողավին խնդրը
վերջնականացէս լուծելու դործին անհնարին եղաւ, որովհետեւ դորա հա-
մար տեղեկութիւնները պահասում էին: Անդրկամկասի զիւղացիների մա-
սին տեղեկութիւնները վերաբերում են միմիայն նոցա ծուխերի և շունչերի
թւին: Բացի այդ, չափանի չե, թէ ինչպէս են զիւղացիները օգտառմ դիւ-
ղական ամեն կարգի հողերից, չափանի չե նոցանդէս, թէ զիւղացիք առ միշտ
հողերը իրար մէջ բաժանել են, թէ օգտառմ են համացնական սկզբունքով՝ հողը
բնդհանուր համարելով և ժամանակ առ ժամանակ բաժանելով իրար մէջ.
պարզ չե, թէ զիւղական համաճախները ինչպէս են օգտառմ թագաւորա-
կան անտառներից, արօտանեղերից և ազատ հողերից, որ կապալով են
արտառմ զիւղերի հողերը, սակաւ բացառութեամբ, սահմանւած չեն. բա-
ւականացափ տեղեկութիւններ չը կան երկրի զանազան կողմերի զիւղա-
ցիների գրութեան մասին. թագաւորական ազատ հողերը, որ կարող էին
ծառակել զիւղացիների պէսաքերին, զրականապէս չեն կացուցած:

Այդ պատճառով, Անդրկամկասի պետական զիւղացիների հողավին
վիճակը օրէնսդրական կերպով վճռելուց առաջ, հարկաւոր դատեց նաև
ուսումնասիրել այդ զիւղացիների տնտեսական դրութիւնը՝ տեղն ու տեղը
հաւաքելով անդեկութիւններ, որոնք կարող կը մնին լուսաւորել այն ճա-
նապարհը, որը տանում է զէալի խնդրի կանոնաւոր լուծումը: Այդ նպա-
տակով 1883 թ. սկզբում պետական կալածների մինիստրութիւնից մի
առանձին խումբ կազմենց տասը աստիճանաւորներից բոտկացած: Այդ
աստիճանաւորները, ուղեցոց ունենալով իրանց տւած ծրագիրը և
հրահանգը, 1884 թւականին, վեց ամսում հետազոտեցին 578 զիւղ, 35,426
ծուխով և 131,851 երկու սեռի բնակիչներով: Զմեռւաչ եղանակի սկզբներում
խումբի աստիճանաւորներին լանձնեց իւրաքանչիւր զիւղի մասին առան-
ձին առանձին հաւաքած տեղեկութիւնների մշակումը: Կոսկած չի կարող
լինել, որ ուսւածքների հետևանքների կարելուն չափ ընդարձակ հրահա-
րակութիւնը պէտք է ձեռնարկած զործին իրական օգուա բերէ: Քանի որ
կարելի է զիւղական և փորձի մտրդկանց ցուցմունքներից խոր ժամա-
նակին օգուել, օգուակար զատեց չը վատաձգել 1884 թ. աշխատանքների
ապագրութիւնը մինչև նոցա ընդհանուր մշակումը, այլ հրահարակել նոցա
առանձին տեղարակներով:

Բայց ահաւասիկ և 7 հասորների բոլվանդակութիւնը, որի առիթով պիտք է ասենք, որ խորաքանչիւր Յօդւած է այս անփոփոխ վերնագիրը՝ Տնտեսական վիճակը (այս ինչ) նահանդի, (այս ինչ) գաւառի պետական գիւղացիների; Հետազօտութիւն (այս անոնց), Բայց մեր հետեւալ ցուցակում կարծ կերպով վիշել ենք միմիակն հետազօտւած տեղերի և հետազօտողների անունները:

Աւելցնենք նաև, որ հետազօտողների թիւը հետեւալ 1885 թ. մի տասով էլ աւելացաւ և վերջին տասը՝ աւելացիներիցն էին:

I. ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ. (6 տետրակներով, միասին 787 հր.)

Յառաջան, Բարձրագոյն հաստատւած 29 դւն. 1889 թ. Մինիստրների կոմիտեի Անդրկոմիկան վճիռը ձմեռնապին և ամառնապին արօտատեղերի մասին:—Հրահանդ, տւած Կովկասուղարկւած աստիճանաւորներին՝ պետական գիւղացիների անտեսական վիճակը հետազօտելու համար:

Հորագեալ, Ալեքսանդրովովի գաւառում, Երեանի նահանգում: Հետազօտ. Ս. Պ. Զելինսկի:

Ցուցակ հեղինակութիւնների, որ սարաբերութիւն ունին Անդրկոմիկասի պետական գիւղացիների անտեսական վիճակի հետ: Կազմեց Ա. Դ. Երիցեան:

Գերմանական գաղթականների տնտեսական վիճակը Անդրկոմիկասում: Հետազօտ. Ն. Կ. Նիկիֆորով:

Լեզգումի գաւառ, Քութավիսի նահանգում: Հետազօտեց Դ. Պ. Նօսովիչ: Քութավիսի գաւառի հիւսիս-արևելեան մասը: Հետազ. Ֆ. Տ. Մարկով:

Նոր-Բաղադրտի գաւառի հարաւարեւմտեան մասը, Երեանի նահանգում: Հետազ. Ա. Վ. Պարմիցկի:

Օզուրգետի գաւառ, Քութավիսի նահանգում: Հետազ. Ս. Կ. Ալիքին և Պ. Պ. Նօսովիչ:

Խիդանների զրութեան մասին (Վաստանում) Նիւթեր. Յօդւած Ս. Ն. Կուչանելի:

Խիդանները և խիդանութիւնը, Զեկուցում Խ. Ա. Վերմիշելի:

Գիւղացիական բնակումը Գանձակի նահանգում: Քաղւածք Ս. Վ. Կուչանելի հաշից:

Բաքուի գաւառ, Հետ. Պ. Ն. Խազօղինսկի:

Նախիջևանի գաւառի արևմտեան մասը, Երեանի նահանգում: Ն. Կ. Նիկիֆորով:

Օրդուբաթի վիճակը, Նախիջևանի գաւառում, Երեանի նահանգում:

Պ. Ն. Եազօղինսկի:

Հարուր-Դարալաղեազի գաւառի արևմտեան մասը, Երեանի նահանգում: Ա. Պ. Դեկոնսկի:

II. ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐ (Երեք տեսրակով, միասին՝ 789 երես).

Բաշխնի գաւառ, Գութալիսի նահանգում, Հեռավոտ. Ա. Լ. Բախտաձեւ
կուբալի գաւառի հարաւային մասը, Բաքուի նահանգում. Պ. Ն. Ամ-
գողինսկի:

Կուբալի գաւառի հիւսիսային մասը, Բաքուի նահանգում. Պ. Վ.
Կոտլեարևելի:

Բաքուի գաւառի արևմտեան մասը. Պ. Ն. Յագողինսկի:

Ղազալի գաւառ, Գանձակի նահանգում. Ա. Երիցեան:

Սենակի և Զուզդիդի գաւառներ, Գութալիսի նահանգում. Պ. Յ.

Նոոօլիչ:

III. ԵՐՐՈՐԴ ՀԱՏՈՐ. (մասն 1. 512 եր. մասն 2. 282 եր. = 794 եր.).

Երևանի գաւառ. Ֆ. Տ. Մարկով:

Սուրմալուի գաւառ, Երևանի նահանգում. Ա. Խանաղեան:

Փամբակի վիճակ և Շորագեալի վիճակի հիւսիսային մասը՝ Ալքսան-
դրոպօլի գաւառում, Երևանի նահանգում. Ա. Պ. Զելինսկի:

Ախալցխալի և Ախալքալաքի գաւառներ, Թիֆլիսի նահանգում. Խ.
Վերմիշել:

IV. ՉՈՐՐՈՐԴ ՀԱՏՈՐ. (մասն 1. 385, մասն 2. 385 = 770 երես).

Զանդեղուրի գաւառ, Գանձակի նահանգում. Ս. Զելինսկի:

Շուշից և Զերբարիլի գաւառներ, Գանձակի նահանգում. Ա. Դեկօնսկի:

Նոր-Բարձրջետի գաւառի հիւսիս-արևելեան մասը, Երևանի նահան-
գում. Ա. Պարվիցիկ:

Շարուր-Իտարալագեալի գաւառի հիւսիս-արևելեան մասը, Երևանի
նահանգում. Ա. Պարվիցիկ:

Սղնախի գաւառ, Թիֆլիսի նահանգում. Ա. Մ. Արզութեան:

V. ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԱՏՈՐ (մասն 1. 571 եր. մասն 2. 295 = 866 եր.).

Թէլաւի գաւառ, Թիֆլիսի նահանգում. Ա. Արզութեան:

Թիֆլիսի գաւառ, Ա. Վ. Մաչաբելի:

Թիօնեթի գաւառ, Թիֆլիսի նահանգում. Մ. Վ. Մաչաբելի:

Դուշեթի գաւառ, Թիֆլիսի նահանգում. Ն. Կ. Նիկիֆորօվ:

Շորապանի գաւառ, Գութալիսի նահանգում. Ի. Լ. Բախտաձեւ:

VI. ՎԵՅՑԵՐՈՐԴ ՀԱՏՈՐ (մաս. 1. 309 եր. մ. 2. 435 = 744 եր.).

Նուխւաչ գաւառ, Գանձակի նահանգում. Ա. Արտախանեանց:

Գորւաչ գաւառ, Թիֆլիսի նահանգում. Ա. Մաչաբելի:

Գոկչալի և Շամախու գաւառներ, Բաքուի նահանգում: Ն. Արէլեան:
Զիւանշիրի գաւառ, Գանձակի նահանգում: Ա. Խանաղեան:

VII. Եօթներորդ ՀԱՏՈՐ. (765 Էր.).

Գանձակի գաւառ, Ն. Արէլեան: (Յովս. Տէր-Մովսէսեան և)
Արէշի գաւառ, Գանձակի նահանգում: Ա. Արասխանեանց:
Քութալիսի գաւառի հարաւարեմտեան մասը: Ի. Օ. Խօսկեանի:
Զեւաթի գաւառ, Բաքուի նահանգում: Ա. Կ. Ալբին:
Բորչալուի գաւառ, Թիֆլիսի նահանգում: Ա. Երիցեան:
Լինքորանի գաւառ, Բաքուի նահանգում: Դ. Ա. Կիսունեօլ:
Ա.

Առաջիկաւ Ա-ռում, ի միջի ալոց, աեղ կը բռնեն հետեւալ գրքերը:

1. Յիսոնամեակ Երևանի թեմական Դալրոցի:
2. Նաւառարդիանց Տիպրան: Հեքիաթներ. 1—5 գր.
3. Յովսէփիեանց Վաղարսո քահանաց Քնարիկ մանկական:
4. Աղափիրեանց, Գրիգոր Եպիսկ. Կրօնական խորհրդածութիւններ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՈՎԿԱՅԻ ՀԱՅՈՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՐԾ:

Յուն. 15-ին կալացաւ վիշեալ Ընկերութեան ընդհան, ժողովը Թիֆլիսի քաղաքավին վարչութեան տաճ գաճլիճում, նախագահութեամբ պ. Ս. Արծրունու: Ժողովի զբաղումների առարկաներն էին՝ հաստատել կենդրոնի և գառական բաժինների նախահաշխւները 1889 թւի համար և ընտրել խորհրդակից հերթով զուրու եկալ հինդ անդամների փոխարէն՝ նորերին, որպէս նաև ընդհանուր ժողովի համար նոր նախագահ և քարտասազար: Օգոստ քաղելով դէպքից, մենք կը ներկայացնենք ընթերցողներին այդ ընկերութեան դրութիւնը և զործունէութիւնը, որքան այդ երեաց ժողովի գեկուցած հաշիւններից:

Ընկերութիւնը ունի մի Կինդրոնական վարչութիւն Թիֆլիսում, որը բղխում է ընդհանուր ժողովից՝ ընտրածական կանոնով: Խորհուրդը բաղկացած է 9 անդամներից, որոնցից խւրաքանչիւրը ընտրում է երկու տարով: Բայց սկզբից արդէն զործ անդէս է կանոնաւորել, որ ամեն առաջի միմիան չորս կամ հինգ հոգու երկամնաց անդամնութիւնն է լրանում, անդէս որ ամեն առաջի փոխուում է միայն կէսը:

Ընկերութիւնը ունի բաժիններ գանազան տեղերում: Այդ բաժինները կազմում են աեղական վարչութիւններ, որոնք իրանց գործունէութեան համար պատասխանատու: Ին Կինդրոնական վարչութեան և, արեւմն, Ընկերութիւնն ընդհանուր ժողովին, քանի որ այդ Կինդրոնական վարչութիւնը կատար խորհուրդը բղխում է նորանից: Այդպիսով, Ընկերութեան Թիֆլիսի բաժինը կազմում է Ընկերութեան կենդրունը և Ընկերութեան Թիֆլիսի բաժինի վարչութիւնը միացրած է Ընկերութեան խորհուրդի հետ: Մինչ այժմ այդ Ընկերութիւնը ունի բաժիններ՝ Կոր-Նախիջևանում, Ախալցխալում, Քօրիստ, Շուշիում և Երևանում: Այս բաժինները իրանց նախահաշխւները ներկայացնում են Թիֆլիսի Կինդրոնական վարչութեան: Այդ բոլոր բաժինների անձեռնմխելի զումարները պահ են արւած Կինդրոնական վարչութեան, որը գումարների տոկոսները ամեն տարի ուղարկում է ան քաղաքի բաժնին, որին նոքա սրա սրատկանում են:

Ընկերութեան թէ կենդրոնի և թէ քաժինների եկամուաները կազմում
են՝ անձեռնմխելի չափուած գումարների տոկոսներից, անդամակցութեան 5
րուբլու տարեկան վճարներից, պատահական նույներից, ներկայացութեան-
րից, պարահանդէմներից և այլն:

Ահա թէ առ. 1-ն չունարի Կենդրոնը (Թիֆլիսում) ինչ բառով գու-
մարներ ունէր, որոնց միմիան տոկոսներով կարելի է շահել չորսութեան
կերութեան նպատակների:

1) Անձեռնմխելի կոչւած գումարը տոկոսարեր թղթերով կազմում էր
առքի գնով 25.155 ր.,

անուանական արժեքով 25.550 ր.

Ժողովում անձեռնմխելի չափարարւեց իս 1.510 ր.

ուրեմն 1889 թ. անձեռնմխելի գումարն էր 27.060 ր.

2) ձարտարապետ Համբարձում Կարապետեանի

ներած գումարը 1.001 ր. 73 կ.

3) Կարսի բառով գումարը 5.104 ր. 05 կ.

Ընդամենը ուրեմն, Կենդրոնական Ընկերութիւնը

1889 թ. հաստատած գումարներ ունէր 33.165 ր. 82 կ.

Բայց ահա մի քանի բացատրութիւններ այդ գումարների մասին:

1) Անձեռնմխելի գումարը 27.060 լուբլի բոցացած է Ընկերութեան
մշտական անդամների վճարներից, պատահական նույներից, ամեն տարւաչ
քիւջետի 50/0-ներից և Մուլապեանի կտակած գումարից (7000 ր.), տիկին
Եղիս. Տէր-Դաւթեանի (1000 ր.) և ալ. Սերեբրեկեանի (մօտ 250 ր.) նույներից:

2) Երկրորդ գումարը մօտ 1000 ր. ներած է Խուսիափի Ցամբով քա-
ղաքի ձարտարապետ պ. Կարսալ., որպէս զի այդ գումարը հինգ տարի
շահեցվի, խակ լետոց բոցացած գումարի տոկոսները գործադրւին համաձայն
ընկերութեան:

3) Կարսի գումարի ծագումը այս է. Սովոր ժամանակ (1879 թ.) Թիֆ-
լիսում կազմւեց Սովիլոց մասնաժողով՝ ժողովարարութիւն անելու և գու-
մարները սովիլոց մէջ բաշխելու համար: Ժողոված գումարներից մնաց մնա-
ցորդ ինչ որ 4000 լուբլի, որը մասնաժողովը լանձնեց Հայոց Բարեգոր-
ծական Ընկերութեան, այն պազմանով, որ այդ գումարի տոկոսները գործ
ածւին Կարսի հարոց երկանու զալոցների վերաբ:

Այդ բացատրութիւններից մոտով, զիմննք ժողովին ներկայացրած նախա-
հաշլին 1889 թւականի համար: Ահա մուտքի հախահաշլուը, որ հաստատեց
Ընդհանուր ժողովը և որի հետ գուղահեռաբար գնում ևնք 1888 թւականի
մուտքի թւանշանները:

Մ Ա Խ Տ Ք.	1889		1888	
	ՀԱՊ	ՆԵՐՃ Է	ՀԱՊ	ՆԵՐՃ Է
	Բ. Կ.	Բ. Կ.	Բ. Կ.	Բ. Կ.
1. 1888 թւականից մնացորդ	230 85		277 41	
2. Աճեռնմխելի և ընթացիկ հաշվի գումարների $0/0\%$	1630 —		1631 84	
3. Եւէրներից, պարահանդէսներից և այլն	1739 15		3787 58	
4. Անդամակինքարներից (200 անդ.)	1000 —		900	
	4600 —		6596 83	
5. Կարապետեանի լատուկ գումարի տոկոսներ . . .	88 60			
6. Կարսի լատուկ գումարի $0/0\%$	495 05			
	5183 65			
1889		1888		
Ե Լ Ք.	ՀԱՊ	ՆԵՐՃ Է	Ե Լ Ք.	
1. Ուսումնարաններին.				
ա. Ընկերութեան Խարփուխի ուսումնարանին 1150 ր.				
բ. Նաւթուլուխի ուսումնար. 300 ր.	1450 —		916 17	
2. Ուսանողներին համալսարաններում.				
ա. ամսական 30 ր. 1-ին 360 ր.				
բ. ամսական 10 ր. 2-ին 240 ր.	600 —		460 —	
3. Աշակերաններին 5-ական բուբլի ամսական թոշակով 17 հոգու (Թիֆլսի ազ և ազ ուսումնարաններում)	1020 —		919 —	
4. Ուսման իրաւունքի վճար 3 աշակերտի	278 —		281 —	
5. Բարեգործական նպատակների համար՝ զանազան պիալածներում և պատահական ծախս	495 50		438 30	
6. Պետական $5/0$	81 50		80 63	
7. Դիւան.				
ա. Խորհրդի քարտուղարին 600 ր.				
բ. մանրածախք.	75	675 —	653 04	
	Գումար	4600 —	3748 14	
Այդ 4600 բուբլու գումարի մէջ հաշվելու է և $5/0$ աճառնմխելի՝ համա- ձան կանոնադր. 29 լոգ. ր. կէտին.				
8. Յատուկ գումար.				
ա. Կարապետեանինը	88 60		—	
բ. Կարսինը	490 05			
մանրածախք.	5			
	Համապատասխ. 5183 65			

ԳՕՐԻԱՅԻ բաժնից ընդհան. ժողովին ներկայացրած նախահաշխւը հևտիւնալին
Եր, որ և հաստատւեց.

Մ Ա Խ Տ Ք.

1. Մասղեռալ 72 անդամների վճարը	360 ր.
2. Անդրկապահան ուսուցչական դպրանոցից մի որդեգիրի տարեկան վճարը	30
3. Ներկայացումից	50
4. Պատահական արդիւնք	60
	500

Ե Լ Ք.

1. Մէկ որդեգրի պահպանութեան համար.	115 —
2. Գօրւաչ հազ ծխ. երկու գպրացների երկու սեսի չքառոր աշակերտների ուսման տարեկան նպաստը	110
3. Զքաւոր հիւանդներին և կարուներին	50
4. Յկամուսի 50%, որ պիտի մնաչ անձեռնմխելի . .	25
5. Պատահական ծախք	50
6. Գօրւաչ ծխական դպրացին նպաստ՝ կազմարարու- թեան արհետունոցի սկզբնական կազմակերպու- թեան համար	50
7. Հայոց գպրացների գրազարանի հարստացնելու հա- մար էտակացրած Ե	25
	425

Եռշի քաղաքի Ընկերութեան բաժնից ներկալայեց և հաստատւեց հևտիւնալ
նախահաշխւը 1889 թ. համար.

Մ Ա Խ Տ Ք.

1. Տոկոս լճկեր. չատուկ գումարներից	57
2. Անդամական վճար 50 հարուց	250
3. Ներկալայումներից	350
4. Նուիրաբերութիւններից	68
Գումար	725

Ե Լ Ք.

1. Որդեգրի և որդեգրահու բանուն Գէորգ Դ. կաթող.	84
2. Որդեգրուհու լանուն ա. Ս. Գոլուխան.	14
3. Կազմուտ աղքատ և կարունեալ ընտանիքներին.	60

4. Նպաստ չքաւոր աշակերտներին	40 ր.
5. Ծնկերութեան բացելիք գրասուն ընթերցարանին .	465 75
6. Դիւանական ծախքիր և ծառավի	25
7. Ֆօնդ կազմնը համար (եկամուտի 5%)	36 25
Գումար	725

Հիրեանի տեղական բաժինը առաջարկած էր հետևեալ նախահաշվոր, որ և
ընդունեց:

Մ Ա Ի Տ Ք.

1. 80 անդամներից	400
2. Կախին ընկերութիւնից ստանալիք	270
3. Վիանւազ նույներից	15
4. Թատրոնական ներկաչաց, երեկով, և դասախոսութիւններից	100
Գումար	785

Ե Լ Ք.

1. Զքաւոր աշակերտներին երկու սեռի	250
2. Հաղոց գիւղական գալրոցների գրադարանների ընթերցան. գրքեր	50
3. Գաղաքիս հակոց հասարակաց ընթերցարանին	400
4. Ծնկերութեան դրամադլիմ օգտին	45
5. Վարչութեան ծախքեր	40
Գումար	785

Որպէս ասացինք, Հայ, Բար, Ընկ, ունի բաժիններ նաև Նոր Նախին ջեանում և Ախալցիսալում. ցաւում ենք, որ այդ բաժինների մասին տեղեկութիւն տալ անկարող ենք, քանի որ մինչ ընդ ժողովի նիստի օրը նոքաիրանց նախահաշվները դեռ չեն հասցըել. Ախալցիսակի բաժնի համար նկատենք, որ նորա և ընկերութեան կենդրոնի մէջ տարածախութիւններ կալին, որոնք, բարեբաղդարար, ինչպէս հաստատ տեղեկութիւն ունինք, արդէն վերացել են.

Ահա ուրեմն, մենք ներկապացրինք մեր ընթերցողներին հայոց Բարեգ. Ընկ. գրութեան լիակատար նկարագիրը, հիմնւած սպաշտօնական հաշիների վերաց. ինչ ունինք այժմ ասելու մեր կողմից. Մի խոշոր բան: Եւ այդ խոշոր բանը սա է, որ այդ, իւր կանոնադրութիւնների նշանաւոր, ընկերութիւնը, կենդրոնը, որը արդէն 8 տարի գործութիւն ունի, այս բոպէին ունի միմիացն 180 անդամ. Մի քաղաք, որպիսին է Թիֆլիսը, որը ունի 40—50,000 հայ բնակիչ և ուրիմն, ամենաականութեամբ

24—30,000 քսան ապրեկանից վեր հասակ ունեցող տղակ և կին մարդ, և, ամենաքիչը, 10,000 աշխատաւոր տղամարդիկ. աղջան հազար աշխատող և մտածող տղամարդկանցից 180 հոգի են գանւել, որ ապրեկան հինգ բուրյի տան Հայոց Բարեկապորժական ընկերութեան: Որանոց չը կաէ բարեկապորժաթեանպարատականութեան զգացում, աճուուզ զեռ ևս չը կաէ օրինաւոր հասարակութիւն, նա զեռ ևս պարտաճանաչ հասարակութիւն չէ: Ամեն բան թողած, մարդուս առաջին պարագն է, իւր ընտանիքի ամենակարևորը հոգալուց վետով, բարեկորժութեան մատնակցել: Դա՛ քաղաքացու պարտականութիւնն է, և երկնակին և երկրաշին օրէնքներով: Բայց մեր աչս խօսքերը զատարի կը կորչեն, եթէ աչս առղերի կարգացողները ամեն ից առաջ չը հետեւն մեր ասածներին: Մեր մամուլը ամբողջապէս պէսպէ միասին աչս քարոզը առաջ տանի, պէտք է կամ պաչն սարքել և ժողովուրով կը հետեւի մեզ: Դորանով մամուլը զործ կատարած կը լինի, խոկ աչտ ամենապլիսաւորն է:

Հարկաւոր ենք համարում աւելցնել, որ Հայոց Բարեկորժ. Ընկերութեան անդամ կարելի է գրւել վճարելով հինգ բուրյի—ընկերութեան զանձագան պ. Ա. Մէլիք-Աղարեանի մօս, Թիֆլս, Սօլոլակ, Ստարօ-Խնասիտուտսկալա փաղոց, սուն Բախոզոլովի. Ընկ. խորհուրդի քարտուզար պ. Ա. Եղեկեանի մօս՝ Թիֆլս, Գանօվսկալա փաղ, սուն Թամարչեւի. ընկերութեան խորհրդի նախագան պ. Ա. Անանովի մօս՝ Սօլոլակսկալա փող., փոխ-Նախագան պ. Ա. Մանթաշևանի մօս. Ընդհանուր ժողովի նախագան պ. բժշկապետ Եւաստրեկեանցի մօս (իւր հիւանդանոցում, Վ.օրօնցովի արձանի կողքին), պ. Ծառուրեկեանի լամպի մագալինում. և վերջապէս ոչ մի անդամ չի մերժիլ անդ հասցնել թէ անդամակցական վճարը և թէ առհասարակ ամեն մի նւէր, սկսած մի կոպէկից: «Մուրճ»-ի խմբագրատունը դոցա համար միշտ բաց է:

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ

ԵՒ

ԱՐԴԻՒՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐԴԻՒՆԱՀԱՆԴԵԼԸ

10 սեպտ.—20 հոկտ. 1889 թ.

Կովկասուան արդիւնահանդէսի նպատակն է զլսաւորապէս—ներկաւացնել կովկասի և մասամբ Անդրկասափեան երկրի գիւղատնտեսութեան և արգիւնակալութեան արդի զրութիւնը։ Եւ իրաւունք պէտք է ունենան արգիւնահանդէսում մրցելու միացն կովկասուան և անդրկասափեան արդիւնքները։ Մի քանի արտակովկասուան արհեստանոցներին և աներին թուլ է արւելու արդիւնահանդէսին մասնակցելու, սակայն առանց մրցելու իրաւունքը։

Արդիւնահանդէսի լաջողութեան պէտք է օգնել ամենայն կերպ։ Արդիւնահանդէսի հետևանքը ան կը լինի, որ կովկասցիները կը ձանաչեն իրանց երկիրը արդիւնաբերական կողմից, կը ծանօթացնեն իրանց երկրի արգիւնաբերութիւնը արտասահմանեան և ներքին ուստական վաճառական-ներին և առիթ կ'ունենան իրանք էլ մասամբ ծանօթանալու նոյա հետ։

Կովկասուան արդիւնահանդէսը իւր բնաւորութիւնով պէտք է փոքր ինչ զանազանւի արտասահմանեան հանդէսներից։ Նա պէտք է ունենաց երկան բնաւորութիւն, թէ մրցահանդէսի և թէ թանգարանի։ Արտասահմանում արգիւնահանդէսը ունի աւելի մրցահանդէսի բնաւորութիւն։ Արտասահմանում վաղուց որոշել են իրանց տնտեսական կեանքի էութիւնը, արդիւնագործութեան շատ լիրեր գարձրել են առևտութիւն և մեծ շրջանադարձութեան նիւթ և հանդէսների վերաց նայում են իբրև մի լաւ միջոցի վերաց ցուց տալու իրանց արդիւնքները բոլոր ձեռք բերած կատարելագործութիւններով, լայտարարելու իրանց արհեստանոցները և զործարանները և ծանօթանալու արդիւնակալութեան լատաշագիտութեան հետ։ Արդիւնահանդէսը այդ պատճառով զառնում է մի տեսակ մեծ տնտեսական հարցաքննութեան և հաշւի տեղ։

Կովկասում զեռ շատ քիչ առարկաներ կան՝ ընդհանուր և մեծ առետորի նիւթ գարձած։ ալղակիսիների թւումն են՝ բամբակ, շերամ, մնտաքս, զինի, նաւթ, պղինձ, մարգանեց, բարդ և մի քանի ուրիշները։ Ազդ արդիւնքների մեջ էլ զեռ միացն նոր է սկսում կատարելագործութիւն և նոր է զգացում պահանջ մրցումի հանդէս հանելու նոյաւ իսկ զայտանից դուրս զեռ շատ և շատ նիւթեր կան, որոնք զեռ չեն մշակւած, չեն կատարելագործւած։ և այդ պատճառով մնացել են իրեւ հետաքրքրութեան առարկա վիճակադրույների համար։

Այդ պատճառով կովկասեան արդիւնահանդէսը պէտք է անհնայ թաճգարանի քնաւորութիւն. նա ունինալու է ամսայիսի առարկաներ, որոնք զուցէ երթէք առ ու ծախսի անտան չեն լաել, ավագատրասուել են մի լակոնի տեղ և ունեցել են գործածութեան ստհմանափակ շրջան:

Մեղ՝ կովկասցիներիս համար շատ բարմար առիթ է ներկայացնում կովկասեան արդիւնահանդէսը, հետաքրքրուելու մեր արդիւնագործական կեանդով—լարուցանելու և մշակելու կարևոր տնտեսական խնդիրների թէ հասարակութիւնը և թէ տէրութիւնը այդպիսի գեղքերում աւելի են վիճում արամաղրւած—գործնական միջոցների դիմել տնտեսական առաջադրութեան աջակցելու:

Հրաւիրում ենք ընթերցողներին՝ օգուել այս մեծ առիթից նպաստելու արդիւնահանդէսի լաջողութեան, բացատրելով շրջապատողներին ցուցանանդէսի լաջն ճշճակութիւնը և տալով մեր պարբերական թերթերին առաջ և բազմակողմանի նիւթ մեր երկրի արդիւնաբերութեան մասին:

Կովկասեան գիւղատնտեսական ընկերութիւնը, որը անմիջապէս նախաձեռնողն է արդիւնահանդէսի բանալուն, կովկասեան վարչական մարմինների հետ միասին, որոնք բոլորն եւ հրաւիրւած են օգնելու արդիւնահանդէսի կատարեալ և բազմակողմանի լինելուն—աշխատելու են, որչափ կարելի է, թեթեացնել արդիւնահանդէսին մասնակցելը, մեծացնել արդիւնահանդէսի բարուական օգուտը զանազան դասախոսութիւններով և բացատրութիւններով:

Հարկաւոր ենք համարում ծանօթացնել ընթերցողներին մինչև ազժմ լայտնի տեղեկութիւնների հետ, վերաբերեալ կովկասեան արդիւնահանդէսին, քաղւածք անելով բարձրագույն հստատութիւնն ստացած ծրագրից և դնելով իւրաքանչւրի զիմաց ծրագրի լոդւածների թւանշանները:

3) Արդիւնահանդէսի գլուխ բերելը, ցուցառարկաների ընդունելը և վայտալը և առհասարակ հանդէսին վերաբերեալ բոլոր գործերի հոգատարութիւնը լանձնւած է կարգադրիչ Մասնաժողովին (Քայլադրութեան Կոմիտե), որ իրաւունք ունի հմուտ անձեր հրաւիրելու իւր պարագաներին մասնակցելու համար:

6) Կարգադրիչ Մասնաժողովի գործակալներն են գաւառներու կառավարչական անձներ, Լուսաւորութեան նախարարութեան դպրոցների գասատուները, հաշտարար միջնորդները, տէրունական կալւածների գործակալները (ագենտ), անտառապետները և ակցիոնի սպաշտօնեաները:

ԱՐԴԻՒՆԱՀԱՆԴԷՍԻ ՄԱՍՆԱԺՈՎԻ ԲԱԱԺԻՆՆԵՐԻ ԼԻՆԵԼՈՒ ՆՆ—

- 1) Երկրագործական արդիւնքների;
- 2) Ագեղգործական և բանջարանոցական;
- 3) Դինեգործական;

- 4) Շերտամապտհական և մեղուապտհական:
- 5) Տաւարապահական և կաթնասնառեական արդիւնքների:
- 6) Անտուս ապահական:
- 7) Զկնաբուծական:
- 8) Կրկրագործական գործիքների և մեքենաների:
- 9) Ցնալին սորհեատների, արհեստագիտական և գործարանական տարկաների:
- 10) Լեռնալին—հանքատին:
- 11) Մանկավարժական—արհեստագիտական:
- 12) Արդիւնահանդէսին մասնակցել ցանկացողները պէտք է իրանց լայտարարութիւնը և իրերի ցուցակագիրը վազօրօք ուղարկեն կարգադրիշ Մասնագողակին ոչ ուշ քան օդոստոսի 15-ը։ Խոկ գործակալներին՝ ոչ ուշ քան օդոստոսի 1-ը։
- 8) Առարկաների արդիւնահանդէս հասցելը և նոցա աճնակդից հանելը—պէտք է լինի հանդիսացերի (էկոազնենու) հաշւով։
- 9) Առարկաները արդիւնահանդէսում տեղաւորելու համար նշանակ-ըում են ձրի տեղեր համապատասխան բաժնում։ Բացառութիւն են կողմում գործարանապետները, որոնք պարաւառու են իրանց հաշւով շինել պատուպարան իրանց արդիւնագործութիւն համար։
- 11) Մանկավարժական-արհեստագիտական բաժինը, որ կազմեած պէտք է լինի արհեստագիտական զպրոցների աշակերտների ձեռակերտներից—ունենալու է խր տուանձին ձրի սենեամը։
- 13) Աչ հանդիսարեները, որոնք ցանկանում են ազատ վաճառել իրանց բերած առարկաները, պէտք է լայտարարնեն վազօրօք ցուցակագիրում։ Արհեստաւորները հրաւիրում են ներկայ լինելու արդիւնահանդէսին իրանց գործիքներով և իրաւունք ունին վաճառելու իրանց արհեստի ալորիւնքը։
- 17) Հանդիսարեներին պարզեապաշխելու համոր հաստատում են մեղալներ—սկիեաչ, արծաթեաչ և բրոնզեաչ, պատաւառու վկաչագիրներ և զովեստաթերթեր։ Բացի այդ, պատաւառու վկաչագիաններ սաացողները կարող են ստանալ և տէրունական գրօշ, որի համար հայկ, Գիւղ, Ընկ. առանձին խնդիրքով դիմելու է ուր հարկն է։
- 19) Արդիւնահանդէսը պէտք է բաց լինի սանին օր՝ առաւօտեան 9 ժամից մինչև երեկուիան 6 ժամը։ Մուաքի գինը լինելու է 20 կոտէի։ Կիւրակէ օրերը՝ 10 կոտէկ։ Առաջին երեք օրը մի մի բուրդի հոլոր արդիւնահանդէսի համար միանւագ տոմսակ դնողը վճարում է 3 ր. բոլոր զպրոցների ուսանողները ունենալու և իրաւունք ձրի աղցելելու հանդէսը առանձին նշանակւած օրերում։
- 21) Արդիւնահանդէսի ընթացքում աղւելու ևն, առանձին նշանակած օրերը, զանաշան բաժիններին վերաբերեալ բացարարութիւններ։ Նոճակէն

կառագւելու ևն զանազան գործիքների և տեխնիկական կառարկագործութիւնների ցուցեր:

23) Արդիւնահանդեսը վերջանալուց լեռով, երեք օրւայ միջոցում, ևն առաելու հանդիսարկերներին ցուցաւարկաները, իսկ մինչև ազդ ժամանակը, ոչ ոք իրաւունք չունի արդիւնահանդէսից վերցնելու ցուցաւարկան, Արդիւնահանդէսի վաճրելուց երկու շաբաթ աւել մնացած ցուցաւարկանների պահպանութեան համար կարգադրիչ Մասնաժողովը իրան պատասխանառու չի համարում:

Միւս անգամ կը ներկայացնեմք ընթերցողներին արդիւնահանդէսը բիրւելու առ արկանների ցուցակը:

ԳԱՐԻՒԵԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻ ՅՈՐԵԼԵԱՆԸ.

«Մուրձ»-ի անցեալ համարում մենք պատունցինք աւն դէպքերը, որոնք անզի ունեցան դրամատուրգ պ. Գարբիէլ Սունդուկեանցի չօբէլեանը՝ տօնելու առիթով Բայց բալոր փորձնը ալդ չօբէլեանին հրատարակական բնուորութիւն տալու—ի գերի ելան պ. չօբէլեարի մերժման պատճառով։ Բայց և անզիս չօբէլեանը տօնւած պիտի համարել—ալդ ևն վկարում այն բաղմաթիւ չնորհաւորութիւնները, որ ընդունած է «Փէզօ»-ի քանչքարտը հեղինակը զանազան տեղերից, մօտիկ թէ հետու Մենք չենք ուզում ուիթը բաց թողնել ծանօթացնելու մեր ընթերցողներին, թէ որպիսի երախտագիտական զգացումներով վերաբերեց հոլ հասարակութիւնը զէպի մը հեղինակ, որի քառորդ զարի զործունէութեանն ևնք պարուական, որ պարօ հալութիւնը—առ անց բռն ունենալու—թատրոն ունի, առ անց դերասանական խումբ ունենալու—դերասանական շկոլա և որամութիւն անին:

Ահա թէ ինչու, առանց ծանրութիւն զգալու, քաղցր որարար ևնք կասարում վիշտասակելով Գարբիէլ Սունդուկեանցի չօբէլեանի առիթով եղած բալոր ցացիկը, որոնք, ազմուկից զորիկ լինելով հանդերձ, տօնւած, ոիրուած և լարգւած հեղինակի մեծ ժողովրդականութեան բարձրախոս զրկացութիւնն ևն առլիս, նաև մանաւանդ որ տեղի ունեցած ցոցերը եղած ևն բոլորպին ինքնարենարար, որպէս արտէն ամենքին լավանի է:

Այդ ցոցերը եղած ևն՝ անձնաւական ացելովթիւններ չարգողների կողմց, հնուազիրներ, նամակներ, ուղիւններ, ուսանաւորներ և պարզեններ:

Արդ, որ Գ. Առնդուկեանցը, զիչաննելով մեր առաջարկութիւնն, բարութիւն ունեցաւ հաղորդել մեզ բոլորը, ինչ վերաբերում է նորա չօբէլեանին, և մենք համարած ենք, որ մեր ընթերցողները իրանց չնորհաւորար կը զգան մեծանուն հեղինակի սիրալիք վերաբերմանը համար

զէսփի «Մուրճ»-ի խմբագրութիւնը, Մանրամասնութիւնները, որ պիտի հետեւն, առևի քան մի չօշակման կէտեր անին մեր զրականութեան և թառանական գործի հետ, բացի այն, որ նոքա մի որոշ չափով որոշում են մեր ժամանակաւ հասարակութեան բնաւորաթիւնը, Բաց քանի որ մեր ցանկութիւնն է ևղած լրակատար տեղեկութիւններ տալ, ուստի առաջուց պիտի ներողութիւն խնդրենք թէ չօրէլեարի և թէ մեր կողմից, եթէ այս կամ այն անունը մոռացմամբ փշւած չի լինի:

I. ԱՅՑԵԼՈՒՆԵՐ

Սկսնք ացցելազներից այն կարգով, որպէս երեսում է այդ ացցեցուցակից և ացցետամսներից: Անոմները իրանք իրանք համար կը խօսեն:

1. Զմշկեան Գէորգ:
2. Զմշկեան Աաթինիկ:

Դոցա առիթով՝ համեմատեցէք «Մուրճ»-ի № 1-ում տպւած պ. Զմշկեանի ոգուածը: Դոքա՝ պ. Սունդուկեանցի տիպերի ոտեղծողներին ևն պատկանումէ

3. Տէր-Պառնղեան Նիկ.
4. Շիրվանղաղէ:
5. Կամսարական Կ.
6. Յովհաննիսկան Արգար:
7. Յովհաննիսկան Դարիա:
8. Սուքիանեանց:

«Ես շատ բաղդաւոր եմ, որ 25 տարուց չեսուի, ինքս անձամբ բաղդաւուցաւ չնորհաւորելու իմ սիրելի և լարգելի «Գիշերվան սարրը խէր է»-ի հեղինակին. ստորագրած՝ Արտաշէս (Օսկան Պետրովիչ)»:

Պ. Սունդուկեանցի վկանութեամբ, պ. Արտ. Սուքիանեանցը նոյն է, որ առաջին անգամ խաղաց Օսկան Պետրովիչի դերը:

9. Էնֆիաձեանց Համբարձում:
10. Տէր-Աղեքսանդրիսնց Գէորգ:
11. Տիղրանեանց Յակոբ:
12. Բեհրութով Իշխան Վ.
13. Տէր-Մարկոսեանց Յովհ.
14. Միրիմանեանց Բագրատ:
15. Միրիմանեանց Վերա:
16. Ամասոսի, իշխան Նապօլիօն:
17. Փիթուի Խոաչ:
18. Թաւովեանց Մալուկ:
19. Տէր-Յովհաննիսկան Յակոբ:
20. Թամանիշեանց Ա.

21. Յովհաննիսեան Արդար (Կրկին):
 22. Փրիդոնեանց Գրիգոր:
 23. Մելիք-Գարազեօղեանց Տ.
 24. Տէր-Միքայէլան Հայկ:
 25. Սուածնանց Աղէք.
 26. Եւանգուլեանց Գէորգ:
 27. Շամշինով Ա.
 28. Բարանեանց Արք.
 29. Տէր-Գրիգորեանց Վահո:
 30. Մարտիրոսեանց Մնացական:
 31. Խզմիրեանց Սօֆիա: (Համեմ. «Մուլճ»-ի № 1)
 32. Կոբչիբաշնւ Սօֆիա, (մէկը այն երեք քողերից, որոնք պատմած են
 «Թէպօ»-ի բառաջարանում):
 33. Պոօշեան Պերճ:
 34. Նաղարեանց Տիգրան:
 35. Leist Arthur.
 36. Վարդանեան Փիլ.
 37. Зобнинскій Пав. Ник.
 38. Зобнинская Елиз. Петр.
 39. Բախոնիսիւ Ալեքս.
 40. Բաշինջաղեան Գէորգ:
 41. Յեմдлицъ Никол.
 42. Եաղուրեան Կարապիս:
 43. Մելիք-Հակաղեան Աղէքսանդր:
 44. Գրիգորեանց Գրիգ. Քահանակ («Աքուից»):
 45. Բաբակեան Գօրգ. Աւ.
 46. Արամիսանեանց Աւետիք:
 47. Քալանթար Ալեքս.
 48. Մատինով Ալիքսանդր (Քաղաքադլուխ Թիֆլիսի):
- Ակաց մեծակարգ Գարբիէլ Նիկառիչի մօս Հնորհաւորելու նորա
 25-ամենագ արդինաւէտ զրական գործունէութեան չօբէլեանը և սրտանց
 ցանկալու առողջութիւն երկար սարիներ, որպէս զի մեր հայրենա-
 կան զրականութիւնը շարունակէ հարասանալ Գաբրիէլ Նիկիտիչի
 սահեղադարձութեան տիպարներով):
49. Բեհրութեան Կոնսո. իշխա.
 50. Եւանգուլեանց տիկին Նկատերինէ:
 51. Գարամեանց Նիկող.
 52. Բեհրութեան իշխա. Գրիգ. Յովհան.
 53. Ենդիլարիսն Գարմիշին:

54. Յարումիւնեանց, իս.
 55. Յարուց
 56. Յովհակիեան Վազարոս քահանակ:

II. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

1. Սունգուկեանցներ Գևորգ և Ալեքսանդր (յօրէլեարի որդիքը) և Նիկողակոս (եղբօր որդին), ուստանողներ, Պետերբուրգ.
2. Մանդինեանց Սեղբակ, Էջմիածին.
 «Ձառ կերպակ վշշում եմ Զեր փակում սկզբնաւորութիւնը. այն օրից, Գուք, թանկազին Գաբրիէլ, 25 տարի անփոփոխ կերպով գնացել եք Զեր կոչման վետից և անդադար հարսաացընել եք հայկական բնակերտուարը թանկազին գործքերով. միշտնում եմ Զեր տաղմանդի բաղմաթիւ դնահասաողների հետ. սրանց ողջանում եմ Զեր քառորդ դարու բեղմաւոր գործունեութիւնը»:
 (Համեմատեցէք այս առիթով պլ. Զմշկեանի չօդւածը «Մուրճ»-ի 1 Ա-ում):
3. Հայ և վրացի ուսանողներ, Պետերբուրգ.
4. Խմբագրութիւն (Արաքուի): Պետերբուրգ.
5. Հայ ուսանողներ Մօսկուայի համալ.
 «Ծնորհաւորում ենք Քեզ, միակ զրամատուրզին, որ դործել է քառորդ զար չօգտա հակիմնական զրականութեան և բեմի. Ծնդունիր մեր պատանեկան ովեալութիւնը և մեր սրանց երախտապայմանութիւնը այն բոլոր սիպակերի համար, որ Գու աշնքան կենդանի կերպով իրական կեանքից դուրս խլեցիր, Գու խորին ատելութեան համար դէպի հասարակական կեանքը անբարուականացնող տարբերը և Գու քնքուշ համակրութեան համար դէպի ճնշուածները և անպատճեանցները. Մալթում ենք որ Գու մորակող ձադնը ապուհեան և չը լուի. կեցցես Դու շատ տարիներ»:

Հայ ուսանողներ:

Պատասխան.

6. Վրաց ուսանողներ. Մօսկուալ.
7. Քանանեանց Գէորգ, (վերատեսուչ Լազարեան ճեմալանի), Մօսկուալ.
8. Հայ ուսանողներ. Նոր-Ալեքսանդրիա: (Գիւղատնուսեսակ. ինստիտուտ):
9. Չալխուշեան Սօֆիա և Գրիգոր Նոր-Նախիջևան:

(ստորագրած) Մունդուկեանց:

10. Աւագչական խոմքը Դղլարի հաջոց դալուցներին Պղլար:

11. Մկանումնան Գէորգ Քահանան, Պղլար:
12. Մախաթաձէ, Պիսախորսկ:
13. Մեսխիեվ Օլդա, Վարվարա, Նիկոլայ (պաւառապետ), Անդրոնիկովա
Նինա և Փալանթարեան: Սղնախ:
14. Յարդողներ: Աղնախ:
15. Յովհաննիսիան Վարսենիկի, Գրիգորեանց Սօֆիա, Գրիգորեանց, Մա-
ռանկողնանց, Ղաղարեանց, Պետրոսեանց, Տէր-Գրիգորեանց, Կոտա-
ջեանց, Մարզարեանց: Կարս:
16. Միրզաքէկնանցի գործարան: Բաքու:
17. Հակոց հասարակութիւնը և մի խումբ մարդ և կին թատերասէցների:
18. Շաքկով բժիշկ և կամսարական՝ անուառապետ: Դիլիջան:
19. «Պետօ»-ի ներկաչացմանը մողոված հասարակութիւնը: Երևան:
20. Հակոց Յարեղործական Ընկերութեան տեղական վարչութիւնը: Երևան:
21. Վասոման տիկին: Օդեսսա:
22. Տէր-Միքայէլիանց, ուսանող: Ենա:
23. Մելքոնիան, Բուղազեան, Լիսիցեանց (հակերէն ոտաճաւոր հեռազիր):
24. Կուլյանսկի Ալեքսանդր, Կառավ. պետակ. բանկի բաժնի: Տաղանդոր:

III. ՆԱՄԱԿՆԵՐ

1. Սունդուկեանց Յովհաննէս (եղբօր որդին դրամասուրզի): Թիֆլիս:
 (Երկար, բայց և մոքով և զգացումով լիքը նամակից քաղում
ևնք հետեւել կառը, որի մէջ նաև կրտսիկոսը, ինչպէս մոզ թառմ
է, կը գտնէ դիսողական ինքնուրութիւն):
 «Թանկազին, ամեն մարդ, ով Ձեզ մօտիկուց ճանաչում է, Զեր
«Պետօն» կարգալով, աեղտեղ, երբ հերոսը երկար մինախօսութիւն-
ներ է արտաստանում, «Պետօ»-ի մէջ Ձեզ է բոնում, Ձեր իդէալական
հոգին, Զեր բարի անունը, Ձեր անդրդիւլի շատակութիւնը. և այն
ժամանակ «Պետօն» դառնում է աւելի իրական մի տիպար... Զեր
Պետօն տաքացաւ—դա՝ Գարբիէլն է, որ չարացաւ. բայց հրէս՝ նա
հանդարտուեց, մոռացաւ ամեն բան, նա արդէն իւր թշնամուն սկսեց
ովաշտանել և կակուլին խորհուրդ չէ տալիս նոցա (թշնամիների)
հետ վատ վարուել («Մուլափ, Կանկուլի, էս մարթութին չէ»)...»:
 «Եխո! Պետօի ներքին և ս-ը անգակտելի կերպով կապուած է Զեր
սեպհական և ս-ի հետ: Ստեղծելով Արութիւնին, Մարքիսովին, Վա-
նօին և ուրիշներին, Դուք, ինչպէս ես համողուած եմ, շատ էլ չէլք
դադրում, որովհետեւ Դուք նոցա նկարում էիք բնութիւնից: բայց
ստեղծելով Պետօին, Միքայէլին, Լուսնին, Արտաշէսին¹⁾ և միւսներին,
Դուք՝ դադրում էիք, Դուք պէտք է դադրում լինէիք, որովհետեւ Զեր
և ս-ի ամբողջ կէսը Դուք խլում էիք Ձեղնից և դնում Պետօի ևս-ի մէջ»:

¹⁾ Լեռնը և Արտաշէսը «Ամուսիններ» պիեսի մէջ:

2. Յավակինուն Դաշտարաս քահանակ:
 3. Խւզբաշեան Ասրդիս, գնդապեսու Շիռուրբուրդ:
 - 4...Ինձ թւում է, թէ Դուք երկաք ժամանակ զործում էքք
ախպիսի մի հայկական նշանարանի ներքո՝ ամիշտ զործել, միշտ
տալ և միշտ լուել:
 4. Բարխտագարեանց Մկրտչչ Մօսկուս:
 5. Գրիգորեանց Գրիգոր քահանակ, նաև ուրիշների կողմից Ռաքու:
 6. Սաֆրադեան ամուսինների զիմաց՝ (Յաւրիդ)
Քրիստոպիոր Յաղէոսեան: Թիֆլու:
 7. Եահապետեան Արշակ, Տեսուչ Գէորգիան Ճեմարանի: Էջմիածին:
 8. Տէր-Մարտիրոսեանց Երևան:
 9. Ալիխանեան Նիկողայոս, Հին-Ռիփուլ:
 10. Վարդ, Ա. Մ. Կ. Պոլս:
 11. Տէր-Միրաքեանց Յովհաննէս՝ ի զիմաց Թատերառութեների խմբի: (Եակ
մի ափիշ «Քանդած օջախ», «Գիշերով» սարդը խէր է), ներկատացրած
22 զեկոր. 1888 թ.):
 12. Շահ-Պարտեանց, լժշկապես: Թիֆլիս:
 13. Զուբար, ի զիմաց հայ թառերասէրների: Պետքուրդ:
 14. Կաչերպին Կօնստունդին: Դիրքենա:
 15. Վիսման, տիկին Ալեքսանդրա:
- Պ. Առնուկեանցը պատմում է, թէ Պետառիզօրսկ եղած ժամանակ, 1887
թ, ամառը, սրտեղ նա թելազրում էր իւր «Ամուսիններ»-ը պ. Վահան Մամի-
կինեանին, իսկ առաջ իւր ամուսին Խօֆիապին և զսեր Նունին և Կաստ-
րինին, որպէս նաև պ. Գ. Զմշկեանին, որցա առժամանակին բա-
ցակալութեան պատճառով, զժւարութեան մէջ ընկաւ հեղինակը: Տիկին
Ոյսունը սուաջարկեց նորան իւր ծառագութիւնը:
- Ախար Դուք հայերէն չը զիսեք:
- Ալլ մասս չունի, Դուք մտածեցէք հայերէն և աղդ հայերէն մտածածը
ինձ ուսւուրէն բառ առ բառ թարզմանութեամբ թելազրեցէք, իսկ իստի...
- Բայց ախսոր եթէ հայերէն մտածելով և բառացի թարզմանութեամբ
թելազրեմ, միտք չի դուրս գալ և Դուք ոչինչ չէք հասկանալ, տիկին:
- Ալլ ոչինչ, Գարբիէլ Նիկիտիչ, զա ո՞ Դուք կը հասկանաք. իսկ
զա՝ զիսաւորն է: Ազգիսի սիրալիբութեան առջև հոյ զրամասաւրպը զի-
չեց, թելազրելով «Ամուսիններ»-ի երկրորդ զործազութեան երգորդ տեսիլը՝
Մարգարտի և Հեղինէի խօսակցութիւնը, նոյա փոխադարձ զանգասը—
առւսերէն լեզուայ, որից մասէ Թիֆլիս զալավ, հայերէնի վելուծեց, ուսւուրէն
բառերի տեղ ուզգակի հայերէն բառերը զնելով—չէ. թէ ուսւուրէնը մտած-
ած էր հայերէն!

IV. Ա Խ Ղ Ե Ր Զ Ն Ե Ր .

1. Մարիամիան-Յովեանեան Դպրոցի ուսուցիչներ և ուսուցչուհիներ (16 ստորագրութիւն): Ներկալացուցիչ՝ անուշը դպրոցի պ. Փիլիպպոս Վարդանեան, Թիֆլիս:
2. Թաւրիզի հաջ հասարակութիւնը (20 ստորագրութիւն, ի միջի ալոց՝ Ծառուր-խան Անդրեանինեան, Առաքել Համբարձումեան, Սաֆրագեան ամառիններ և այլն): Ներկալացուցիչ՝ տիկին Հեղինէ Համբարձումեան:
3. Խարկովի հաջ ուսանողութիւնը. (60 ստորագրութիւն): Ուղերձը զրած է թաշնակ մեծադիր և շքեղ կազմի մէջ, որի երևին, բառերի գեղեցիկ զասաւրութեամբ, զրւած է հակերէն լեզուով և լատիներէն տառերով:

25 amia hobeliani arithov Gabriel Sundukianzin Charkovi hai usanogneritz. 1888 ami 22, dectemberi. Charkov.

- Ներկալացուցիչներ՝ հաջ ուսանողներ պ. Վ. Լունկեսիչ և Գ. Շառումեան:
4. Օդիսասի հաջ ուսանողութիւնը (15 ստորագրութիւն): Աւղերձը զրած է թաւիշապատ և Օթելլօից մի տեսարան ներկալացնող մետաղեաց րելիքի երկուով ալբոմի մէջ՝ պատշաճաւոր լուսանկարներով օտար և մեր թատրոնական աշխարհից: Ներկալացուցիչ՝ Աւ. Արասիսանեանց:
 5. Պետերբուրգի հաջ ուսանողութիւնից: Ուղերձը զրած է ու կաշէ թերթապահի մէջ: Ներկալացուցիչ՝ պ. Վ. Նազարեան:
 6. Պետերբուրգի հաջ հասարակութիւնը (39 ստորագրութիւն): Ուղերձը զրած է թաւիշնակ շքեղ կազմի մէջ, որի երևին չօրէլեարի անունազգանունի արծաթեառ սկզբնասառերն ևն խաչածե կողցրած: Ներկալացուցիչ՝ պ. Ալեքս. Քալանթար:

V. Պ Ա Ր Գ Ե Խ Ն Ե Ր

1. Էաշինջաղեան Գէորգ, Թիստանին. մի գեղեցիկ պատկեր, լսոտ մեզ, ամենալաջողաւուծը երփառասարդ նկարչի արհեստանոցից ցալժմ զուրս բիրած բոլոր ձիթանկար պատկերներից: Իս մի պարզ և ոչ մեծ պատկեր է, որը ներկալացնում է թիստենու (ծերեզ) մի հսկայ ծառի բունը՝ ընդարձակ և ամառի մի դաշտում, հեռաւոր հօրէլզնով: Գաղափարաբ, զա՝ Առնուլիկանցն է հայկական թատերագրութեան ամսութեան մէջ: Թիֆլիս:
2. Էաշինջաղեան Յովիչանիս և Արկիանի Պաւլ, (լուսանկարներ): Յօրէլիարի խոչսրացրած սալօնական լուսանկարը պատշաճաւոր շրջանակով: Նօվօչիրկասկ:
3. Մի իստամի հաջ երիտասարդներ: Յօրէլեարի կարինեատ-պատկերը՝ թափնակ երկդռնուկ սիրուն տուփի մէջ: Պետերբուրգ:

4. Հայոց Բարեկործական Բնկերութիւնն Շուշւակ տեղական վարչութեան անդամները: Մի բակլարակ բաժակ, արծաթեակ բաժակակալով և արծաթեակ նրբանե զգալով՝ բոլսրը մի չքեղ տուփի մէջ: Շուշի:

Յօքէլեարը, վերջինիս փոխարէն, շտապէլ է պատասխանել՝ նւիրհով իւր երկասիրութիւններից 100 օրինակ՝ զօդուա Բարեգ. Ընկ.

Շուշւակ տեղական բաժանի:

5. Երիցեան Աղեքսանդր: Խւր աշխատասիրած „Տեատր Եւ Տիֆլոս 1845—1856“: Թիֆլոս, 1888. փառակալու:

«Հայոց թասրունի փիր ու հաւասա Գարբիէլմ, ի լիշատակ 1863—1888 թ. 25-ամեակի, ամենայն լարգանօք... 23 հոկտեմբ. 1888 թ. Թիֆլոս»:

6. Նառասարդեանց Տիգրան: Խւր «Հէրիաթիւների» ժողովածուի ցախմ լուս անսած բոլոր չորս տեսարակները:
7. Բարիստադարեանց Մկրտիչ: «Հաճդէս Գրականական և Պատմական»:

Առաջին գիրք: Մօսկով, 1888:

8. Շիրվանգաղէ: Խւր չորս հեղինակութիւնները:
9. Զմէկեան Մ. Խւր կազմած և Աղրիւրուի հրատարակած «Օրացուց 1889 թ.» (մի սահմանուր ուղերձալ):
10. Նազարեանց Տիգրան: Խւր հրատարակած «Օրացուց»:
11. Մարտիրոսեանց Մնացական: Մեծ ծաղկէ փոհնջ:

ՎԼ. ԱՏԱՆԱԿԻՈՐՆԵՐ

1. Գամառ-Քաթիպու: (Դամփ. Պատկանեան):
«Գաբրիէլ Սունդուկեանցի պատկերի տակ: 23 դեկտ. 1888 թ.
Ազգիս չարաւաս վերքը լուանալ,
Ելրպ մնձառունին անվախ ասկոտակիւ,
Գոհարայ ծածկած կեղուերը բանալ,
Կեղծաւորների զիմակը պոկել
Ու հէդ կինոտին զընել մարդոց շար —
Ազդ սամնն զօրեց միակն քու հանճար:

Գամառ-Քաթիպա»
2. Ալիքսանեան Նիկոլայս: Հին-Բիիստ:
 3. Մարտիրոսեանց Դէորդ: Թիֆլիս:
 4. Տէր-Մարտիրոսեանց Յովհաննէա:
 5. Զմէկեան Մ. (Թիֆլիսի բարրատով): Թիֆլիս:
 6. Թագէոսեան Քրիստոսիսր: Թիֆլիս:
Ակատ միծ մեծ ձահիճ — նա կեանք է կոչում,
Խորս երեսը ծածկուած է, քօղով.

Աչ քօղի տակը ճիծուք են վլսառամ՝
 իրանց զարշկի զազիր գործերով.
 Գու վիր քաշեցիր աչդ քօղ համարձակ,
 Եւ նորու տակից ցոց տուիր մեզի
 Խոկական գողնով մեր կեանք խապառաւակ,
 Որսեղ աղնիւը, բարին մուաք չունի
 Գու լուս համեցիր արդ խաւար աշխարհ,
 Նորա մէջ տիրոզ կեղազ մերկացրիր.
 Գու առաջինը, զնւ, հզօր հանձար,
 Միր տպեղ կեսնքը տպաս ծաղրեցիր:

7. Զուարեանց օր. Ա. Գերբենս:

• • • • •
 Թէհ ևս չունի՞մ
 Հանձար կամ տաղանդ
 Եւ ոչ թանկագին
 Գոհար տղամանով,

Որ կարենավի
 Փոքրիկ մի նուեր
 Տալ բարերարիգ,
 Յիշատակ իբրեւ—

Ունիմ ևս միասէն
 Սրտումս պարզ ուեր,
 Որ թելազրում է
 Ազ քանի տողիր:

Յոսամ կ'ընդունէք
 Անարհամարհանք
 Համեսա հաղունու
 Անկեղծ համակրանք:

Կարծում ենք, որ աւելի քաղցր խօսքերով չեր կարելի վերջ առև մի
 քորելեանի նկարազրութեան:

ԿՈՍՍ ԼՈՌՈՒ-ՄԵԼԻՔԵԱՆ

1888 թ. գեկտ. 13-ին վախճանւեց հարաւային Ֆրանսիայի Նիցցա քաղաքում կոմս Լոռու-Մելիքեանը:

Այդ մարդը կատարելատիակ էր հայի՝ վարչական, պատերազմական և քաղաքական ասպարեզների վրայ միասին առած: Նա բարձրացաւ պիտական ծառալութեան բոլոր մերարիխական աստիճանները—ստորից մինչ ծալքագույնը, որքան միայն մի հասարակ մահկանացուքի կարելի է, երբ անձնատիանը բարձր շատկաթիւնների հետ կապւած է այն բարեկաջող և առկա պատահող հանգամանքը, որը արաւագույնում է աէրութեան ծագրագոյն իշխանաւորի անսահման վասահութեան մէջ զէպի իւր ընտրած սրացոննեան: Կոմս Լոռու-Մելիքեանը բարձրացաւ մինչ պետական մարդու նշանակութեան աստիճանը, ոչ միայն իւր ունիցած սրացոննեան իշխանութեամբ, այլ և, որ զվարուն է, խակական պետական մարդկանց չառաւկ կամքի ուժով՝ միացրած հայեացքների ընդուրձակութեան և աննկուն աշխատութեան հետ:

Կոմս Լոռու-Մելիքեանը փակեց երկու ասպարեզների վրայ՝ զինւորական և կառավարչական: այդ երկու գաշտերի վրայ ևս նա բարձրացաւ փառքի գտղաթնակէտին: մենք անձեռնհաս ևնք նորա պատերազմական բուն վաստակները գնահատելու, իսկ քաղաքականի համար դեռ ևս պատկառ ևն մեղ հարկաւոր նիւթեր՝ կոմսի գործունէութիւնը պատմական ծցդութեամբ որոշելու: Իսկ ընդհանուր տպաւորութեանը զալով, անկասկած է, որ Լոռու-Մելիքեան-կառավարիչ զեր էր, քան Լոռու-Մելիքեան, որպէս պատուերազմող, մանաւանդ եթէ ընդունենք, որ նոյն իսկ պատերազմական գործում անձնական քաջութեան հետ միասին պէտք է վարչական տաղանդ:

Ընդհանուր առմամբ, կոմս Լոռու-Մելիքեանը հանձարեղ մարզ չէր, բայց դարուս ամենախոչը անձնաւորութիւններիցն էր: Նա ստեղծելու է մի ամբողջ քրականութիւն, նա զառնալու է ուստաժքների առարկայ, աղջերի հոգեբանութեան, քաղաքականութեան, վարչական վիտաթեան, պիտական գիտութիւնների և ռազմագիտական գրականութիւնների մէջ նա աշքի ընկնող տեղ է բոնելու: թէ իւր կեանքով և գործունէութեան եղանակներով և թէ որպէս նեղինականոր գործարարակեր: Այդ ըոլորի մէջ հաջորդ կան գրականութիւնը անմաս չը պիտի մնայ: Կոմս Լոռու-Մելիքեանի ոգին լուսաբանողը կարող է լինել միմիան հայ մարդը, եթէ միայն այդ լուսաբանութիւնը չը պիտի չետաձգուի մինչ միւնքու դար հեռու: Հայկական գրականութիւնը ամենաճն իրաւունքով կարող է նշանաւոր հանգուցիալի ողին, բնաւորութիւնը ու մաքի ազգութիւնը իւր զննողութեան գործ համարել, իսկ մնացիալ՝ ուսուոց և ուրիշ ազգերի գրականութիւններին մատչելի բաներ են: բայց առանց որոնց մատակարարած

Նիսթերին նաև հաջկական զրականութիւնը իւր այդ գործը միտքն թերութեամբ կարող է կառարել:

Ամբողջ Կովկասը, առանց խորութեան ազգերի և կրօնների, մօտ երկու ամիս է, որ պատրաստութիւններ է տեսնում արժանաւոր կրտպոլ լնդուննելու հանաւոր հանդուցիալի մարմինը: Այդ ցոցերի մեջ չը կաէ ոչ մի որոշ ահնդենց, մեծ անունին ուղում ին մեծապէս դիմաւորել, հանաւոր հանդիսացած և իւր կիանքը լին ոնուցած մարդու մարմինը լանձնում է ան երկրի հողին, որ նորան ծնունդ էր տւել և ամփափւում է Պանթէօնում ան ազգի, որի գաւակն էր նա:

Ահա կամ Լոռու-Մելիքեանի պաշտօնավարութեան լնդուցը:

Միքայէլ Լոռու-Մելիքեանը ծնւած 1819 թ., զեռ մանուկ հասակում տարւեց Մօնկւա, ուր նա մտաւ Խաղարեան ճեմարանը, որը, մի երիտասական չարութեան պատճառով, սովորեց թողնել ուսումը չաւարտած: Մօնկւայից զնաց Պատիրուրուր, որտեղ, քառասնական թւականների սկզբում, մոտաւ Գովարդէրսկիտ պօպարազորչինների և Կառավարեան զպրոցը (առժմեան նիկողական Կառավարեան զպրոցը), որտեղ նա աւարտեց ուսումը 1843 թւականին:

Այդ զինուրական գործոցից դուրս գալուց լիսաւ, Լոռու-Մելիքեանը ծառապէց Գրօնուի գուսարեան զօրագնդի Լեյբ-գվարդիալում, Նովգորոդի շրջակաքռում, ակտուել նա ծառապէց և տարի: 22 տարինեան հասակում պօրտ-չիկ զառնալուց լիսաւ, 1847 թ., չաջողում է նորան փոխադրել Կովկաս, որտեղ նա հանակումէ, առանձին լանձնարարութիւնների պաշտօնեալ՝ Կովկասի առանձին զօրաբաժնի հրամանատար իշխան Վորօնցովի մօտ: Այդ ժամանակները անընդհատ կոխների տարիներն իին Կովկասի լեռնարնակների հետ, և Լոռու-Մելիքեանը, մասնակցելով այդ կոխներին, կատարելով նաև քաղաքագիտական լանձնարարութիւններ, մեծ հմտութիւն ձեռք բերեց և Կովկասը մօտիկուց ձանաչեց: 1852 թ. նա ստացաւ արդէն պօլկօվնիկի աստիճանը: Հետեւեալ տարւանից միտեղ ոռու-տաճկական պատրազմը՝ 1853—1856 թ., երբ Լոռու-Մելիքեանը առիթներ տնեցաւ փաքրիկ զօրախմբերի զվարարութեան դեր կատարել: 1854 թւականին, Քաղաքագիտական համարի և Քաղաքադիլ-Դարանի տակ ունեցած կոխներից լիսով, նա ստացաւ «քաջութեան համար» ոսկէ սուրու Երր ոռուաց զօրքը երկրորդ անգամ անցաւ: Ախտորեան գիաը (Արքաչաչ), Լոռու-Մելիքեանի հրամանի տակ արքեց մի առանձին զօրախմբը՝ 300 հազ, թուրք և տաճիկ զարա-փափախներից բաղկացած: Այդ զօրախմբով նա մասնակցեց Արգինի և Կարսահալի մօտ տեղի անեցած կոխներին և վասով Քիւրիկ-Դարա զինդի զլսաւոր ճակատին, ուր 16 հազար ոռուներ տղթեցին 60,000-ից ամելի թւայ տաճիկներին: Այդ մասնակցութիւնից լիսաւ Լոռու-Մելիքեանը ստացաւ Վլադիմիրի Յ-րդ աստի-

ճանի չքամնանը: Իշխան Ռեհրութեանը 1855 թ. նորան լանձնարքեց քըրդ գերի հետ բանակցել՝ նոյս մեր կողմը զրաւելու համար, որ և լաջողեց, համաձայնեցներով քրդերին տալ ձիւորների երկու պօլի (գունդ), որոնցից մէկը միացեց՝ օռու-Մելիքեանի կամաւոր խմբի հետ: Այդ գործի առիթով Լորու-Մելիքեանը արժանացաւ իշխ. Բեհրութեանի կողմից առանձին լանձնարքութեան նոր փսխութքաւ գեներալ-ադյուտանտ Մուրավիովի մօտ կախը երբ նորից ոկաւեց՝ կոռու-Մելիքեանը իւր կամաւորների խմբավ, որ 800 հոգու էր հասել, մեծապէս նպաստեց ոռուսաց լաղթութիւններին: Նորանշանաւոր քաջութիւններին է պատկանում կաղղւանի և Գեշելվանի զաւառների նւաճումը 1855-ին, որ կատարեց սուանց արիսն թուփելու և մասնակցութիւնը կազմակ պաշտրման մէջ:

Թէ նրբան կոռու-Մելիքեանը լաւ համբառ էր վաստակել՝ այդ երեսումէ արդէն նորանից, որ Մուրավիովը նրան նշանակեց տաճկակոն նոր նւաճած երկիրը կառավարելու, որ տեսեց 8 ամիս, մինչև որ նւաճած երկիրը վետ տրեւց Տաճկաստանին, Բնակիչները նորա լաւ կառավարութիւնը լապտնեցին մի ուղերձով, որ իշւած է թագաւորին մատուցած Մուրավիովի գեկուցման մէջ: Կոռու-Մելիքեանի գործունէութիւնը գենանատեց և նա, իւր 30 տարեկան հասակում, ստացաւ գեն և ը ալմա չի օրի աստիճանը:

1856 թ. վերջացաւ Առու-Տաճկական պատերազմը, և կոռու-Մելիքեանը մի առ ժամանակ անպաշտօն մնալուց իստով, արդէն նոր փոխարքանի իշխան Բարեւատինսկու օրերով, ստացաւ Արխազիակի կառավարչութիւնը:

Այդ պաշտօնում նա նախ իւր ուշագրութիւնը դարձրեց հաղեան Ցըլկ-ների վրայ, որոնք իրանց արշաւանքներով լուզում էին զէպի ոռուսաց տիրապետութիւնը թշնամաբար վարուղ Արխազիաներին: Նւաճեց առ անց արիսն թափելու սահմանակից Ցերելտան, որտեղ կառուցեց մի փարբիկ բերդ:

Դաղստանը 1859 թ. վերջնականապէս նւաճելուց վատու, իշխան Բարեւատինսկին 1860 թ. նշանակեց կոռու-Մելիքեանին հարաւալին Գաղըստանի կառավարիչ և Գերրեինդի քաղաքապէտա: Բայց մինչ իւր նոր պաշտօնի մէջ մոռելը, նորան լանձնեց բանտիցել Տաճկաստանի հետ այն գաղթականութեան առիթով, որ մկնել էին լեռնաբնակ Զեշենները կովկասնան լեսներից զէպի Տաճկաստան:

Հարաւալին Գաղըստանում կոռու-Մելիքեանը ցուց տեսց նոյն կառավարչական հմտութիւնը, որի շնորհիւ այդ երկրի խաղաղութիւնը չը խախտեց ոչ մի լուզիչ պատահարքով: Արխազիանում և Գաղըստանում անցուցած չորս տարին պարզեցին նորան սուրբ-Մուանիսլաւի առաջին աստիճանի շքանշանը, Աննացի Ժապաւէնը, Վլադիմիր երկրորդ կարդի շքանշանը և կալվար անուանական շնորհակալութիւնը:

1862 թւականին Կովկասի փոխարքան նշանակեց Մեծ իշխան Միխայէլ Նիկոլաևիչը, որը շուտով կոռու-Մելիքեանին 1863 թւականին

Նշանակեց պես Թերեքի շրջանի, որի զլիստոր քաղաքն է, Վլագիկամլկազ
և ուր հասաւ թէ չէ, մի երկու շաբախ անցած, 17 ապրիլի ստացաւ գ ե-
նե բաշ-լէ է տի նանա ի ասափճանը: Կը կու տարի անցած, 1865 թ. օգոստ
30-ին, նա բարձրացաւ զեներալ-աղյուսանտի աստիճանին:

Թերեքի շրջանը, իրար զէմ զենք վերցնելու սովոր և քաղաքա-
ցիութիւն սնստիր բնակիչներով, որպէս էին սուսաց կազմիները և չե-
չենեները, դժւար կառավարելու երկիր էր. և ազդ անձնգիստ երկիրը
Լոռու-Մելքիքեանը կառավարեց 12 տարի շարունակ: Կազմիները նորան ևն
պարագան իրանց լինուանեկան և հասարակական մերանորոգութեամբ:
Հմտութիւնը նորանումն էր, որ Լոռու-Մելքիքեանը կարողացաւ կազմինե-
րից քաղաքացիք պատրաստել՝ առանց ֆասուելու նոցա գինուրական տւան-
դական քաջութեան: Եւ իւր այս ծառադութեան համար հանգուցեալ Թա-
գաւոր կալսր Ալ.ԵթՍԱԱ.ԴԻ Պ Լոռու-Մելքիքեանին նշանակեց Թերեքի կա-
զմակին զօրքի շարքում, իսկ աւելի ուշ՝ նորան նշանակեց Սունժեն-Վլա-
գիկամլկազեան զնդի պես: Լոռու-Մելքիքեանը կարողացաւ Թերեքի շրջանի
նման վայրենարարու երկրում մտցնել ընդհանուր տէրունական օրէնքներ,
հաշտարար դասարաններ, վելացըրեց ծորաւթիւնը և հաստատեց ժողովրդա-
կան կրթութիւնը՝ տարրական, արհեստագիտական և միջնակարգ երիտու-
ուսումնարանների միջոցով: Զեշենները, որ զաղթած էին Տաճկաստան,
կրկին վերադարձան իրանց նախկին բնակավայրերը: Լոռու-Մելքիքեանը
մհծապէս խրախուսեց երկրի արդիւնագործութիւն, որի չորհիւ հիմնե-
ցին մինչ 200 զանազան գործարաններ, ինքը հիմնեց քաղաքավին բան-
կերը, անցկացրեց շուալներ և այլ սովորներ:

Այս բոլորից լեռ, Լոռու-Մելքիքեանը ստացաւ զեներալ-նահանգապետի
իրաւունքները և պարզեսարեց «Սպիտակ Արծւր» շքանշանով, Ալեքսանդր
Նեվսկու ազամանղեակ նշաններով և կաւալերի աջի գ են եր ալի աստի-
ճանով: Բայց այդ՝ ամին բան կլանող զործանէութիւնը վատթարացրեց նո-
րա սուողջապիւնը, որի պատճառով նա սահպւեց թողնել իւր ազդ նշա-
նաւոր պաշտօնը և 17 ապրիլի 1875 թ. նշանակեց պաշտօնով Կոմիկաստան
զօրագնդի զլիստոր հրամանատարի մօտ, բայց իւր սուողջութիւնը վերա-
կանցնելու համար, զնաց արտասահման թժկւելու:

Երբ վերջին Ռուս-Տաճկական պատերազմը վճռւած ինդիր էր, գետ
11-ին նուիմը, 1876 թ. նշանակեց Տաճկա-Կոմիկաստան սահմանում զործոց
կօրպուսի հրամանատար, լինելով զլիստոր հրամանատար Մեծ իշխան Մի-
խանիլ Նիկոլայիշչի օղնական: Նա նւաճեց Արդարանը, որի համար ստա-
ցաւ Դէօրդի 3-դ աստիճանը, լազմութիւն տարու Ալաջաղաղի բարձրու-
թիւնների վրա և ստացաւ Դէօրդի 2-դ աստիճանը, զեկովարեց Դարսի
պաշտօնը, որի լաջուղութեան համար ստացաւ Վլագիմիր աւաջին ստոր-
հանը: Իսկ պատերազմի աւարտումից լեռ, իւր բալսր ծառադութիւնների
համոր՝ ստացաւ կոմսի կոչումը 12 ապր. 1878 թ.

Պատերազմի վերջանալուց հետո, կոմսը նշանակվեց պաշտօնով Կովկասիան կօրաբանի գլխաւոր հրամանասարի մօտ, բայց քաչքակած առողջութիւնը սափակեց նորան ինչդրիլ արտասահմանեան արձակուրդ։ Այդ օրից՝ նու այլ հո չը ահաւու կովկասոր։

1879 թ. 24 յունը ուրիշի, կոմսը նշանակվեց Աստրախանի, Արաստավի և Սամարի ժամանակաւոր գեներալ-հանձնավորութեան, և ընտրեց իւր նիստը Յարիցինում։ Նորա յատակ պաշտօնն էր՝ պատերազմնել այդ ՀՀանձները բանած զարհուրելի և վարակիչ ժամանակաւոր զէմ. մի դործ, որ նա կատուրեց երկու ամսամ զարմանալի յաջողութեամբ։ 1879 թ. 7 ապրիլի, նու նշանակվեց Խարկովի ժամանակաւոր գեներալ-հանձնավորութեանի 17-ին—հրամանասաւար Խարկովի զինուրական շրջանի դօրքերի, Ակունք նորա, որպէս առհասուրակ մի քանի ամենանշանաւոր նահանձների գեներալ-հանձնավագեաների անմիջական պաշտօնն էր՝ արմատախիլ անել որոշ զարդարանական կուսակցութեան արդէն չափազանց ակնչափանի նկրառումները, որոնք ուղղած էին պետական կազմակերպութեան դէմ։ Կոմս Լուսու-Մելիքեանը իւր այս պատասխանաւոր և նոր գործամ զեկավարեց ինքնուրուն սկզբունքներով, ջանալով ոչ միտին հարւածել չարիքը, այլ և գրանի հաւաքակութիւնը և հաւատարմութեան քակած կազը առ Բարձր Խշիստութիւնը կրկին վերականգնել։

Այսու հասու 1880 թ. ծանր աստրին Մօնինում էր 19 փետրարի 1880 թ., երբ լրանում էր քսան և հինգ-ամենակը հանգուցեալ կատեր թագաւորութեան։ Ժամանակը անհանգիստ էր և խոռոշ մանաւանդ մարդարազարքում։ Փետրարի 8-ին պալատն էին կանչւած մինիստրները և հանդէսի համար Պետերբուրգ եկած, կոմս Լուսու-Մելիքեանը, որը նոյն օրը հերթակալ գեներալ-ազիւտանոն էր պալատում։ Թաղաւոր կայսրը, ամենքի համար անսպասելի կերպով, լայտենց իւր բարձրազոն կամքը՝ միացնել բոլոր մինիստրական իշխանութիւնները մի անձի մէջ և նոյն իսկ այդուհի ընտրեց գորա համար կոմս Լուսու-Մելիքեանին, իսկ ներկայ և զողներին ինդրեց կապմել հրահանգ, և տանել կոմսի մօտ ի հաստատութիւն։ 12 փետրարի լաջորդեց հրամանը «Ճարտարակութական պատրական առ պատրական կազմին, որի պետը նշանակվեց կոմս Լուսու-Մելիքեանը։ Դորա հետ միասին նա նշանակվեց պետական խորհրդի անդամ և նորա վերաբ բարձրեց Պետերբուրգի գեներալ-հանձնավագեան պարտականութիւնը, որի պաշտօնը վերացւց։

Ակազիսով Լուսու-Մելիքեանին վիճակւոց մի պաշտօն ծայրագոյն իրաւունքներով, որը լատկապէս տուղծւեց նորա համար, իրեն թագաւորական ընտրեալից Մայրադան կարգադրիչ մասնաժողովի աղջակի նպատակն էր՝ խոռվարաբներից երկիրը, բայց մանաւանդ մարդարազարքը աղջակի կոմսը անհապաղ դիմեց տրդորսի մարդարազարի բնակիչներին, որին, իրու պատասխան, հրէսու գիմնազիաներից մէկը առաջանակով խիեց կոմսին,

բայց առանց հետևանքի: Խաղաղութիւնը վերականգնեց. բնակիչների մօտ կրկին վերագարձաւ լսուահութիւնը զեպի բարձրագոն իշխանութիւնը, անդքէս որ կէս տարի գործելոց վետով, ծալրագոն կարգադրիչ մասնաժողովը վերացւեց, նորա հետ և ապագէս կոչւած Ալ-րդ բաժինը (գալանի ու տիկանութիւնը քաջաքական լանջանքների համար):

Կոմս Յոսու-Մելիքեանը աճուհետեւ նշանակեց մինիստր ներքին գործերի, որտեղ նա բանեցրեց զարմանալի գործունեութիւն, դարձելով իւր ուշքը ներքին կեանքի բոլոր ճիւղերի վրայ և զեկավարելով իւր մարդասէր սկզբունքներով: Նա վարեց իւր պաշտօնը մինչ կաւր Ալեքսանդր Ռի ողբերգական մահը, որից վետով կոմսը իրեն լանձնեց մասնաւոր կեանքին, ուր և գոտու իւր կեանքի վախճանը:

ԽՄԲԱԴՐԱԿԱՆ ԾԱՆՈԹՈՒԹՅԻՒՆ

Աւշադրութիւն ենք գարձնում մեր մշտական աշխատակից պետական գիտութիւնների Սարաստուրդի համալսարանի դօքտոր պլ. Գրիգոր Վարդանեանցի ներկայ համարում տպաւծ լողւածի վրայ «Քիւղական վարդի» մասին: Դա՝ «Մուրճ» ամսութիւն համար ամենաթանգ և մեր սրտին ամենամօտիկ խնդիրներից մէկն է, որպէս մէկը այն խնդիրներից, որոնց լուծումից մեր ժողովրդական բարօրութիւնն է կախւած: Յօդւածը զրւած է չառկապէս մեր լանձնարարութեամբ և կ'ունենայ չարունակութիւններ՝ իրարից անկախ և բոլորովին ամփոփ ձևով և բարձրակութեամբ: Որպէս նորութիւն մեր գրականութեան մէջ, ինչպէս նաև պլ. Եալուրեանի «Դատաստանական վերանորոգութիւն» լողւածը, որ նմանապէս դրւած է խմբագրութիւնից բզմած նախազծով, մեր՝ մանաւանդ գաւառական աշխատակիցներին՝ լատուկ լանձնարում ենք ուսանել այդ լողւածները: Ոչ կը կըստուր կերպով, այլ հիմնաւորապէս է մեղ պէտք ուսանել ժողովուրդը, խոկ զորա համար հարկաւոր է, որ նաև գաւառական գրադիները խնդիրների էութիւնը ամբողջապէս ըմբռնեն ու անպէս գրիչ առնեն ձեռքը: — Մենք թու ենք տալիս առեցնել ախտեղ, որ «Մուրճ» ամսադրում «Քիւղական վարդի» մասին գրողը նոյն հեղինակն է, որը Գերմանիային առաջն անգամ տւեց մի հիմնաւոր ուսումնասիրութիւնն կալւածատիրական և դիւղական վարդի հիմնարկութիւնների մասին, գրելով գիւղական վարդի դասական երկրի, այն է Պրուսիակի Սիլեզիա պրօվինցի վարդակին հաստատութիւնների պատոմութիւնը, նոյն սկզբնաւորութիւնից, այն է 18-րդ զարու կիսից մինչև աչժմ: Այդ հեղինակութիւնը, որի համար հեղինակը օգտւած է տեղական վարչութիւններից մասակարարած և ոչ ամենքին մատչելի առաջնակարգ աղբիւրներից, կրում է հետեւալ վերնագիրը:

Geschichte des Landschaftlichen Creditsystems für die Provinz Schlesien. Strassburg 1883.

ՏԻԿԻՆ ԹԱՄԱՐ ՆԵՐՍԻՍԵԱՆ

(ԾՆՆԴԵԱՄԲ ԱԴԱՄԵԱՆ)

Մ. ԱՍԻԼԵԱՆԻ

1882 թւականի Պետերբուրգի աշնան օրերից մէկն էր. ուսանող լնկերներից մէկը և կաւշնէց, որ նոյն օրը, երեկոյեան ժամի 6-ին, իւր անուանակոչութեան առթիւ հրաւել ունիւ իմ ուսանող ընկերուապրում էր Գարօխօվակա փողոցի վերաբ, իսկ ևս սապրումէի Վասիլեվսկի կղզու վերաբ. հեռաւորութեան պատճառով և մասամբ ուսանողներին լատուկ անձգութեամբ, ևս չը կարողացայ նշանակեալ ժամին ներկայ գտնւել: Ակրջապէս ժամի 8-ին հաղիւ հասայ ընկերոջն բնակւած տունը. ներս մտնելով նորա սենեակը, ծխախոտի ծխի ամսով, միջից լապտերի աղօտ լուսով չը կարողացայ ներկայ և դողներին իսկոն ճանաչել. միայն լսում էի բաղմաթիւ ձախեր և տեսնում ծառացած ծխի միջից կերպարանքների վախանակ մարդկային սիլուէտներ: Ներկայ և դողներն աշնապէս զբազւած էին խօսակցութեամբ, որ կարծեն չը նկատեցին իմ ներս մտնելը: Ընդհանուր ողջունից լսուով, սենեակի մէկ ծաբրում, զրան մօտ, հաղլաւարողացայ մէկ տեղ գտնել և նստել: Խօսակցութիւնը տաք տաք շարունակւում էր ուսանողների մէջ: —Ո՛չ, այդպէս չէ, լսում էին երբեմն այս և այն կողմից ձախեր. ևս կ'ապացուցանեմ, աղաղակում էր մէկ ուրիշը, որ խրաբանչւր աղգ նախ քան տնտեսապէս բարտոքելու իւր վիճակը՝ նա մոռաւորապէս ողէտք է առաջադիմէ. այդ կարծիքը սխալ է, խօսում էր երրորդը. մէկ աղջի տնտեսական, մոռաւոր և բարուական առաջադիմութիւնը ոքէտք է լինի զուզընթացարար միմեանցից անբաժան... Նըրեմին երբեմն լսում էր վիճաբանողների ձախների միջից մէկ մեղմ կանացի ձախն: Ինչ և իցէ. ևս ուշազրութիւնս լարած մկսակ լսել կանացի ձախնը. որքան սովորած էի ուսանողների տաք տաք վիճաբանութեանց, նոյնքան մնացել էի զարմացած՝ լուլով մէկ հաւ օրիորդի հանգարա առողջամիտ զատողութիւնները, մանաւանդ մաքուր հացերէն լեզուով: Ինչպէս ասացի՞, միայն լսում էի ձախեր, բայց ծխի թանձրութիւնից ներկայ և դողների կերպարանքը չէի կարողանում որոշչել. հետզհետէ աշքերս ընտելացան ծխին և սկսաց տեսնել սենեակում եղողների կերպարանքը և որոշել օրիորդի կերպարանքը, որը իւր մեղմ ձախով դիւթել էր լսելիքս: Դա՝ թիսագոն համակրելի երեսով, սեսի մեծ աչերով, կամարածե չօճքերով, միջանառակ, ըստ երևութիւն 19—20 տարեկան օրիորդ էր. նորա նստածքը, նազելի շարժւածքը, նախածքը վիշեցնում էին ինձ Հակասանի օրիորդի համեստութիւնը՝ միայն համեմած կրթւած մարդուն վավել վիճ համարձակութեամբ: Գառնալով դէպի կողքիս նստած ուսանողը՝ հարցրի նորան աղո օրիորդի ով լինելը: —Դա Բես-

տուժելովի, կուրսերի ուսանող է, աճունն է թամար, ազգանունը Ազաման, պատասխանեց ինձ ուսանողը: Չափ ներս բերեցին, առք տաք խօսեցաւթիւնները ընդմիջեցաւ: Այլ միջոցին ծանաթացաւ օր: Թամարի հնաւակցութիւնները ընդմիջեցաւ:

Ո՞վ էր ազգ մատագահաս օրիորդ Խամարը և ինչ էր որոնում հրասիսի ստոնամանիքում: Գա տփիսիսիցի լավոնի ծնողների զաւակ էր, իւր հավական կրթութիւնը սասացել էր Գալիանեան օրիորդաց գպրոցում: Աւարահլով այլ գպրոցի զաւընթացը՝ մտել էր գիմնազիա և ալդ տեղ ևս աւարտելով ուժերորդ զասարանը, կամեցել էր բարձրագուն ուսում ստանալ ընդդէմ իւր ծնողաց կամքին, ի զարևան Տիֆիսի հայ օրիորդների, մերժելով հարուսաւ փեսացուների ձեռքը, լսելով իւր ներքին լաւաղոն ձանին՝ եկել էր հիւսիս, որպէս սիրահար գաղափարների և գիտութեան:

Զարմանալի էր այդ մատաղահաս օրիորդի եռանդը և ընդունակութիւնները. սակաւ ժամանակի մէջ նա ծանօթացաւ համարեան Պետերբուրգի բոլոր հայ ուսանողների հետ, տեղեկացաւ ոչ միան նոցա, այլ և ոռու և վրացի ուսանողների գաղափարներին, թէե նա արդէն բերել էր իւր հետ հիւսիս պատրաստի որոշեալ գաղափարներ, նա ուսումնասիրից Պետերբուրգի հայ ուսանողութիւնը. նորա նոդին վրաովում էր շատ ուսանողների անսարքիրութիւնը, առանց խորութեան նա գիմնում էր ալս և ախ ուսանողին, զրգորում նոցա՝ միանալ մէկ որոշեալ գաղափարի ներքո, զործել բնդհանուր ուժով. մահաւանդ թէ ազգ ժամանակ Պետերբուրգի հայ ուսանողները բաժանւած էին երեք կուսակցութեան: Գրական ժողովի անդամներին հակառակ էին այն հայ ուսանողները, որոնք չվաճառլով հացերէն լեզուն, չունենալով հավական կրթութիւն, մէկ տեսակ արհամարհանօք էին խօսում այդ՝ իրենց կարծիքով սահմանափակ մտաւոր շրջան ունեցող հայ ուսանողների մասին, իրենց համաշխարհաքաղաքացի համարելով (ի դէպ, այդ համաշխարհաքաղաքացի ուսանողներից շատերը ալժմ ոչ միայն չեն մտածում ընդհանուր մարդկութեան վերաս, այլ նոցանից իւրաքանչիւրը մէկ տաք տեղ զտած, լոկ մտածում է իրեն գրապանի վերաս կամ բերքուր սրած, նոր տարապի մաքուր հագուստով, գլխի արտաքին կողմն օծած հոտաւէտ լւզերով, խակ ներքին կողմը զատարկ՝ հարուսաւ օժիասով հայ օրիորդ հարուսացուներ են վնասում): խակ հայ ուսանողների մէկ մասն իւր ժամանակն անցնում էր զատարկութեամբ. օրիորդ թամարը դոցանից շատերի որտերի մէջ վառեց գաղափարական հոռը իրեն լատուկ կանացի ովերութեամբ: Ամեն հայ ուսանողի բերանից օրիորդ թամարի անոնն էր լսում: նորա շնորհի մինչև այդ ժամանակ միմեանց ի զուր ասող ուսանողներից շատերը միացան: սկսաւ ծանօթութեան ընդարձակ շրջան, մածաւանդ օրիորդ թամարի ովերիչ բարողական ազդեցութիւնը շատ հայ ուսանողների համար զգալի էր և հինց այն պատճառով, որ մէկ հայ օրիորդ կենդանի օրինակով ցուց էր տալիս, թէ ամօթ է հայ ուսանողին անտար և երութեան մէջ թմրել, փակել աշքերը, չը տեսնել իւր ժողովրդի թշուա-

ուռթիւնները։ Գաղափարը և զաղափարական ձգումները բառ ինքնամ անարաստ, աղնի։ Հողիների համար ունին իրանց բարուպական կրթիչ աղջեցութիւնը, ևս առաւել նոցա աղջեցութիւնը զդալի է, երբ նոքա բղասում և քարոզում էն կանացի մաքուր սրտից։ աղդպէս էր շատ ուսանողների համար օրիորդ Թամարի կենդանի խօսքը և օրինակը։

Նորա պարզ հագուստը, խօսակցութեան անկեղծութիւնը, բարակական մաքրութիւնը, զաղափարների խորութիւնը գէպի ինքն էին զրաւոմ ծանօթների սիրուը և հողին։ Արտաքին փայլը, կեղծութիւնը բոլորովին հեղծ նշաններից ոչ մեկը չէր նկատում նորա վերակ, աղդ մատին նա շարունակ ասում էր։ «Գաղափարի վեհութիւնը և մաքրութիւնը ոչ մի ժամանակ կորուսութիւն չունի փայլել արտաքին ցոցերով։ զաղափարական ցուցամուլտիւնը շատ աղջինի, երբ կանանց սիրուն ու միտքը կրթւելով և զարգանալով, կը հասկանան թէ նոցա արժանաւորութիւնը ոչ թէ նորանումն է կադանում, որ նոքա նմանվն արտաքին կողմից ալր մարդոց, ազ մարդկացին ներքին արժանաւորութեան մէջ։» Աղդպէս էին նորա համոզմունքները և նոցա հաւաարիմ մինչչ իւր վաղահաս մահը։

Օրիորդ Թամարը ունեցաւ աղջեցութիւն և Պետերբուրդի օտարախօս ուսանող հաջ օրիորդների վերակ, որնք թւալ 7 էին։ Նոքա նորա չորսորմամբ սկսան հնատաքքրլուկ և ուսանել հայոց լեզուն։ Թամարի աղջեցութիւնը սկիզբանի երեսում էր աղդ օտարախօս աղջկանց վրակ, դոփա մէկ աեսուկ համակրութեամբ և պասկառանօք էին վերաբերում գէպի օրիորդ Թամարը։ Աղդպէս օրիորդ Թամարը պաճառ ասալի նման փալեց մէկ տարի Պետերբուրդի հաջ ուսանողութեան հորիզոնի վերակ՝ վեղափոխելով նոցանից շատերի սիրուը դէպի բարին, անցաւ մատու Վուկուա 1883 թւին, նոն բարուպական աղջեցութիւնը և բարի համբաւը թունելու և ախտեղի հաջ ուսանորութեան հսմար։

Մօմիւակամ ես մէկ տարի մնալով, տմուննանում է մէկ համեստ և իրեն զաղափարակից ուսանող Գալիթ Ներսիսեանի հետ, չուսալով ձեռք ձեռքի ուսած իրագործելու կեանքի մէջ իրենց փափարակած զաղափարները։ 1884 թւից տիկին Ներսիսեանն տոք է դուռմ գաղափարական աշխարհից դէպի խոկական կեսմնքը, որտեղ ապասում էր նորուն անչաջողութիւններ և տառ տառանք։

Սորոսակամ ես մէկ տարի մնալով, տմուննանում է մէկ համեստ և կրպունքներով և զաղափարներով մնանում է կեանք և չամսուութեամբ կամննում է իրագործել նոցա, մնանաւեղ մնանելով է աղջպիտի մարդու պլամեթիւնը մեր հաստրակութեան մէջ։ Գաղափարը ինքն լսու ինքնան մէկ հուր է, որ լսիմամ, մաշում է իւր հաւաատարիմ զինուրի գոլութիւնը, բայց և աւելի զարհարելի է, երբ զաղափարական մարդը զուրկ է մեր մէջ նիւթական միջոցներից։ Ծախող ներքին հուրը մէկ կողմից, կենսական անո-

դոգ հանդամանքները միւս կողմից շատ անգամ խեղզում են իրենց ճանկերի մէջ զաղախարական մարդուն և գերեզման իջևնում։ Ավտովիսի մէկ զոհ է լինում տիկին Թամար Ներսիսեանը։ Սեր մէջ լաւագաճ հասարակական գործունէութիւններից մէկն է հաշում ուսուցչութիւնը։ այդ իւկ պատճառով 1884 թւին տիկին Ներսիսեանը վարժուհու պաշտօնով գնում է Սղնախ։ Դժլաղղաբար մի քանի ամսից, սրբեծնութիւնից հատ ծանր հիւանդացած, վերադառնում է Տիփիս՝ զուրկ բոլորովին նիսխական միջոցներից։ 1885 թւին աւարտում է նորա ամուսին Ներսիսեանը Մօսկավի Պետրովսկան երկրագործական հեմարանը և գալիս նոխովէս Տիփիս։ Այդ երիտասարդը, որ ունէր հաշրենական բուռականին մառանկութիւն և հողեր, լոյս ունէր իւր մասնավիտութեամբ պարագելու իւր սեպհական հողերի վերաց, բանալով աջտեղ և ուսումնարան՝ պատահում է արգելքներին։ Նորա մեծ եղբարը չէ կամենում մաս հանել նորան հայրենական ժառանգութիւնից։ այդ դէպքը սաստիկ վատ է ազգում երիտասարդ Ներսիսեանի վերաց և վհատեցնում։ նա կամենում է եղբօր գեմ դատաստան բանալ, մեծ եղբայրը գործը քաշ է տալիս։ երիտասարդ Ներսիսեանը կամենում է առ ժամանակ ուսուցչութեամբ պարագել և հրամիրում է ուսուցիչ ս. Էջմիածնի ճեմարանում։ զնում է Էջմիածնի իւր հետանելով իւր կնոջը և որդուն։ Էջմիածնում տիկին Թամարը լորդութում և համոզում էր իւր ամուսնուն, որ իրենց գործունէութիւնը աւելի արդիւնավուր կը լինի, եթէ իրենք գործեն ուրիշ կողմերում, որտեղ ինքն ևս կարող է վարժուհութեամբ սպարապել, բաց դժբաղղաբար երիտասարդ Ներսիսեանի աշքերը սկսում են ցաւել և նա ստիպւած է լինում ուսումնական սարւաց կիսումը թողնել Էջմիածնը և վերադառնալ ընտանիքով։ Տիփիս։ Ավանել մինչեւ 1886 թւի սեպտեմբեր ամիսը ապրելով նիւթական կարօտութեան մէջ, երիտասարդ Ներսիսեանի աչքերը առողջանալուց լետով, այր և կին ուսուցչութեան պաշտօնով գնում են բաքու և բնակւում ուսումնարանի շինութեան մէջ։ Դժբաղղութիւնը կարծես նոցա հետառում էր ամեն տեղ, կէս շինութեան մէջ։ Դժբաղղութիւնը կարծես նոցա բնակւած տեղը վասարանից հրդեհ է պատահում, երիտասարդ Ներսիսեանը մասամբ իւր ընտանիքին վտանգ պատահելու երկիւղից և մասամբ ցրտից սկսում է արիւն թքել քանի զնում օրէց օր թոքախտը սաստկանում է, անվախ որ ձմեռ ժամանակ Ներսիսեաները տոիսկւած են լինում կրկին թողնել ուսուցչութիւնը և զնալ համախուն մօտ Գիրք գիւղը, որտեղ չը նակելով Ներսիսեանի ծանր հիւանդութեանը, դոցա ջանքով բացւում է ուսումնարան։ Փանի զնում թոքախտը սաստկանում է և երիտասարդ Ներսիսեանը անկաղին է լնինում։ Ավտուղ տիկին թամարը պահապան հրեշտակի պէս գիշեր և ցերեկ հսկում է եղել արիկին թամարը պահապան հրեշտակի պէս գիշեր և միանակ, գիւղական խոնաւ, ցուրա, առանց տախտակամածի սենեակում, զուրկ համարեա բոլորովին նիւթական միջոց ներից, բժշկական օգնութիւնից և դեղերից։ աջպիսի թշառ զրութեան

մէջ վախճանւում է երիտասարդ Ներսիսեանը 1888 թւի լունւար ամսի վերջերաւմ:

Կինսուկան վաստ պարմանները, ամուսնու մահւան վիշտը խանզարում են և տիկին Թամարի առողջութիւնը. ամուսնու մահից անմիջապէս չետոց, նորա մէջ ես երեսւմ են թոքախտի նշաններ. ծանօթները նորան բերում են Տփխիս նույն նիւթական կարօտութեան մէջ. թոքախտը ուստիկանալով անկողին է ձգում և տիկին Թամարին: Զարմանալին ան է, որ չը նպած իւր ծանր հիւանդութեանը, նիւթական միջոցներից զուրկ լինելուն, տիկին Թամարի բերանից չէ լսել երբէք արառունջ, ոչ իւր թշւառ բազդի և ոչ մարդկանց վերաբերմամբ. նա ամեն վիշտ տանում էր լուս և մունջ, ընդ նմին շարունակ հնտաքրքրւելով ամեն մէկ հասարակական և զրական շարժումով. ալդակս համարեա մէկ տարւաց չափ շարունակում է տիկին Թամարի հիւանդութիւնը և ղեկանմբերի 31-ին լուս 1889 թւի լունւար ամսի 1-ը, վախճանւում է 26 տարեկան հասակում, թողնելով իրենից վատոյ մէկ հինգ տարեկան արու զաւակ: Յուզարկատրութեան հանդէսը կատարւեցաւ լունւարի 4-ին: Հնաաքրքիր էր տեսնել թէ ովքեր էին ալդ տխուր հանդիսին մասնակցողները.—բազմաթիւ հազ, վրացի կրթւած երիտասարդներ, բժիշկներ, իրաւաբաններ, խմբագիրներ, ուսուցիչներ և ազգ. կազին քանի չափ կրթւած հազ, ուսու և վրացի տիկիններ, օրիորդներ և վարժուհիներ՝ չը հաշւելով և հանգուցեալի ազգականները և մնացեալ ժողովրդի բազմութիւնը: Գագաղի վերաէ կալին 6 պսակ, երկուսը Տփխիսի հազ արկնանցից և օրիորդներից, երկուսը Տփխիսի հազ երիտասարդութիւնից, մէկը հանգուցեալի ընկեր և ծանօթ ուսու օրիորդներից, իսկ մէկն ևս Բաքւաչ հազ երիտասարդութիւնից. զագաղը երկար տեղ իրենց ուսերի վերաէ կը-րում էին հանդիսին մասնակից տիկինները, օրիորդները և երիտասարդները: Գերեզմանի վերաէ մէկ սրտառուչ ճառ խօսեց ուսուցիչ Քրիստոնուր Միքայէլսեանը, ցոց տալով տիկին Ներսիսեանի բարովական նշանակութիւնը երիտասարդութեան համար և նորա մահւամբ կրած մեծ կորուսուր. Ալդպէս վաղաժամ բաժանւեցաւ ալս աշխարհից տիկին Թամարը, տանելով իւր հետ զերեզման շատերի համակրութիւնը, սէրը և արտասուքը, թողնելով նոցա սրաերի մէջ անմոռաց վիշտակ:

«Մուրճի» ընթերցողները թերեւ հարցնեն. ինչ բանի մէջ է կականում տիկին Ներսիսեանի արժանաւորութիւնը, նա ոչ նշանաւոր մատենագիր է եղել (թէ և ունի թարգմանութիւններ, երկուսը «Աղքիւր» մանկական ամսագրում տպւուծ, մէկը Գարշինից, իսկ միւսը, եթէ չեմ սխալւում, Քողղանովից, նունակիս ձեռագիր չը տպւած թարգմանութիւններ), ոչ հրատարակախոս և ոչ բարձրագուչ անուն ունեցող մէկ մարդ, իրաւէ, նա իւր կարճանակ կեանքի մէջ ձախորդ հանդամանքների պատճառուի, վիշեալ չառակութիւններից և ոչ մէկը չէ ցոց տեկ ակնկալանի, բայց նա ունեցել է կրթիչ բարողական մեծ ազգեցութիւն իւր ընդարձակ ծանօթութեան

շրջանում. վկաս են զորան նորա ժամանակակից Պետքը բռուղի, Մօսկւայի ուսանողներից շատերը, Տփխալի և Բաքւազ երթաւարդութիւնը և ազք, Մեր կեանքի մէջ գաղափարական, բարոչական ոկզբունքներով շատ և շատ հաղւագիւա մարդ կարելի է զանել, մանաւանդ աշխախիսիները գմւարագիւա են մեր կրթեալ անուանւած կանանց մէջ, որոնք ոչ միայն չեն հետեւմ վեհ գաղափարների, ալզ և շւազութեան և գասարկապորտութեան զատառուրաելի են լինում. ահա ալդ խալ պատճառով ափկին Ներխանանների նմանները մեր գաղափարից զուրկ անապատավին կեանքի մէջ իրենց բարոչական աղղեցութեամբ, կենդանի խօսքով և օրինակով մէկ անուակ աւողջարար և կենդանացուցիչ զովարար հողմ են, որ ներս սղոսկելով մեր կեանքի զւասահաս գաղափարական ճանապարհորդի ներքին կողմը, ոկրուում է նորա սիրտը բարախել լուսով, սիրով և ազնիւ ու վեհ ձգտումներով. Այդ կողմից ափկին Ներխանանը ներկանանում է իրգի հասարակական գործիչ, որի գործունէութիւնը եզել է ոչ թէ թղթի վերաս, ալզ մարդկանց կենդանի սրաների վերաս, մանաւանդ թէ, նա ունէր իւր գործունէութեան որոշ ծրագիրը, ի միջի ալզոց և ազս ժողովրդի մէջ զիստութիւնը տարածել զիւրառացելի լեզուով և հասկացողութեամբ, և ինքն սկսել էր ալզ ուզզութեամբ թարգմանութիւն անել, բաց մեր կեանքի ձախորդ հանդամանքները և մանը, ինչպէս ալզ ձևանարկութեանը, նոկնպէս և նորա բազմաթիւ օպասէտ մտաղբութեանց տարածամբ լիրջ դրին:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Անցեալ Համարում մենք գծագրեցինք այն տևողական նշանակութիւն ունեցող պարագաները, որոնք որոշում են եւրոպական մեծ պետութիւնների միջազգային քաղաքական յարաբերութիւնները: Այդ անելուց յետոց, մենք խստացանք ներկայ Համարում 1888 թւականի քաղաքական անցքերի տեսութիւնը տալ:

Անցեալ աարին սկսեց քաղաքական անհանգատութեամբ, գրլ խաւորապէս Խուսիացի գեռ ևս 1877 թ. արած յայտարարութեան պատճառով, թէ նա ուզում է իւր զգործողութիւնների ազատութիւնը պահպանել: Այդ յայտարարութեամբն է, որ Խուսիան բաժանեց երեք-կայսերեան միութիւնից: Այդ յայտարարութիւնը ահազին աղմուկ բարձրացրեց Գերմանիայում և Աւստրօ-Ռւնգարիայում: աղմուկ, որին պատասխանեց Պյեսեյ Ինվանմէ պաշտօնական թերթը մի նշանաւոր և համարձակ յօդւածով, որի մէջ անց էր կացնում այս միտքը թէ՝ պատերազմի պատրաստողը Աւստրօ-Ռւնգարիան է, և ոչ Խուսիան: Այդ աղմուկներին մի այլ պատասխանն էր նաև ուռւաց ֆինանսական մինիստրութեան կառավարիչ, իսկ այժմ՝ մինիստր Վիշնեղրադսկու զեկուցումը 1889 թւականի պետական բիւշեաի մասին, որտեղ զինւորական ծախքերը ոչ միայն չեն աւելցրած, այլ դեռ մի փոքր էլ կրծառած էին:

Միջազգային յարաբերութիւնները բնաորոշող միւս ցողցերից, որ եղան 1888 թւականին, առանձին ուշադրութեան արժանի են:

1) Գերմանիայի և Աւստրիայի մէջ հոկտ. 7-ին 1879 թ. կապած գաշնակցութեան պաշտօնական հրատարակումը փհարւար ամսին, որի մասին անցեալ անգամ երկար խօսեցինք, 2) ուռւաց Պравительствեան Վետունե-ում դուրս եկած «պաշտօնական յայտարարութիւնը» Բոլգարիայի մասին, գետը. 11 (23). Տատիշչեի յօդւածը Խօսութիւնը անցեալ է 1888 թ. հունիսի 15-ին:

Վրեմյա լրադրում «Ռուսիա և Բոլգարիա, историческая справка» վերնագրով՝ մազիսին, որին պատասխանեց պաշտօնական Պравительственный Եվտոնիկ», 3) ներմուծումը էլզաս-Լօթրինզիայում՝ պասպորտական խիստ սիստեմի ֆրանսիացիների դէմ՝ մազիսին, 4) ունգարական մինիստր-նախագահ Տեսսայի անսպասելի խիստ սարլամենտական ճառը, արտասանած 26 մայիսի, Ֆրանսիայի հասցեին, Պարիզի աշխարհահանդէսին մասնակցելու խնդրի առիթով, 5) Գերմանիայի նոր և երիտասարդ կայսր Արլիներմ Ա-ի այցելութիւնները Բուլիայի, Նվերնորվեգիայի, Դանիայի, Աւստրիայի և առաջ մանաւանդ Խոալիայի գահակալներին՝ յուլիս և յաջորդ ամիսներում, 6) Մասսովայի միջնադէպքը, որը պարզեց բոլոր այն թշնամական դիրքը, որ ուզում է Խոալիայի այժմեան մինիստր-նախագահ Կրիսպին ընդունել Ֆրանսիայի դէմ, 7) Կրիսպիի այցելութիւնը Բիսմարկին 21 (9) օգոստ, և Կալնոկիի հետ տեսակցութիւնը 25 (13) օգոստ, Կալնոկիի այցելութիւնը Բիսմարկին՝ 19 (7) սեպտ., 8) յայնանի Խորվատեան եպիսկոպոս կաթողիկ Շորօսմայիերի շնորհաւորական հեռագիրը Բուլիայի մկրտութեան 900-ամեակի առիթով և դորա համար առաջած յանդիմանութիւնները կայսր Ֆրանց-Յովանիից, 9) ֆրանսիական նոր օրէնքը ֆրանսիաբնակ օտարականների մասին, և դորա առիթով եղած լրագրական բացարութիւնները:

Այդ կէտերը, որ մենք ցիշեցինք, առանձին բացարութիւնների կարու չեն, այլ մի մի արտացայտութիւններ են այն ընդհանուր միջազգային քաղաքական ուղղութեան, որ մենք նախին յօղւածում գծագրեցինք:

Ներքին քաղաքական դէպէրից, որոնք եղան անցեալ 1888 թւականին, և որոնց մի քանիսը բացարութիւններ են միջազգային քաղաքական դրութեամբ, իսկ միւսները լոկ ներքին քաղաքականութեան համար նշանակութիւն ունին, կը ցիշենք հետեալները:—

Յունաւրին՝ ընտրութիւններ ֆրանսիական սենատի մի երրորդ մասի անդամների, որոնցով ոչինչ նոր դրութիւն չը ստեղծեց, քանի որ գրեթէ նոյն թւով սենատորներ ընտրւեցին ամեն մի կուսակցութիւնից, ինչպէս և առաջ էր:

Փետրւար ամսի 6-ին՝ Բիսմարկը կարդաց իւր նշանաւոր ճառերից մինը, որից յետոց ընդունեց զինուորական նոր օրէնքի նախադի-

ծը, որով երկրորդ կարգի (պահեստի) զօրքի մի մասը մանում է կանգուն զօրքի մէջ և այդպիսով կանգուն զօրքի թիւը աւելցում է, պատճառելով 280 միլիօն մարկ տարեկան նոր ծախք: (Յ մարկ=1 ռոկի բուբլուն):

Մարտին՝ մահ Ա.իլհելմ I. Գերմանիայի կայսեր և Պրուսիայի թագաւորի. նորա հիւանդ որդի Ֆրիդրիխ III ընդունում է թաղաւորութիւնը և կայսերական գահը, հրատարակում է 25 (12) փետր. մի բեսկրիպտ, որտեղ նա խւր քաղաքականութիւնն է ծրագրում, և նշանաւոր՝ խւր հակաբիսմարկեան ազատամիս ուղղութեամբ:

Անգլիայում պահպանողական Սալիսբիւրի մինիստրութիւնը ներկայացնում է պարլամենտին երկու նշանաւոր օրինագծեր՝ որոնցով Անգլիայում տեղական կառավարչութեան իշխանութիւնը շատ աւելի ընդարձակում է, քան թէ այժմ, ուրեմն ձգտում է դէպի աւելի մեծ ազակենդրոնականութեան. մի բան, որ սպասելի չէր պահպանողականներից:

Ֆրանչիայում շարունակում է աղմուկ հանել Բուլանժէն. Տիրաքի մինիստրութիւնը վայր է դցւում ապրիլին—և նրա տեղը կազմում է մի մինիստրութիւն, որը ցայժմ կառավարում էր Ֆրանչիան. դա նշանաւոր է նրանով, որ այդ երկրում, վերջին 18 տարիներում՝ առաջին անգամ կազմում է մի մինիստրութիւն արմատական կուսակցութեան պատոկանող. մինչդեռ արմատականները պարլամենտում փոքրամասնութիւն են կազմում: Այդ մինիստրութեան գլխաւոր անդամներն են՝ ֆլոքի, մինիստր-նախագահ և ներքին գործերի մինիստր, ֆրէյսինէ (ոչ զինւորական, բայց բազմահմուտ մարդ)՝ զինւորական մինիստր, Գօրլէ՝ մինիստր արտաքին գործերի և այլն:

Մայիսին՝ դեռ ևս սկզբում պրուսական պարլամենտը ընդունեց կառավարութեան առաջարկութիւնը՝ պարլամենտը նորոգել ամեն 5 տարի, փոխանակ 3 տարւաց միջոցի (Բիսմարկեան քաղաքականութիւն, որի մասին առիթ կը լինի խօսելու այլ անգամ):

Յունիսի 15-ին վախճանեց Գերմանիայի կայսր Ֆրիդրիխ III, թագաւորելով միմիայն 3 ամիս և քանի մի օր: Նորա գործքերից ամենանշանաւորը այն եղաւ, որ, իւր մահից մի քանի օր առաջ, արձակեց պաշտօնից խիստ բիսմարկեան՝ ներքին գործերի մինիստր Պուտկամերին:

Ֆրիդրիխ Ա-ի մահով և սորա որդի Վիլհելմ Ա-ի գահը բարձրանալով՝ Իշամարկի ամենակարողութիւնը վերատին հաստատեց Գերմանիայում. և որովհետեւ Իշամարկը մեծասիս աշխատած էր, որ Ֆրիդրիխ Ա-ին խանդարէ գահը բարձրանալու, ուստի սորա մահից յետ բացւեցին լրագրական մերկացումներ թէ՛ Գերմանիայում և թէ արտասահմանում, որոնք շարունակում են զբաղեցնել Եւրոպայի հասարակութիւնը և հրապարակախօսութիւնը նոցն իսկ մինչ այսօր։ Այդ առիթով եղած հրատարակութիւններից ամենազլիաւորն էր «Ֆրիդրիխ Ա-ի լիշտակարանը ֆրանս-գերմանական պատերազմի ժամանակ» հրատարակութիւնը «Գերմանական տեսութիւն» ամսագրում (Deutsche Rundschau), սեպտեմբեր ամսի №-ում, որի առիթով բարձրացաւ մեծ փոթորիկ Գերմանիայի կառավարչական շրջաններում և որի հեղինակի դէմ եղած խուզարկութիւնները այսօր հասցրել են Ստրասբուրգի պրօֆեսօր Գեվիենին դատարանի առջև, որը, սակայն նրան ազատ յացարարեց։ Պործը, սակայն, դեռ այժմ էլ շարունակում է։ Նշանաւոր է նուև այն հանգամանքը, որ նոցն այդ գործի առիթով եղան խիստ յարձակումներ անգիտական գեսարանի դէմ՝ Պետերբուրգում՝ ողբ Սորելի դէմ, իբր թէ նա ևս այդ պիշտակարանից հրատարակութեան գործի մէջ խառն է եղած։ Այդ զրւածներից, նոցն այդ գործի վերաբերեալ, իւր վերայ ուշադրութիւն է գարձնում նորերումն հրատարակած մի անստորազիւր յօդւած «Ժամանակակից տեսութիւն» անգլիական ամսագրում։ Իշամարկ և նորա տոհմը վերնազրով, սրտեղ ուզում են ապացուցել, թէ Իշամարկը վազուց ձգտում է Գերմանիայի առաջին մինիստրի պաշտօնը դարձնել ժառանգական պաշտօն Իշամարկի առհմի մէջ։

Յուլիսին՝ կայացաւ մենամարտութիւն ֆրանսիական մինիստրնախագահ Ֆլոքէի և Բուլանժէի մէջ, որտեղ վերջինս յազմեւեց. դէպք, որի անմիջական հետևանքն եղաւ՝ Բուլանժէի և կուսակից Գերաւլեղի պարտութիւնը պարլատունտական մասնաւոր ընտրութիւնների ժամանակից։

Սերբիայում սկսւեցին թագաւոր Միլանի և թագուհի Նաստալիայի ամուսնական վէճերը, որոնք յետազայում՝ վերջացան ապահարզանով։

Օգոստոսին՝ կոմս Մոլտկէն, դարուս ամենամեծ ռազմագետը,

Վերմանիացի զինուորական զլիսառոր շտաբի կառավարիչը, ծերութեան պատճառով, հետացաւ իւր պաշտօնից և նորա տեղը նշանակւեց կոմս Վալերյանէ, Մօլովէի նախկին օգնականը:

Ֆրանսիացում Բուլանժէն կրկին ցառաջանում է. 19 (7) օգոստ նա միաժամանակ ընտրւում է երեք դեպարտամենտներում:

Մեպահմբերին՝ ու շաղրութիւն զարձրեց իւր վերաց գերմանական պարլամենտի ազատամիտ կուտակցութեան պարագլուխ Ֆօն-Ֆեննինդասէնի նշանակւելը բարձր վարչական պաշտօնի մէջ՝ իբր աւագ-նախագահ՝ Հաննովրէան պրօվինցի: Խորանից եղրակացրին, թէ Բէննինդասէնին նախապատրաստում են մանելու մինիստրութեան մէջ, չայցած որ իւր կուսակցութեան դէմ Բիսմարկը կուռում է վերջին տասնեակ տարին:

Ֆրանսիացում հանրապետութեան նախագահ՝ Կարնո իւր աջողակ այցելութիւններն է շարունակում երկրի զանազան քաղաքներ, յոր պորելով ժողովրդի հանրապետական զգացումները:

Հոկտեմբերին, Ֆրանսիացում, մինիստր Ֆլոքէն առաջարկեց պարլամենտին առհմանապրութեան վերաբննութեան նախադիծը, որի առենազլվաւոր կէտը սա է, որ պատգամաւորների ժողովը չընարեի առեն չորս տարին մի անգամ, այլ որ առեն երկու տարին մի անգամ վերընտրւին պատգամաւորների ժողովի և սենատի մի երրորդ մասերը: Այդ խնդիրը մեզ գեռ կը զբաղեցնի մի այլ անգամ, ուստի առ այժմ անցնում ենք՝ միմիացն յիշատակութիւն անելով:

Դոյշեմբերին՝ վերջացան ընտրութիւնները պրուսական պատգամաւորների ժողովի համար՝ յունիս ամսին ընդունած օրէնքի համեմատ, այսինքն, որ պատգամաւորների լիազօրութիւնները լրանան ոչ երեք, այլ հինգ տարուց յետոց: Ըստրւեցին՝ պահպանողականներ՝ 198, ազգային-ազգատամիտներ՝ 87, կենդրոնականներ (կղերական)՝ 99 հոգի, միասին առած՝ յաջող Բիսմարկի համար:

Ամերիկացում, նոյ. 6-ին ընտրւեց նոր նախագահ՝ Հիւսիսային Ամերիկացի նահանգների՝ հանրապետականների կանգիտառ գեներալ Հարիսն, որ փոխարինեց դեմօկրատական կուսակցութեան պատկանող Ալեւելինդին:

„ՄՈՒՐՃԻ-Ի ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՔԵՇԽԱՅԻ. (Բար. նահ.) պ. Աղբալեանցին: Ստացանք «Մշակ»-ի խմբագրութիւնից Զեր ուղարկած ուսուցչական Յ բուրլին:

ԱԼԵՔՍԱՆԴՐՈՊՈԼ. պ. Ա. Ի. Քեր «Թ. Լ.» մենք հասանեցինք, թէպէտ և նմանողութիւն է Լեռմոնտովի զայտնի ոստանաւորին Բայց գտնում ենք, որ մշակման դիու ևս կարօտ է: Գլխաւոր պակասութիւնը ուս է, որ զրարարը աշխարհարարի հետ շատ է խառնած՝ ուր և չափը կանոնաւորելու մարտի: Ալդ նշանակում է խոտափանել զատ աշխարհարարի անբաւարարութիւնը բանաստեղծական գործքերի համար: Արձակ զրտները ալդ կարծիքը վազաց է, որ թողել են, արդէն ժամանակ է, որ չափով գրազներն էլ ալդ սովորութիւնը թողնեն: «Տաճկա-Հայոց» թուլ է, իսկ «Գարնանապին զիշերը», ըստ մեզ, ներկապացնում է զգացմունքների մի շփոթ և արւեստական գրւածք:

ԲԱՐԵՎԻ. Դր. Զալեանցին: Հասցրինք «Մշակ»-ի խմբագրութեան Զեր 10 ր. և «Արձագանք»-ին 5 ր.

ՊԱՐԻԶ. Ռւսանող պ. Ա. Բարալեանցին: Կրկու լուրլի աւելի էք ուղարկելու ուստի և վերապարձրինք:

ԹԵՂԱԼԻ. պ. Դր. Բաղդասարեանցին: Զեր առաջարկութիւնը ընդունելի է. բայց կը սպազրւի թէ ոչ—ալդ կախւած է գրւածքից: Առանձին խոստմունքներ անել չենք կարող:

ԱԼԵՔՍԱՆԴՐՈՊՈԼ. Հեղինակին՝ «Տեսարան Դադսաւանի լեռնելուում», Ամիոց դոհիս և «Երսպրօմպտիու»: Անչարմար զտանք:

*** Տեանդրին: Զեր «Ծով» բանաստեղծութեան առաջին և վերջին տուները միայն փոքր ինչ աղողած են. մնացեալ նկարագրական մասը թուլ է: — «Դարրնի Մուրճը» ստացանք. կը պահենք միայն իրը վշաստակ:

ՄԵԾ-ԴԱԲԱՔԻՒՄ. Խորէն քահանակ Խոնզագեանցին: Ռւսուցիչները և ուսանողները, բայց ոչ ուսումնարանները վայելում են զիջումներ «Մուրճ»ը ստանալու համար: Մի ուսումնարան ամսագլու ստանալ, որից օգտւին 10—20 հոգի և գեւ աւելի պակաս վճարի,

քան մը սովորական բաժանորդ? Դուք մնում եք պարտ 2 ր.

ՄՈՒՊՆԵԼԻԸ. Հայ ուսանողութեան, Ասխարագից պ. Խուրչիդ Մնացականեանցը ուղարկել է մեզ 10 րուբլի, որպէս բաժանորդագին, «Մուրճ»-ը ձեր անունով ուղարկելու համար: Օգուելով զեղքից, կառաբում ենք պ. Մնացականեանցի խնդիրքը՝ լավոնել նորա ջերմ համակրութիւնը դէպի ձեզ և առաջաշխմութեան ու կառարեալ աջողութեան ցանկութիւնը ձեր առաջարիզի վերաբ:

ՍԱՐԱԿԱՄՄԻՇ. Պ. Գր. Բարա-Քեօխավաեւին, կապիտան 156 Ելիսաւեասով. հետեակ պօլիի: Վուղարկւի «Մուրճ», ում համար ուղարկած եք տարեկան բաժանորդագինը:

ԲԱՔՈՒ. Մելիք: Ստացանք «Հայ գիւղացու ու օրլու» Դեռ. չենք կարուցել, Սեր վճիռը կը լաւտնենք Ձեզ առանձին համակախ:

ԴԶԼԱՐ. Պ. Մ. Մարգարեանցին, Արդարեն, ուղարկողը Դուք եք. Ձեր կամքի համաձան, այդ մի րուբլին լատկացրինք «Մուրճ»-ի Փոխառութեանցական գանձարանի Փօնդին. Շնորհակալ ենք,—

ԱԼԵՔՍԱՆԴՐՈՊՈՅ. Դարբնին: Ձեր ոսանաւորից կը քաղենք միան առաջութիւնը, որ մեզ մօտ պահենք, բայց չենք տպի:

ՑՊԱԱ. Հայոց ծխական դպրոցի վարչութեան: Ուղարկում ենք «Մուրճ»-ը դպրոցին, որպէս նւէր՝ պ. պ. Յովհաննէս և Արքահամ Բունեանցների կողմից:

ԶԱԲԱԹԱԼ. Հայոց ծխական դպրոցի վարչութեան: «Մուրճ» ամսագիրը դպրոցիդ անունով ուղարկելու համար, ստացանք. Նուխուց պ. պ. Յովհաննէս և Արքահամ Բունեանցներից նւէր 10 րուբլի, որ մենք իստ վերազարձրինք նրանց, որովհետեւ նոքա այդ նւէրը արել էին ենթադրելով թէ դպրոցը չի ոսանում:

ԲԱՔՈՒ. Ուսանողին: Ձեր ուղարկածը չի տպւիլ որովհետեւ «Մուրճ»-ը չի կարող և չը պիտի խակ գրածներին տեղ տալ: Ժողովուրոցը մեզնից իրաւացի կերպով խմառ պահանջներ է անում, իսկ մեր պահանջը զեռ աւելի էլ խիստ է, քան ժողովրդինը: Բանաստեղծութեան մէջ մենք որոնում ենք զգացմունք և զդացմունքի բանաստեղծորէն արտապատութիւն. Պուածների մէջ մենք որոնում ենք միտք և օպտակար նիւթեր, նպատակավարմոր կերպով զասաւորած և լոգիքապէս ուսւած. վիպերի մէջ որոնում ենք՝ ճիշդ դիտած իրական կեանքի գեղարւեսատական նրկարագրութիւն: Հոգ չի, եթէ զրւածքը թերութիւններ ունի, բայց նա պէտք է ունենալ առն բամբանիշները: Դուք խրախուս եք ուղում մեզնից. այդ խրախուսը տալիս ենք Ձեզ—առաջարկելով, որ միշտ կարդաք «Մուրճ»-ը:

ՇՈՒԾԻ. Որաստիալի թարգմանչին: Ձեր ողարկածի մէջ մենք առ ակժմ՝ նիւթ չը զտանք «Մուրճ»-ի համար: Բայց դեռ ևս տեսնենք: Յետ կ'աւզարկենք, երբ բալրը կարդացած կը լինենք:

ԹԻՖԼԻՍ. Պ. Ք. Թ.-ին: «Պատանուն տառնաւորը չի տպվի: Պեսախմիզմը յարգելի է միայն կեանքի զտանութիւնները քաշած մարդու բերնում, բայց նա գրօչ չարծէ, երբ լոկ զտառդոթիւն է:

ՇՈՒԾԻ. պ. Լէօնի: Այս Ն.-ի մէջ տպւած տողերից մի քանիսը Դուք նւիրում էք հայի արաւահնութիւնն և հայի թանկանալու խնդրին և, ազդ ասիմով, Դուք հեղուաթիւն էք ցոյց տալիս զեպի աղն մարդիկ, որոնք, թւանշանները ձեռքին, միամտոթիւն ունին հրձւելու: Հայի առևսուրի պատմութեան նոր ֆաշխով: Երբ թէ ազդ մարդիկ, բացի թւանշաններից, ել ոչ գիւղացի ահասած լինին և ոչ զիւղերը թողլ տեղք մեզ նկատելու, որ նա, ով մեզանում հայի արաւահնութիւնից առաջին անգամ ընդհանուր խնդրի շինեց թէ մեր և թէ ուսուց գրականութիւն մէջ, նաւ, ասում ենք, մինչ հարդիւր անգամ աւելի զիւղեր է ահսել և մինչև անգամ հետազոտել, քան ինչ որ Դուք Ձեր ճանապարհորդութիւն մէջ ահսած էք: Թւանշանները Դուք արհամարհում էք, բայց անիրաւացի կերպով, թւանշանները ինչպէս հարկն է կարդալու: Համար՝ մի ամելազդ գիտութիւն կաչ, որ ստիտիւտիք է կոչւում և որը ձեռք է բերում միմիայն երկար ժամանակ ուսանելով: Դուք ստում էք, թէ գիւղացին պարագ հոգեր չի վարում, որովհեան նա դիւղացի է: բայց ոչ, նա չի մշակում, որովհեան զիստ, թէ Ձեր ուղած հայի գնով նա ինչ օգուտ, ինչ իսէր կը ահսնի: բայց Ձեր ուղած զներին նա սովոր էր ցաւծմ: Երբ բարձրացած զների ազդեցութիւնը կը տարածւի նաև Ձեր ացելած զիւղերի վերայ և փոքր ինչ էլ ճանապարհները կը հարթւին—նոյն ազդ գիւղացիք կը սկսն հոգր մշակել, ինչպէս Դուք էք ցանկանում: Դուք տիսնում էք, ուրեմն, որ Ձեր մի ցանկութեամբ չեկոքացնում էք Ձեր միւս ցանկութիւնը, որ դուք Ձեզ հակասում էք, ներշնչւելով ուրիշ անկած քաղած տոփեստութիւններից:—

ԲԱՔՈՒ. պ. Ա. Թում.՝ Ձեր ինչպատ անկածութիւնները քունջութի մը շակութեան մասին կը հազրողենք Ձեզ շուտափ առանձին նամակով: **ԲԱՔՈՒ.** պ. Կ. Լ.-ին: Մենք պարաւոր ենք համարում պատասխաննել մի միայն մեր բաժանորդներին:

ՄՈՒՐՃ ԱՄՍԱԳՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԵՇՏԱՅՐԱԾ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ուսուցիչների, վարժուհների և բարձրագոյն դպրոցների ուսանողների համար:

**ԹԵՖԵԼՈՒԹԻՄ վճարում են կամ միանուագ 8 ըուբլի տարւայ սկզբին
և կամ տարեկան 10 ըուբլի այսպէս՝**

Յունուարի 1-ին	2 ր.
--------------------------------	------

Փետրւարի 1-ին	2
-------------------------------	---

Մարտի 1-ին	2
----------------------------	---

Մայիսի 1-ին	2
-----------------------------	---

Սեպտեմբերի 20-ին	2
----------------------------------	---

ԳԱԻԱՌՆԵՐԻՑ ուղարկում են տարեկան 9 ըուբլի այսպէս՝	
--	--

Յունուարի 1-ին	3 ր.
--------------------------------	------

Փետրւարի 1-ին	3
-------------------------------	---

Մարտի 1-ին	3
----------------------------	---

**Տարձրադոյն դպրոցներում ուսանողները վճարում են տարեկան 8
ըուբլի այսպէս՝**

Յունուարի 1-ին	3 ր.
--------------------------------	------

Փետրւարի 1-ին	3
-------------------------------	---

Մարտի 1-ին	2
----------------------------	---

Հասցէ Տիֆլիս. Ռեակցիա յարն. ՄՈՐՃԸ.

ՎՐԻՊԱԿՆԵՐ № 1-ԹԻՄ:

Սունդուկեանցի կենսապրութեան նվլրած պ. Զմշկեանի չօղւածում
սպառած են հետեւեալ սխալները:

տպած է	պէտք է լինի
Երես 133 սով 9 — Cirbied Փրանսիացին.	Cirbied, որ Զբայետեանի Փրան- սերէն անունն է,


» » 14 և 19 — Սունդուկեանց. Սանտուկեանց.

» 134 » 24 1833 1838

Գերըենդ գնալլ եղաւ 1855 թ. վերջերը, Թիֆլիսում Խորից հաս-
տառուելլ՝ 1858 թ., այնպէս որ երես 134, վերջին առջում աւելորդ է երկ-
րորդ ստորակէտը:

Պ. Լէօն «Հինգ օր» ճանապարհորդութեան միջ.

տպած է	պէտք է լինի
Երես 101 սով 5 Կարկար զիւղի	Կարկար զետի
» 102 » 5 Դիլայի	Դիլակի
» 112 » 8 Սաղասղան	Սաղսաղան
» 121 » 30 Խորիշան	Խորիշան



ՍՈՒՐՃ

ԱՄՍԱԳՐԻ

ԲԵԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ. ՇԱԲԱՆԱԿԱԾՈՒՄ Ե:

Տորեկան բաժանորդագինը	10 ր.
Կես տարուանը	6 ր.
Երեք տարուանը	4 ր.
Մի դրամկը	1 ր. 50 կ.

Առաջին զիները, վարժուաչիները և բարձրապրոցն զոյրոցների տանօղները վայելում են զիջումներ, համեմատ առանձին տպած յաջարարութեամն:

Մործի ամեն մի համար, սրակու տառջին «Հրաւեր»ի մշաւած էր, ունենալու է 8—10 տպագրական թերթ, կամ որ նոցնելու 128 մինչ 160 երես: Մործի տառջին համարը տնեցաւ 196 երես, բայց յաջարարութիւններից, ներկայ համարը հրաւարակւում է 176 երես, բայց յաջարարութիւններից, այնուհետ որ յայմաւած է 52 երես աւելի, քան մեր խոսացածի ամենաշատը: Ամբողջ տարին Մործի կազմելու է 12 զիրք, երեք մեծ հասորներ, շուրջ 1800 երեսով:

Նոր բաժանորդները կը տառեան նախարդ համարներ:

ՅԵԶԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ. ՀԱՄԱՐ ՎՃԱՐՈՒՄ ԵՆ

Ամսական մի երեսի համար.	10 ր.
„ կես երեսի համար	6 ր.
„ քառորդ երեսի համար	4 ր.

Խմբագրութեան հասցեն՝ Տիֆլիս, Յ. Պետրոսյան և Հայոց առաջնորդ Ա. Պապոսյան (Վահագինիանի, (Гановская улица, домъ Йоанициан): բոլորովին մօտ Արևանեան հրաւարակին: